Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

491.99-5
Գ-34

2525

2010

# ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

# ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف نظارت جلیله‌سنك رخصتنامه‌سیله طبع اولنمشدر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

1891

491.99 -5
Գ-34
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
12.002

12067

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ**

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

**ՏԵԱՌՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ**

**Սրբազան Արքեպիսկոպոսի**

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

**ՏԵԱՌՆ ԽՈՐԵՆԱՅ**

**Սրբազան Արքեպիսկոպոսի**

ԱՇԸԳԵԱՆ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային դպրոցաց մէջ Հայերէն գրաւոր լեզուին ուսման տրուած կարեւորութիւնը տեսնելով՝ այս Քերականութիւնը որչափ հնար էր հարուստ և կատարեալ ընել արժան համարեցանք. մանաւանդ որ ուրիշ համառօտ քերականութիւն մի 'ի պէտս նորագոյն ուսանողաց արդէն 'ի լոյս ընծայուած է։

Քերականութեանս հեղինակն այս տպագրութեան մէջ այն ամէն փոփոխութիւններն և յաւելուածներն ըրաւ զոր իւր և այլոց փորձառութիւնը կը թելադրէր, և զոր կը պահանջէր բազմադիմի կարեւորութիւնն զոր գրաւոր լեզուին ուսումն ունի և պիտի ունենայ ազգային դաստիարակութեան համար։ Հեղինակն այնչափ աւելի կը յարգէ փոյթը զոր հին լեզուին ուսման կը մատուցանեն ազգային դպրոցք, որչափ համոզուած է թէ Հայ սերնդեան արդի լեզուին ինչպէս ծնունդը հինէն է, նոյնպէս աճումն և զարգացումը պիտի լինի հնով։ Այս տեսութեամբ հին լեզուին ուսումը մեր ազգային նախակրթական դաստիարակութեան առաջին և գլխաւոր մասը պիտի կացուցանէ, մինչեւ որ ազգային արդի լեզուն ժամանակիս գիտնարար և գրագիտական պիտոյից բաւական տեսնուի։ Այս կարեւոր վիճակին, ուր կը կենայ մեր լեզուին, նա մանաւանդ մեր մտաց զարգացումը, արդարեւ քանի մը ճանապարհաւ կրնանք հասնել. բայց ով կրնայ ըսել թէ այս ճանապարհներէն մին հին լեզուին ուսումը չէ։ Հոն պիտի գտնենք նոր և ճշդագոյն գաղափարներու պատկերներ, խորին մտածութիւններու և փափուկ ազդմանց ձեւեր. հոն է մեր կազմելու լեզուին եթէ ոչ կերպական՝ անշուշտ նիւթական մասը. եւ, ո գիտէ, թե-

րեւս այն լեզուն որոյ կարեւորութիւնը կը զգանք և առ որ կը դիմենք՝ նոյն իսկ մեր հին Գրաբար, երբեմն նաեւ Ջուխալ կոչուած լեզուն է։

Որչափ հին լեզուին կարօտութիւնն օր ըստ օրէ աւելի կը զգացուի, հարկաւ նորին ուսման գործիք, յորոց մին է քերականութիւնն, հետզհետէ այն կարօտութեան լրման յարմարագոյն գործուելու են։ Մեր քերականութեան նպատակն այս է. ոչ թէ քերականութիւն շինող երեւել կամիմք, այլ թէ կրնա՞նք արդեօք 'ի նպաստ լեզուին ուսման բան մը ընել։ Ուստի քերականութեանս մէջ մեր սկզբունքն է. 1. Կանոնները կամ պատուէրներն համառօտ, յստակ և ճիշդ գործել. 2. Լեզուին ընդհանուր օրէնքն այնպէս աւանդել որ օրէնքը դիպաց անվրէպ մերձենալի լինի. ինչպէս որ կը տեսնուի այս Տէր բայիի, Հայցական հոլովոյ, Ուղղական խնդրոյ, Յարաբերականի, Յօդերու, Դիմորոշներու, Բայերու ժամանակներուն գործածութեան կանոններուն մէջ. 3. Լեզուին մատենագրութեան մէջ այն երեւոյթները, և համաձայնութեան ձեւերուն այն կերպերը որ ընդհանուր օրինաց արդիւնք են՝ առնուլ, ապա թէ ոչ թողուլ. և այս ընտրութեան չափ և կանոն բռնուած են դիպաց յաճախութիւնն և միօրինակութիւնը, այնու զի այնչափ աւելի բանաւոր է դիպէ մը օրէնք հետեւցունել՝ որչափ դէպքն է յաճախ և միօրինակ պատահական։

Ըստ խնդրոյ ոմանց, այս նոր տպագրութեան մէջ հարցումներ աւելցուցինք, և հոլովմանց և խոնարհմանց օրինակներուն առջեւ ռամկօրէնն և Թուրքերէնը դրինք։ Բուն քերականութեան մէջ նոր փոփոխութիւն մուծուած չէ, միայն ուրեք ուրեք կանոնք ուղղուած և պարզուած են։

Ա. Մ. Գ.

# ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Հ. Ի՞նչ է ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Պ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է արուեստ որ կ'ուսուցանէ լեզու մը ուղիղ խօսել և ուղիղ գրել։

2. Հ. Ի՞նչ գիտնալ պարտ է ուղիղ խօսելու և ուղիղ գրելու համար։

Պ. Ուղիղ խօսելու և ուղիղ գրելու համար պարտ է գիտնալ թէ խօսք մը ուստի՛ կը շինուի։

3. Հ. Ուստի՞ կը շինուի խօսք։

Պ. Խօսք կը շինուի բառերէ։

4. Հ. Քանի՞ բան կայ գիտնալու բառերուն վրայ։

Պ. Բառերուն վրայ գիտնալու երեք բան կայ.

Նախ՝ թէ բառերը քանի՛ տեսակ են և ի՛նչ փոփոխութիւններ կը կրեն.

Երկրորդ՝ թէ բառք խօսքին մէջ ի՛նչ պաշտօններ կը կատարեն, և այն պաշտօնները ցուցնելու համար ի՛նչպէս կը համաձայնին իրարու հետ, և

Երրորդ՝ թէ ի՛նչ կարգով կը շարուին (*)։

(*) Այս երեք բաներուն համեմատ՝ քերականութիւնը պիտի ունենայ երեք մաս. Բառագիտութիւն, Համաձայնութիւն և Շարադասութիւն։

# Մ Ա Ս Ն  Ա·

## ԳԼՈՒԽ Ա·

### ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

5· Հ· Քանի՞ տեսակ են հայերէն լեզուին բառերը:

Պ· Հայերէն լեզուին բառերն են ութ տեսակ · Անուն, Ածական, Դերանուն, Նախադրութիւն, Բայ, Մակբայ, Շաղկապ, Միջարկութիւն կամ Ձայնարկութիւն :

6· Հ· Ի՞նչ կը կոչուին սոքա :

Պ· Սոքա կը կոչուին Մասունք բանի :

---

### ԱՆՈՒՆ

7· Հ· Ի՞նչ կը ցուցնէ անունը :

Պ· Անունը, որ գոյական ևս կ'ըսուի, կը ցուցնէ անձ կամ իր · հայր, մայր, հաց, քաղաք, գետ, զգեստ, հոգի, իմաստութիւն, գոյական անուններ են :

8· Հ· Քանի՞ տեսակ է անունը :

Պ· Անունը երկու տեսակ է, Հասարակ անուն և Յատուկ անուն :

Քաղաք, գետ, լեռ, հասարակ անուն են · ամէն քաղաքի՝ քաղաք, ամէն գետոյ՝ գետ, ամէն լերան՝ լեռ կրնանք ըսել առհասարակ · այս պատճառաւ այս անուններն կ'ըսուին հասարակ :

Բարիզ, Եփրատ, Արարատ, յատուկ անուն են · ամէն քաղաքի՝ Բարիզ, ամէն գետոյ՝ Եփրատ, ամէն լերան՝ Արարատ չենք կրնար ըսել · Բարիզ քաղաքին միայն Բարիզ, Եփրատ գետոյ միայն Եփրատ,



Արարատ լերան միայն Արարատ կրնանք ըսել · այս պատճառաւ այս անունները կ'ըսուին յատուկ :

9· Հ· Ի՞նչ գրով կը գրուին յատուկ անուանք :

Պ· Յատուկ անուանք կը գրուին գլխագրով:

10· Հ· Քանի՞ փոփոխութիւն ունի անունը :

Պ· Անունն ունի երկու փոփոխութիւն, Թիւ և հոլով :

11· Հ· Քանի՞ է թիւը :

Պ· Թիւն է երկու, Եզակի և Յոգնակի :

Եզակին կը ցուցնէ թէ իրը զոր անունը կը նշանակէ՝ մի միայն է, ինչպէս՝ մարդ, քաղաք, գետ, կը նշանակեն մի մարդ, մի քաղաք, մի գետ, ուստի և եզակի են :

Յոգնակին կը ցուցնէ թէ իրը զոր անունը կը նշանակէ՝ երկու կամ աւելի է · զոր օրինակ՝ մարդք, քաղաքք, գետք, կը նշանակեն մարդեր, քաղաքներ, գետեր · այսինքն՝ աւելի քան մի մարդ, աւելի քան մի քաղաք, աւելի քան մի գետ, ուստի և են յոգնակի :

12· Հ· Ի՞նչ է հոլովը :

Պ· Հոլովն է անուան մը վերջաւորութեան կամ ձայրին փոխուիլը :

13· Հ· Քանի՞ հոլով ունի հայերէնը :

Պ· Հայերէնն ունի վեց հոլով · Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական և Գործիական :

14· Հ· Ի՞նչ է հոլովել :

Պ· Հոլովել է անուան մը վերջաւորութիւնը փոխել :

15· Հ· Միօրինա՞կ կը հոլովի հայերէն ամէն անուն :

Պ· Հայերէն ամէն անուն չհոլովիր միօրինակ, այսինքն՝ ամէն անուն միևնոյն կերպով չփոխեր

իւր վերջը · կան հոլովելու այլ և այլ կերպեր որ կը կոչուին Հոլովմունք ։

16· Հ· Քանի՞ հոլովում կայ հայերէնի մէջ։

Պ· Հայերէնի մէջ կան երկոտասան կանոնաւոր, և քանի մը անկանոն հոլովմունք ։

17· Հ· Միակե՞րպ կը հոլովին ամէն անուան եզակին և յոքնակին ։

Պ· Ամէն անուան եզակին և յոքնակին տարբեր կը հոլովին ։

## ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### Ա· ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական | Բան · | Խօսք · | Սէօզ · |
| Սեռական | Բան-ի · | Խօսքի · | Սէօզիւն · |
| Տրական | Բան-ի · | Խօսքի · | Սէօզէ · |
| Հայցական | զ Բան · | Խօսք · | Սէօզիւ · |
| Բացառական | 'ի Բան-է · | Խօսքէ · | Սէօզտէն · |
| Գործիական | Բան-իւ · | Խօսքով · | Սէօզ իլէ · |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական | Բան-ք · | Խօսքեր · | Սէօզլէր · |
| Սեռական | Բան-ից · | Խօսքերու · | Սէօզլէրին · |
| Տրական | Բան-ից · | Խօսքերու · | Սէօզլէրէ · |
| Հայցական | զ Բան-ս · | Խօսքեր · | Սէօզլէրի · |
| Բացառական | 'ի Բան-ից · | Խօսքերէ · | Սէօզլէրտէն · |
| Գործիական | Բան-իւք , | Խօսքերով · | Սէօզլէր իլէ · |

—

Արքայ , յի , յիւ · Գիծ , գծի , գծիւ ·
Հանդէս , դիսի , դիսիւ · Ողջոյն , ջունի , ջունիւ ։



### Բ· ՀՈԼՈՎՈՒՄ

—

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Քաղաք · | Քաղաք · | Շէհր · |
| Ս· | Քաղաք-ի · | Քաղքի · | Շէհրին · |
| Տ· | Քաղաք-ի · | Քաղքի · | Շէհրէ · |
| Հ· | զ Քաղաք · | Քաղաք · | Շէհրի · |
| Բ· | 'ի Քաղաք-է · | Քաղքէ · | Շէհրտէն · |
| Գ· | Քաղաք-աւ · | Քաղքով · | Շէհր իլէ · |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Քաղաք-ք · | Քաղաքներ · | Շէհիրլէր · |
| Ս· | Քաղաք-աց · | Քաղաքներու · | Շէհիրլէրին · |
| Տ· | Քաղաք-աց · | Քաղաքներու · | Շէհիրլէրէ · |
| Հ· | զ Քաղաք-ս · | Քաղաքներ · | Շէհիրլէրի · |
| Բ· | 'ի Քաղաք-աց · | Քաղաքներէ · | Շէհիրլէրտէն · |
| Գ· | Քաղաք-օք · | Քաղաքներով · | Շէհիրլէր իլէ · |

—

Աւազան , նի , նաւ · Լեզու , զուի , զուաւ ·
Որդեակ , դեկի , դեկաւ · Պարտէզ , տիզի , տիզաւ ։

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զգեստ . | Զգեստ . | Էսվապ . |
| Ս. | Զգեստ-ու . | Զգեստի . | Էսվապըն . |
| Տ. | Զգեստ-ու . | Զգեստի . | Էսվապա . |
| Հ. | զ Զգեստ . | Զգեստ . | Էսվապը . |
| Բ. | 'ի Զգեստ-է . | Զգեստէ . | Էսվապտան . |
| Գ. | Զգեստ-ու . | Զգեստով . | Էսվապ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զգեստ-ք . | Զգեստներ . | Էսվապլար . |
| Ս. | Զգեստ-ուց . | Զգեստներու . | Էսվապլարըն . |
| Տ. | Զգեստ-ուց . | Զգեստներու . | Էսվապլարա . |
| Հ. | զ Զգեստ-ս . | Զգեստներ . | Էսվապլարը . |
| Բ. | 'ի Զգեստ-ուց . | Զգեստներէ . | Էսվապլարտան . |
| Գ. | Զգեստ-ուք . | Զգեստներով . | Էսվապլար իլէ . |

—

Ծով, ծովու, ծովու . Զէն, զինու, զինու .
Ինձ, ընձու, ընձու . Քաղց, ցու, ցու ։

---

18. Հ. Ի՞նչպէս է այս հոլովման անուններէն ոմանց եզակի բացառականը ։

Պ. Այս հոլովման անուններէն ոմանց եզակի բացառականն է ուէ . զոր օրինակ՝ Զարդ, զարդու, 'ի զարդուէ . Խրատ, խրատու, 'ի խրատ ուէ . Նախանձ, Նախանձու, 'ի Նախանձուէ . Քաղց, քաղցու, 'ի քաղցուէ, եւն ։

---



## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գետ . | Գետ . | Ըրմագ . |
| Ս. | Գետ-ոյ . | Գետի . | Ըրմաղըն . |
| Տ. | Գետ-ոյ . | Գետի . | Ըրմաղա . |
| Հ. | զ Գետ . | Գետ . | Ըրմաղը . |
| Բ. | 'ի Գետ-ոյ . | Գետէ . | Ըրմագտան . |
| Գ. | Գետ-ով . | Գետով . | Ըրմաղ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գետ-ք . | Գետեր . | Ըրմագլար . |
| Ս. | Գետ-ոց . | Գետերու . | Ըրմագլարըն . |
| Տ. | Գետ-ոց . | Գետերու . | Ըրմագլարա . |
| Հ. | զ Գետ-ս . | Գետեր . | Ըրմագլարը . |
| Բ. | 'ի Գետ-ոց . | Գետերէ . | Ըրմագլարտան . |
| Գ. | Գետ-ովք . | Գետերով . | Ըրմագլար իլէ . |

—

Տէր, րոյ, րով . Խունկ, խնկոյ, խնկով .
Էշ, էշոյ, էշով . Յոյս, յուսոյ, յուսով ։

---

19. Հ. Ի՞նչպէս է այս հոլովման անուններէն ոմանց եզակի տրականը ։

Պ. Այս հոլովման անուններէն ոմանց եզակի տրականն է նաեւ ում . զոր օրինակ՝ Նոր, Նորոյ կամ նորում . Հին, հնոյ կամ հնում . Մի, միոյ կամ միում, եւն ։

### Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Տրդատ . | Տրդատ . | Տրդատ . |
| Ս. | Տրդատ-այ . | Տրդատի . | Տրդատըն . |
| Տ. | Տրդատ-այ . | Տրդատի . | Տրդատա . |
| Հ. | զՏրդատ . | Տրդատ . | Տրդատը . |
| Բ. | 'ի Տրդատ-այ . | Տրդատէ . | Տրդատտան . |
| Գ. | Տրդատ-աւ . | Տրդատով . | Տրդատ իլէ . |

### Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հռիփսիմէ . | Հռիփսիմէ . | Հռիփսիմէ . |
| Ս. | Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէի . | Հռիփսիմէնին . |
| Տ. | Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէի . | Հռիփսիմէյէ . |
| Հ. | զՀռիփսիմէ . | Հռիփսիմէ . | Հռիփսիմէյի . |
| Բ. | 'ի Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէէ . | Հռիփսիմէտէն . |
| Գ. | Հռիփսիմ-եաւ . | Հռիփսիմէով . | Հռիփսիմէ իլէ . |

Հայկ , կայ , կաւ .
Արամ , մայ , մաւ .
Վահան , նայ , նաւ .
Արշակ , կայ , կաւ .
Տիգրան , նայ , նաւ .

Գայիանէ , նեայ , նեաւ .
Յուլիոս , լեայ , լեաւ .
Լուկրետիա , տեայ , տեաւ .
Եսայի , սայեայ , սայեաւ .
Օգոստոս , տեայ , տեաւ ։

Ո՛ վերջաւորածները կը փոխուին նաեւ առաջին հոլովման պէս . ինչպէս՝ Օգոստոս , Օգոստոսի , Օգոստոսէ . Յուլիոս , Յուլիոսի , Յուլիոսէ . Դիոս , Դիոսի , Դիոսէ ։



20. Հ. Ի՞նչ անուններու սեպհական են այս երկու հոլովմունք ։

Պ. Այս երկու հոլովմունք սեպհական են յատուկ անուանց շատերուն . այս պատճառաւ չունին յոգնակի ։

### Է. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի . | Եկեղեցի . | Քիլիսէ . |
| Ս. | Եկեղեց-ւոյ . | Եկեղեցւոյ . | Քիլիսէնին . |
| Տ. | Եկեղեց-ւոյ , ւոջ . | Եկեղեցւոյ . | Քիլիսէյէ . |
| Հ. | զԵկեղեցի . | Եկեղեցի . | Քիլիսէյի . |
| Բ. | *յ Եկեղեց-ւոյ . | Եկեղեցիէ . | Քիլիսէտէն . |
| Գ. | Եկեղեց-եաւ . | Եկեղեցիով . | Քիլիսէ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի-ք . | Եկեղեցիներ . | Քիլիսէլէր . |
| Ս. | Եկեղեց-եաց . | Եկեղեցիներու . | Քիլիսէլէրին . |
| Տ. | Եկեղեց-եաց . | Եկեղեցիներու . | Քիլիսէլէրէ . |
| Հ. | զԵկեղեց-իս . | Եկեղեցիներ . | Քիլիսէլէրի . |
| Բ. | յ Եկեղեց-եաց . | Եկեղեցիներէ . | Քիլիսէլէրտէն . |
| Գ. | Եկեղեց-եօք . | Եկեղեցիներով . | Քիլիսէլէր իլէ . |

Կղզի , զւոյ , զեաւ .
Տեղի , տեղւոյ , տեղեաւ .

Գինի , նւոյ , նեաւ .
Գօտի , տւոյ , տեաւ ։

(*) Ձայնաւորով սկսող անուններուն քով փոխանակ 'ի նախդրի' կը դրուի յ նախդիր ։

21· Հ· Ի՞նչ անուններ կը հետեւին այս հոլովման ։

Պ· Այս հոլովման կը հետեւի ամէն ի վերջաւորած բազմավանկ անուն · ի վերջաւորած միավանկները կը վերաբերին Չորրորդ հոլովման , այսինքն կը հոլովին Գետ բառին պէս , ինչպէս · Ձի , ձիոյ , ձիով · Դի , դիոյ , դիով ։

22· Հ· Ի՞նչպէս է՝ այս հոլովման անուններէն ոմանց եզակի գործիականը , յոգնակի սեռականը , տրականը , բացառականը և գործիականը ։

Պ· Այս հոլովման անուններէն ոմանց եզակի գործիականն է՝ ւով , իսկ յոգնակի սեռականը , տրականը , բացառականը՝ ւոց , և գործիականը՝ ւովք · ինչպէս՝ Հոգի , հոգւոյ , հոգւով · Հոգիք , հոգւոց , հոգւովք · Որդի , որդւոյ , որդւով · Որդիք , որդւոց , որդւովք ։ Այսպէս կը հոլովի ամէն ցի վերջաւորած անուն · ինչպէս , իսրայելացի , իսրայելացւոյ , իսրայելացւով · իսրայելացիք , իսրայելացւոց , իսրայելացւովք ։

23· Հ· Ի՞նչպէս է այս հոլովման անուններէն ոմանց եզակի բացառականը ։

Պ· Այս հոլովման անուններէն ոմանց եզակի բացառականն է ւոջէ · ինչպէս , Տեղի , տեղւոյ , 'ի տեղւոջէ ։



## Ը· ՀՈԼՈՎՈՒՄ

—

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Փոքր · | Փոքր · | Քիւչիւք · |
| Ս· | փոքու · | փոքրի · | քիւչիւյիւն · |
| Տ· | փոքու · | փոքրի · | քիւչիւյէ · |
| Հ· | զփոքր · | փոքր · | քիւչիւյիւ · |
| Բ· | 'ի փոքուէ · | փոքրէ · | քիւչիւքտէն · |
| Գ· | փոքումբ , փոքու · | փոքրով · | քիւչիւյլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | փոքունք · | փոքրեր · | քիւչիւքլէր · |
| Ս· | փոքունց · | փոքրերու · | քիւչիւքլէրին · |
| Տ· | փոքունց · | փոքրերու · | քիւչիւքլէրէ · |
| Հ· | զփոքունս · | փոքրեր · | քիւչիւքլէրի · |
| Բ· | 'ի փոքունց · | փոքրերէ · | քիւչիւքլէրտէն · |
| Գ· | փոքումբք · | փոքրերով · | քիւչիւքլէր իլէ · |

—

Մանր , նու , նու · Մանունք , նունց , նումբք ·
Ծանր , նու , նու · Ծանունք , նունց , նումբք ·
Թանձր , ձու , ձու · Թանձունք , ձունց , ձումբք ։

---

24· Հ· Ի՞նչպէս կը հոլովի այս հոլովման անուններէն Բարձր , յոգնակիին մէջ ։

Պ· Այս հոլովման անուններէն Բարձր , յոգնակիին մէջ կը հոլովի , Բարձունք , բարձանց , բարձամբք · փոխանակ Բարձունց , բարձումբք ։

25· Հ· Կը գործածուի՞ այս հոլովման հետեւող ամէն անուան յոգնակին ։

Պ· Այս հոլովման հետեւող անուններն ունին յոգնակի ։ Բայց կան այս հոլովման հետեւող քանի մը գոյականներ որոց յոգնակին չգործածուիր, զոր օրինակ · Այր, առն, յառնէ, առն · Մեղր, մեղու, ՚ի մեղուէ, մեղու · Ծաղր, ծաղու, ՚ի ծաղուէ, ծաղու ։

---

## Թ· ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Հիմն · | Հիմ · | Թէմէլ · |
| Ս· | Հիմ-ան · | Հիման · | Թէմէլին · |
| Տ· | Հիմ-ան · | Հիման · | Թէմէլէ · |
| Հ· | զՀիմն · | Հիմ · | Թէմէլի · |
| Բ· | ՚ի Հիմ-անէ · | Հիմէ · | Թէմէլտէն · |
| Գ· | Հիմ-ամբ · | Հիմով · | Թէմէլ իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Հիմ-ունք · | Հիմեր · | Թէմէլլէր · |
| Ս· | Հիմ-անց · | Հիմերու · | Թէմէլլէրին · |
| Տ· | Հիմ-անց · | Հիմերու · | Թէմէլլէրէ · |
| Հ· | զՀիմ-ունս · | Հիմեր · | Թէմէլլէրի · |
| Բ· | ՚ի Հիմ-անց · | Հիմերէ · | Թէմէլլէրտէն · |
| Գ· | Հիմ-ամբք · | Հիմերով · | Թէմէլլէր իլէ · |

---

Արեգակն, կան, կամբ · Շուրթն, շրթան, շրթամբ · Խոստումն, տման, տմամբ ։ Դուռն, դրան, դրամբ ։

---



26· Հ· Ի՞նչպէս կ'ըլլան այս հոլովման անուններէն ոմանց յոգնակի ուղղականը և հայցականը ։

Պ· Այս հոլովման անուններէն ոմանց յոգնակի ուղղականը և հայցականը կ'ըլլան ունք, ունս, ինչպէս, Սերմն, սերմունք, սերմունս · Կողմն, կողմունք, կողմունս · Անուն, անուանք, անուանս ։

27· Հ· Ո՞ր անուններն այս հոլովման կը հետեւին ։

Պ· Ըն վերջաւորուած անուններէն շատերը կը հետեւին այս հոլովման · ինչպէս վերի բառերը և հետեւեալներն · Ատամն, ատաման, ատամամբ · Ատամունք, ատամանց, ատամամբք · Ուսումն, ուսման, ուսմամբ · Ուսմունք, ուսմանց, ուսմամբք · Սկիզբն, սկզբան, սկզբամբ · Սկզբունք, սկզբանց, սկզբամբք · Քիրտն, քրտան, քրտամբ · Քրտունք, քրտանց, քրտամբք · եւայլն ։

28· Հ· Կա՞ն ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ունեցող բառեր որ այս հոլովման կը վերաբերին ։

Պ· Կան, և են սոքա ·

Աղջիկ, ջկան, ջկանէ, ջկամբ ջկունք, ջկանց, մբք ·
Անուն, ուան, ուանէ, ուամբ · ուանք, ուանց, մբք ·
Աշուն, շնան, շնանէ, շնամբ · շունք, շնանց, շնամբք ·
Գարուն, րնան, րնանէ, րնամբ · րունք, րնանց, մբք ·
Կորեակ, րեկան, րեկանէ, րեկամբ · րեկունք, րեկանց ·
Ջերմուն, ուան, ուանէ, ուամբ · ունք, ուանց, ուամբք ·
Մանուկ, նկան, նկանէ, նկամբ · նկունք, նկանց, մբք ·
Մարդիկ, դկան, դկանէ, դկամբ ·
Շուն, շան, շանէ, շամբ · շունք, շանց, շամբք ·
Պաշտօն, տաման, տամանէ, մամբ · տամունք, տամանց, տամամբք ·

Տնիկ , տնկան , տնկանէ , տնկամբ · տնկունք , տնկանց , տնկամբք ·
Տուն , տան , տանէ , տամբ · տունք , տանց , տամբք ·
Տոտուն , տոտան , տոտանէ , տոտամբ · տոտունք , տոտանց , տոտամբք ·
Փոքրիկ , րկան , րկանէ , րկամբ · րկունք , րկանց , մբք ։

---

## Ժ· ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Գառն · | Գառնուկ · | Գուզու · |
| Ս· | Գառ-ին · | Գառնուկի · | Գուզունուն · |
| Տ· | Գառ-ին · | Գառնուկի · | Գուզույա · |
| Հ· | զԳառն · | Գառնուկը · | Գուզույու · |
| Բ· | 'ի Գառ-անէ · | Գառնուկէ · | Գուզուտան · |
| Գ· | Գառ-ամբ · | Գառնուկով · | Գուզու իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Գառ-ինք · | Գառնուկներ · | Գուզուլար · |
| Ս· | Գառ-անց · | Գառնուկներու · | Գուզուլարըն · |
| Տ· | Գառ-անց · | Գառնուկներու · | Գուզուլարա · |
| Հ· | զԳառ-ինս · | Գառնուկներ · | Գուզուլարը · |
| Բ· | 'ի Գառ-անց · | Գառնուկներէ · | Գուզուլարտան · |
| Գ· | Գառ-ամբք · | Գառնուկներով · | Գուզուլար իլէ · |

Ձեռն , ռին , ռամբ · Եզն , եզին , եզամբ ·
Լեառն , լերին , լերամբ · Խաչն , խաչին , խաչամբ ·



29· Հ· Ի՞նչպէս կ՚ըլլայ այս հոլովման անուններէն ոմանց եզակի բացառականը ։

Պ· Այս հոլովման անուններէն ոմանց , ինչպէս՝ անձն , ազն , դիւցազն , հարսն , մասն , եզակի բացառականը կ՚ըլլայ յանձնէ , յազնէ , 'ի դիւցազնէ , 'ի հարսնէ , 'ի մասնէ , փոխանակ յանձանէ , յազանէ , 'ի հարսանէ , 'ի մասանէ ։

30· Հ· Ի՞նչպէս կ՚ըլլան ուրիշ ոմանց յոգնակի ուղղականը և հայցականը ։

Պ· Ոմանց ևս յոգնակի ուղղականը և հայցականը կ՚ըլլան ունք , ունս · ինչպէս , դիւցազունք , դիւցազունս · հարսունք , հարսունս · մատունք , մատունս · մասունք , մասունս · թոռունք , թոռունս · ողունք , ողունս · փոխանակ , հարսինք , հարսինս · մատինք , մատինս , եւն ։

---

## ԺԱ· ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Նեղութիւն · | Նեղութիւն · | Տարլըգ · |
| Ս· | Նեղութ-եան · | Նեղութեան · | Տարլըղըն · |
| Տ· | Նեղութ-եան · | Նեղութեան · | Տարլըղա · |
| Հ· | զՆեղութիւն · | Նեղութիւն · | Տարլըղը · |
| Բ· | 'ի Նեղութ-ենէ · | Նեղութենէ · | Տարլըգտան · |
| Գ· | Նեղութ-եամբ · | Նեղութեամբ · | Տարլըգ իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Նեղութիւն-ք · | Նեղութիւններ · | Տարլըգլար · |
| Ս· | Նեղութ-եանց · | Նեղութիւններու · | Տարլըգլարըն · |
| Տ· | Նեղութ-եանց · | Նեղութիւններու · | Տարլըգլարա · |
| Հ· | զՆեղութիւն-ս · | Նեղութիւններ · | Տարլըգլարը · |
| Բ· | 'ի Նեղութ-եանց · | Նեղութիւններէ · | Տարլըգլարտան · |
| Գ· | Նեղութ-եամբք · | Նեղութիւններով · | Տարլըգլար իլէ · |

31· Հ· Ո՞ր անուններն այսպէս կը հոլովին :

Պ· Այսպէս կը հոլովին իւն վերջաւորած անուններ , և իւն վերջաւորածներէն շատք , որոց ոմանց բացառականն է եանէ և ոչ ենէ , զոր օրինակ·

Արիւն , արեան , յարենէ , արեամբ · արիւնք , արեանց ·
Անկիւն , անկեան , յանկենէ , անկեամբ · անկիւնք , անկեանց , անկեամբք ·
Կորիւն , կորեան , 'ի կորեանէ , կորեամբ · կորիւնք , կորեանց ·
Ձիւն , ձեան , 'ի ձեանէ , ձեամբ · ձիւնք , ձեանց ·
Սիւն , սեան , 'ի սեանէ , սեամբ · սիւնք , սեանց :

Բայց իւն վերջաւորածներն որ ունին ումն վերջաւորածներուն զօրութիւնը՝ չեն հոլովիր · երբ ասոնք հոլովել պէտք է , հարկ է գործածել ումն վերջաւորածները · զոր օրինակ · Հնչիւն կամ հնչումն , հնչման , հնչմամբ · Գոչիւն կամ գոչումն , գոչման , գոչմամբ : Միայն Քրթմնջիւն բառը հոլոված կայ · քրթմնջեան , 'ի քրթմնջենէ :

32· Հ· Կա՞ն ուրիշ վերջաւորութիւն ունեցող անուններ որ կը վերաբերին այս հոլովման :

Պ· Կան ուրիշ այլ եւ այլ վերջաւորութիւն ունեցող բառեր որ կը վերաբերին այս հոլովման , զոր օրինակ ·

Տեսիլ , սլեան , սլենէ , սլեամբ · սիլք , սլեանց , տեսլեամբք ·
Հանգիստ , գստեան , գստենէ , գստեամբ ·
Կորուստ , րստեան , րստենէ , րստեամբ ·
Գալուստ , լստեան , լստենէ , լստեամբ ·
Փախուստ , խստեան , խստենէ , խստեամբ ·
Ստին , ստեան , ստենէ , ստեամբ · ստինք , ստեանց , ստեամբք ·

---



## ԺԲ· ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Ոսկր · | Ոսկր · | Քէմիք · |
| Ս· | Ոսկ-եր · | Ոսկրի · | Քէմիյին · |
| Տ· | Ոսկ-եր · | Ոսկրի · | Քէմիյէ · |
| Հ· | զՈսկր · | Ոսկր · | Քէմիյի · |
| Բ· | յՈսկ-երէ · | Ոսկրէ · | Քէմիքտէն · |
| Գ· | Ոսկ-երբ · | Ոսկրով · | Քէմիյլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Ոսկ-երք · | Ոսկրներ · | Քէմիքլէր · |
| Ս· | Ոսկ-երաց · | Ոսկրներու · | Քէմիքլէրին · |
| Տ· | Ոսկ-երաց · | Ոսկրներու · | Քէմիքլէրէ · |
| Հ· | զՈսկ-երս · | Ոսկրներ · | Քէմիքլէրի · |
| Բ· | յՈսկ-երաց · | Ոսկրներէ · | Քէմիքլէրտէն · |
| Գ· | Ոսկ-երօք · | Ոսկրներով · | Քէմիքլէր իլէ · |

Կայսր , սեր , սերբ · Ուստր , տեր , տերբ ·
Դուստր , դստեր , դստերբ · Աստղ , տեղ , տեղբ ·
Ալիւր , ալեր , ալերբ · Աղբիւր , բեր , բերբ :

Ասոնց յոգնակին լինի , կայսերք , րաց · Դստերք , րաց · Ուստերք , րաց ևն :

33· Հ· Ի՞նչպէս է Համ բառին յոգնակին :

Պ· Համ բառին յոգնակին է Համերք , համերց · այսպէս են նաև Ոսկերք , ոսկերց , ոսկերբք · Աստեղք , աստեղց , աստեղբք · Աղբերք , աղբերց , աղբերբք ևն · բայց լաւագոյն է ըսել երկրորդ հոլովման յոգնակիին պէս , ոսկերաց , ոսկերօք · աստեղաց , աստեղօք · աղբերաց · աղբերօք :

# ՉԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

## Ա· ՀՈԼՈՎՈՒՄ

Այր · էրիկմարդ · էրքէք ·

## Բ· ՀՈԼՈՎՈՒՄ

Հայր · հայր · պապա ·

| | Եզ· | Յոգ· | Եզ· | Յոգ· |
|---|---|---|---|---|
| Ո· | Այր · | Արք · | Հայր · | Հարք · |
| Ս· | Առն . | Արանց · | Հօր · | Հարց , հարանց · |
| Տ· | Առն . | Արանց · | Հօր · | Հարց · |
| Հ· | զԱյր · | զԱրս · | զՀայր · | զՀարս · |
| Բ· | յԱռնէ . | յԱրանց . | ՚ի Հօրէ · | ՚ի Հարց · |
| Գ· | Արամբ . | Արամբք · | Հարբ · | Հարբք · |

—

Տէր , տեառն , ՚ի տեառնէ կամ ՚ի տեռնէ , տերամբ · Տեարք , տերանց , տերամբք ·
Մայր , մօր , ՚ի մօրէ , մարբ · Մարք , մարց , մարբք ·
Եղբայր , եղբօր , յեղբօրէ , եղբարբ · Եղբարք , եղբարց , եղբարբք ։

Տէր բառին պէս կը հոլովին , պարտատէր , տանուտէր ·

---

## Գ· ՀՈԼՈՎՈՒՄ

Քոյր · քոյր · գըզգարտաշ ·

## Դ· ՀՈԼՈՎՈՒՄ

Կին · կին . գարը ·

| | Եզ· | Յոգ· | Եզ· | Յոգ· |
|---|---|---|---|---|
| Ո· | Քոյր · | Քորք · | Կին · | Կանայք · |
| Ս· | Քեռ · | Քերց · | Կնոջ . | Կանանց · |
| Տ· | Քեռ · | Քերց · | Կնոջ · | Կանանց · |
| Հ· | զՔոյր · | զՔորս · | զԿին · | զԿանայս · |
| Բ· | ՚ի Քեռէ · | ՚ի Քերց · | ՚ի Կնոջէ · | ՚ի Կանանց · |
| Գ· | Քերբ · | Քերբք · | Կանամբ · | Կանամբք · |

Կին բառին պէս կը հոլովի , առնակին ։

---



## Ե· ՀՈԼՈՎՈՒՄ

Գիւղ · գեղ · քէօյ

## Զ· ՀՈԼՈՎՈՒՄ

Օր · օր · կիւն ·

| | Եզ· | Յոգ· | Եզ· | Յոգ· |
|---|---|---|---|---|
| Ո· | Գիւղ , գեղ · | Գիւղք , գեղք · | Օր · | Աւուրք · |
| Ս· | Գեղջ · | Գիւղից · | Աւուր · | Աւուրց · |
| Տ· | Գեղջ · | Գիւղից · | Աւուր · | Աւուրց · |
| Հ· | զԳիւղ · | զԳիւղս · | զՕր · | զԱւուրս · |
| Բ· | ՚ի Գեղջէ · | ՚ի Գիւղից · | յՕրէ · | յԱւուրց · |
| Գ· | Գիւղիւ · | Գիւղիւք · | Աւուրբ · | Աւուրբք · |

—

## Է· ՀՈԼՈՎՈՒՄ

Տիւ · ցորեկ · կիւնտիւզ ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Տիւ · | Տիւք · |
| Ս· | Տուընջեան · | Տուընջեանց · |
| Տ· | Տուընջեան · | Տուընջեանց · |
| Հ· | զՏիւ · | զՏիւս · |
| Բ· | ՚ի Տուընջենէ , ՚ի տուէ · | ՚ի Տուընջեանց · |
| Գ· | Տուընջեամբ · | Տուընջեամբք · |

—

## Ը· ՀՈԼՈՎՈՒՄ

Արեւելեայ · արեւելեան · շարքի

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Արեւելեայ · | Արեւելեայք · |
| Ս· | Արեւելւոյ · | Արեւելեայց · |
| Տ· | Արեւելւոյ · | Արեւելեայց · |
| Հ· | զԱրեւելեայ · | զԱրեւելեայս · |
| Բ· | յԱրեւելւոյ · | յԱրեւելեայց · |
| Գ· | Արեւելեաւ · | Արեւելեօք · |

## ԱՆՈՒԱՆՑ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

## ԳԻՏԵԼԻՔ

—

34. Հ. Ի՞նչպէս կը կոչուին վեց հոլովներն ։

Պ. Վեց հոլովներէն երկուքը, այսինքն Ուղղականն և Հայցականը, կը կոչուին ուղիղ հոլով, միւս չորսը, Սեռականը, Տրականը, Բացառականն և Գործիականը՝ խոտորնակ հոլով։

35. Հ. Ո՞ր անուններուն մէջ է և ու ձայնաւորք կը փոխուին ը ի ։

Պ. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն վերջին վանկին է և ու ձայնաւորները խոտորնակ հոլովներուն մէջ կը փոխուին բնական (*) ը ի · զոր օրինակ Գիծ, գծի · Խունկ, խնկոյ ։

36. Հ. Ի՞նչ բանի կը փոխուին եա, է, ոյ ։

Պ. Եա կը փոխուի ե, է՝ ի · ոյ՝ ու, ինչպէս · Ատեան, ատենի · Մէգ, միգի · Ողջոյն, ողջունի ։

37. Հ. Ի՞նչ բանի կը փոխուի երբեմն ե գիրը ։

Պ. Քանի մը բառերու մէջ նաեւ ե գիրը կը փոխուի բնական ը ի, զոր օրինակ · Ասեղն, ասղան · Թիթեղն, թիթղան ։

38. Հ. Ի՞նչ բանի կը փոխուի Դեւ բառին ե գիրը։

Պ. Դեւ բառին ե գիրը կը փոխուի ի, զոր օրինակ · Դեւ, դիւի · Դեւք, դիւաց, դիւօք ։

(*) Բնական ը կ'ըսուի ը հնչումը որ չգրուիր, բայց հարկաւ զգալի է երկու բաղաձայնի մէջ, զոր օրինակ. քննել, որ կը կարդացուի քըննել, Թէպէտ ը գիրը չգրուիր։



39. Հ. Ի՞նչ բանի կը փոխուի իւ՝ իւ վերջաւորուած անուններուն մէջ ։

Պ. Իւ (էւ) վերջաւորուած անուններուն մէջ իւ կը փոխուի ու · զոր օրինակ · Թիւ, թուոյ, թուով · Պատիւ, պատուոյ, պատուով · Անիւ, անուոյ, անուով · Հովիւ, հովուի, հովուաւ · Վաղիւ, վաղուի ։

40. Հ. Ի՞նչ գիտելիք կայ փոփոխելի ձայնաւորով սկսուած միավանկ անուանց վրայ ։

Պ. Փոփոխելի ձայնաւորով սկսուած միավանկ անուններէն ոմանք վերի կանոնին համեմատ կը փոխուին խոտորնակ հոլովներուն մէջ, ոմանք եւս չեն փոխուիր · զոր օրինակ ·

Ինչ՝ կ'ըլլայ ընչի, ընչիւ · ինչք, ընչից, ընչիւք ·
Իղձ՝ » ըղձի, ըղձիւ · իղձք, ըղձից, ըղձիւք ·
Ունչ՝ » ընչոյ, ընչով · ունչք, ընչաց, ընչօք ·
Ունդ՝ » ընդոյ, ընդով · ունդք, ընդոց, ընդովք ·

Բայց

Իժ՝ կ'ըլլայ իժի, իժիւ · իժք, իժից, իժիւք ·
Իր՝ » իրի, իրաւ · իրք, իրաց, իրօք ·
Ուս՝ » ուսոյ, ուսով · ուսք, ուսոց, ուսովք ·
Ուխտ՝ » ուխտի, ուխտիւ · ուխտք, ուխտից, տիւք ։

41. Հ. Ի՞նչպէս կը հոլովին եայ վերջաւորուած հասարակ անունք ։

Պ. Եայ վերջաւորուած հասարակ անունները կը հոլովին Ա. հոլովման պէս, զոր օրինակ ·

Աշտեայ, տէի, տէիւ · տեայք, տէից, տէիւք ·
Դուզնաքեայ, քէի, քէիւ, եւն ·
Կաթողիկեայ, կէի, կէիւ, եւն ·
Փախստեայ, տէի, տէիւ, եւն ·
Քրիստոնեայ, նէի, նէիւ, եւն ։

Անդէայ բառը կը հոլովի այսպէս, Անդեայ, անդէոյ, անդէով. Անդեայք, անդէոց, անդէովք։

Իսկ էայ վերջաւորած տեղւոյ կամ բնակչաց անունները կը հոլովին Արեւելեայ բառին պէս (տես էջ 23), զոր օրինակ.

Ասորեստանեայ, նւոյ, նեաւ. նեայք, նեայց, նեօք.
Հայաստանեայ, նւոյ, նեաւ. նեայք, նեայց, նեօք.
Վանեայ, նւոյ, նեաւ. նեայք, նեայց, նեօք.
Ծովեզերեայ, րւոյ, ևն.
Միջերկրեայ, րւոյ, ևն.
Ստորերկրեայ, ստորերկրւոյ, ևն։

42. Հ. Ի՞նչպէս կը հոլովին եան վերջաւորածներն։

Պ. Եան վերջաւորուած անուանք կը հոլովին այսպէս.

Մամիկոնեան, նենի, նենիւ. նեանք, նեանց կամ նենից, նեամբք կամ նենիւք.
Ցախտեան, տենի, տենիւ. տեանք, տեանց կամ տենից, տեամբք կամ տենիւք։

43. Հ. Ի՞նչպէս կը հոլովին անք վերջաւորուածներն։

Պ. Անք վերջաւորուած անուանք որ յատուկ անուններէ շինուած են, և կը ցուցնեն ուրիշի վերաբերում, կը հոլովին այսպէս.

Ազգամանք, մանց, մամբք կամ մամք։
Շամիրամանք, միրամանց, միրամամբք կամ մամք։

44. Հ. Կա՞ն անուններ որ քանի մը կերպ կը հոլովին։

Պ. Կան հասարակ անուններ որոց բոլոր հոլովները կամ ոմանք կ'ըլլան քանի մը կերպ. կամ կը հոլովին եզակին տարբեր և յոգնակին տարբեր, զոր օրինակ.



Աղախին, աղախնոյ, աղախնով. Աղախինք կամ աղախնայք կամ նեայք, աղախնայց կամ աղախնեայց, աղախնօք կամ աղախնեօք.
Աղուէս, աղուեսու. Աղուէսք կամ աղուեսունք, աղուեսուց, աղուեսուք.
Ամիս, ամսոյ կամ ամսեան, ամսով. Ամիսք, ամսոց, ամսովք.
Անդրանիկ, անդրանկան, յանդրանկանէ, անդրանկամբ. կամ անդրանիկ, անդրանկի, անդրանկաւ. Անդրանիկք, անդրանկաց, անդրանկօք.
Գանձ, գանձու, կամ գանձի, գանձու կամ գանձիւ. Գանձք, գանձուց, գանձիւք կամ գանձուք.
Գիշեր, գիշերոյ կամ գիշերի, գիշերով կամ գիշերաւ.
Դուռն, դրան, դրամբ. Դրունք, դրանց, դրամբք. կամ դուրք, դրաց, դրօք.
Եպիսկոպոս, եպիսկոպոսի, եպիսկոպոսաւ. Եպիսկոպոսք կամ եպիսկոպոսունք, պոսաց, պոսօք.
Երագ, երագունք.
Երէց, երիցու, յերիցուէ, երիցու կամ երիցամբ. Երիցունք, երիցանց, երիցամբք.
Ջոր. ջորու. Ջորք, ջորաց, ջորօք.
Ժողովուրդ, ժողովրդեան, 'ի ժողովրդենէ, ժողովրդեամբ. Ժողովուրդք, ժողովրդոց, ժողովրդովք.
Լուսին, լուսնոյ կամ լուսնի, լուսնով կամ լուսնիւ.
Խորհուրդ, խորհրդեան կամ խորհրդոյ կամ խորհրդի, խորհրդով կամ խորհրդիւ. Խորհուրդք, խորհրդոց, խորհրդովք.
Ծաղիկ, ծաղկան, 'ի ծաղկանէ, ծաղկամբ. կամ ծաղիկ, ծաղկի, ծաղկաւ. Ծաղկունք, ծաղկանց, ծաղկամբք. կամ ծաղիկք, ծաղկաց, ծաղկօք կամ ծաղկովք.
Կին, կնոջ, կանամբ կամ կնաւ. Կանանց կամ կանաց.
Ծնունդ, ծննդեան, 'ի ծննդենէ, ծննդեամբ. Ծնունդք, ծննդոց, ծննդովք.

Կոչ , կոչոյ , կոչով · Կոչունք , կոչնոց , կոչնովք ·

Հուր , հրոյ , հրով կամ հուրբ ·

Ձեռն , ձեռին , 'ի ձեռանէ , ձեռամբ · Ձեռք , ձեռաց , ձեռօք ·

Ճիրան , ճիրանի , ճիրանաւ · Ճիրանք կամ ճիրանունք · ճիրանաց կամ ճիրանանց , ճիրանօք կամ ճիրանամբք ·

Ճրագ , ճրագի , ճրագաւ · Ճրագք կամ ճրագունք , ճրագաց , ճրագօք ·

Մահ , մահուան կամ մահու , 'ի մահուանէ , մահուամբ կամ մահու · Մահք կամ մահուանք , մահուց կամ մահուանց , մահուք կամ մահուամբք ·

Մեղր , մեղու կամ մեղեր ·

Մկան , մկանի , մկանաւ · Մկանք կամ մկանունք , մկանանց , մկանամբք ·

Մսան , մսանի , մսանաւ · Մսանք կամ մսանունք , մսանանց , մսանամբք ·

Նարդոս , Նարդոսի կամ Նարդեան , Նարդոսիւ ·

Ոտն , ոտին , յոտանէ , ոտամբ · Ոտք , ոտից , ոտիւք ·

Որմ , որմոյ , որմով · Որմք կամ որմունք , որմոց , որմովք ·

Պառաւ , պառաւոյ , պառաւով · Պառաւք կամ պառաւունք , պառաւանց , պառաւամբք ·

Պատերազմ , պատերազմի , պատերազմաւ · Պատերազմք կամ պատերազմունք , պատերազմաց , պատերազմօք ·

Ջուր , ջրոյ , ջրով կամ ջուրբ · Ջուրք , ջրոց կամ ջուրց , ջրովք կամ ջուրբք ·

Սարկաւագ , սարկաւագի , սարկաւագաւ · Սարկաւագք կամ սարկաւագունք , սարկաւագաց , սարկաւագօք ·

Ցից , ցցի , ցցիւ · Ցիցք կամ ցցունք , ցցից , ցցիւք ·

Փախուստ , փախստեան կամ փախստի , փախստեամբ կամ փախստիւ ·

Քար , քարի , քարիւ · Քարինք , քարանց , քարամբք ։

---



45· Հ· Ուրիշ ի՞նչպէս կրնայ վերջաւորիլ Դ· հոլովման անուններէն ոմանց եզակի տրականը ։

Պ· Դ· հոլովման , այսինքն , Գէտ , ճէտ-յին պէս հոլովող անուններէն ոմանց եզակի տրականը կըրնայ վերջաւորիլ նաեւ է , երբ ունի ի կամ յ նախադիր իրմէ առաջ , զոր օրինակ ·

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աթոռ · | Տըրքճ | աթոռոյ | կամ | յ աթոռի · |
| Անկողին · | » | անկողնոյ | » | յ անկողնի · |
| Բերան · | » | բերանոյ | » | 'ի բերանի · |
| Գիշեր · | » | գիշերոյ | » | 'ի գիշերի · |
| Գիր · | » | գրոյ | » | 'ի գրի · |
| Գուբ · | » | գբոյ | » | 'ի գբի · |
| Երագ · | » | երազոյ | » | յ երազի · |
| Թուղթ · | » | թղթոյ | » | 'ի թղթի · |
| Ծոց · | » | ծոցոյ | » | 'ի ծոցի · |
| Մարմին · | » | մարմնոյ | » | 'ի մարմնի · |
| Պատիժ · | » | պատժոյ | » | 'ի պատժի · |
| Պատիւ · | » | պատուոյ | » | 'ի պատուի · |
| Տիղմ · | » | տղմոյ | » | 'ի տղմի · |
| Փոր · | » | փորոյ | » | 'ի փորի · |

Բայց չըսուիր , 'ի մարդի , 'ի լուսի , 'ի ծերի , եւ ։

45· Հ· Կա՞ն անուններ որ տարբեր կերպով հոլովելով տարբեր նշանակութիւն ունենան ։

Պ· Կան անուններ որ տարբեր կերպով հոլովելով ուրիշ նշանակութիւն կ'ունենան ։

Այր , այրի , այրիւ · այր (մաղարա) ·
Այր , առն , արամբ · էրքէկմարդ ·
Գայլ , գայլի , գայլիւ · ճայլ (բերանակապ) ·
Գայլ , գայլոյ , գայլով · ճայլ (գազանը) ·
Գեղ , գեղոյ , գեղով · ճէհէննէմ ·
Գեղ , գեղջ , գիւղիւ · ճէղ ·

| | |
|---|---|
| Դի , դիոյ , դիով · | դէ (լէշ) · |
| Դիք , դից , դիօք · | չաստուած · |
| Կոյս , կուսի , կուսից · | կոյս (աղջիկ) · |
| Կոյս , կուսի , կուսաց · | կողմ · |
| Մայր , մօր , մարբ · | մայր · |
| Մայր , մայրի , մայրիւ · | մայր (չամ ծառ) · |
| Որթ , որթոյ որթով · | որթ (ասմա) · |
| Որթ , որթու , որթու · | հորթ (տանա) · |
| Սան , սանի , սանիւ · | կաթսայ · |
| Սան , սանի , սանուց · | սան , չէտնաասան · |
| Փող , փողոյ , փողով · | փող (պօրու) · |
| Փող , փողի , փողիւ · | փող (պօղազ) · |
| Օդ , օդոյ , օդով · | օդ (հավա) · |
| Օդ , օդի , օդիւ · | օդ (ոտքի աման) : |

47· Հ· Ի՞նչ փոփոխութիւն կը կրեն հասարակ անուններէն ոմանք ի բարդութեան կամ յածանցման:

Պ· Հասարակ անուններէն ոմանք բարդութեան կամ ածանցման մէջ կը պահեն իրենց հոլովման նախկին ձեւը, ոմանք եւս կը փոխեն, զոր օրի·

Փոխողներ

| | |
|---|---|
| Աստուած , տուծոյ , ծով · | Անաստուած , ծի , ծից · |
| Գլուխ , գլխոյ , գլխով · | Զօրագլուխ , գլխի , գլխաց · |
| Գործ , ծոյ , ծով · | Այգեգործ , ծի , ծաց · |
| Զէն , զինու , զինու · | Սպառազէն , զինի , զինաց · |
| Խրատ , տու , տու · | Անխրատ , տի , տից · |
| Խօսք , սից , սիւք · | Բարեխօս , սի , սաւ , սաց · |
| Սէր , սիրոյ , սիրով · | Աստուածասէր , սիրի , րաւ · |
| Սիրտ , սրտի , սրտիւ · տից · | Խստասիրտք , խստասրտաց · |

Պահողներ

| | |
|---|---|
| Գին , գնոյ , գնով · | Մեծագին , գնոյ , գնի , գնով · |
| Մարմին , մարմնոյ , նով · | Անմարմին , մնոյ , մնով · |
| Շունչ , շնչոյ , շնչով · | Անշունչ , շնչոյ , շնչով · |



48· Հ· Ունի՞ ամէն անուն յոգնակի :

Պ· կան անուններ որ յոգնակի չեն կրնար ունենալ, զոր օրինակ · քաղց , ծարաւ , ծերութիւն եւն :

Ընդհակառակն՝ կան անուններ որ եզակի չունին , ինչպէս · աղօթք , դժոխք , կամք , մեղք , միտք , պարտք եւն : Զ՚ըսուիր աղօթ , դժոխ , կամ, եւն : Այս տեսակ անուններ անեզական կը կոչուին :

Անեզական անուանք բարդութեան կամ ածանցման մէջ , կամ ուրիշ բառերու հետ իբրեւ առութեան կերպ կը թողուն ք գիրը , զոր օրինակ ·

Աղօթասէր , դժոխասէր , կամաւոր , մեղաւոր , մտախորհ , պարտաւոր · և կամ , մեղ դնել , մեղ ինչ ոչ գոյր նոցա · միտ դնել , ի մտի ունել , զմտաւ ածել , ընդ միտ մտանել . կամ եղեւ ինձ · պարտ է :

49· Հ· Կա՞ն անուններ որոց ձեւն է եզակի , և նշանակութիւնն՝ յոգնակի :

Պ· կան անուններ որոց հոլովման ձեւն է եզակի , նշանակութիւնն՝ յոգնակի · այս բառերը յոգնակի ձեւով չեն հոլովիր , զոր օրինակ ·

Մարդիկ , մարդկան , 'ի մարդկանէ , մարդկամբ · մարդիկ
Մանկտի , մանկտւոյ , 'ի մանկտւոյ , մանկտւով · տղայք
Գրեան , գրենոյ , գրենով · ճիրքեր
Որեար , որերոյ , որերով · մարդիկ
Ոսկրոտի , ոսկրոտւոյ , ոսկրոտւով · ոսկրներ
Աւագանի , աւագանւոյ , աւագանւով · մեծամեծներ

Այսպէս են նաեւ , խուժան , իշխան , ձիան , խողեան : Ուստի և չըսուիր մարդիկք , մարդկանց · մանկտիք , մանկտեաց · գրեանք , գրեանց · որեարք , որերաց , եւն :

# ԳԼՈՒԽ Բ·

## ԱԾԱԿԱՆ

50· Հ· Ո՞ր բառերը կը կոչուին ածական :

Պ· Ածական կ'ըսուին այն բառերը որ կը ցուցընեն գոյականին որպիսութիւնը , այսինքն՝ ինչպէս ըլլալը , կամ քանակութիւնը , այսինքն՝ թիւը , քանի հատ ըլլալը · զոր օրինակ , կարմիր հանդերձ , երկու հանդերձ · կարմիր կը ցուցնէ հանդերձին որպիսութիւնը , երկու՝ քանակութիւնը , ուստի և կարմիր , երկու , ածական են :

51· Հ· Ի՞նչ դիւրին կանոն կայ գոյականը և ածականը որոշելու :

Պ· Գոյականը և ածականը որոշելու դիւրին կանոն է բառին քով բան (չէյ) բառը դնել · եթէ բան կը յարմարի բառին իմաստին , ածական է բառը · եթէ չյարմարիր , գոյական է · զոր օրինակ , չըսուիր մարդ բան , քաղաք բան , տուն բան . ապա մարդ , քաղաք , տուն , գոյական են . բայց կ'ըսուի , բարի բան , չար բան , մեծ բան · ապա բարի , չար , մեծ ածական են :

52· Հ· Ո՞ւր կը դրուին ածականք :

Պ· Ածականք կը դրուին ընդհանրապէս գոյականէն ետքը , և կը հոլովին 'ի միասին , զոր օրի ·

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու· | Այր իմաստուն · | Իմաստուն մարդ · | Աշակերտ ուշիմ · |
| Ս· | Առն իմաստնոյ · | Իմաստուն մարդու · | Աշակերտ ուշիմին · |
| Տ· | Առն իմաստնոյ · | Իմաստուն մարդու · | Աշակերտ ուշիմի · |
| Հ· | զԱյր իմաստուն · | Իմաստուն մարդ · | Աշակերտ ուշիմը · |
| Բ· | յԱռնէ իմաստնոյ · | Իմաստուն մարդէ · | Աշակերտ ուշիմէն · |
| Գ· | Արամբ իմաստնով · | Իմաստուն մարդով · | Աշակերտ ուշիմով · |



Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ու· | Արք իմաստունք · | Իմաստուն մարդիկ · |
| Ս· | Արանց իմաստնոց · | Իմաստուն մարդոց · |
| Տ· | Արանց իմաստնոց · | Իմաստուն մարդոց · |
| Հ· | զԱրս իմաստունս · | Իմաստուն մարդիկ · |
| Բ· | յԱրանց իմաստնոց · | Իմաստուն մարդերէ · |
| Գ· | Արամբք իմաստնովք · | Իմաստուն մարդերով · |

53· Հ· Կրնա՞յ ածականը գոյականէն առաջ եւս դրուիլ :

Պ· Հարկ է շատ անգամ դնել ածականը գոյականէն առաջ · և այն ատեն ածականը կը մնայ անփոփոխ , զոր օրինակ ·

| | |
|---|---|
| Հաւատարիմ բարեկամ · | Հաւատարիմ բարեկամք · |
| Հաւատարիմ բարեկամի · | Հաւատարիմ բարեկամաց · |
| 'ի Հաւատարիմ բարեկամէ · | Հաւատարիմ բարեկամաց · |
| Հաւատարիմ բարեկամաւ · | Հաւատարիմ բարեկամօք · |

54· Հ· Ի՞նչ գիտելիք կայ միավանկ ածականաց վրայ :

Պ· Միավանկ ածականք գոյականէն թէ առաջ և թէ ետքը դրուելով , կը հոլովին անոր հետ · զոր օրինակ · Մեծ տուն , մեծի տան , մեծաւ տամբ · Նոր օրէնք , նորոյ օրինաց · Քաջ այր , քաջի առն , քաջաց արանց · Սուրբ քաղաք , սրբոյ քաղաքի եւն · կամ , Տուն մեծ , տան մեծի · Առն քաջի , արանց քաջաց · Գրոց սրբոց , եւն :

## ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

55. Հ. Ի՞նչ կը կոչուին քանակութիւն ցուցնող ածականք։

Պ. Քանակութիւն ցուցնող ածականք կը կոչուին Թուական, և են երեք տեսակ. Բացարձակ, Դասական և Անջներական։

56. Հ. Ի՞նչ կը ցուցնեն բացարձակներն և ո՞րոնք են։

Պ. Բացարձակները կը ցուցնեն գոյականին թիւն, այսինքն թէ քանի է գոյականով նշանակուած իրը։ Ասոնց գլխաւորներն են.

Մի, պիր · Երկու, իկի · Երեք, իւչ, Չորս, տէօրթ ·

| | Եզ. | Յոգ. | Յոգ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Մի · | Երկու · | Երեք · | Չորք · |
| Ս. | Միոյ, միոջ · | Երկուց · | Երից · | Չորից · |
| Տ. | Միոյ, միում · | Երկուց · | Երից · | Չորից · |
| Հ. | զ Մի · | զ Երկուս · | զ Երիս · | զ Չորս · |
| Բ. | 'ի Միոջէ · | յ Երկուց · | յ Երից · | 'ի Չորից · |
| Գ. | Միով · | Երկուք · | Երիւք · | Չորիւք · |

Հինգ · պէշ · Վեց, ալթը

| | Եզ. | Յոգ. | Յոգ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Հինգ · | Հինգք · | Վեց · | Վեցք · |
| Ս. | Հնգի · | Հնգից · | Վեցի · | Վեցից · |
| Տ. | Հնգի · | Հնգից · | Վեցի · | Վեցից · |
| Հ. | զ Հինգ · | զ Հինգս · | զ Վեց · | զ Վեցս · |
| Բ. | 'ի Հնգէ · | 'ի Հնգից · | 'ի Վեցէ · | 'ի Վեցից · |
| Գ. | Հնգիւ · | Հնգօք · | Վեցիւ · | Վեցիւք · |



Եօթն, եէտի · Ութ, սէքիզ

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Եօթն · | Եօթանք · | Ութ · | Ութք · |
| Ս. | Եօթան · | Եօթանց · | Ութի · | Ութից · |
| Տ. | Եօթան · | Եօթանց · | Ութի · | Ութից · |
| Հ. | զ Եօթն · | զ Եօթանս · | զ Ութ · | զ Ութս · |
| Բ. | յ Եօթանէ · | յ Եօթանց · | յ Ութէ · | յ Ութից · |
| Գ. | Եօթամբ · | Եօթամբք · | Ութիւ · | Ութիւք · |

Ինն, տօքուզ ։ Տասն, օն ·

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինն · | Իննունք · | Տասն · | Տասունք · |
| Ս. | Ըննի · | Ըննից · | Տասին · | Տասանց · |
| Տ. | Ըննի · | Ըննից · | Տասին · | Տասանց · |
| Հ. | զ Ինն · | զ Իննունս · | զ Տասն · | զ Տասունս · |
| Բ. | յ Ըննէ · | յ Ըննից · | 'ի Տասնէ · | 'ի Տասանց · |
| Գ. | Ըննիւ · | Ըննիւք · | Տասամբ · | Տասամբք · |

Մետասան, տասնումէկ, օն պիր ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Մետասան · | Մետասանք · |
| Ս. | Մետասանի · | Մետասանից · |
| Տ. | Մետասանի · | Մետասանից · |
| Հ. | զ Մետասան · | զ Մետասանս · |
| Բ. | 'ի Մետասանէ · | 'ի Մետասանից · |
| Գ. | Մետասանիւ · | Մետասանիւք · |

Մետասանին պէս կը հոլովին ·

| | | |
|---|---|---|
| Երկոտասան · | Տասուերկու · | Օն էքի · |
| Երեքտասան · | Տասուիրեք · | Օն իւչ · |
| Չորեքտասան · | Տասնուչորս · | Օն տէօրթ · |
| Հնգետասան · | Տասնուհինգ · | Օն պէշ · |
| Վեշտասան · | Տասնուվեց · | Օն ալթը · |

Եօթնեւտասն , տասնուեօթը , օն եէտի ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Եօթնեւտասն · | Եօթնեւտասանք · |
| Ս· | Եօթնեւտասին · | Եօթնեւտասանց · |
| Տ· | Եօթնեւտասին · | Եօթնեւտասանց · |
| Հ· | զ Եօթնեւտասն · | զ Եօթնեւտասանս · |
| Բ· | յ Եօթնեւտասնէ · | յ Եօթնեւտասանց · |
| Գ· | Եօթնեւտասամբ · | Եօթնեւտասամբք · |

Այսպէս կը հոլովին ·

| | | |
|---|---|---|
| Ութեւտասն · | Տասնուութը · | Օն սէքիզ · |
| Իննեւտասն · | Տասնուինը · | Օն տօքուզ · |

Քսան , եէրմի ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Քսան · | Քսանք · |
| Ս· | Քսանի · | Քսանից · |
| Տ· | Քսանի · | Քսանից · |
| Հ· | զ Քսան · | զ Քսանս · |
| Բ· | 'ի Քսանէ · | 'ի Քսանից · |
| Գ· | Քսանիւ · | Քսանիւք · |



Այսպէս կը հոլովին ·

Երեսուն , երեսնի , երեսնիւ · օթուզ ·
Քառասուն , քառասնի , քառասնիւ · քըրք ·
Յիսուն , յիսնի , յիսնիւ · էլլի ·
Վաթսուն , վաթսնի · վաթսնիւ · ալթմըշ ·
Եօթանասուն , եօթանասնի , եօթանասնիւ · եէթմիշ ·
Ութսուն , ութսնի , ութսնիւ · սէքսէն ·
Իննսուն , իննսնի , իննսնիւ · տօքսան ։

Հարիւր , եիւզ ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Հարիւր · | Հարիւրք · |
| Ս· | Հարիւրոյ · | Հարիւրոց · |
| Տ· | Հարիւրոյ · | Հարիւրոց · |
| Հ· | զ Հարիւր · | զ Հարիւրս · |
| Բ· | 'ի Հարիւրոյ · | 'ի Հարիւրոց · |
| Գ· | Հարիւրով · | Հարիւրովք · |

Այսպէս կը հոլովին ·

| | | | |
|---|---|---|---|
| Երկերիւր · | Իքի եիւզ · | Վեցհարիւր · | Ալթը եիւզ · |
| Երեքհարիւր · | Իւչ եիւզ · | Եօթնհարիւր · | Եէտի եիւզ · |
| Չորեքհարիւր · | Տէօրթ եիւզ · | Ութհարիւր · | Սէքիզ եիւզ · |
| Հինգհարիւր · | Պէշ եիւզ · | Իննհարիւր · | Տօքուզ եիւզ · |

Հազար , պին ·  Բիւր , տասը հազար , օն պին ։

| | Եզ· | Յոգ· | Եզ· | Յոգ· |
|---|---|---|---|---|
| Ո· | Հազար · | Հազարք · | Բիւր · | Բիւրք · |
| Ս· | Հազարի · | Հազարաց · | Բիւրու · | Բիւրուց · |
| Տ· | Հազարի · | Հազարաց · | Բիւրու · | Բիւրուց · |
| Հ· | զ Հազար · | զ Հազարս · | զ Բիւր · | զ Բիւրս · |
| Բ· | 'ի Հազարէ · | 'ի Հազարաց · | 'ի Բիւրէ · | 'ի Բիւրուց · |
| Գ· | Հազարաւ · | Հազարօք · | Բիւրու · | Բիւրուք · |

57. Հ. Ի՞նչ կը ցուցնեն Դասական Թուականք և որո՞նք են ։

Պ. Դասական Թուականք կը ցուցնեն գոյականին կարգն, այսինքն թէ քանիերորդ է գոյականով նշանակուած իրը, և են.

Առաջին, հոլովի.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Առաջին. | Առաջինք. |
| Ս. | Առաջնոյ. | Առաջնոց. |
| Տ. | Առաջնոյ, առաջնում. | Առաջնոց. |
| Հ. | զԱռաջին. | զԱռաջինս. |
| Բ. | յԱռաջնմէ, յառաջնոյ. | յԱռաջնոց. |
| Գ. | Առաջնով. | Առաջնովք. |

Առաջներորդ, հոլովի.

| | | |
|---|---|---|
| Ո. | Առաջներորդ. | Առաջներորդք. |
| Ս. | Առաջներորդի. | Առաջներորդաց. |
| Տ. | Առաջներորդի, դում. | Առաջներորդաց. |
| Հ. | զԱռաջներորդ. | զԱռաջներորդս. |
| Բ. | յԱռաջներորդէ. | յԱռաջներորդաց. |
| Գ. | Առաջներորդաւ. | Առաջներորդօք. |

58. Հ. Ո՞ր բառն է որ կը հոլովի առաջին բառին պէս։

Պ. Առաջին բառին պէս կը հոլովի վերջին, սոյն։ վերջին, ջնոյ, ջնում, ջնով. ջինք, ջնոց, ջնովք։

59. Հ. Ո՞ր բառեր կը հոլովին առաջներորդին պէս։

Պ. Առաջներորդին պէս կը հոլովին ուրիշ դասական թուականներ, զոր օրինակ.



| | | | |
|---|---|---|---|
| Երկրորդ | | Եօթնեւտասներորդ | |
| Երրորդ | դի. | Ութեւտասներորդ | դի. |
| Չորրորդ | դաւ. | Իննեւտասներորդ | դաւ. |
| Հինգերորդ | դք. | Քսաներորդ | դք. |
| Վեցերորդ | դաց. | Երեսներորդ | դաց. |
| Եօթներորդ | | Քառասներորդ | |
| Ութերորդ | | Յիսներորդ | |
| Իններորդ | | Վաթսներորդ | |
| Տասներորդ | | Եօթանասներորդ | |
| Մետասաներորդ | | Ութսներորդ | |
| Երկոտասաներորդ | | Իննսներորդ | |
| Երեքտասաներորդ | | Հարիւրերորդ | |
| Չորեքտասաներորդ | | Երկերիւրերորդ | |
| Հնգետասաներորդ | | Հազարերորդ | |
| Վեշտասաներորդ | | Բիւրերորդ | |

60. Հ. Ի՞նչպէս կը շինուին Դասական Թուականք։

Պ. Դասական Թուականք կը շինուին յարելով բացարձակ Թուականին վերջը րորդ կամ երորդ (*), զոր օրինակ. երկու, երկրորդ. երեք, երրորդ. չորք, չորրորդ. հինգ, հինգերորդ. տասն, տասներորդ. քսան, քսաներորդ. հարիւր, հարիւրերորդ. հազար, հազարերորդ, եւն։

Հինգէն մինչեւ ինն՝ կ'առնուն երորդ մասնիկը. Թուացեալները կրնան վերջաւորիլ նաեւ որդ, զոր օ-

---

(*) Մեկերորդ չըսուիր, այլ կը գործածուի առաջին կամ առաջներորդ կամ առաջնորդ։ Գիտելի է որ դասական գումար մը բաղկացնող բոլոր Թիւերը կ'առնուն դասական վերջաւորութիւն. ուստի 21, 25, 105, 122, 1465երորդ եւայլն, հին հայերէն լեզուով կը կարդացուին Քսաներորդ առաջներորդ, քսաներորդ հինգերորդ, հարիւրերորդ հինգերորդ. հարիւրերորդ քսաներորդ երկրորդ. հազարերորդ չորեքհարիւրերորդ վաթսներորդ հինգերորդ եւայլն։ Երբ հոլովել հարկ է, պարտ է հոլովել իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն, այսպէս. քսաներորդի հինգերորդի. հարիւրերորդի քսաներորդի երկրորդի. հազարերորդի չորեքհարիւրերորդի վաթսներորդի հինգերորդի։

րինակ. առաջնորդ, տասնորդ կամ տասանորդ, յիսնորդ, քառասնորդ, հարիւրորդ, հազարորդ:

61. Հ. Ի՞նչպէս կը շինուին Անձներականք եւ ի՞նչ կը նշանակեն:

Պ. Անձներական թուականք կը շինուին յաւելլով բացարձակներուն վրայ եքին (*) կամ եքեան, զոր օրինակ. երեք, երեքեան կամ երեքին. չորք, չորեքեան կամ չորեքին, եւն. եւ կը նշանակեն բացարձակ թուականով ցուցուած անհատներուն ամէնը միանգամայն. զոր օրինակ, երեքին կը նշանակէ՝ երեքը եւս, չորեքին՝ չորսը եւս, տասնեքին՝ տասը եւս, եւն:

62. Հ. Ի՞նչ թիւ են Անձներականք եւ ի՞նչպէս կը հոլովին:

Պ. Անձներականք են յոգնակի, եւ կը հոլովին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երկոքին, երկոքեան. | Երեքին, երեքեան. |
| Ս. | Երկոցունց, ցուն. | Երեցունց. |
| Տ. | Երկոցունց, ցուն. | Երեցունց. |
| Հ. | զԵրկոսին, զերկոսեան. | զԵրեսին, զերեսեան. |
| Բ. | յԵրկոցունց. | յԵրեցունց. |
| Գ. | Երկոքումբք. | Երեքումբք. |

63. Հ. Ի՞նչ գիտելիք կայ ամենեքին բառին վրայ:

Պ. Ամենեքին, ամենեքեան կը նշանակէ ամենքը եւս, եւ կը գործածուի գոյականաբար (**):

(*) Երկու թուականը կ'ըլլայ անձներական ոքին կամ ոքեան մասնկամբ. ուստի ըսուած է երկոքին ոչ թէ երկեքին:

(**) Ուրիշ երկու տեսակ թուականներ կան. այսինքն կին կամ պատիկ եւ եակ վերջաւորուածները:



# ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՂԸ

64. Հ. Ո՞ւր կը դրուին Թուական ածականք եւ ի՞նչպէս կը հոլովին:

Պ. Թուական ածականք ընդհանրապէս դրուելով գոյականէն ետքը՝ կը հոլովին ի միասին, բայց կրնան նաեւ դրուիլ գոյականէն առաջ:

Մէ՛ կ'ուզէ եզակի գոյական. միւսները թուականք կ'ուզեն ընդհանրապէս յոգնակի (*) գոյական, զոր օրինակ.

...

Կին կամ պատիկ վերջաւորուածները կը կոչուին կրկնական. քանզի կը նշանակեն քանակութիւն մը այնչափ անգամ կրկնուած՝ որչափ միութիւն կը ցուցնէ թիւը. զոր օրինակ, կրկին կամ կրկնապատիկ, կը նշանակէ քանակութիւն մը երկու անգամ կրկնուած. երեքկին կամ երեքպատիկ, քանակութիւն մը երեք անգամ կրկնուած. չորեքկին կամ չորեքպատիկ, քանակութիւն մը չորս անգամ կրկնուած:

Այսպէս կ'ըսուի, հնգեկին, վեցկին, եօթնեկին, եօթանասնեկին, եւայլն:

Եակ վերջաւորուածները կը նշանակեն բան մը այնչափ թուէ կամ հատէ բաղկացած. ուստի, երկեակ՝ կը նշանակէ բան մը երկու թուէ կամ հատէ բաղկացած, երրեակ՝ բան մը երեք թուէ կամ հատէ, չորեակ՝ չորս թուէ կամ հատէ բաղկացած:

Այսպէս կ'ըսուի նաեւ հնգեակ, վեցեակ, եօթնեակ, հնգետասանեակ, եւայլն:

Կին վերջաւորուած թուականները, բաց 'ի կրկին ածականէն, ընդհանրապէս չեն հոլովիր, իսկ պատիկ եւ եակ վերջաւորուածները կը հոլովին Բ. հոլովման պէս, զոր օրինակ. եօթնպատիկ, եօթնպատկի, եօթնպատկաւ. Եօթնեակ, եօթնեկի, եօթնեկաւ եւայլն:

(*) Չորսէն ետքը բացարձակ թուականներուն գոյականը երբեմն եզակի եւս կրնայ դրուիլ, բայց այն ատեն թուականը կը դրուի գոյականէն առաջ եւ անփոփոխ կը մնայ, զոր օրինակ. հինգ հոգի, եօթն օրամբ:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Այր մի · | Արք երկու · |
| Ս· | Առն միոջ · | Արանց երկուց · |
| Տ· | Առն միում · | Արանց երկուց · |
| Հ· | զԱյր մի · | զԱրս երկուս · |
| Բ· | յԱռնէ միջէ · | յԱրանց երկուց · |
| Գ· | Արամբ միով · | Արամբք երկուք · |

| | Յոգնակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Արք վեց · | Արք քսան · |
| Ս· | Արանց վեցից · | Արանց քսանից · |
| Տ· | Արանց վեցից · | Արանց քսանից · |
| Հ· | զԱրս վեց · | զԱրս քսան · |
| Բ· | յԱրանց վեցից · | յԱրանց քսանից · |
| Գ· | Արամբք վեցիւք · | Արամբք քսանիւք · |

65· Հ· Թուականք, եթէ գոյականէն առաջ դըրուին, կը հոլովի՞ն անոր հետ թէ ոչ :

Պ· Մի, երկու, երեք, չորք թուականները եթէ գոյականէն առաջ ալ դրուին, միշտ անոր հետ կը հոլովին · զոր օրինակ, միոյ առն, միով արամբ · երկուց որդւոյ · երիւք արամբք · չորից զինուորաց : Չորսէն ետքը մնացեալ Բացարձակ թուականք, եթէ գոյականէն առաջ են, կրնան անոր հետ հոլովիլ և չհոլովիլ, ուստի կրնայ ըսուիլ, եօթն սարկաւագաց, կամ եօթանց սարկաւագաց · ինն ամօք, կամ իննիւք ամօք · երկոտասան առաքելոց, կամ երկոտասանից առաքելոց :

66· Հ· Ի՞նչ գիտելիք կայ Դասականներուն գործածութեան վրայ :

Պ· Դասականները գոյականէն թէ ետքը և թէ առաջ դրուին՝ կը հոլովին 'ի միասին, և միշտ եզակի գոյական կ'ուզեն, զոր օրինակ · օր երկրորդ ; աւուր երկրորդի, յօրէ երկրորդէ · կամ երկրորդաւ աւուր, 'ի հինգերորդում ամսեան, եւայլն :



67· Հ· Ի՞նչ գիտելիք կայ Ընձներականներուն գործածութեան վրայ :

Պ· Ընձներականները գոյականէն թէ ետքը և թէ առաջ դրուին, կը հոլովին 'ի միասին, բայց կ'ուզեն միշտ յոգնակի գոյական, զոր օրինակ · որդիք երկոքեան, որդւոց երկոցունց, որդւովք երկոքումբք · կամ, երկոքեան որդիք, երկոցունց որդւոց, երկոքումբք որդւովք :

---

## ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՔ

68· Հ· Որո՞նք են անորոշ կամ [illegible] կոչուած ածականք :

Պ· Անորոշ կամ [illegible] կոչուած ածականք են ·

Ամենայն · ամէն, հէփ
Այլ · ուրիշ, պաշքա
Իւրաքանչիւր · ամէն մէկը, հէր պիր
Միւս · միւս, օ պիր
Ոմն, ոք · մը, պիր (անձանց համար)
Իմն, ինչ · մը, պիր (իրաց համար)
Նոյն · նոյն, օ
Ո՞վ, ո՞ · ո՞վ, քի՞մ
Ո՞ր · ո՞ր, հա՞նկը
Զի՞նչ · ի՞նչ, նէ՞
Միմեանց } · իրար, պիր պիրի
Իրերաց }

Եւ կը հոլովին այսպէս ·

| | Ամենայն | Այլ | |
|---|---|---|---|
| | եզակի | եզակի | յոգնակի |
| Ո· | Ամենայն · | Այլ · | Այլք · |
| Ս· | Ամենայնի · | Այլոյ · | Այլոց · |
| Տ· | Ամենայնի · | Այլում · | Այլոց · |
| Հ· | զԱմենայն · | զԱյլ · | զԱյլս · |
| Բ· | յԱմենայնէ · | յԱյլմէ · | յԱյլոց · |
| Գ· | Ամենայնիւ · | Այլով · | Այլովք · |

Այլ բառին պէս կը հոլովին իւրաքանչիւր և միւս · այսպէս ·

իւրաքանչիւր , րոյ , րում , րմէ , րով · րք , րոց ·
Միւս , սոյ , սում , սմէ , սով · սք , սոց ։

| | Ոմն | | Ոք | |
|---|---|---|---|---|
| | եզ· | յոգ· | եզ· | յոգ· |
| Ո· | Ոմն · | Ոմանք · | Ոք · | Ոմանք · |
| Ս· | Ուրումն · | Ոմանց · | Ուրուք · | Ոմանց · |
| Տ· | Ումեմն · | Ոմանց · | Ումեք · | Ոմանց · |
| Հ· | զՈմն · | զՈմանս · | զՈք · | զՈմանս · |
| Բ· | յՈւմեմնէ · | յՈմանց · | յՈւմեքէ · | յՈմանց · |
| Գ· | Ոմամբ · | Ոմամբք · | Ոմամբ · | Ոմամբք · |

| | Իմն, Ինչ | Նոյն | |
|---|---|---|---|
| | եզ· եւ յոգ· | եզ· | յոգ· |
| Ո· | Իմն , ինչ · | Նոյն · | Նոքին · |
| Ս· | Իրիք · | Նորին · | Նոցին , նոցունց · |
| Տ· | Իմիք · | Նմին · | Նոցին , նոցունց · |
| Հ· | զԻմն , զինչ · | զՆոյն · | զՆոսին · |
| Բ· | յԻմեքէ · | 'ի Նմին · | 'ի Նոցունց · |
| Գ· | Իւիք · | Նովին , նովիմբ · | Նովիմբք, նոքիմբք · |

Նոյն բառին պէս կը հոլովին , սոյն , դոյն ։



| | Ո՞վ, ո՞ | | Ո՞ր | | Զի՞նչ |
|---|---|---|---|---|---|
| | եզ· | յոգ· | եզ· | յոգ· | եզ· |
| Ո· | Ո՞վ · ո՞ · | Ո՞յք · | Ո՞ր · | Ո՞րք · | Զի՞նչ · |
| Ս· | Ո՞յր · | Ո՞յց · | Որո՞յ · | Որո՞ց · | Է՞ր · |
| Տ· | Ո՞ւմ · | Ո՞յց · | Որո՞ւմ · | Որո՞ց · | Ի՞մ · |
| Հ· | զՈ՞վ, զո՞ · | զՈ՞յս · | զՈ՞ր · | զՈ՞րս · | Զի՞նչ · |
| Բ· | յՈւմէ՞ · | յՈ՞յց · | յՈրմէ՞ · | յՈրո՞ց · | Աւ իմէ՞ · |
| Գ· | Որո՞վ · | Որո՞վք · | Որո՞վ · | Որո՞վք · | Ի՞ւ · |

| | Միմեանց | Իրերաց |
|---|---|---|
| | յոգնակի | |
| Ո· | Չունի · | Չունի · |
| Ս· | Միմեանց · | Իրերաց · |
| Տ· | Միմեանց · | Իրերաց · |
| Հ· | զՄիմեանս · | զԻրեարս · |
| Բ· | 'ի Միմեանց · | յԻրերաց · |
| Գ· | Միմեամբք · | Իրերօք · |

---

## ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆԱՑ ՏԵՂԸ

69· Հ· Ո՞ւր կը դրուին Անորոշ ածականք և ի՞նչպէս կը հոլովին ։

Պ· Անորոշ ածականք ընդհանրապէս դրուելով գոյականէն առջը՝ կը հոլովին անոր հետ , զոր օրինակ ·

Այր այլ, առն այլոյ , առն այլում , եւայլն , եւայլն ։

Այր ոմն , առն ուրումն , առն ումեմն , յառնէ ումեմնէ , առամբ ոմամբ · կամ, Այր ոք , առն ուրուք , առն ումեք , յառնէ ումեքէ · Արք ոմանք , արանց ոմանց , արամբք ոմամբք , զարս ոմանս ։

Գործ ինչ, գործոյ իրիք , գործոյ իմիք , 'ի գործոյ իմեքէ , գործով իւիք ։

Նոյն (*) բան, նորին բանի, նմին բանի, 'ի նմին բանէ, նովին բանիւ. Նոյն բանք, նոցին բանից, նովին բանիւք:

Ո՞ր տուն, որո՞յ տան, որո՞ւմ տան, յորմէ՞ տանէ, որո՞վ տամբ. Ո՞ր տունք, որո՞ց տանց, որո՞վ տամբք:

70. Հ. Ի՞նչ գիտելիք կայ ով կամ ո բառին գործածութեան վրայ:

Պ. Ով կամ ո, իբրեւ հարցական կը գործածուի գոյականաբար, և կ'ըսուի անձանց համար: Ով կամ ո՝ միայն ոք բառին հետ կը հոլովի իբրեւ ածական, այսպէս.

Ով կամ ո ոք, ոյր ուրուք, ում ումեք, յումէ ումեքէ:

71. Հ. Ի՞նչ գիտելիք կայ զինչ բառին գործածութեան վրայ:

Պ. Զինչ իբրեւ հարցական, կը գործածուի գոյականաբար, և կ'ըսուի իրաց համար: Զինչ՝ միայն ինչ բառին հետ կը գործածուի իբր ածական, այսպէս.

Զի՞նչ ինչ, է՞ր իրիք, ի՞մ իմիք, ի՞ւ իւիք:

72. Հ. Ի՞նչպէս կը գործածուին միմեանց, իւրեանց:

Պ. Միմեանց, իւրեանց բառերը կը գործածուին գոյականաբար:

---

(*) Սոյն, դոյն, նոյն, եւ ո՞ր զի՞նչ ածականները միշտ գոյականին նախադաս ընել սովորութիւն է.

Նոյնպէս ալ են ուրիշ հարցական ածականներ գոյականէն առաջ կը դրուին.



# ԳԼՈՒԽ Ա.

—

## ԴԵՐԱՆՈՒՆ

73. Հ. Ո՞ր բառերը կը կոչուին դերանուն:

Պ. Դերանուն կը կոչուին այն բառերը որ խօսքին մէջ կը դրուին առաջ յիշուած բանի մը տեղ՝ այն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Աստուած արդար է, յանցաւորները կը պատժէ նա. Տեսայ մարդը որ քեզի հետ էր: Այս խօսքերուն մէջ նա. որ, դերանուն են. քանզի առաջինը (նա) փոխանակ Աստուած բառին դրուած է, իսկ երկրորդը (որ)՝ փոխանակ մարդ բառին:

74. Հ. Ի՞նչ կը ցուցնեն Դերանուանք:

Պ. Դերանուանք կը ցուցնեն դէմք, և դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ: Առաջին դէմքն է խօսողը. երկրորդն է այն՝ առ որ կը խօսուի. երրորդն է այն՝ որոյ վրայ կը խօսուի:

75. Հ. Քանի՞ տեսակ են Դերանուանք:

Պ. Դերանուանք են չորս տեսակ, էական կամ անձնական, ցուցական և յարաբերական:

76. Հ. Որո՞նք են էական դերանուն:

Պ. Ա. Էական դերանուն են. Ես, դու, սա, դա, նա, ինքն, ինք:

Ես՝ առաջին դէմքի դերանուն է. դու՝ երկրորդ դէմքի. սա, դա, նա, ինքն, ինք՝ երրորդ դէմքի:

77. Հ. Ի՞նչպէս կը հոլովին էական դերանուանք:

Պ. Էական դերանուանք կը հոլովին այսպէս.

## Ա· ԴԷՄՔ ԵՍ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Ես · | Ես · | Պէն · |
| Ս· | Իմ · | Իմ · | Պէնիմ · |
| Տ· | Ինձ · | Ինծի · | Պանա · |
| Հ· | զԻս · | Զիս | Պէնի · |
| Բ· | յԻնէն · | Ինէ · | Պէնտէն · |
| Գ· | Ինեւ · | Իզմով · | Պէնիմ իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Մեք · | Մենք · | Պիզ · |
| Ս· | Մեր · | Մեր · | Պիզիմ · |
| Տ· | Մեզ · | Մեզ · | Պիզէ · |
| Հ· | զՄեզ · | զՄեզ · | Պիզի · |
| Բ· | 'ի Մէնջ · | Մենէ · | Պիզտէն · |
| Գ· | Մեօք · | Մեզմով · | Պիզիմ իլէ · |

---

## Բ · ԴԷՄՔ ԴՈՒ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Դու · | Դուն · | Սէն · |
| Ս· | Քո · | Քու · | Սէնին · |
| Տ· | Քեզ · | Քեզ · | Սանա · |
| Հ· | զՔեզ · | զՔեզ · | Սէնի · |
| Բ· | 'ի Քէն · | Քենէ · | Սէնտէն · |
| Գ· | Քեւ · | Քեզմով · | Սէնին իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Դուք · | Դուք · | Սիզ · |
| Ս· | Ձեր · | Ձեր · | Սիզին · |
| Տ· | Ձեզ · | Ձեզ · | Սիզէ · |
| Հ· | զՁեզ · | զՁեզ · | Սիզի · |
| Բ· | 'ի Ձէնջ · | Ձենէ · | Սիզտէն · |
| Գ· | Ձեօք · | Ձեզմով · | Սիզին իլէ · |



## Գ· ԴԷՄՔ, ՆԱ

---

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Նա · | Ան · | Օ · |
| Ս· | Նորա · | Անոր · | Օնուն · |
| Տ· | Նմա · | Անոր · | Օնա · |
| Հ· | զՆա · | զԱնի · | Օնու · |
| Բ· | 'ի Նմանէ · | Անկէ · | Օնտան · |
| Գ· | Նովաւ · | Անով · | Օնունլա · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Նոքա · | Անոնք · | Օնլար · |
| Ս· | Նոցա · | Անոնց · | Օնլարըն · |
| Տ· | Նոցա · | Անոնց · | Օնլարա · |
| Հ· | զՆոսա · | զԱնոնք · | Օնլարը · |
| Բ· | 'ի Նոցանէ · | Անոնցմէ · | Օնլարտան · |
| Գ· | Նոքօք · | Անոնցմով · | Օնլար իլէ · |

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Ինքն · | Ինք · | Քէնտի · |
| Ս· | Ինքեան · | Իրեն · | Քէնտինին · |
| Տ· | Ինքեան · | Իրեն · | Քէնտինէ · |
| Հ· | զԻնքն · | զԻնք · | Քէնտինի · |
| Բ· | յԻնքենէ · | Իրմէ · | Քէնտինտէն · |
| Գ· | Ինքեամբ · | Իրմով · | Քէնտին իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Ինքեանք · | Իրենք · | Քէնտիլէրի · |
| Ս· | Ինքեանց · | Իրենց · | Քէնտիլէրինին · |
| Տ | Ինքեանց · | Իրենց · | Քէնտիլէրինէ · |
| Հ· | զԻնքեանս · | զԻրենք · | Քէնտիլէրինի · |
| Բ· | յԻնքեանց · | Իրենցմէ · | Քէնտիլէրինտէն · |
| Գ· | Ինքեամբք · | Իրենցմով · | Քէնտիլէրի իլէ · |

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Չունի · | | |
| Ս. | Իւր, իւրեան · | Իրեն · | Քէնտինին · |
| Տ. | Իւր, իւրեան · | Իրեն · | Քէնտինէ · |
| Հ. | Չունի · | | |
| Բ. | յԻւրեանց · | Իրմէ · | Քէնտինտէն · |
| Գ. | Իւրեւ, իւրեաւ, իւրեամբ · | Իրմով · | Քէնտիսի իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Իւրեանք · | Իրենք · | Քէնտիլէրի · |
| Ս. | Իւրեանց · | Իրենց · | Քէնտիլէրինին · |
| Տ. | Իւրեանց · | Իրենց · | Քէնտիլէրինէ · |
| Հ. | զԻւրեանս · | զԻրենք · | Քէնտիլէրինի · |
| Բ. | յԻւրեանց · | Իրենցմէ · | Քէնտիլէրինտէն · |
| Գ. | Իւրեամբք ·· | Իրենցմով · | Քէնտիլէրի իլէ · |

Սա, դա, դերանունները կը հոլովին նային պէս ։

—

78. Հ. Ո՞րն է ցուցական դերանուն և ինչպէս կը հոլովի ։

Պ. Ցուցական դերանուն են այս, այդ, այն, և կը հոլովին այսպէս ·

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այս · | Աս · | Պու · |
| Ս. | Այսր, այսորիկ · | Ասոր · | Պունուն · |
| Տ. | Այսմ այսմիկ · | Ասոր · | Պունա · |
| Հ. | զԱյս · | զԱյս · | Պունու · |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ · | Ասկէ · | Պունտան · |
| Գ. | Այսու · այսուիկ · | Ասով · | Պունուն իլէ · |



Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այս, այսոքիկ · | Ասոնք · | Պունլար · |
| Ս. | Այսց, այսոցիկ · | Ասոնց · | Պունլարըն · |
| Տ. | Այսց, այսոցիկ · | Ասոնց · | Պունլարա · |
| Հ. | զԱյս, զայսոսիկ · | զԱսոնք · | Պունլարը · |
| Բ. | յԱյսց, յայսցանէ · | Ասոնցմէ · | Պունլարտան · |
| Գ. | Այսու, այսոքիւք · | Ասոնցմով · | Պունլար իլէ · |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այդ · ատ, շու · | Այդք, այդոքիկ · |
| Ս. | Այդր, այդորիկ · | Այդց, այդոցիկ · |
| Տ. | Այդմ, այդմիկ · | Այդց, այդոցիկ · |
| Հ. | զԱյդ · | զԱյդ, զայդոսիկ · |
| Բ. | յԱյդմ, յայդմանէ · | յԱյդց, յայդցանէ · |
| Գ. | Այդու, այդուիկ · | Այդու, այդոքիւք · |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այն · ան, օ · | Այնք, այնոքիկ · |
| Ս. | Այնր, այնոսիկ · | Այնց, այնոցիկ · |
| Տ. | Այնմ, այնմիկ · | Այնց, այնոցիկ · |
| Հ. | զԱյն · | զԱյնս, զայնոսիկ · |
| Բ. | յԱյնմ, յայնմանէ · | յԱյնց, յայնցանէ · |
| Գ. | Այնու, այնուիկ · | Այնու, այնոքիւք · |

—

79. Հ. Ի՞նչպէս կը գործածուին ցուցականք իբրեւ ածական ։

Պ. Ցուցականք իբրեւ ածական կը գործածուին գոյականներու հետ հոլովելով. և կրնան գոյականէն թէ առաջ, թէ ետքը դրուիլ ։ Եթէ առաջ դրուին, կարճ հոլովները կը գործածուին · եթէ ետքը դրուին, երկայնները, և այն ատեն գոյականին վրայ կ'աւելցուին ս, դ, ն գիրերը · զոր օրինակ ·

## ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այս տուն . | Այս տունք . |
| Ս. | Այսր տան . | Այսց տանց . |
| Տ. | Այսմ տան . | Այսց տանց . |
| Հ. | զԱյս տուն . | զԱյս տունս . |
| Բ. | յԱյսմ տանէ . | յԱյսց տանց . |
| Գ. | Այսու տամբ . | Այսու տամբք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այդ տուն . | Այդ տունք . |
| Ս. | Այդր տան . | Այդց տանց . |
| Տ. | Այդմ տան . | Այդց տանց . |
| Հ. | զԱյդ տուն . | զԱյդ տունս . |
| Բ. | յԱյդմ տանէ . | յԱյդց տանց . |
| Գ. | Այդու տամբ . | Այդու տամբք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այն տուն . | Այն տունք . |
| Ս. | Այնր տան . | Այնց տանց . |
| Տ. | Այնմ տան . | Այնց տանց . |
| Հ. | զԱյն տուն . | զԱյն տունս . |
| Բ. | յԱյնմ տանէ . | յԱյնց տանց . |
| Գ. | Այնու տամբ . | Այնու տամբք . |



## ՎԵՐՋԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունս այս . | Տունքս այսոքիկ . |
| Ս. | Տանս այսորիկ . | Տանցս այսոցիկ . |
| Տ. | Տանս այսմիկ . | Տանցս այսոցիկ . |
| Հ. | զՏունս զայս | զՏունսս զայսոսիկ . |
| Բ. | 'ի Տանէս յայսմանէ . | 'ի Տանցս յայսցանէ . |
| Գ. | Տամբս այսուիկ . | Տամբքս այսոքիւք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունդ այդ . | Տունքդ այդոքիկ . |
| Ս. | Տանդ այդորիկ . | Տանցդ այդոցիկ . |
| Տ. | Տանդ այդմիկ . | Տանցդ այդոցիկ . |
| Հ. | զՏունդ զայդ . | զՏունսդ զայդոսիկ . |
| Բ. | 'ի Տանէդ յայդմանէ . | 'ի Տանցդ յայդցանէ . |
| Գ. | Տամբդ այդուիկ . | Տամբքդ այդոքիւք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունն այն . | Տունքն այնոքիկ . |
| Ս. | Տանն այնորիկ . | Տանցն այնոցիկ . |
| Տ. | Տանն այնմիկ . | Տանցն այնոցիկ . |
| Հ. | զՏունն զայն . | զՏունսն զայնոսիկ . |
| Բ. | 'ի Տանէն յայնմանէ . | 'ի Տանցն յայնցանէ . |
| Գ. | Տամբն այնուիկ . | Տամբքն այնոքիւք . |

80. Հ. Որո՞նք են Ստացական դերանուն և ինչպէս կը հոլովին ։

Պ. Ստացական դերանուն են՝ իմ, քո, մեր, ձեր, իւր, և կը հոլովին այսպէս .

Եզակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | իմ. | քո. | Մեր. | Ձեր. | Իւր. |
| Ս. | իմոյ. | քո, քոյոյ. | Մերոյ. | Ձերոյ. | Իւրոյ. |
| Տ. | իմում. | քում, քոյում. | Մերում. | Ձերում. | Իւրում. |
| Հ. | զիմ. | զքո. | զՄեր. | զՁեր. | զԻւր. |
| Բ. | յիմմէ. | 'ի քումմէ. | 'ի Մերմէ. | 'ի Ձերմէ. | յԻւրմէ. |
| Գ. | իմով. | քով, քոյով. | Մերով. | Ձերով. | Իւրով. |

Յոգնակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | իմք. | քոյք. | Մերք. | Ձերք. | Իւրք. |
| Ս. | իմոց. | քոց, քոյոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Տ. | իմոց. | քոց, քոյոց. | Մերոց. | Ձերոց. | Իւրոց. |
| Հ. | զիմս. | զքոյս, | զՄերս. | զՁերս. | զԻւրս. |
| Բ. | յիմոց. | 'ի քոց, քոյոց. | 'ի Մերոց. | 'ի Ձերոց. | յԻւրոց. |
| Գ. | իմովք. | քովք, քոյովք. | Մերովք. | Ձերովք. | Իւրովք. |

---

81. Հ. Ի՞նչպէս կը գործածուին Ստացականք, իբրեւ ածական ։

Պ. Ստացականք, իբրեւ ածական, գոյականէն առաջ կամ ետքը դրուելով, կը հոլովին 'ի միասին այսպէս ։



## ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | իմ տուն. | իմ տունք. |
| Ս. | իմոյ տան. | իմոց տանց. |
| Տ. | իմում տան. | իմոց տանց. |
| Հ. | զիմ տուն. | զիմ տունս. |
| Բ. | յիմմէ տանէ. | յիմոց տանց. |
| Գ. | իմով տամբ. | իմովք տամբք. |

## ԵՏՔԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ. |
| Ս. | Տան իմոյ. | Տանց իմոց. |
| Տ. | Տան իմում. | Տանց իմոց. |
| Հ. | զՏուն իմ. | զՏունս իմ. |
| Բ. | 'ի Տանէ իմմէ. | 'ի Տանց իմոց. |
| Գ. | Տամբ իմով. | Տամբք իմովք. |

Այսպէս միւս Ստացականք ։

82. Հ. Ո՞րն է Յարաբերական դերանուն և ի՞նչպէս կը հոլովի ։

Պ. Յարաբերական դերանունն է որ կամ ո, և կը հոլովի այսպէս .

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Որ, ո. | Որ, որք, ոյք. |
| Ս. | Որոյ, ոյր. | Որոց, ոյց. |
| Տ. | Որում, ում. | Որոց, ոյց. |
| Հ. | զՈր, զո. | զՈր, զորս, զոյս. |
| Բ. | յՈրմէ, յումմէ. | յՈրոց, յոյց. |
| Գ. | Որով. | Որովք. |

## ԳԼՈՒԽ Դ.

—

### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՆԱԽԴԻՐ

83. Հ. Որ բառերը կը կոչուին Նախադրութիւն:

Պ. Նախադրութիւն կը կոչուին այն բառերը, որ կը ցուցնեն գործողութեան պարագաներն, զոր օրինակ տեղ, ժամանակ, եղանակ, պատճառ:

84. Հ. Որո՞նք են տեղւոյ պարագայ ցուցնող Նախադրութիւնք:

Պ. Տեղւոյ պարագայ ցուցնող կամ ո՞ւր հարցման պատասխանող Նախադրութիւնք են.

Առաջի. առջեւը, էօնիւնէ, էօնիւնտէ.
Առ ընթեր. / Առ երի. } քովը, եանընա, եանընտա.
Արտաքոյ. դուրսը, տըշարըսընա, տըշարըսընտա.
Զկնի. / Զհետ. } ետեւէն, արդընտա, արդընտան.
Ի մէջ. / Ի միջի. } մէջտեղը, օրթասընա, օրթասընտա.
Ի միջոյ, ընդ մէջ. մէջտեղէն, օրթասընտան.
Ի ներքոյ. ներսը, իչէրիսինէ, իչէրիսինտէ.
Ի վեր քան զ / Ի վերոյ քան զ } (բանէ մը) վեր, եօգարը.
Ի վերայ. վրան, իւսթիւնէ, իւսթիւնտէ.
Հանդէպ. / Յանդիման. } դիմացը, գարշըսընա, գարշըսընտա.
Յետոյ. ետին, արդընա, արդընտա.
Շուրջ զ. բոլորտիքը, էթրաֆընա, էթրաֆընտա.



85. Հ. Որո՞նք են ժամանակի պարագայ ցուցընող Նախադրութիւնք:

Պ. Ժամանակի պարագայ ցուցնող կամ երբ հարցման պատասխանող Նախադրութիւնք են.

Յառաջ քան զ / Նախ քան զ } . (բանէ մը) առաջ, էվվէլ.
Յետ, ետքը, սօնրա:

86. Հ. Որո՞նք են մերթ տեղւոյ և մերթ ժամանակի պարագայ ցուցնող Նախադրութիւնք:

Պ. Մերթ տեղւոյ և մերթ ժամանակի պարագայ ցուցնող, կամ ո՞ւր և ե՞րբ հարցման պատասխանող Նախադրութիւնք են.

Մինչեւ 'ի / Մինչեւ ց } . մինչեւ, ինչուան, տէկ, տէ:

88. Հ. Որո՞նք են եղանակի պարագայ ցուցնող Նախադրութիւնք:

Պ. Եղանակի պարագայ ցուցնող, կամ, Ինչպէս, հարցման պատասխանող Նախադրութիւնք են.

Ի ձեռն. ձեռքով, միջոցով, էլի իլէ.
Ընդդէմ. / Հակառակ. } դէմ, գարշը.
Հանդերձ. հետը, մէկտեղ, պէրապէր.
Փոխանակ. տեղը, եէրինէ:

88. Հ. Որո՞նք են պատճառի կամ Նպատակի պարագայ ցուցնող Նախադրութիւնք:

Պ. Պատճառի կամ Նպատակի պարագայ ցուցնող.

կամ, ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակաւ, հարցման պատասխանող նախադրութիւնք են.

| | |
|---|---|
| Առ 'ի. | համար, պատճառաւ, ինչուն. |
| Վասն. | |
| Յաղագս. | |
| Սակս. | |

89. Հ. Զկա՞ն ուրիշ նախադրութիւններ:

Պ. Կան նախադրութիւններ որ նախդիր ևս կը կոչուին, և են. զ, ի, յ, ց, առ, ընդ, ըստ:

90. Հ. Մինակ կը գործածուի՞ն նախադրութիւնք:

Պ. Նախադրութիւնք չեն գործածուիր մինակ, այլ կ'ուզեն իրենցմէ ետքը բառ մը, ապա թէ ոչ չեն տար իմաստ. զոր օրինակ, վասն, համար, է նախադրութիւն, և չտար իմաստ առանձինն. բայց երբ կ'ըսեմ, վասն Աստուծոյ, Աստուծոյ համար. վասն սիրոյ, սիրոյ համար. կունենամ իմաստ:

91. Հ. Ի՞նչ կը կոչուի նախադրութեան վերաբերեալ բառը:

Պ. Նախադրութեան վերաբերեալ բառը կը կոչուի նախադրութեան խնդիր, ուստի վերի օրինակներուն մէջ բառք Աստուծոյ, սիրոյ, են խնդիր վասն նախադրութեան:



# ԳԼՈՒԽ Ե.

## ԲԱՅ

92. Հ. Ո՞ր բառերը բայ կ'ըսուին:

Պ. Բայ կ'ըսուին այն բառերը որ կը ցուցնեն ընել կամ ըլլալ. զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ. շրջիմ, կը պտըտիմ, կը ցուցնեն ընել բան մը. եմ, եմ. հիւանդանամ, կը հիւընդնամ, կը ցուցնեն ըլլալ բան մը, ուստի բայ են:

93. Հ. Քանի՞ տեսակ են բայերը:

Պ. Բայերն են երեք տեսակ. էական բայ, ներգործական բայ, և չէզոք բայ:

94. Հ. Ո՞րն է էական բայ:

Պ. Էական բայ է եմ:

95. Հ. Ո՞րչափ են ներգործական բայք:

Պ. Ներգործական բայք շատ են, և ամէն ներգործական բայ ունի կրաւորական ձեւ:

96. Հ. Ի՞նչ կը ցուցնեն ներգործական, կրաւորական և չէզոք:

Պ. Ներգործականը կը ցուցնէ բան մը ընել ուրիշին. կրաւորականը կը ցուցնէ բան մը կրել ուրիշէն. զոր օրինակ. սիրեմ, կը սիրեմ (ուրիշ մը), ներգործական է. սիրիմ, կը սիրուիմ (ուրիշէ մը), կրաւորական է:

Չէզոք բայերէն ոմանք կը ցուցնեն ընել բան մը՝ ո՛չ ուրիշին, ինչպէս՝ շրջիմ, մտանեմ, երթամ. և ոմանք կը ցուցնեն կրել բան մը՝ ո՛չ ուրիշէն, զոր օրինակ, հիւանդանամ, մեռանիմ, ծերանամ: Չէզոք բայերը չեն կրնար ունենալ կրաւորական:

97· Հ· Ի՞նչ բաներ ուշադրութեան արժանի են բայերուն մէջ:

Պ· Բայերուն մէջ ուշադրութեան արժանի են անոնց թիւը, դէմքը, ժամանակը և եղանակը:

98· Հ· Ի՞նչ է թիւ:

Պ· Թիւն է եզակին և յոգնակին· զոր օրինակ· Սիրեմ, սիրես, սիրէ, կը սիրեմ, կը սիրես, կը սիրէ, են եզակի· Սիրեմք, սիրէք, սիրեն· կը սիրենք, կը սիրէք, կը սիրեն, են յոգնակի:

99· Հ· Քանի՞ է դէմքը:

Պ· Դէմքն է երեք, առաջին, երկրորդ, երրորդ· զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ, է առաջին դէմք· սիրես, կը սիրես, է երկրորդ դէմք· սիրէ կը սիրէ, է երրորդ դէմք: Այսպէս յոգնակիին մէջ:

100· Հ· Քանի՞ է ժամանակը:

Պ· Ժամանակն է բուն երեք· ներկայ, անցեալ, ապառնի: Ներկան կը ցուցնէ հիմակուանը, զոր օրինակ, սիրեմ, կը սիրեմ, այսինքն՝ հիմա: Անցեալը կը ցուցնէ անցածը, զոր օրինակ, սիրեցի, սիրեցի, այսինքն՝ առաջ: Ապառնին կը ցուցնէ գալիքը, զոր օրինակ, սիրեցից, պիտի սիրեմ, այսինքն՝ ետքը:

Անցեալն է երկու· անկատար անցեալ, որ է սիրէի, կը սիրէի· և կատարեալ անցեալ, որ է սիրեցի:

101· Հ· Քանի՞ է Եղանակը:

Պ· Եղանակն է չորս· սահմանական, հրամայական, ստորադասական և աներեւոյթ (անորոշ դերբայ):

Սահմանականը, հրամայականը և ստորադասականն ունին դէմք, և կը կոչուին դիմաւոր բայ, իսկ աներեւոյթը չունի դէմք, ուստի և կը կոչուի անդէմ բայ:



102· Հ· Աներեւո՞յթն է միայն անդէմ:

Պ· Անցեալ և ապառնի ընդունելութիւններն ևս, ինչպէս սիրեալ, սիրած, սիրելոց, սիրելու, են անդէմ:

103· Հ· Ուստի՞ կը ճանչցուին բայի մը թիւը, դէմքը, ժամանակը և եղանակը:

Պ· Բայի մը թիւը, դէմքը, ժամանակը և եղանակը կը ճանչցուին բային վերջաւորութեան փոխուելէն:

104· Հ· Ի՞նչ կ'ըսուի բային վերջաւորութեան փոխուելուն:

Պ· Թիւ, դէմք, ժամանակ և եղանակ ցուցնելու համար բային վերջաւորութեան փոխուելուն կ'ըսուի լծորդութիւն:

105· Հ· Քանի՞ է լծորդութիւնը:

Պ· Լծորդութիւնը, այսինքն՝ բայերուն վերջաւորութեան կերպը, չորս է: Բայերէն ոմանք կը վերջաւորին ել, զոր օրինակ, սիրել, հասանել· ոմանք կը վերջաւորին իլ, զոր օրինակ, խօսիլ, ուսանիլ· ոմանք կը վերջաւորին ալ, զոր օրինակ, աղալ, խոստանալ· ոմանք ևս կը վերջաւորին ուլ, զոր օրինակ, թողուլ, ընթեռնուլ:

106 Հ· Բայերուն ո՞րչափը կանոնաւոր է, և ո՞րչափին՝ անկանոն:

Պ· Բայերուն մեծ մասը կանոնաւոր է, և ոմանք՝ անկանոն:

107· Հ· Ի՞նչպէս կը խոնարհի եմ (*) էական բայն:

Պ· Եմ էական բայը կը խոնարհի այսպէս:

---

(*) Եղանիմ, լինիմ եւս չէզոք են. տես անկանոններուն մէջ·

## Սահմանական եղանակ, ներկայ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եմ. | Եմ. | Պէն իմ |
| Բ. » Ես. | Ես. | Սէն սին |
| Գ. » Է. | Է. | Օ տուր |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եմք. | Ենք. | Պիզ իզ |
| Բ. » Էք. | Էք. | Սիզ սինիզ |
| Գ. » Են. | Են. | Օնլար տըրլար |

## Անցեալ անկատար

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Էի. | Էի. | Պէն իտիմ |
| Բ. » Էիր. | Էիր. | Սէն իտին |
| Գ. » Էր. | Էր. | Օ իտի |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Էաք. | Էինք. | Պիզ իտիք |
| Բ. » Էիք. | Էէք. | Սիզ իտինիզ |
| Գ. » Էին. | Էին. | Օնլար իտիլէր |

## Անցեալ կատարեալ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եղէ. | Եղայ. | Օլտում |
| Բ. » Եղեր. | Եղար. | Օլտուն |
| Գ. » Եղեւ. | Եղաւ. | Օլտու |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եղաք. | Եղանք. | Օլտուք |
| Բ. » Եղէք. | Եղաք. | Օլտունուզ |
| Գ. » Եղեն. | Եղան. | Օլտուլար |



## Ապառնի

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եղէց. | Պիտի ըլլամ. | Օլաճաղըմ |
| Բ. » Եղիցիս. | Պիտի ըլլաս. | Օլաճագսըն |
| Գ. » Եղիցի. | Պիտի ըլլայ. | Օլաճագ |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եղիցուք. | Պիտի ըլլանք. | Օլաճաղըզ |
| Բ. » Եղիջիք. | Պիտի ըլլաք. | Օլաճագսընըզ |
| Գ. » Եղիցին. | Պիտի ըլլան. | Օլաճագլար |

## Հրամայական եղանակ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Լեր (*), լիջիր, | | |
| լինիջիր, | Եղիր. | Օլ |
| Մի՛ լինիր. | Մի՛ ըլլար. | Օլմա |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Լերուք, եղե- | | |
| րուք, լիջիք, | | |
| լինիջիք. | Եղէք. | Օլուն |
| Մի՛ լինիք. | Մի՛ ըլլաք. | Օլմայըն |

## Ստորադասական

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Իցեմ. | Ըլլամ. | Օլայըմ |
| Բ. » Իցես. | Ըլլաս. | Օլասըն |
| Գ. » Իցէ. | Ըլլայ. | Օլսուն |

(*) Եր բային հրամայականն է եր, երուք, սոնք գործածուած են ողջ բառին հետ, ողջ եր, ողջ երուք։

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Իցեմք . | Ըլլանք . | Օլալըմ |
| Բ. » Իցէք . | Ըլլաք . | Օլասընըզ |
| Գ. » Իցեն . | Ըլլան . | Օլսունլար |

Աներեւոյթ կամ անորոշ դերբայ

| | | |
|---|---|---|
| Անդէմ Լինել . | Ըլլալ . | Օլմագ |

Անցեալ ընդունելութիւն կամ անցեալ դերբայ

| | | |
|---|---|---|
| Անդէմ Լեալ, եղեալ . | Եղած . | Օլմուշ |

Ապառնի ընդունելութիւն կամ ապառնի դերբայ

| | | |
|---|---|---|
| Անդէմ Լինելոց . | Ըլլալու . | Օլաճագ |

ԶՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՁԵՒԸ

## Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

108. Հ. Ի՞նչպէս կը վերջաւորին առաջին լծորդութեան բայերը ։

Պ. Առաջին լծորդութեան բայերուն մի մասը կը վերջաւորի եմ սահմանական ներկային Ա. դէմքին մէջ, ինչպէս սիր-եմ, կը սիրեմ, սէվէրէմ . միւս մասը կը վերջաւորի անեմ, ինչպէս հատ-անեմ, կը կտրեմ, քէսէրէմ,

109. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին եմ վերջաւորած բայք ։

Պ. Եմ վերջաւորած բայք, զոր օրինակ սիրեմ, կը խոնարհին այսպէս .



Սահմանական եղանակ, ներկայ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Դէմ Ա. Սիր-եմ . | Կը սիրեմ . | Սէվէրէմ |
| Բ. » Սիր-ես . | Կը սիրես | Սէվէր-սին |
| Գ. » Սիր-է . | Կը սիրէ . | Սէվէր |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Սիր-եմք . | Կը սիրենք . | Սէվէրիզ |
| Բ. » Սիր-էք . | Կը սիրէք . | Սէվէր-սինիզ |
| Գ. » Սիր-են . | Կը սիրեն . | Սէվէրլէր |

Անցեալ անկատար

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Սիր-էի . | Կը սիրէի . | Սէվէր իտիմ |
| Բ. » Սիր-էիր . | Կը սիրէիր . | Սէվէր իտին |
| Գ. » Սիր-էր . | Կը սիրէր . | Սէվէր իտի |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Սիր-էաք . | Կը սիրէինք . | Սէվէր իտիք |
| Բ. » Սիր-էիք . | Կը սիրէիք . | Սէվէր իտինիզ |
| Գ. » Սիր-էին . | Կը սիրէին . | Սէվէր իտիլէր |

Անցեալ կատարեալ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Սիր-եցի . | Սիրեցի . | Սէվտիմ |
| Բ. » Սիր-եցեր . | Սիրեցիր . | Սէվտին |
| Գ. » Սիր-եաց . | Սիրեց . | Սէվտի |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմ Սիր-եցաք . | Սիրեցինք . | Սէվտիք |
| Բ. » Սիր-եցէք . | Սիրեցիք . | Սէվտինիզ |
| Գ. » Սիր-եցին . | Սիրեցին . | Սէվտիլէր |

Ապառնի

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-եցից · | Պիտի սիրեմ · | Սէվէճէյիմ |
| Բ. » Սիր-եսցես · | Պիտի սիրես · | Սէվէճէքսին |
| Գ. » Սիր-եսցէ · | Պիտի սիրէ · | Սէվէճէք |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-եսցուք · | Պիտի սիրենք · | Սէվէճէյիզ |
| Բ. » Սիր-եսջիք · | Պիտի սիրէք · | Սէվէճէքսինիզ |
| Գ. » Սիր-եսցեն · | Պիտի սիրեն · | Սէվէճէքլէր |

Հրամայական եղանակ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Սիր-եա , սիր-եսջիր · | Սիրէ · | Սէվ |
| Մի սիր-եր · | Մի՛ սիրեր · | Սէվմէ |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Սիր-եցէք , սիր-եսջիք · | Սիրեցէք · | Սէվին |
| Մի սիր-էք · | Մի՛ սիրէք · | Սէվմէյին |

Ստորադասական

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-իցեմ · | Սիրեմ · | Սէվէյիմ |
| Բ. » Սիր-իցես | Սիրես · | Սէվէսին |
| Գ. » Սիր-իցէ · | Սիրէ · | Սէվսին |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-իցեմք | Սիրենք · | Սէվէլիմ |
| Բ. » Սիր-իցէք · | Սիրէք · | Սէվէսինիզ |
| Գ. » Սիր-իցեն · | Սիրեն · | Սէվսինլէր |



Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-ել · | Սիրել · | Սէվմէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-եալ(*) · | Սիրած · | Սէվմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-ելոց | Սիրելու · | Սէվէճէք |

*Ասոր պէս կը խոնարհի ամէն եմ վերջաւորած կանոնաւոր բայ , ինչպէս ·*

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Ազատ-եմ . | Ազատել · | Գուրթարմաք |
| Փակ-եմ . | Գոցել · | Գափամաք |
| Գան-եմ . | Ծեծել · | Տէօյմէք |

ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Ամաչ-եմ . | Ամչնալ · | Ուտանմաք |
| Գոչ-եմ . | Գոչել · | Պաղըրմաք |
| Ննջ-եմ . | Քնանալ · | Ույումաք |

110. Հ. *Մինակ եմ վերջաւորած բայե՞ր կը խոնարհին սիրեմին պէս ։*

Պ. *Կան քանի մը անեմ վերջաւորած բայեր , ինչպէս դարմանեմ , ժամանեմ , սերմանեմ , որ սիրեմին պէս կը խոնարհին , վասն զի ատոնց արմատներն են , դարման , սերման , ժաման ։*

---

(*) Սիրեմին պէս խոնարհող բայերէն ոմանց Անցեալ ընդունելութիւնը կ'ըլլայ եցեալ , զոր օրինակ ծնեցեալ , խնդրեցեալ ։ Պէտք է գիտնալ սակայն որ անխտիր ամէն բայի համար չէ այս , շատ խորթ կ'ըլլար ըսել՝ աղօթեցեալ , բժշկեցեալ , եւայլն ։

111. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին անեմ վերջաւորած բայք։

Պ. Անեմ վերջաւորած բայք, զոր օրինակ հատ-անեմ, կը խոնարհին այսպէս.

Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Հատ-անեմ. | Կը կտրեմ. | Քեսերիմ |
| Հատ-անես. | Կը կտրես. | Քեսերսին |
| Հատ-անէ. | Կը կտրէ. | Քեսեր |
| Հատ-անեմք.. | Կը կտրենք. | Քեսերիզ |
| Հատ-անէք. | Կը կտրէք. | Քեսերսինիզ |
| Հատ-անեն. | Կը կտրեն. | Քեսերլեր |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Հատ-անէի. | Կը կտրէի. | Քեսեր իդիմ |
| Հատ-անէիր. | Կը կտրէիր. | Քեսեր իդին |
| Հատ-անէր. | Կը կտրէր. | Քեսեր իդի |
| Հատ-անէաք. | Կը կտրէինք. | Քեսեր իդիք |
| Հատ-անէիք. | Կը կտրէիք. | Քեսեր իդինիզ |
| Հատ-անէին. | Կը կտրէին. | Քեսեր իդիլեր |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Հատ-ի. | Կտրեցի. | Քեսդիմ |
| Հատ-եր | Կտրեցիր. | Քեսդին |
| Հատ, ե-հատ. | Կտրեց. | Քեսդի |
| Հատ-աք. | Կտրեցինք. | Քեսդիք |
| Հատ-էք. | Կտրեցիք. | Քեսդինիզ |
| Հատ-ին. | Կտրեցին. | Քեսդիլեր |



Ապառնի

| | | |
|---|---|---|
| Հատ-ից. | Պիտի կտրեմ. | Քեսեճեյիմ |
| Հատ-ցես. | Պիտի կտրես. | Քեսեճեքսին. |
| Հատ ցէ. | Պիտի կտրէ. | Քեսեճեք |
| Հատ-ցուք. | Պիտի կտրենք. | Քեսեճեյիզ |
| Հատ-ջիք. | Պիտի կտրէք. | Քեսեճեքսինիզ |
| Հատ-ցեն. | Պիտի կտրեն. | Քեսեճեքլեր |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Հատ, հատ-ջիր. | | |
| հատ-անիջիր. | Կտրէ. | Քես |
| Մի հատ-աներ. | Մի՛ կտրեր. | Քեսմէ |
| Հատ-էք, հատ-ջիք, | | |
| հատ-անիջիք. | Կտրեցէք. | Քեսին |
| Մի հատ-անէք. | Մի՛ կտրէք. | Քեսմէյին |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Հատ-անիցեմ. | Կտրեմ. | Քեսեյիմ |
| Հատ-անիցես. | Կտրես. | Քեսեսին |
| Հատ-անիցէ. | Կտրէ. | Քեսսին |
| Հատ-անիցեմք. | Կտրենք. | Քեսելիմ |
| Հատ-անիցէք. | Կտրէք. | Քեսեսինիզ |
| Հատ-անիցեն. | Կտրեն. | Քեսսինլեր |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Հատ-անել. | Կտրել. | Քեսմէք. |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ-եալ. | Կտրած. | Քեսմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ-անելոց. | Կտրելու. | Քեսեճեք |

Այսոր պէս կը խոնարհի ամէն անեմ վերջաւորած բայ, զոր օրինակ.

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Տես–անեմ · | Տեսնել · | Կէօրմէք |
| Բեկ–անեմ | Կոտրել · | Գըրմաք |
| Արկ–անեմ · | Դնել · | Գօմաք |

### ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Անց–անեմ · | Անցնիլ · | Կէչմէք |
| Հաս–անեմ · | Հասնիլ · | Եէթիշմէք |
| Ել–անեմ · | Ելնել · | Չըքմաք |

112· Հ· Մինակ անեմ վերջաւորած բայե՞ր կը խոնարհին տեսանեմին պէս ։

Պ· Կան քանի մը եմ վերջաւորած բայեր որ տեսանեմին պէս կը խոնարհին · ասոնք են ածեմ, բերեմ, հանեմ · ուստի և ասոնց կատարեալը, ապառնին եւ հրամայականը կ՚ըլլան տեսանեմին պէս ածի, ածից, ած · բերի, բերից, բեր · հանի, հանից, հան . ոչ թէ սիրեմին պէս ածեցի, ածեցից, ածէ · բերեցի, բերեցից, բերէ, եւ ։

113· Հ· Ի՞նչ է անեմ վերջաւորած բայերուն արմատը ։

Պ· Անեմ վերջաւորած բայերուն արմատն է կատարեալին եզակի Գ· դէմքը և Հրամայականին եզակին ։ Ուստի ասոնք խոնարհման մէջ ըի և էի և ուի փոխուած արմատական ձայնաւորը նորէն կ՚առնուն, զոր օրինակ ·



| | կատար· Գ· դէմք | Հրամայական |
|---|---|---|
| Գըտանեմ · | Գիտ կամ եգիտ · | Գիտ |
| Մըտանեմ · | Մուտ » եմուտ · | Մուտ |
| Կըլանեմ · | Կուլ » եկուլ · | Կուլ |
| Անիծանեմ · | Անէծ , | Անէծ |
| Դիզանեմ · | Դէզ » եդէզ · | Դէզ |
| Մուծանեմ · | Մոյծ » եմոյծ · | Մոյծ |
| Զօրացուցանեմ · | Զօրացոյց , | |
| Կորուսանեմ · | Կորոյս · | |

114· Հ· Անեմ վերջաւորած բայերուն կատարեալ եզակի Գ· դէմքին սկիզբը ե՞րբ ե գիրը կը դրուի, ե՞րբ է գիրը, և ե՞րբ այս յաւելուածն ամենեւին չըլլար ։

Պ· Երբ բային արմատը բաղաձայնով սկսած միավանկ է, կատարեալին եզակի Գ· դէմքին սկիզբը ե գիրը կը դրուի, զոր օրինակ ·

| | Արմատ | կատար· Գ· դէմք |
|---|---|---|
| Հատանեմ · | Հատ · | ե–հատ |
| Մտանեմ · | Մուտ · | ե–մուտ |
| Հասանեմ · | Հաս · | ե–հաս |

Երբ բային արմատն ա ձայնաւորով սկսած միավանկ է, յիշեալ դէմքին սկիզբը է գիրը կը դրուի, զոր օրինակ ·

| | Արմատ | կատար· Գ· դէմք |
|---|---|---|
| Արկանեմ · | Արկ · | է–արկ |
| Ածեմ · | Ած · | է–ած |

Երբ բային արմատն ուրիշ ձայնաւորով կ՚սկսի, այս յաւելուածը չըլլար, զոր օրինակ.

| | Արմատ | Կատար. Գ. դէմք |
|---|---|---|
| Ելանեմ. | Ել. | Ել (ոչ է-ել) |
| Եղծանեմ. | Եղծ. | Եղծ (ոչ է-եղծ) |
| Իջանեմ. | Էջ. | Էջ (ոչ է-էջ) |

Նոյնպէս երբ բային արմատը բազմավանկ է, թէ բաղաձայնով սկսած ըլլայ թէ ձայնաւորով, ամենեւին գրի յաւելուած չըլլար, զոր օրինակ.

| | Արմատ | Կատար Գ. դէմք |
|---|---|---|
| Անիծանեմ. | Անէծ | Անէծ (ոչ է-անէծ) |
| Զօրացուցանեմ. | Զօրացոյց. | Զօրացոյց (ոչ է-զօրացոյց) |
| Կորուսանեմ. | Կորոյս. | Կորոյս (ոչ է-կորոյս) |

115. Հ. Ի՞նչ գիտելիք կայ հարկանեմ բային վրայ։

Պ. Հարկանեմ բային կ գիրը կը ջնջուի արմատական ժամանակներուն, այսինքն կատարեալին, ապառնոյն, հրամայականին, և անցեալ ընդունելութեան մէջ, զոր օրինակ.

| | Կտր. | Ապ. | Հրմ. | Անց. |
|---|---|---|---|---|
| Հարկանեմ, | Հարի, | Հարից, | Հար, | Հարեալ |
| Փոխանակ | Հարկի, | Հարկից, | Հարկ, | Հարկեալ |

Զարկանեմ բային կ գիրը յիշեալ ժամանակներուն մէջ կը պահուի։

---



# ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

—

116. Հ. Ուրիշ ի՞նչ բայեր կան անեմ վերջաւորած բայերուն կարգէն։

Պ. Բոլոր ուցանեմ վերջաւորեալ բայեր անեմ վերջաւորած բայերուն կարգէն են։

117. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին ուցանեմ վերջաւորած բայք։

Պ. Ուցանեմ վերջաւորած բայք, զոր օրինակ զօրացուցանեմ, կը խոնարհին հետեւեալ կերպով.

## Սահմանական եղանակ, Ներկայ

| | | |
|---|---|---|
| Զօրացուց-անեմ. | Կը զօրացունեմ. | Գուվվէթլէնտիրիրիմ |
| Զօրացուց-անես. | եւն. | |

## Անկատար անցեալ

| | | |
|---|---|---|
| Զօրացուց-անէի. | Կը զօրացունէի. | Գուվվէթլէնտիրիրտիմ |
| Զօրացուց-անէիր. | եւն. | |

## Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Զօրացուց-ի. | Զօրացուցի. | Գուվվէթլէնտիրտիմ |
| Զօրացուց-եր. | Զօրացուցիր. | Գուվվէթլէնտիրտին |
| Զօրացոյց. | Զօրացուց. | Գուվվէթլէնտիրտի |
| Զօրացուց-աք. | Զօրացուցինք. | Գուվվէթլէնտիրտիք |
| Զօրացուց-էք. | Զօրացուցիք. | Գուվվէթլէնտիրտինիզ |
| Զօրացուց-ին. | Զօրացուցին. | Գուվվէթլէնտիրտիլէր |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Զօրացուց-ից․ | Պիտի զօրացունեմ․ | Գուվվէթլէնտիրէճէյիմ |
| Զօրացուս-ցես․ | » զօրացունես․ | Գուվվէթլէնտիրէճէքսին |
| Զօրացուս-ցէ․ | » զօրացունէ․ | Գուվվէթլէնտիրէճէք |
| Զօրացուս-ցուք․ | » զօրացունենք․ | Գուվվէթլէնտիրէճէյիզ |
| Զօրացուս-ջիք․ | » զօրացունէք․ | Գուվվէթլէնտիրէճէքսինիզ |
| Զօրացուս-ցեն․ | » զօրացունեն | Գուվվէթլէնտիրէճէքլէր |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Զօրացո, զօրացուսջիր, զօրացուցանիջիր․ | Զօրացուր․ | Գուվվէթլէնտիր |
| Մի՛ զօրացուցաներ․ | Մի՛ զօրացուներ․ | Գուվվէթլէնտիրմէ |
| Զօրացուցէք, զօրացուսջիք, զօրացուցանիջիք․ | Զօրացուցէք․ | Գուվվէթլէնտիրին |
| Մի զօրացուցանէք․ | Մի՛ զօրացունէք․ | Գուվվէթլէնտիրմէյին |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Զօրացուցանիցեմ․ | Զօրացունեմ․ | Գուվվէթլէնտիրէյիմ |
| Զօրացուցանիցես․ | Եւն․ | |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Զօրացուցանել․ | Զօրացունել․ | Գուվվէթլէնտիրմէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Զօրացուցեալ | Զօրացուցած․ | Գուվվէթլէնտիրմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Զօրացուցանելոց․ | Զօրացունելու․ | Գուվվէթլէնտիրէճէք |

---



118․ Հ․ Ի՞նչպէս կը շինուին ուցանել վերջաւորած բայեր ։

Պ․ Ուցանել վերջաւորած բայերը կը շինուին բայի մը կատարեալին առաջին դէմքին վերջին ձայնաւորը զեղջելով եւ ուցանել մասնիկը դնելով, զոր օրինակ ·

Կատարեալ

| | | |
|---|---|---|
| Լռեմ․ | Լռեց-է․ | Լռեց-ուցանել |
| Հասանեմ․ | Հաս-է․ | Հաս-ուցանել |
| Բնակիմ․ | Բնակեց-աւ․ | Բնակեց-ուցանել |
| Սնանիմ․ | Սն-աւ․ | Սն-ուցանել |
| Գնամ․ | Գնաց-է․ | Գնաց-ուցանել |
| Զօրանամ․ | Զօրաց-աւ․ | Զօրաց-ուցանել |
| Լնում․ | Լց-է․ | Լց-ուցանել |
| Զգենում․ | Զգեց-աւ․ | Զգեց-ուցանել |

119․ Հ․ Ի՞նչ կը կոչուին, եւ երբ կը շինուին ուցանել վերջաւորած բայեր ։

Պ․ Ուցանել վերջաւորած բայեր հայերէն կոչուած են անցողական, եւ վերոյիշեալ կերպով կը շինուին ։ Այս ձեւը կու տանք բային, երբ անոր գործողութիւնն ընել տալ կ'ուզենք ուրիշի ։ Զոր օրինակ · Ես կը նստիմ ։ Երբ ուրիշի մը ընել տալ կ'ուզեմ այն գործը, այսինքն նստելու գործողութիւնը, կ'ըսեմ, նստուցանել, կը նստեցունեմ, այսինքն՝ կ'ընեմ, կը հրամայեմ, թոյլ կու տամ որ նստի ։

120․ Հ․ Միշտ ուցանե՞լ կը վերջաւորին բայերուն անցողականները ։

Պ․ Կորնչել բային անցողականը կ'ըլլայ կորուսանեմ, եւ փլանել բային՝ փլուցանեմ ։

## Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

121. Հ. Ի՞նչպէս կը վերջաւորին երկրորդ լծորդութեան բայերը։

Պ. Երկրորդ լծորդութեան բայերուն մի մասը կը վերջաւորի, իմ, սահմանական ներկայ Ա. դէմքին մէջ, ինչպէս խօս-իմ, կը խօսիմ, սէօյլէրիմ. և մի մասն՝ անիմ. ինչպէս ուս-անիմ, կը սորվիմ, էօյրէնիրիմ։

122. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին իմ վերջաւորած բայք։

Պ. Իմ վերջաւորած բայք, զոր օրինակ, խօս-իմ, կը խոնարհին այսպէս.

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Խօս-իմ . | Կը խօսիմ . | Սէօյլէրիմ |
| Խօս-իս . | Կը խօսիս . | Սէօյլէրսին |
| Խօս-ի . | Կը խօսի . | Սէօյլէր |
| Խօս-իմք . | Կը խօսինք . | Սէօյլէրիզ |
| Խօս-իք . | Կը խօսիք . | Սէօյլէրսինիզ |
| Խօս-ին . | Կը խօսին . | Սէօյլէրլէր |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Խօս-էի . | Կը խօսէի . | Սէօյլէր իտիմ |
| Խօս-էիր . | Կը խօսէիր . | Սէօյլէր իտին |
| Խօս-էր . | Կը խօսէր . | Սէօյլէր իտի |
| Խօս-էաք . | Կը խօսէինք . | Սէօյլէր իտիք |
| Խօս-էիք . | Կը խօսէիք . | Սէօյլէր իտինիզ |
| Խօս-էին . | Կը խօսէին . | Սէօյլէր իտիլէր |



### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Խօս-եցայ . | Խօսեցայ . | Սէօյլէտիմ |
| Խօս-եցար . | Խօսեցար . | Սէօյլէտին |
| Խօս-եցաւ . | Խօսեցաւ . | Սէօյլէտի |
| Խօս-եցաք . | Խօսեցանք . | Սէօյլէտիք |
| Խօս-եցայք . | Խօսեցաք . | Սէօյլէտինիզ |
| Խօս-եցան . | Խօսեցան . | Սէօյլէտիլէր |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Խօս-եցայց . | Պիտի խօսիմ . | Սէօյլէյէճէյիմ |
| Խօս-եսցես . | Պիտի խօսիս . | Սէօյլէյէճէքսին |
| Խօս-եսցէ . | Պիտի խօսի . | Սէօյլէյէճէք |
| Խօս-եսցուք . | Պիտի խօսինք . | Սէօյլէյէճէյիզ |
| Խօս-եսջիք . | Պիտի խօսիք . | Սէօյլէյէճէքսինիզ |
| Խօս-եսցեն . | Պիտի խօսին . | Սէօյլէյէճէքլէր |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Խօս-եաց , խօս-եսջիր . | Խօսէ . | Սէօյլէ |
| Մի խօս-իր . | Մի խօսիր . | Սէօյլէմէ |
| Խօս-եցարուք , խօս-եսջիք . | Խօսեցէք . | Սէօյլէյին |
| Մի խօս-իք . | Մի խօսիք . | Սէօյլէմէյին |

### Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Խօս-իցեմ . | Խօսիմ . | Սէօյլէյիմ |
| Խօս-իցես . | Խօսիս . | Սէօյլէյէսին |
| Խօս-իցէ . | Խօսի . | Սէօյլէսին |
| Խօս-իցեմք . | Խօսինք . | Սէօյլէյէլիմ |
| Խօս-իցէք . | Խօսիք . | Սէօյլէյէսինիզ |
| Խօս-իցեն . | Խօսին . | Սէօյլէսինլէր |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Խօս-ել. | Խօսիլ. | Սէօյլէմէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Խօս-եալ. | Խօսած. | Սէօյլէմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Խօս-ելոց. | Խօսելու. | Սէօյլէյէճէք |

*Խօսիլին պէս կը խոնարհի ամէն իմ վերջաւորուած բայ, զոր օրինակ.*

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ**

| | | |
|---|---|---|
| Բարբառ-իմ. | Խօսիլ. | Սէօյլէմէք |
| Խոստովան-իմ. | Խոստովանիլ. | Իքրար էթմէք |
| Համար-իմ. | Համրել. | Սայմաք |

**ՉԵԶՈՔ**

| | | |
|---|---|---|
| Աշխատ-իմ. | Աշխատիլ. | Չալըշմաք |
| Երեւ-իմ. | Երեւիլ. | Կէօրիւնմէք |
| Դադար-իմ. | Դադրիլ. | Տուրմաք |

123. Հ. *Մինա՞կ իմ վերջաւորուած բայե՞ր խօսիլին պէս կը խոնարհին։*

Պ. *Քանի մը անիմ վերջաւորեալ բայեր, ինչպէս խոստով-անիմ, հաւ-անիմ, կը խոնարհին խօսիլին պէս. վասն զի ասոնց արմատներն են խոստովան, հաւան։*

(*) Ըստ ընտիր մատենագրաց իմ վերջաւորուած բայերուն աներեւոյթը ել կը վերջաւորի. ուստի փոխանակ ըսելու սիրիլ, խօսիլ, բնակիլ, ուսանիլ, պէտք է ըսել սիրել, խօսել եւայլն։



124. Հ. *Ի՞նչպէս կը խոնարհին անիմ վերջաւորած բայք։*

Պ. *Անիմ վերջաւորած բայք, զոր օրինակ, ուս-անիմ, կը խոնարհին այսպէս.*

Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Ուս-անիմ. | Կը սորվիմ. | Էօյրէնիրիմ |
| Ուս-անիս. | Կը սորվիս. | Էօյրէնիրսին |
| Ուս-անի. | Կը սորվի. | Էօյրէնիր |
| Ուս-անիմք. | Կը սորվինք. | Էօյրէնիրիզ |
| Ուս-անիք. | Կը սորվիք. | Էօյրէնիրսինիզ |
| Ուս-անին. | Կը սորվին. | Էօյրէնիրլէր |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Ուս-անէի. | Կը սորվէի. | Էօյրէնիր իտիմ |
| Ուս-անէիր. | Կը սորվէիր. | Էօյրէնիր իտին |
| Ուս-անէր. | Կը սորվէր. | Էօյրէնիր իտի |
| Ուս-անէաք. | Կը սորվէինք. | Էօյրէնիր իտիք |
| Ուս-անէիք. | Կը սորվէիք. | Էօյրէնիր իտինիզ |
| Ուս-անէին. | Կը սորվէին. | Էօյրէնիր իտիլէր |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Ուս-այ. | Սորվեցայ. | Էօյրէնտիմ |
| Ուս-ար. | Սորվեցար. | Էօյրէնտին |
| Ուս-աւ. | Սորվեցաւ. | Էօյրէնտի |
| Ուս-աք. | Սորվեցանք. | Էօյրէնտիք |
| Ուս-այք. | Սորվեցաք. | Էօյրէնտինիզ |
| Ուս-ան. | Սորվեցան. | Էօյրէնտիլէր |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Ուս-այց · | Պիտի սորվիմ · | Էօյրէնէճէյիմ |
| Ուս-ցես · | Պիտի սորվիս · | Էօյրէնէճէքսին |
| Ուս-ցէ · | Պիտի սորվի · | Էօյրէնէճէք |
| Ուս-ցուք · | Պիտի սորվինք · | Էօյրէնէճէյիզ |
| Ուս-ջիք · | Պիտի սորվիք · | Էօյրէնէճէքսինիզ |
| Ուս-ցեն · | Պիտի սորվին · | Էօյրէնէճէքլէր |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ուս-իր, ուս-ջիր, ուս-անիջիր · | Սորվէ · | Էօյրէն |
| Մի ուս-անիր · | Մի սորվիր · | Էօյրէնմէ |
| Ուս-արուք, ուս-ջիք, ուս-անիջիք · | Սորվեցէք · | Էօյրէնին |
| Մի ուս-անիք · | Մի սորվիք · | Էօյրէնմէյին |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Ուս-անիցիմ · | Սորվիմ · | Էօյրէնէյիմ |
| Ուս-անիցես · | Սորվիս · | Էօյրէնէսին |
| Ուս-անիցէ · | Սորվի · | Էօյրէնսին |
| Ուս-անիցուք · | Սորվինք · | Էօյրէնէլիմ |
| Ուս-անիցիք · | Սորվիք · | Էօյրէնէսինիզ |
| Ուս-անիցեն · | Սորվին · | Էօյրէնսինլէր |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ուս-անել · | Սորվիլ · | Էօյրէնմէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ուս-եալ · | Սորված · | Էօյրէնմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ուս-անելոց · | Սորվելու · | Էօյրէնէճէք |



Ուսանիմին պէս կը խոնարհի ամէն անիմ վերջաւորած բայ, ինչպէս ·

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Ագ-անիմ · | Հագնիլ · | Կէյմէք |
| Ծն-անիմ · | Ծնանիլ · | Տօղուրմագ |
| Ակս-անիմ · | Սկսիլ · | Պաշլամագ |

ՉԵԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Անկ-անիմ | Իյնալ · | Տիւշմէք |
| Մեռ-անիմ · | Մեռնիլ · | Էօլմէք |
| Սն-անիմ · | Սնանիլ · | Պէսլէնմէք |

125· Հ· Մինակ անիմ վերջաւորած բայերը կը խոնարհին ուսանիմին պէս ։

Պ· Նստիմ բայը ուսանիմին պէս խոնարհելով, կ'ըլլայ նստայ, նստայց, նիստ, ոչ թէ խօսիմին պէս, նստեցայ, նստեցայց, նստեաց ։

126· Հ· Ի՞նչ գիտելիք կայ ագանիմ և անկանիմ բաբայերուն վրայ ։

Պ· Ասոնց հրամայականին յոքնակին կ'ըլլայ ագ-երուք, անկ-երուք · ոչ թէ, ըստ օրինակին, ագ-արուք, անկ-արուք ։

## Գ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

127. Հ. Ի՞նչպէս կը վերջաւորին երրորդ լծորդութեան բայեր ։

Պ. Երրորդ լծորդութեան բայերուն մի մասը կը վերջաւորի ամ, ինչպէս աղ-ամ, աղալ, Իայէ-ր-ծէ+, եւ մի մասն՝ անամ, ինչպէս ստ-անամ, ստանալ, Էտ-րէնծէ+ ։

128. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին ամ վերջաւորած բայք ։

Պ. Ամ վերջաւորած բայք, զոր օրինակ աղ-ամ, կը խոնարհին այսպէս ·

Սահմանական եղանակ, Ներկայ

| | | |
|---|---|---|
| Աղ-ամ · | Կ'աղամ · | Իայէ-տէ-րէ-մ |
| Աղ-աս · | Կ'աղաս · | Իայէ-տէ-րսէ-ն |
| Աղ-այ · | Կ'աղայ · | Իայէ-տէ-ր |
| Աղ-ամք · | Կ'աղանք · | Իայէ-տէ-րէ-ղ |
| Աղ-այք · | Կ'աղաք · | Իայէ-տէ-րսէ-նէ-ղ |
| Աղ-ան · | Կ'աղան · | Իայէ-տէ-րլէր |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Աղ-այէ · | Կ'աղայի · | Իայէ-տէ-ր էտէմ |
| Աղ-այէր · | Կ'աղայիր · | Իայէ-տէ-ր էտէն |
| Աղ-այր · | Կ'աղար · | Իայէ-տէ-ր էտէ |
| Աղ-այաք · | Կ'աղայինք · | Իայէ-տէ-ր էտէք |
| Աղ-այէք · | Կ'աղայիք · | Իայէ-տէ-ր էտէնէղ |
| Աղ-այէն · | Կ'աղային · | Իայէ-տէ-ր էտէլէր |



Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Աղ-ացէ · | Աղացի · | Իայէ-րտէ-մ |
| Աղ-ացէր · | Աղացիր · | Իայէ-րտէ-ն |
| Աղ-աց · | Աղաց · | Իայէ-րտէ |
| Աղ-ացաք · | Աղացինք · | Իայէ-րտէ-ք |
| Աղ-ացէք · | Աղացիք · | Իայէ-րտէ-նէ-ղ |
| Աղ-ացէն · | Աղացին · | Իայէ-րտէ-լէր |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Աղ-ացէց · | Պիտի աղամ · | Իայէ-տէճէյէմ |
| Աղ-ասցէս · | Պիտի աղաս · | Իայէ-տէճէքսէն |
| Աղ-ասցէ · | Պիտի աղայ · | Իայէ-տէճէք |
| Աղ-ասցուք · | Պիտի աղանք · | Իայէ-տէճէյէղ |
| Աղ-ասջիք · | Պիտի աղաք · | Իայէ-տէճէքսէնէղ |
| Աղ-ասցէն · | Պիտի աղան · | Իայէ-տէճէքլէր |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Աղ-ա կամ աղ-ասջէր · | Աղա · | Իայէ-ր |
| Մի աղ-ար · | Մի աղար · | Իայէ-րմա |
| Աղ-ացէք կամ աղ-ասջիք · | Աղացէք · | Իայէ-տէ-ն |
| Մի աղ-այք · | Մի աղաք · | Իայէ-րմայէն |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Աղ-այցէմ · | Աղամ · | Իայէ-տէյէմ |
| Աղ-այցէս · | Աղաս · | Իայէ-տէսէն |
| Աղ-այցէ · | Աղայ · | Իայէ-րսէ-ն |
| Աղ-այցէմք · | Աղանք · | Իայէ-տէլէմ |
| Աղ-այցէք · | Աղաք · | Իայէ-տէսէնէղ |
| Աղ-այցէն · | Աղան · | Իայէ-րսէ-նլէր |

Անորոշ

| | | |
|---|---|---|
| Աղ-ալ· | Աղալ· | Էօյիւթ-մէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ացեալ· | Աղացած · | Էօյիւթ-միւշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ալոց · | Աղալու · | Էօյիւթ-էճէք |

Ասոր պէս կը խոնարհի ամէն ամ վերջաւորած կանոնաւոր բայ · զոր օրինակ ·

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Խոկ-ամ · | Մտածել· | Տիւշիւնմէք · |
| Կարդ-ամ · | Կանչել · | Չաղըրմաք |
| Ողբ-ամ · | Ողբալ· | Աղլամաք · |

ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Գն-ամ · | Երթալ· | Կիթմէք |
| Խաղ-ամ · | Խաղալ· | Օյնամաք |
| Փութ-ամ · | Փութալ· | Իվինմէք |

129· Հ· Ի՞նչ գիտելիք կայ ամ վերջաւորած բայերուն կատարեալ եղակի երրորդ դէմքին վրայ ։

Պ· Ամ վերջաւորած բայերուն բայանան արմատն է կատարեալին եղակի Գ· դէմքը ։ Այսպէս աղամ բային արմատն է աղաց, գնամ ինը՝ գնաց · խաղամ ինը՝ խաղաց · բանամ ինը՝ բաց ։ Արդ՝ երբ կատարեալին եղակի Գ. դէմքը բաղաձայնով սկսած միավանկ բառ է, ինչպէս են բաց, թաց. այն դէմքին սկիզբը կրնայ դրուիլ ե յաւելուածը ։ Ուստի բանամ ին կատարեալին եղակի Գ· դէմքը կրնայ ըլլալ



բաց կամ եբաց, թանամ ինը կրնայ ըլլալ թաց կամ եթաց, բայց չըսուիր եգնաց, եխաղաց եւն, քանզի գնաց, խաղաց արմատները բազմավանկ են (*) ։

130· Հ· Ի՞նչ գիտելիք կայ բանամ, թանամ բայերուն վրայ ։

Պ· Այս բայերուն կատարեալը, ապառնին, հրամայականը եւ անցեալ ընդունելութիւնը, փոխանակ ըլլալու աղամ ին պէս բանացի, բանացից, բանա, բանացեալ· թանացի, թանացից, թանա, թանացեալ կ'ըլլան, բացի, բացից, բաց, բացեալ· թացի, թացից, թաց, թացեալ· վասն զի ասոնց արմատներն են ոչ թէ բանաց, թանաց, այլ բաց, թաց ։

131· Հ· Ի՞նչ գիտելիք կայ բառնամ և դառնամ բայերուն վրայ ։

Պ· Այս բայերուն արմատն է բարձ, դարձ · ուստի և ասոնց արմատական ժամանակներն, այսինքն՝ կատարեալն, ապառնին, հրամայականը և անցեալ ընդունելութիւնը կ'ըլլան ·

| Կտր· | Ապ· | Հրմ· | Անց· Ընդ· |
|---|---|---|---|
| Բարձի · | Բարձից · | Բարձ · | Բարձեալ· |
| Դարձայ · | Դարձայց · | Դարձ · | Դարձեալ · |

132· Հ· Ի՞նչպէս կը խոնարհին անամ վերջաւորած բայք ։

Պ· Անամ վերջաւորած բայք, զոր օրինակ ստ-անամ, կը խոնարհին այսպէս ·

(*) Այս յօդուածը բաղդատէ 113 եւ 114 թիւերուն հետ ։

## Սահմանական եղանակ , ներկայ

| | | |
|---|---|---|
| Ստ–անամ . | Կը ստանամ . | Էտինիրիմ . |
| Ստ–անաս . | Կը ստանաս . | Էտինիրսին . |
| Ստ–անայ . | Կը ստանայ . | Էտինիր . |
| Ստ–անամք . | Կը ստանանք . | Էտինիրիզ |
| Ստ–անայք . | Կը ստանաք . | Էտինիրսինիզ |
| Ստ–անան . | Կը ստանան . | Էտինիրլէր |

## Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Ստ–անայի . | Կը ստանայի . | Էտինիր իտիմ |
| Ստ–անայիր . | Կը ստանայիր . | Էտինիր իտին |
| Ստ–անայր . | Կը ստանար . | Էտինիր իտի |
| Ստ–անայաք . | Կը ստանայինք . | Էտինիր իտիք |
| Ստ–անայիք . | Կը ստանայիք . | Էտինիր իտինիզ |
| Ստ–անային . | Կը ստանային . | Էտինիր իտիլէր |

## Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Ստ–ացայ . | Ստացայ . | Էտինտիմ |
| Ստ–ացար . | Ստացար . | Էտինտին |
| Ստ–ացաւ . | Ստացաւ . | Էտինտի |
| Ստ–ացաք . | Ստացանք . | Էտինտիք |
| Ստ–ացայք . | Ստացաք . | Էտինտինիզ |
| Ստ–ացան . | Ստացան . | Էտինտիլէր |

## Ապառնի

| | | |
|---|---|---|
| Ստ–ացայց . | Պիտի ստանամ . | Էտինէճէյիմ |
| Ստ–ասցես . | Պիտի ստանաս . | Էտինէճէքսին |
| Ստ–ասցէ . | Պիտի ստանայ . | Էտինէճէք |
| Ստ–ասցուք . | Պիտի ստանանք . | Էտինէճէյիզ |
| Ստ–ասջիք . | Պիտի ստանաք . | Էտինէճէքսինիզ |
| Ստ–ասցեն . | Պիտի ստանան . | Էտինէճէքլէր |



## Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ստ–ացիր, ստ–ասջիր. | Ստացիր . | Էտին |
| Մի՛ ստ–անար. | Մի՛ ստանար . | Էտինմէ |
| Ստ–ացարուք , ստ–ասջիք . | Ստացէք . | Էտինին |
| Մի ստ–անայք . | Մի՛ ստանաք . | Էտինմէյին |

## Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Ստ–անայցեմ . | Ստանամ . | Էտինէյիմ |
| Ստ–անայցես . | Ստանաս . | Էտինէսին |
| Ստ–անայցէ . | Ստանայ . | Էտինէ |
| Ստ–անայցեմք . | Ստանանք . | Էտինէլիմ |
| Ստ–անայցէք . | Ստանաք . | Էտինէսինիզ |
| Ստ–անայցեն . | Ստանան . | Էտինէլէր |

## Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ստ–անալ . | Ստանալ . | Էտինմէք |

## Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ստ–ացեալ . | Ստացած . | Էտինմիշ |

## Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ստ–անալոց . | Ստանալու . | Էտինէճէք |

*Այսոր պէս կը խոնարհի ամէն անամ վերջաւորած բայ , ինչպէս .*

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Խոստ–անամ . | Խոստանալ . | Սէօզ վէրմէք |
| Գող–անամ . | Գողնալ . | Զալմաք |
| Մերկ–անամ . | Մերկանալ . | Սոյունմաք |

### ՉԵԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Գոհ-անամ. | Գոհանալ. | Շիւքիւր էտէրիմ |
| Հեռ-անամ. | Հեռանալ. | Ուզագլաշըրըմ |
| Կուր-անամ. | Կուրանալ. | Քէօր օլուրըմ |

133. Հ. Մինակ անամ վերջաւորած բայե՞ր կը խոնարհին ստանամին պէս:

Պ. կան քանի մը ամ վերջաւորած բայեր որոց կատարեալը և ապառնին կը վերջանան ստանամին պէս ացայ, ացայց, ոչ թէ աղամին պէս՝ ացի, ացից: Այս բայերն են

| | | |
|---|---|---|
| Հոգ-ամ. | Հոգ-ացայ. | Հոգ-ացայց |
| Յուս-ամ. | Յուս-ացայ. | Յուս-ացայց |
| Որս-ամ. | Որս-ացայ. | Որս-ացայց |
| Ցնծ-ամ. | Ցնծացայ. | Ցնծ-ացայց |

Ոչ թէ հոգացի, հոգացից. յուսացի, յուսացից ևն: Բայց ասոնց հրամայականները կ'ըլլան, Աղամին պէս, հոգ-ա, յուս-ա, որս-ա, ցնծ-ա, ոչ թէ, ստանամին պէս, հոգ-ացիր, յուս-ացիր, ևն:

134. Հ. Ի՞նչ գիտելիք կայ ենամ վերջաւորած բայերուն վրայ:

Պ. կան քանի մը բայեր որ ենամ կը վերջաւորին եւ ոչ անամ, ինչպէս արբենամ, մերձենամ: Ասոնք բոլոր խոնարհման մէջ ե գիրը կը պահեն, ուստի կ'ըսուի, արբենամ, արբենայի, արբեցայ, արբեցայց, արբեցիր, արբեցեալ, ևն:



## Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

—

135. Հ. Ի՞նչպէս կը վերջաւորին Չորրորդ լծորդութեան բայեր:

Պ. Չորրորդ լծորդութեան բայերը կը վերջաւորին ում: Այս լծորդութեան բայերուն եւս խոնարհումն է երկու կերպ. ոմանց կատարեալը կ'ըլլայ է, ապառնին էց, և ոմանց կատարեալն այ, ապառնին այց:

136. Հ. Առաջին կերպ խոնարհման օրինակ տուր:

Պ. Առաջին կերպ խոնարհումը կ'ըլլայ այսպէս.

Սահմանական եղանակ, Ներկայ

| | | |
|---|---|---|
| Թող-ում. | Կը թողում. | Պրագըրըմ |
| Թող-ուս. | Կը թողուս. | Պրագըրսըն |
| Թող-ու. | Կը թողու. | Պրագըր |
| Թող-ումք. | Կը թողունք. | Պրագըրըզ |
| Թող-ուք. | Կը թողուք. | Պրագըրսընըզ |
| Թող-ուն. | Կը թողուն. | Պրագըրլար |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Թող-ուի. | Կը թողուի. | Պրագըրտըմ |
| Թող-ուիր. | Կը թողուիր. | Պրագըրտըն |
| Թող-ոյր. | Կը թողուր. | Պրագըրտը |
| Թող-ուաք. | Կը թողուինք. | Պրագըրտըգ |
| Թող-ուիք. | Կը թողուիք. | Պրագըրտընըզ |
| Թող-ուին. | Կը թողուին. | Պրագըրլարտը |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Թող-ի · | Թողուցի · | Պըրաքդըմ |
| Թող-եր · | Թողուցիր · | Պըրաքդըն |
| Թող, ե-թող · | Թողուց · | Պըրաքդը |
| Թող-աք · | Թողուցինք · | Պըրաքդըք |
| Թող-էք · | Թողուցիք · | Պըրաքդընըզ |
| Թող-ին · | Թողուցին · | Պըրաքդըլար |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Թող-ից · | Պիտի թողում · | Պըրաքաճաղըմ |
| Թող-ցես · | Պիտի թողուս · | Պըրաքաճաքսըն |
| Թող-ցէ · | Պիտի թողու · | Պըրաքաճաք |
| Թող-ցուք · | Պիտի թողունք · | Պըրաքաճաղըզ |
| Թող-ջիք · | Պիտի թողուք · | Պըրաքաճաքսընըզ |
| Թող-ցեն · | Պիտի թողուն · | Պըրաքաճաքլար |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Թող, թող-ջիր · | Թող · | Պըրաք |
| Մի՛ թող-ուր · | Մի՛ թողուր · | Պըրաքմա |
| Թող-էք, թող-ջիք · | Թողէք · | Պըրաքըն |
| Մի՛ թող-ուք · | Մի՛ թողուք · | Պըրաքմայըն |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Թող-ուցում · | Թողում · | Պըրաքայըմ |
| Թող-ուցուս · | Թողուս · | Պըրաքասըն |
| Թող-ուցու · | Թողու · | Պըրաքսըն |
| Թող-ուցումք · | Թողունք · | Պըրաքալըմ |
| Թող-ուցուք · | Թողուք · | Պըրաքասընըզ |
| Թող-ուցուն · | Թողուն · | Պըրաքսընլար |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Թող-ուլ · | Թողուլ · | Պըրաքմաք |



Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թող-եալ | Թողած · | Պըրաքմըշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թող-լոց · | Թողելու · | Պըրաքաճաք |

*Այսպէս կը խոնարհի ամէն ում վերջաւորած բայ, զոր օրինակ ·*

| | | |
|---|---|---|
| Արգել-ում · | Արգելել · | Մէն էթմէք |
| Զեն-ում . | Մորթել · | Պողազլամաք |
| Հեղ-ում · | Թափել · | Տէօքմէք |

137. Հ. *Ի՞նչ գիտելիք կայ այս լծորդութեան բայերուն կատարեալ եղակի Գ. դէմքին վրայ ։*

Պ. *Ասոնց եւս արմատն է կատարեալին եղակի Գ. դէմքը ։ Եթէ այս արմատը բաղաձայնով սկսած միավանկ է, սկիզբը ե գիրը կրնայ դրուիլ, ինչպէս ·*

Կատար. Գ. դէմք

| | |
|---|---|
| Թող-ում . | Թող կամ ե-թող |
| Հեղ-ում . | Հեղ » ե-հեղ |
| Զեն-ում . | Զեն » ե-զեն |

*Եթէ արմատը ա ձայնաւորով սկսած միավանկ է, սկիզբը կրնայ դրուիլ է գիրը, ինչպէս ·*

Կատար. Գ. դէմք

| | |
|---|---|
| Առ-նում . | Առ կամ է-առ |

*Իսկ եթէ արմատը բազմավանկ է, ամենեւին յաւելուած չընդունիր, ուստի չըսուիր, ե-յաւել, ե-արգել, ե-ընկէց ։*

138. Հ. Երկրորդ կերպ խոնարհման օրինակ տուր ։
Պ. Երկրորդ կերպ խոնարհման օրինակն այս է ․

### Սահմանական եղանակ, Ներկայ

| | | |
|---|---|---|
| Յեն—ում . | Կը յենում . | Տայանըրըմ |
| Յեն—ուս . | Կը յենուս . | Տայանըրսըն |
| Յեն—ու . | Կը յենու . | Տայանըր |
| Յեն—ումք . | Կը յենունք . | Տայանըրըզ |
| Յեն—ուք . | Կը յենուք . | Տայանըրսընըզ |
| Յեն—ուն . | Կը յենուն . | Տայանըրլար |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Յեն—ուի . | Կը յենուի . | Տայանըրտըմ |
| Յեն—ուիր . | Կը յենուիր . | Տայանըրտըն |
| Յեն—ուր . | Կը յենուր . | Տայանըրտը |
| Յեն—ուանք . | Կը յենուինք . | Տայանըրտըգ |
| Յեն—ուիք . | Կը յենուիք . | Տայանըրտընըզ |
| Յեն—ուին . | Կը յենուին . | Տայանըրտըլար |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Յեց—այ . | Յեցայ . | Տայանտըմ |
| Յեց—ար . | Յեցար . | Տայանտըն |
| Յեց—աւ . | Յեցաւ . | Տայանտը |
| Յեց—աք . | Յեցանք . | Տայանտըգ |
| Յեց—այք . | Յեցաք . | Տայանտընըզ |
| Յեց—ան | Յեցան . | Տայանտըլար |



### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Յեց—այց . | Պիտի յենում . | Տայանաճաղըմ |
| Յեց—ցես . | Պիտի յենուս . | Տայանաճագսըն |
| Յեց—ցէ . | Պիտի յենու . | Տայանաճագ |
| Յեց—ցուք . | Պիտի յենունք . | Տայանաճաղըզ |
| Յեց—ջիք . | Պիտի յենուք . | Տայանաճագսընըզ |
| Յեց—ցին . | Պիտի յենուն . | Տայանաճագլար |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Յեց—իր , յեց—ջիր . | Յեցիր . | Տայան |
| Մի յեն—ուր . | Մի յենուր . | Տայանմա |
| Յեց—արուք, յեց—ջիք. | Յեցէք . | Տայանըն |
| Մի յեն—ուք . | Մի յենուք . | Տայանմայըն |

### Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Յեն—ուցում . | Յենում . | Տայանայըմ |
| Յեն—ուցուս . | Յենուս . | Տայանասըն |
| Յեն—ուցու . | Յենու . | Տայանա |
| Յեն—ուցումք . | Յենունք . | Տայանալըմ |
| Յեն—ուցուք . | Յենուք . | Տայանասընըզ |
| Յեն—ուցուն . | Յենուն . | Տայանասընլար |

### Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Յեն—ուլ . | Յենուլ . | Տայանմագ |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Յեց—եալ. | Յեցած . | Տայանմըշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Յեն—լոց . | Յենլու . | Տայանաճագ |

*Ասոր պէս կը խոնարհին ․*

| | | |
|---|---|---|
| Զբօս—նում . | Զբօսնուլ . | Էյլէնմէք |
| Զգե—նում . | Հագնիլ . | Կիյինմէք |
| Ընթեռ—նում . | Կարդալ . | Օգումագ |

139. Հ. Ի՞նչ գիտելիք կայ նում վերջաւորուած բայերուն վրայ ։

Պ. Կան նում վերջաւորած բայեր, որ արմատական ժամանակներուն, այսինքն կատարեալին, ապառնոյն, հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ կը փոխեն ն գիրը ց ի, զոր օրինակ.

| | Կտր. | Ապռ. | Հրմ. | Անց. ընդ. |
| --- | --- | --- | --- | --- |
| Լնում. | լցի. | լցից. | լից. | լցեալ |
| Խնում. | խցի. | խցից. | խից. | խցեալ |
| Ընկենում. | ընկեցի. | ընկեցից. | ընկեա. | ընկեցեալ |

վասն զի ասոնց արմատներն են լից, խից, ընկէց ։

Նոյնը կ'ըլլայ հետեւեալներուն մէջ.

| | Կտր. | Ապռ. | Հրմ. | Անց. ընդ. |
| --- | --- | --- | --- | --- |
| Զգենում. | զգեցայ. | զգեցայց. | զգեցիր. | զգեցեալ |
| Ընթեռնում. | ընթերցայ. | ընթերցայց. | ընթերցիր. | ընթերցեալ |
| Յենում. | յեցայ. | յեցայց. | յեցիր. | յեցեալ |

140. Հ. Ի՞նչ գիտելիք կայ առնում և զբօսնում բայերուն վրայ ։

Պ. Առնում և զբօսնում բայերուն ն գիրը կը զեղչուի արմատական ժամանակներուն մէջ, զոր օրինակ.

| | Կրտ. | Ապռ. | Հրմ. | Անց. ընդ. |
| --- | --- | --- | --- | --- |
| Առնում. | առի. | առից. | առ. | առեալ |
| Զբօսնում. | զբօսայ. | զբօսայց. | զբօսիր. | զբօսեալ(*) |

(*) Կան ուրիշ քանի մը նում վերջաւորեալ բայեր որ անկանոն բայերուն կարգը դրուած են, վասն զի ասոնց խոնարհման մէջ կայ ինչ ինչ զարտուղութիւններ ։



## ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ՁԵՒԸ

141. Հ. Ի՞նչպէս կ'ըլլայ Ա. լծորդութեան ներգործական բայերուն կրաւորականը ։

Պ. Առաջին լծորդութեան, այսինքն եմ և անեմ վերջաւորած բայերը կրաւորական կ'ըլլան, եթէ եմը և անեմը փոխելով իմ ի և անիմ ի, խոնարհենք երկրորդ լծորդութեան իմ և անիմ վերջաւորած բայերուն պէս ։ Ուստի, երբ, սիրեմ, կը սիրեմ, սեւցնեմ, ներգործական բայն, ընելով սիրիմ՝ կը խոնարհենք խօսիմին պէս (տես այս բայը, թիւ 76), բայը կ'ըլլայ կրաւորական, և կը նշանակէ կը սիրուիմ, սեւցուիմ ։ Նոյնպէս երբ, հատանեմ, կը կտրեմ, կտրեմ, ներգործական բայն, ընելով հատանիմ՝ կը խոնարհենք առանիմին պէս (տես այս բայը թիւ 79), բայը կ'ըլլայ կրաւորական, և կը նշանակէ կը կտրուիմ, կտրուիմ ։

142. Հ. Ի՞նչպէս կ'ըլլայ Բ. լծորդութեան ներգործական բայերուն կրաւորականը ։

Պ. Երկրորդ լծորդութեան, այսինքն իմ և անիմ վերջաւորած բայերը, կրաւորականի համար յատուկ ձեւ չունին. մի և նոյն ձեւը թէ ներգործական և թէ կրաւորական է. ուստի խօսիմ և առանիմ թէ իբր ներգործական կը նշանակեն կը խօսիմ, կը առնեմ, և թէ իբրեւ կրաւորական՝ կը խօսուիմ և կը առնուիմ (*) ։

(*) Թէ՛ ներգործականի եւ թէ կրաւորականի համար մի եւ նոյն ձեւ ունեցող բայերը կը կոչուին հայերէն հասարակ բայ .

143. Հ. Ի՞նչպէս կ'ըլլայ Գ. լծորդութեան ներգործական բայերուն կրաւորականը։

Պ. Երրորդ լծորդութեան, այսինքն ամ վերջաւորած, ներգործական բայերը որ աղամ ին պէս կը խոնարհին՝ կրաւորական կ'ըլլան ուտանամ ին պէս խոնարհուելով, այսինքն՝ կատարեալին ադի և ապառնւոյն ադէց վերջաւորութիւններն ընելով ացայ և ացայց, և հրամայականին վրայ էլ մասնիկն աւելցունելով։ Միւս ժամանակներն, այսինքն՝ ներկան և անկատարը և դերբայները, թէ ներգործականին և թէ կրաւորականին համար մի և նոյն են. բայց ստորադասականը կ'ըլլայ ացէմ և ոչ այցեմ, զոր օրինակ.

Սահմանական եղանակ, Ներկայ

Ներգ. եւ Կր.

| | | |
|---|---|---|
| Աղամ. (*) | Կ'աղամ. | Իռյէռռէրէմ |
| | Կ'աղացուիմ. | Իռյէռռէլէրէմ |

Անցեալ անկատար

Ներգ. եւ Կր.

| | | |
|---|---|---|
| Աղայէ | Կ'աղայի. | Իռյէռռէր էռէմ |
| | Կ'աղացուէի. | Իռյէռռէլէր էռէմ |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Աղադէ. | Աղացի. | Իռյէնռէմ |

(*) Ամ եւ ռնամ վերջաւորուած բայերուն կրաւորականին սահմանական ներկան, անկատարը, եւ անցեալ ներգործականին հետ նոյն են ըստ հնագոյն եւ ընտրելագոյն հեղինակաց. Յետնագոյն հեղինակք այս ժամանակները ներգործականէն որոշելու համար, զանոնք ըլլամ բայով եւ անցեալ ընդունելութեամբ կը շինեն ըսելով, աղացած ըլլամ, աղացած ըլլայ, աղացած ըլլար. Երբեմն եւս ամ վերջաւորած բայերէն ոմանց ներկան կ'ընեն իմ, այսպէս, բանիմ, բանիս, բանի, եւայլն։



Կր.

| | | |
|---|---|---|
| Աղացայ. | Աղացուեցայ. | Իռյէռռէլրէմ |

Ապառնի

Ներգ.

| | | |
|---|---|---|
| Աղացէց. | Պիտի աղամ. | Իռյէռռէճէյէմ |

Կր.

| | | |
|---|---|---|
| Աղացայց. | Պիտի աղացուիմ. | Իռյէռռէլէճէյէմ |

Հրամայական եղանակ

Ներգ.

| | | |
|---|---|---|
| Աղա. | Աղա. | Իռյէռ |
| Աղացէք. | Աղացէք. | Իռյէռռէն |

Կր.

| | | |
|---|---|---|
| Աղացիր. | Աղացուէ. | Իռյէռռէլ |
| Աղացարուք. | Աղացուեցէք. | Իռյէռռէլէն |

Ստորադասական

Ներգ.

| | | |
|---|---|---|
| Աղայցեմ. | Աղամ. | Իռյէռէյէմ |

Կր.

| | | |
|---|---|---|
| Աղայցեմ. | Աղացուիմ. | Իռյէռռէլէյէմ |

Աներեւոյթ

Ներգ. եւ Կր.

| | | |
|---|---|---|
| Աղալ. | Աղալ. | Իռյէռմէք |
| | Աղացուիլ. | Իռյէռռէլմէք |

### Անցեալ ընդունելութիւն

*Ներգ. եւ կր.*

| | | |
|---|---|---|
| Աղացեալ. | Աղացած. / Աղացուած. | Էօյիւտմիւշ / Էօյիւտիւլմիւշ |

### Ապառնի ընդունելութիւն

*Ներգ. եւ կր.*

| | | |
|---|---|---|
| Աղալոց. | Աղալու. | Էօյիւտէճէք |

*Կր.*

| | | |
|---|---|---|
| Աղալի. | Աղացուելու. | Էօյիւտիւլէճէք |

*Իսկ ում վերջաւորած ներգործական բայերը որ կը խոնարհին ստանամ ին պէս, յատուկ ձեւ չունին կրաւորականի համար: Ուստի ստանամ կը նշանակէ, թէ իբրեւ ներգործական կը ստանամ, և թէ իբրեւ կրաւորական կը ստացուիմ: Միայն կրաւորականին ստորադասականը կ'ըլլայ այցէմ. ստանայցէմ, և ոչ ստանայցեմ:*

*144. Հ. Ի՞նչպէս կ'ըլլայ Դ. լծորդութեան ներգործական բայերուն կրաւորականը:*

*Պ. Չորրորդ լծորդութեան, այսինքն ում վերջաւորած ներգործական բայերը, զոր օրինակ, Թողում, և Թողում ին պէս խոնարհող բայեր կրաւորական կ'ըլլան՝ կատարեալին է և ապառնւոյն եց վերջաւորութիւններն ընելով այ և այց, և հրամայականին վրայ աւելցնելով եւ մասնիկն, միւս ժամանակներն, այսինքն՝ ներկան, անկատարը, ստորադասականը և դերբայները, թէ ներգործականին և թէ կրաւորականին համար մի և նոյն են. զոր օրինակ.*



### Սահմանական եղանակ, ներկայ

*Ներգ. եւ կր.*

| | | |
|---|---|---|
| Թողում (*). | Կը թողում. / Կը թողուիմ. | Պըրագըրըմ / Պըրագըլըրըմ |

### Անցեալ անկատար

*Ներգ. եւ կր.*

| | | |
|---|---|---|
| Թողուի. | Կը թողուի. / Կը թողուէի. | Պըրագըրտըմ / Պըրագըլըրտըմ |

### Անցեալ կատարեալ

*Ներգ.*

| | | |
|---|---|---|
| Թողի. | Թողուցի. | Պըրագտըմ |

*Կրաւ.*

| | | |
|---|---|---|
| Թողայ. | Թողուեցայ. | Պըրագըլտըմ |

### Ապառնի

*Ներգ.*

| | | |
|---|---|---|
| Թողից. | Պիտի թողում. | Պըրագաճաղըմ |

*Կրաւ.*

| | | |
|---|---|---|
| Թողայց. | Պիտի թողուիմ. | Պըրագըլաճաղըմ |

### Հրամայական եղանակ

*Ներգ.*

| | | |
|---|---|---|
| Թող. մի՛ թողուր. | Թող. | Պըրագ |
| Թողէք. մի՛ թողուք. | Թողէք. | Պըրագըն |

*Կրաւ.*

| | | |
|---|---|---|
| Թողիր, մի՛ թողուր. | | Պըրագըլ |
| Թողարուք, մի՛ թողուք. | | Պըրագըլըն |

---

(*) Ում վերջաւորած բայերուն կրաւորականին ներկան, անկատարը, ստորադասականը եւ աներեւոյթը ներգործականին հետ նոյն են ըստ հին եւ ընտրելագոյն մատենագրաց։ Յետնագոյն հեղինակք այս ժամանակները ներգործականէն որոշելու համար զանոնք լինիմ բայով եւ անցեալ ընդունելութեամբ կը շինեն այսպէս. Թողեալ լինիմ, Թողեալ լինէի, Թողեալ լինիցիմ, Թողեալ լինել։ Երբեմն փոխելով ում ը ունիմ ի՝ կ'ըսեն, Թողունիմ, Թողունի, եւայլն։ Տես եւ էջ 96. ծանօթութիւն։

Ստորադասական

*Ներգ. եւ Կր.*

| | | |
|---|---|---|
| Թողուցում · | Թողում · | Պըրաքայըմ |
| | Թողուիմ · | Պըրաքըլայըմ |

Աներեւոյթ

*Ներգ. եւ Կր.*

| | | |
|---|---|---|
| Թողուլ · | Թողուլ · | Պըրաքմաք |
| | Թողուիլ · | Պըրաքըլմաք |

Անցեալ ընդունելութիւն

*Ներգ. եւ Կր.*

| | | |
|---|---|---|
| Թողեալ · | Թողած · | Պըրաքմըշ |
| | Թողուած · | Պըրաքըլմըշ |

Ապառնի ընդունելութիւն

*Ներգ.*

| | | |
|---|---|---|
| Թողլոց · | Թողելու · | Պըրաքաճագ |

*Կրաւ.*

| | | |
|---|---|---|
| Թողլի · | Թողուելու · | Պըրաքըլաճագ |

*Ում վերջաւորած այն ներգործական բայերը որոց կատարեալն այ և ապառնին այց կը վերջաւորին՝ զատ ձեւ չունին կրաւորականի համար · ուստի զգենում, զգեցայ, զգեցայց, կը նշանակեն թէ, իբրեւ ներգործական, Հագնիմ, հագայ, պիտի հագնիմ, կէյէրիմ, կէյտիմ, կէյէճէյիմ, և թէ իբրեւ կրաւորական, կը հագնուիմ, հագնուեցայ, պիտի հագնուիմ, կէյիներիմ, կէյինտիմ, կէյինէճէյիմ :*

---



## ԶՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆՑ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԸ

145. Հ. *Ո՞ր բայերը կը կոչուին անկանոն :*

Պ. *Անկանոն կը կոչուին այն բայերը որոց արմատական ժամանակները (տես Թիւ 131) միւս ժամանակներէն քիչ շատ կը տարբերին :*

146. Հ. *Քանի՞ են առաջին լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած, անկանոն բայերը :*

Պ. *Առաջին լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած, անկանոն բայերն են 12 ·*

Առնեմ· ընել, էթմէք ·
Ասեմ· ըսել, տէմէք ·
Գիտեմ· գիտնալ, պիլմէք ·
Դնեմ· դնել, գօյմագ ·
Ըմպեմ· խմել, իչմէք ·
Լսեմ· լսել, իշիթմէք ·
Կարեմ· կրնալ, գատիր օլմագ ·
Ճանաչեմ· ճանչնալ, թանըմագ ·
Մեղանչեմ· մեղանչել, վնասել, կիւնահ իշլէմէք, զարար վէրմէք ·
Յառնեմ· ելլել, գալքմագ ·
Ուտեմ· ուտել, եէմէք ·
Յանցանեմ· յանցանք ընել, գապահաթ էթմէք :

147. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին այս բայերը։

Պ. Այս բայերը կը խոնարհին հետեւեալ կերպով.

Սահմանական եղանակ, Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ | Ասեմ | Գիտեմ | Դնեմ |
| Առնես | Ասես | Գիտես | Դնես |
| Առնէ | Ասէ | Գիտէ | Դնէ |
| Առնեմք | Ասեմք | Գիտեմք | Դնեմք |
| Առնէք | Ասէք | Գիտէք | Դնէք |
| Առնեն | Ասեն | Գիտեն | Դնեն |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի | Ասէի | Գիտէի | Դնէի |
| Առնէիր | Ասէիր | Գիտէիր | Դնէիր |
| Առնէր | Ասէր | Գիտէր | Դնէր |
| Առնէաք | Ասէաք | Դիտէաք | Դնէաք |
| Առնէիք | Ասէիք | Գիտէիք | Դնէիք |
| Առնէին | Ասէին | Գիտէին | Դնէին |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արարի | Ասացի | Գիտացի | Եդի |
| Արարեր | Ասացեր | Գիտացեր | Եդիր |
| Արար | Ասաց | Գիտաց | Եդ |
| Արարաք | Ասացաք | Գիտացաք | Եդաք |
| Արարէք | Ասացէք | Գիտացէք | Եդիք |
| Արարին | Ասացին | Գիտացին | Եդին |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արարից | Ասացից | Գիտացից | Եդից |
| Արասցես | Ասասցես | Գիտասցես | Դիցես |
| Արասցէ | Ասասցէ | Գիտասցէ | Դիցէ |
| Արասցուք | Ասասցուք | Գիտասցուք | Դիցուք |
| Արասջիք | Ասասջիք | Գիտասջիք | Դիջիք |
| Արասցեն | Ասասցեն | Գիտասցեն | Դիցեն |



Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արա | Ասա | Գիտա | Դիր |
| մի առներ | մի՛ ասեր | մի՛ գիտեր | մի՛ դներ |
| Արարէք | Ասացէք | Գիտացէք | Դիք |
| մի առնէք | մի՛ ասէք | մի՛ գիտէք | մի՛ դնէք |

Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ | Ասիցեմ | Գիտիցեմ | Դնիցեմ |
| Առնիցես | Ասիցես | Գիտիցես | Դնիցես |
| Առնիցէ | Ասիցէ | Գիտիցէ | Դնիցէ |
| Առնիցեմք | Ասիցեմք | Գիտիցեմք | Դնիցեմք |
| Առնիցէք | Ասիցէք | Գիտիցէք | Դնիցէք |
| Առնիցեն | Ասիցեն | Գիտիցեն | Դնիցեն |

Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Առնել | Ասել | Գիտել | Դնել |

Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ | Ասացեալ | Գիտացեալ | Եդեալ |

Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց | Ասելոց | Գիտելոց | Դնելոց |

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպեմ | Լսեմ | Կարեմ | Ճանաչեմ |
| Ըմպես | Լսես | Կարես | Ճանաչես |
| Ըմպէ | Լսէ | Կարէ | Ճանաչէ |
| Ըմպեմք | Լսեմք | Կարեմք | Ճանաչեմք |
| Ըմպէք | Լսէք | Կարէք | Ճանաչէք |
| Ըմպեն | Լսեն | Կարեն | Ճանաչեն |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպէի | Լսէի | Կարէի | Ճանաչէի |
| Ըմպէիր | Լսէիր | Կարէիր | Ճանաչէիր |
| Ըմպէր | Լսէր | Կարէր | Ճանաչէր |
| Ըմպէաք | Լսէաք | Կարէաք | Ճանաչէաք |
| Ըմպէիք | Լսէիք | Կարէիք | Ճանաչէիք |
| Ըմպէին | Լսէին | Կարէին | Ճանաչէին |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արբի | Լուայ | Կարացի | Ծանեայ |
| Արբեր | Լուար | Կարացեր | Ծանեար |
| Արբ, էարբ | Լուաւ | Կարաց | Ծանեաւ |
| Արբաք | Լուաք | Կարացաք | Ծանեաք |
| Արբէք | Լուայք | Կարացէք | Ծանեայք |
| Արբին | Լուան | Կարացին | Ծանեան |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արբից | Լուայց | Կարացից | Ծանեայց |
| Արբցես | Լուիցես | Կարասցես | Ծանիցես |
| Արբցէ | Լուիցէ | Կարասցէ | Ծանիցէ |
| Արբցուք | Լուիցուք | Կարասցուք | Ծանիցուք |
| Արբջիք | Լուիջիք | Կարասջիք | Ծանիջիք |
| Արբցեն | Լուիցեն | Կարասցեն | Ծանիցեն |



### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արբ | Լուր | Չունի | Ծանիր |
| մի՛ ըմպեր | մի՛ լսեր | » | մի՛ ճանաչեր |
| Արբէք | Լուարուք | » | Ծաներուք |
| մի ըմպէք | մի՛ լսէք | » | մի՛ ճանաչէք |

### Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպիցեմ | Լսիցեմ | Կարիցեմ | Ճանաչիցեմ |
| Ըմպիցես | Լսիցես | Կարիցես | Ճանաչիցես |
| Ըմպիցէ | Լսիցէ | Կարիցէ | Ճանաչիցէ |
| Ըմպիցեմք | Լսիցեմք | Կարիցեմք | Ճանաչիցեմք |
| Ըմպիցէք | Լսիցէք | Կարիցէք | Ճանաչիցէք |
| Ըմպիցեն | Լսիցեն | Կարիցեն | Ճանաչիցեն |

### Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպել | Լսել | Կարել | Ճանաչել |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Արբեալ | Լուեալ | Կարացեալ | Ծանուցեալ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպելոց | Լսելոց | Չունի | Ճանաչելոց |

### Սահմանական եղանակ, Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչեմ | Յառնեմ(*) | Ուտեմ | Յանցանեմ |
| Մեղանչես | Յառնես | Ուտես | Յանցանես |
| Մեղանչէ | Յառնէ | Ուտէ | Յանցանէ |
| Մեղանչեմք | Յառնեմք | Ուտեմք | Յանցանեմք |
| Մեղանչէք | Յառնէք | Ուտէք | Յանցանէք |
| Մեղանչեն | Յառնեն | Ուտեն | Յանցանեն |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչէի | Յառնէի | Ուտէի | Յանցանէի |
| Մեղանչէիր | Յառնէիր | Ուտէիր | Յանցանէիր |
| Մեղանչէր | Յառնէր | Ուտէր | Յանցանէր |
| Մեղանչէաք | Յառնէաք | Ուտէաք | Յանցանէաք |
| Մեղանչէիք | Յառնէիք | Ուտէիք | Յանցանէիք |
| Մեղանչէին | Յառնէին | Ուտէին | Յանցանէին |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայ | Յարեայ | Կերայ, կերի | Յանցեայ |
| Մեղար | Յարեար | Կերար, կերեր | Յանցեար |
| Մեղաւ | Յարեաւ | Կերաւ, եկեր | Յանցեաւ |
| Մեղաք | Յարեաք | Կերաք | Յանցեաք |
| Մեղայք | Յարեայք | Կերայք | Յանցեայք |
| Մեղան | Յարեան | Կերան, կերին | Յանցեան |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայց | Յարեայց | Կերայց | Յանցեայց |
| Մեղիցես | Յարիցես | Կերիցես | Յանցիցես |
| Մեղիցէ | Յարիցէ | Կերիցէ | Յանցիցէ |
| Մեղիցուք | Յարիցուք | Կերիցուք | Յանցիցուք |
| Մեղիջիք | Յարիջիք | Կերիջիք | Յանցիջիք |
| Մեղիցեն | Յարիցեն | Կերիցեն | Յանցիցեն |

(*) Յառնեմ նստած կամ պառկած տեղէն ելլել կը նշանակէ։ Ելանեմ վեր կամ դուրս ելլել կը նշանակէ։



### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղիր | Արի | Կեր | Յանցիր |
| մի մեղանչեր | մի յառներ | մի՛ ուտեր | մի՛ յանցաներ |
| Մեղարուք | Արիք | Կերայք | Յանցերուք |
| մի մեղանչէք | մի՛ յառնէք | մի՛ ուտէք | մի՛ յանցանէք |

### Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչիցեմ | Յառնիցեմ | Ուտիցեմ | Յանցանիցեմ |
| Մեղանչիցես | Յառնիցես | Ուտիցես | Յանցանիցես |
| Մեղանչիցէ | Յառնիցէ | Ուտիցէ | Յանցանիցէ |
| Մեղանչիցեմք | Յառնիցեմք | Ուտիցեմք | Յանցանիցեմք |
| Մեղանչիցէք | Յառնիցէք | Ուտիցէք | Յանցանիցէք |
| Մեղանչիցեն | Յառնիցեն | Ուտիցեն | Յանցանիցեն |

### Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչել | Յառնել | Ուտել | Յառնել |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Մեղուցեալ | Յարուցեալ | Կերեալ | Յանցուցեալ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչելոց | Յառնելոց | Ուտելոց | Յանցանելոց |

148. Հ. Քանի՞ են երկրորդ լծորդութեան, այսինքն է՛ վերջաւորած, անկանոն բայեր ։

Պ. Երկրորդ լծորդութեան, այսինքն է՛ վերջաւորած, անկանոն բայերն են եօթն.

Եղանիմ }
Լինիմ } Ըլլալ, օլմագ.

Ունիմ. ունենալ, մալը օլմագ.

Ընդունիմ. ընդունել, գապուլ էթմէք.

Տանիմ. տանել, կէօթիւրմէք.

Մարթիմ. կրնալ, գատիր օլմագ.

Երկնչիմ. վախնալ, գօրգմագ.

149. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին այս բայերը ։

Պ. Այս եօթն բայերը կը խոնարհին սա կերպով ։

Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ | Լինիմ | Ունիմ | Ընդունիմ |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի | Լինէի | Ունէի | Ընդունէի |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ | Նոյն է | Կալայ | Ընկալայ |
| Եղեր | » | Կալար | Ընկալար |
| Եղեւ | » | Կալաւ | Ընկալաւ |
| Եղաք | » | Կալաք | Ընկալաք |
| Եղէք | » | Կալայք | Ընկալայք |
| Եղեն | » | Կալան | Ընկալան |



Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Եղէց | Լիցիմ | Կալայց | Ընկալայց |
| Եղիցիս | Լիցիս | Կալցիս | Ընկալցիս |
| Եղիցի | Լիցի | Կալցի | Ընկալցի |
| Եղիցուք | Լիցուք | Կալցուք | Ընկալցուք |
| Եղիջիք | Լիջիք | Կալջիք | Ընկալջիք |
| Եղիցին | Լիցին | Կալցին | Ընկալցին |

Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եղիջիր մի եղանիր | Լեր, լիջիր, լինիջիր, մի՛ լինիր | Կալ. կա, կալջիր, մի՛ ունիր | Ընկալ, ընկալջիր, մի՛ ընդունիր |
| Եղերուք, եղիջիք, մի եղանիք | Լերուք, լիջիք, լինիջիք, մի՛ լինիք | Կալարուք, կալջիք, մի՛ ունիք | Ընկալարուք, ընկալջիք մի՛ ընդունիք |

Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիցիմ | Լինիցիմ | Ունիցիմ | Ընդունիցիմ |

Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Եղանել | Լինել | Ունել | Ընդունել |

Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Եղեալ | Լեալ | Կալեալ | Ընկալեալ |

Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Եղանելոց | Լինելոց | Ունելոց | Ընդունելոց |

### Սահմանական եղանակ, Ներկայ

| | | |
|---|---|---|
| Տանիմ | Մարթիմ | Երկնչիմ |
| Տանիս | Մարթիս | Երկնչիս |
| Տանի | Մարթի | Երկնչի |
| Տանիմք | Մարթիմք | Երկնչիմք |
| Տանիք | Մարթիք | Երկնչիք |
| Տանին | Մարթին | Երկնչին |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Տանէի | Մարթէի | Երկնչէի |
| Տանէիր | Մարթէիր | Երկնչէիր |
| Տանէր | Մարթէր | Երկնչէր |
| Տանէաք | Մարթէաք | Երկնչէաք |
| Տանէիք | Մարթէիք | Երկնչէիք |
| Տանէին | Մարթէին | Երկնչէին |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Տարայ | Մարթացայ | Երկեայ |
| Տարար | Մարթացար | Երկեար |
| Տարաւ | Մարթացաւ | Երկեաւ |
| Տարաք | Մարթացաք | Երկեաք |
| Տարայք | Մարթացայք | Երկեայք |
| Տարան | Մարթացան | Երկեան |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Տարայց | Մարթացայց | Երկեայց |
| Տարցիս | Մարթասցիս | Երկիցես |
| Տարցի | Մարթասցի | Երկիցէ |
| Տարցուք | Մարթասցուք | Երկիցուք |
| Տարջիք | Մարթասջիք | Երկիջիք |
| Տարցին | Մարթասցին | Երկիցեն |



### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Տար, տարջիր, մի՛ տանիր | Չունի | Երկիր, երկիջիր, մի՛ երկնչիր |
| Տարայք, տարջիք, մի՛ տանիք | » | Երկերուք, երկիջիք, երկնչիջիք, մի՛ երկնչիք |

### Ստորադասա կան

| | | |
|---|---|---|
| Տանիցիմ | Մարթիցիմ<br>մարթայցեմ | Երկնչիցիմ |
| Տանիցիս | Մարթիցիս | Երկնչիցիս |
| Տանիցի | Մարթիցի | Երկնչիցի |
| Տանիցիմք | Մարթիցիմք | Երկնչիցիմք |
| Տանիցիք | Մարթիցիք | Երկնչիցիք |
| Տանիցին | Մարթիցին | Երկնչից ին |

### Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Տանել | Մարթել | Երկնչել |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Տարեալ | Մարթացեալ | Երկուցեալ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Տանելոց | Մարթելոց | Երկնչելոց |

---

150․ Հ․ կա՞ն այս բայերուն պէս խոնարհող ուրիշ բայեր ։

Պ․ Քանի՛ մը չիմ վերջաւորած բայեր կը խոնարհին ճիշդ երկնչիմին պէս, զոր օրինակ ․

| | Կտր․ | Ապռ․ | Հրմ․ | Անց․ ընդ․ |
|---|---|---|---|---|
| Թաքչիմ | Թաքեայ | Թաքեայց | Թաքիր | Թաքուցեալ |
| Թռչիմ | Թռեայ | Թռեայց | Թռիր | Թռուցեալ |
| Կորնչիմ | Կորեայ | Կորեայց | Կորիր | Կորուսեալ |
| Հանգչիմ | Հանգեայ | Հանգեայց | Հանգիր | Հանգուցեալ |
| Մատչիմ | Մատեայ | Մատեայց | Մատիր | Մատուցեալ |
| Մարտնչիմ | Մարտեայ | Մարտեայց | Մարտիր | Մարտուցեալ |

151․ Հ․ Քանի՞ են երրորդ լծորդութեան անկանոն բայերը ։

Պ․ Երրորդ լծորդութեան անկանոն բայերն են եօթն ․

Գամ․ գալ, կէլմէք ․
Երթամ ․ երթալ, կիթմէք ․
Լամ․ լալ, աղլամագ ․
Կամ․ կենալ, տուրմագ
Կեամ․ ապրիլ, եաշամագ ․
Տամ․ տալ, վէրմէք ․
Բամ․ ըսել, տէմէք ։

152․ Հ․ Ի՞նչպէս կը խոնարհին այս բայերը ։

Պ․ Այս եօթն բայերը կը խոնարհին սա կերպով ․



Սահմանական եղանակ, Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Գամ | Երթամ | Լամ | Կամ |
| Գաս | Երթաս | Լաս | Կաս |
| Գայ | Երթայ | Լայ | Կայ |
| Գամք | Երթամք | Լամք | Կամք |
| Գայք | Երթայք | Լայք | Կայք |
| Գան | Երթան | Լան | Կան |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Գայի | Երթայի | Լայի | Կայի |
| Գայիր | Երթայիր | Լայիր | Կայիր |
| Գայր | Երթայր | Լայր | Կայր |
| Գայաք | Երթայաք | Լայաք | Կայաք |
| Գայիք | Երթայիք | Լայիք | Կայիք |
| Գային | Երթային | Լային | Կային |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Եկի | Չոքայ | Լացի | Կացի |
| Եկիր | Չոքար | Լացեր | Կացեր |
| Եկն | Չոքաւ | Ելաց, լաց | Եկաց, կաց |
| Եկաք | Չոքաք | Լացաք | Կացաք |
| Եկիք | Չոքայք | Լացէք | Կացէք |
| Եկին | Չոքան | Լացին | Կացին |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Եկից | Երթայց | Լացից | Կացից |
| Եկեսցես | Երթիցես | Լացցես | Կացցես |
| Եկեսցէ | Երթիցէ | Լացցէ | Կացցէ |
| Եկեսցուք | Երթիցուք | Լացցուք | Կացցուք |
| Եկեսջիք | Երթիջիք | Լացջիք | Կացջիք |
| Եկեսցեն | Երթիցեն | Լացցեն | Կացցեն |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եկ, եկեսջիր | Երթ, երթիջիր | Լաց, լացջիր | Կաց, կացջիր |
| մի գար | մի երթար | մի լար | մի կար |
| Եկայք, եկեսջիք | Երթայք, երթիջիք | Լացէք, լացջիք | Կացէք, կացջիք |
| մի գայք | մի երթայք | մի լայք | մի կայք |

### Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Գայցեմ | Երթայցեմ | Լայցեմ | Կայցեմ |
| Գայցես | Երթայցես | Լայցես | Կայցես |
| Գայցէ | Երթայցէ | Լայցէ | Կայցէ |
| Գայցեմք | Երթայցեմք | Լայցեմք | Կայցեմք |
| Գայցէք | Երթայցէք | Լայցէք | Կայցէք |
| Գայցեն | Երթայցեն | Լայցեն | Կայցեն |

### Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Գալ | Երթալ | Լալ | Կալ |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Եկեալ | Երթեալ | Լացեալ | Կացեալ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Գալոց | Երթալոց | Լալոց | Կալոց |

---



### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| կեամ | Տամ | Բամ (*) |
| կեաս | Տաս | Բաս |
| կեայ | Տայ | Բայ |
| կեամք | Տամք | |
| կեայք | Տայք | |
| կեան | Տան | |

### Անցեալ անկատար

| | |
|---|---|
| կէի | Տայի |
| կէիր | Տայիր |
| կեայր | Տայր |
| կէաք | Տայաք |
| կէիք | Տայիք |
| կէին | Տային |

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| կեցի | Ետու |
| կեցեր | Ետուր |
| Եկեաց, կեաց | Ետ |
| կեցաք | Տուաք |
| կեցէք | Ետուք |
| կեցին | Ետուն |

### Ապառնի

| | |
|---|---|
| կեցից | Տաց |
| կեցցես | Տացես |
| կեցցէ | Տացէ |
| կեցցուք | Տացուք |
| կեցջիք | Տաջիք |
| կեցցեն | Տացեն |

---

(*) Բ—ամ բային ներկայ եզակի երեք դէմքը միայն, եւ գրեթէ միշտ —ել բային հետ մէկտեղ կը գործածուի ։

Հրամայական եղանակ

| | |
|---|---|
| կեաց , կեցջիր , մի կեար | Տուր , տաջիր , մի տար |
| կեցէք , կեցջիք , մի կեայք | Տուք , տաջիք , մի տայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| կեայցեմ | Տայցեմ |
| կեայցես | Տայցես |
| կեայցէ | Տայցէ |
| կեայցեմք | Տայցեմք |
| կեայցէք | Տայցէք |
| կեայցեն | Տայցեն |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| կեալ | Տալ |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| կեցեալ | Տուեալ |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| կելոց | Տալոց |



153· Հ· Քանի՞ են չորրորդ լծորդութեան անկանոն բայերը ։

Պ· Չորրորդ լծորդութեան, այսինքն ում վերջաւորեալ բայերուն մէջ անկանոն կրնան համարուիլ երդնում, երդում ընել՝ բայը, և քանի մը նում վերջաւորեալ բայեր որոց խոնարհման կերպը շատ մօտ է իլ վերջաւորուած բայերուն խոնարհման ։ Գոմ պակասաւոր բայն ևս, որ լինել, գոյ ըլլալ, կը նշանակէ, կը վերաբերի չորրորդ լծորդութեան ։

154· Հ· Ի՞նչպէս կը խոնարհին այս բայերը ։

Պ· Այս բայերը կը խոնարհին սա կերպով ։

Սահմանական եղանակ , ներկայ

| | | |
|---|---|---|
| Երդնում | Այտնում | Գոմ (*) |
| Երդնուս | Այտնուս | Գոս |
| Երդնու | Այտնու | Գոյ |
| Երդնումք | Այտնումք | Գոմք |
| Երդնուք | Այտնուք | Գոյք |
| Երդնուն | Այտնուն | Գոն |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Երդնուի | Այտնուի | Գոյի |
| Երդնուիր | Այտնուիր | Գոյիր |
| Երդնոյր | Այտնոյր | Գոյր |
| Երդնուաք | Այտնուաք | Գոյաք |
| Երդնուիք | Այտնուիք | Գոյիք |
| Երդնուին | Այտնուին | Գոյին |

(*) Գոմ բայն էական բայ չէ . այլ չէզոք է եւ ունի արդի հայերէնի ( աշխարհաբարի ) կայ բային նշանակութիւնը . ուստի աղէկ չէ գործածել եմ բային պէս , եւ պէտք չէ ըսել հիւանդ գոմ , կամ կարող գոլ , փոխանակ ըսելու հիւանդ եմ , կամ կարող ըլլալ ։

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Երդուայ | Այտեայ | Չունի |
| Երդուար | Այտեար | » |
| Երդուաւ | Այտեաւ | » |
| Երդուաք | Այտեաք | » |
| Երդուայք | Այտեայք | » |
| Երդուան | Այտեան | » |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Երդուայց | Այտեայց | Չունի |
| Երդուիցես | Այտիցես | » |
| Երդուիցէ | Այտիցէ | Գուցէ |
| Երդուիցուք | Այտիցուք | Չունի |
| Երդուիջիք | Այտիջիք | » |
| Երդուիցեն | Այտիցեն | Գուցեն |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Երդուիր, երդուիջիր | Այտիր, այտիջիր | Չունի |
| մի՛ երդնուր | մի՛ այտնուր | » |
| Երդուարուք, երդուիջիք | Այտերուք, այտիջիք | » |
| մի՛ երդնուք | մի՛ այտնուք | » |

### Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Երդնուցում | Այտնուցում | Չունի |
| Երդնուցուս | Այտնուցուս | » |
| Երդնուցու | Այտնուցու | » |
| Երդնուցումք | Այտնուցումք | » |
| Երդնուցուք | Այտնուցուք | » |
| Երդնուցուն | Այտնուցուն | » |



### Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Երդնուլ | Այտնուլ | Գոլ |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Երդուեալ | Այտուցեալ | Չունի |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Երդնլոց | Այտնլոց | Չունի |

---

155. Հ. *Այտնումին պէս խոնարհող ուրիշ բայեր որո՞նք են։*

Պ. *Այտնումին պէս խոնարհող բայեր են.*

| | Կտր. | Ապռ. | Հրմ. | Անց. ընդ. |
|---|---|---|---|---|
| Զարթնում | Զարթեայ | Զարթեայց | Զարթիր, Յոգ. Զարթիք | Զարթուցեալ |
| Ոստնում | Ոստեայ | Ոստեայց | Ոստիր | Ոստուցեալ |
| Սարտնում | Սարտեայ | Սարտեայց | Սարտիր | Սարտուցեալ |
| Ցասնում | Ցասեայ | Ցասեայց | Ցասիր | Ցասուցեալ |
| Քաղցնում | Քաղցեայ | Քաղցեայց | Քաղցիր | Քաղցեալ |

---

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՈՒՆ

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

156. Հ. *Անկանոն բայերուն մէջ ներգործականները ցուցուր՝ անոնց իւրաքանչիւրին կրաւորականներով։*

Պ. *Անկանոն բայերուն ներգործականները հետեւեալներն են իրենց կրաւորականներով։*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ներգ. | Առնեմ | Ընել | Էտինմէք |
| | Կրաւ. | Առնիմ | Ըլլուիլ | Էտինիլմէք |
| 2 | Ներգ. | Ասեմ | Ըսել | Տէմէք |
| | Կրաւ. | Ասիմ | Ըսուիլ | Տէնմէք |
| 3 | Ներգ. | Գիտեմ | Գիտնալ | Պիլմէք |
| | Կրաւ. | Գիտիմ | Գիտցուիլ | Պիլինմէք |
| 4 | Ներգ. | Դնեմ | Դնել | Գօմագ |
| | Կրաւ. | Դնիմ | Դրուիլ | Գօնմագ |
| 5 | Ներգ. | Ըմպեմ | Խմել | Իչմէք |
| | Կրաւ. | Ըմպիմ | Խմուիլ | Իչիլմէք |
| 6 | Ներգ. | Ճանաչեմ | Ճանչնալ | Թանըմագ |
| | Կրաւ. | Ճանաչիմ | Ճանչցուիլ | Թանըլմագ |
| 7 | Ներգ. | Ուտեմ | Ուտել | Եէմէք |
| | Կրաւ. | Ուտիմ | Ուտուիլ | Եէնմէք |
| 8 | Ներգ. | Լսեմ | Լսել | Իշիթմէք |
| | Կրաւ. | Լսիմ | Լսուիլ | Իշիթիլմէք |
| 9 | Ներգ. | Տամ | Տալ | Վէրմէք |
| | Կրաւ. | Տուեալ լինիմ | | Վէրիլմէք |
| 10 | Ներգ. և Կրաւ. | Պարտիմ | Պարտական ըլլալ | Պօրճլու օլմագ |



## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

### Սահմանական եղանակ, Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Առնիմ | Ասիմ | Գիտիմ | Դնիմ |
| Առնիս | Ասիս | Գիտիս | Դնիս |
| Առնի | Ասի | Գիտի | Դնի |
| Առնիմք | Ասիմք | Գիտիմք | Դնիմք |
| Առնիք | Ասիք | Գիտիք | Դնիք |
| Առնին | Ասին | Գիտին | Դնին |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի | Ասէի | Գիտէի | Դնէի |
| Առնէիր | Ասէիր | Գիտէիր | Դնէիր |
| Առնէր | Ասէր | Գիտէր | Դնէր |
| Առնէաք | Ասէաք | Գիտէաք | Դնէաք |
| Առնէիք | Ասէիք | Գիտէիք | Դնէիք |
| Առնէին | Ասէին | Գիտէին | Դնէին |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արարայ | Ասացայ | Գիտացայ | Եդայ |
| Արարար | Ասացար | Գիտացար | Եդար |
| Արարաւ | Ասացաւ | Գիտացաւ | Եդաւ |
| Արարաք | Ասացաք | Գիտացաք | Եդաք |
| Արարայք | Ասացայք | Գիտացայք | Եդայք |
| Արարան | Ասացան | Գիտացան | Եդան |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արարայց | Ասացայց | Գիտացայց | Եդայց |
| Արասցիս | Ասասցիս | Գիտասցիս | Դիցիս |
| Արասցի | Ասասցի | Գիտասցի | Դիցի |
| Արասցուք | Ասասցուք | Գիտասցուք | Դիցուք |
| Արասջիք | Ասասջիք | Գիտասջիք | Դիջիք |
| Արասցին | Ասասցին | Գիտասցին | Դիցին |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արասջիր , | Ասացիր , | Գիտասջիր , | Դնիջիր , |
| առնիջիր | ասիջիր , | գիտասջիր | դիջիր |
| | ասասջիր | | |
| մի առնիր | մի ասիր | մի գիտիր | մի դնիր |
| Արասջիք | Ասացարուք , | Գիտացարուք, | Եդարուք , |
| առնիջիք | ասիջիք , | գիտասջիք | դիջիք , |
| | ասասջիք | | դնիջիք |
| մի առնիք | մի ասիք | մի գիտիք | մի դնիք |

## Ստորադասական

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցիմ | Ասիցիմ | Գիտիցիմ | Դնիցիմ |
| Առնիցիս | Ասիցիս | Գիտիցիս | Դնիցիս |
| Առնիցի | Ասիցի | Գիտիցի | Դնիցի |
| Առնիցիմք | Ասիցիմք | Գիտիցիմք | Դնիցիմք |
| Առնիցիք | Ասիցիք | Գիտիցիք | Դնիցիք |
| Առնիցին | Ասիցին | Գիտիցին | Դնիցին |

## Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Առնել (իլ) | Ասել (իլ) | Գիտել (իլ) | Դնել (իլ) |

## Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ | Ասացեալ | Գիտացեալ | Եդեալ |

## Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Առնելի | Ասելի | Գիտելի | Դնելի |



## Սահմանական եղանակ , Ներկայ

| | | |
|---|---|---|
| Ըմպիմ | Ճանաչիմ | Ուտիմ |
| Ըմպիս | Ճանաչիս | Ուտիս |
| Ըմպի | Ճանաչի | Ուտի |
| Ըմպիմք | Ճանաչիմք | Ուտիմք |
| Ըմպիք | Ճանաչիք | Ուտիք |
| Ըմպին | Ճանաչին | Ուտին |

## Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Ըմպէի | Ճանաչէի | Ուտէի |
| Ըմպէիր | Ճանաչէիր | Ուտէիր |
| Ըմպէր | Ճանաչէր | Ուտէր |
| Ըմպէաք | Ճանաչէաք | Ուտէաք |
| Ըմպէիք | Ճանաչէիք | Ուտէիք |
| Ըմպէին | Ճանաչէին | Ուտէին |

## Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Արբայ | Ծանուցայ (*) | կեր եղէ (**) |
| Արբար | Ծանուցար | կեր եղեր |
| Արբաւ | Ծանուցաւ | կեր եղեւ |
| Արբաք | Ծանուցաք | կեր եղաք |
| Արբայք | Ծանուցայք | կեր եղէք |
| Արբան | Ծանուցան | կեր եղեն |

---

(*) Ճանաչեմ բային արմատական անունը , ծանօթ բառը , եմ , լինեմ բայերով գործածուելով կրաւորականի միտք կուտայ այսպէս , ծանօթ եմ կամ լինեմ , ծանօթ էի , ծանօթ եղէ , ծանօթ եղէց , ծանօթ լեր , որ կը նշանակեն կը ճանչցուիմ . կը ճանչցուէի , ճանչցուեցայ , եւլն ։

(**) փոխանակ կեր բառին կրնայ ըստ տեղւոյն գործածուիլ նաեւ կերեալ բառն , այսպէս կերեալ լինեմ , եղէ , եղէց , լեր , որ կը նշանակէ նոյնպէս կ'ուտուիմ , կ'ուտուէի , կերուեցայ , եւայլն ։

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Արբայց | Ծանուցայց | Կեր եղէց |
| Արբցիս | Ծանուսցիս | Կեր եղիցիս |
| Արբցի | Ծանուսցի | Կեր եղիցի |
| Արբցուք | Ծանուսցուք | Կեր եղիցուք |
| Արբջիք | Ծանուսջիք | Կեր եղիջիք |
| Արբցին | Ծանուսցին | Կեր եղիցին |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Արբիր | Ծանուցիր | Կեր լեր |
| մի ըմպիր | մի ճանաչիր | մի լինիր կեր |
| Արբերուք | Ծանուցարուք | Կեր լերուք |
| մի ըմպիք | մի ճանաչիք | մի լինիք կեր |

### Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Ըմպիցիմ | Ճանաչիցիմ | Ուտիցիմ |
| Ըմպիցիս | Ճանաչիցիս | Ուտիցիս |
| Ըմպիցի | Ճանաչիցի | Ուտիցի |
| Ըմպիցիմք | Ճանաչիցիմք | Ուտիցիմք |
| Ըմպիցիք | Ճանաչիցիք | Ուտիցիք |
| Ըմպիցին | Ճանաչիցին | Ուտիցին |

### Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ըմպել (իլ) | Ճանաչել (իլ) | Ուտել (իլ) |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Արբեալ | Ծանուցեալ | Կերեալ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ըմպելի | Ճանաչելի | Ուտելի |



### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Լսիմ | Տուեալ լինիմ | Պարտիմ (*) |
| Լսիս | Տուեալ լինիս | Պարտիս |
| Լսի | Տուեալ լինի | Պարտի |
| Լսիմք | Տուեալ լինիմք | Պարտիմք |
| Լսիք | Տուեալ լինիք | Պարտիք |
| Լսին | Տուեալ լինին | Պարտին |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Լսէի | Տուեալ լինէի | Պարտէի |
| Լսէիր | Տուեալ լինէիր | Պարտէիր |
| Լսէր | Տուեալ լինէր | Պարտէր |
| Լսէաք | Տուեալ լինէաք | Պարտէաք |
| Լսէիք | Տուեալ լինէիք | Պարտէիք |
| Լսէին | Տուեալ լինէին | Պարտէին |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Լու եղէ (**) | Տուայ | Չունի |
| Լու եղեր | Տուար | » |
| Լու եղեւ | Տուաւ | » |
| Լու եղաք | Տուաք | » |
| Լու եղէք | Տուայք | » |
| Լու եղեն | Տուան | » |

---

(*) Պարտիմ բային կրաւորականին տեղ կը գործածուի ընդհանրապէս պարտ է միադէմ բայը տրական խնդրով, այսպէս, պարտ է, կամ էր, կամ եղեւ կամ եղիցի ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ, նոցա եւայլն։

(**) փոխանակ լու բառին՝ կրնայ գործածուիլ նաեւ լուր բառն, այսպէս. լուր լինիմ. եղէ, եղեր. բայց այս ոճը կը նշանակէ ընդհանրապէս՝ ընդունիլ լուր, լսուիլ։

| | | |
|---|---|---|
| Լու եղէց | Տուայց | Չունի |
| Լու եղիցիս | Տացիս | » |
| Լու եղիցի | Տացի | » |
| Լու եղիցուք | Տացուք | » |
| Լու եղիջիք | Տաջիք | » |
| Լու եղիցին | Տացին | » |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Լինիցիմ | Տայցիմ | Պարտիցիմ |
| Լինիցիս | Տայցիս | Պարտիցիս |
| Լինիցի | Տայցի | Պարտիցի |
| Լինիցիմք | Տայցիմք | Պարտիցիմք |
| Լինիցիք | Տայցիք | Պարտիցիք |
| Լինիցին | Տայցին | Պարտիցին |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Լու լինել | Տուեալ լինել | Պարտել |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Լուեալ | Տուեալ | Չունի |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Լինելի | Տալի | Չունի |



## ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

—

157. Հ. Ո՞ր բայերը կը կոչուին դերբայ։

Պ. Դերբայ կը կոչուին բայերուն աներեւոյթը, և անցեալ և ապառնի ընդունելութիւնները։

158. Հ. Ի՞նչ կը նշանակէ աներեւոյթն և ի՞նչպէս կը գործածուի։

Պ. Աներեւոյթը որ իբր բայ ընել կամ ըլլալ կը ցուցնէ, ինչպէս սիրել, նստել, կը գործածուի նաեւ իբր գոյական անուն և կը հոլովի միայն եզակի։

Ա. Լծ. Սիրել, սիրելոյ, սիրելով. Հատանել, հատանելոյ, հատանելով։

Բ. Լծ. Խօսել, խօսելոյ, խօսելով. Ուսանել, ուսանելոյ, ուսանելով։

Գ. Լծ. Աղալ, աղալոյ, աղալով. Գողանալ, գողանալոյ, գողանալով։

Դ. Լծ. Թողուլ, թողլոյ, թողլով։

159. Հ. Ի՞նչպէս կը գործածուի անցեալ ընդունելութիւնն։

Պ. Անցեալ ընդունելութիւնը կը գործածուի շատ անգամ իբր ածական, թէ եզակի թէ յոգնակի, և կը հոլովի այսպէս.

Ա. ԼԾ. Սիրեալ, սիրելոյ, սիրելով. Սիրեալք, սիրելոց, սիրելովք ։

Հատեալ, հատելոյ, հատելով. Հատեալք, հատելոց, հատելովք ։

Բ. ԼԾ. Խօսեալ, խօսելոյ, խօսելով. Խօսեալք, խօսելոց, խօսելովք ։

Ուսեալ, ուսելոյ, ուսելով. Ուսեալք, ուսելոց, ուսելովք ։

Գ. ԼԾ. Աղացեալ, աղացելոյ, աղացելով. Աղացեալք, աղացելոց, աղացելովք ։

Գողացեալ, գողացելոյ, գողացելով. Գողացեալք, գողացելոց, գողացելովք ։

Դ. ԼԾ. Թողեալ, թողելոյ, թողելով. Թողեալք, թողելոց, թողելովք ։

---

160. Հ. Ի՞նչպէս կը հոլովի ապառնի ընդունելութիւնը ։

Պ. Բայերուն ապառնի ընդունելութիւնը, սիրելոց, գործելոց, եւն. չհոլովիր ։

161. Հ. Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բային հետ գործածուելով ի՞նչ կ'ընեն ։

Պ. Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բային եմ, էի, իցեմ ժամանակներով խոնարհելով, կը կազմեն քանի մը բաղադրեալ ժամանակներ, զոր օրինակ ·



| Յարակատար | Ներկայ ապառնի |
|---|---|
| Սիրեալ եմ. սիրած եմ, սէվմիշիմ | Սիրելոց եմ. պիտի սիրեմ, սէվէճէյիմ |
| » ես . | » ես . |
| » է . | » է . |
| » եմք . | » եմք . |
| » էք . | » էք . |
| » են . | » են . |

| Գերակատար | Անկատար ապառնի |
|---|---|
| Սիրեալ էի . սիրած էի, սէվմիշ իտիմ | Սիրելոց էի . պիտի սիրէի, սէվէճէյիտիմ |
| » էիր . | » էիր . |
| » էր . | » էր . |
| » էաք . | » էաք . |
| » էիք . | » էիք . |
| » էին . | » էին . |

| Ստոր. անցեալ | Ստոր. ապառնի |
|---|---|
| Սիրեալ իցեմ, սիրած եմ. կամ սիրած ըլլամ սէվմիշիմ կամ, սէվմիշ օլայըմ | Սիրելոց իցեմ. պիտի սիրեմ, սէվէճէյիմ |
| » իցես . | » իցես . |
| » իցէ . | » իցէ . |
| » իցեմք . | » իցեմք . |
| » իցէք . | » իցէք . |
| » իցեն . | » իցեն . |

## ԳԼՈՒԽ Զ.

—

## ՄԱԿԲԱՅ

162. Հ. Ո՞ր բառերը մակբայ կ'ըսուին ։

Պ. Մակբայ կ'ըսուին այն բառերը որ կը ցուցընեն բային գործողութեան եղանակը կամ պարագան ։ Զոր օրինակ, Յոյժ ըմպել, շատ խմել. Բարւոք խօսել, աղէկ խօսել. այս խօսքերուն մէջ յոյժ կը ցուցնէ խմելուն, և բարւոք՝ խօսելուն եղանակը, այսինքն թէ խմելը շատ է, և խօսելն՝ աղէկ. ապա յոյժ, բարւոք են մակբայ ։ Նոյնպէս սա խօսքին մէջ, Վաղվաղ երթայց անդր. Վաղը պիտի երթամ հոն, վաղվաղ և անդր կը ցուցնեն երթալուն երկու պարագան, այսինքն ժամանակը և տեղը, ուստի և են մակբայ ։

163. Հ. Բայերո՞ւ հետ միայն կը գործածուին մակբայները ։

Պ. Մակբայները շատ անգամ կը գործածուին ածականի և կամ ուրիշ մակբայի հետ, զոր օրինակ սա խօսքերուն մէջ, Յոյժ իմաստուն, Ամենայնիւ քաջ, շատ խելացի, վերջին աստիճան քաջ, բառերը յոյժ, ամենայնիւ կը ցուցնեն իմաստուն և քաջ ածականներուն մէկ մի որպիսութիւնը, այսինքն թէ իմաստունն է առաջին կարգի, և քաջը՝ վերջին աստիճան, ապա յոյժ, ամենայնիւ մակբայ են ։ Սա խօսքերուն մէջ, Յոյժ անագան, շատ ուշ. Կարի վաղ, շատ շուտ, յոյժ, կարի, կը ցուցնեն սա երկու, անագան և վաղ մակբայներուն մէկ մի որպիսութիւնը, այսինքն թէ չափէն աւելի են. ապա յոյժ, կարի մակբայ են ։



164. Հ. Գլխաւորապէս գործողութեան ո՞ր պարագաները կը ցուցուին մակբայներով.

Պ. Մակբայներով գլխաւորապէս կը ցուցուին գործողութեան տեղը, ժամանակը, եղանակը կամ կերպը և քանակութիւնը, ուստի և մակբայներուն, իւրաքանչիւր իւր գործին համեմատ, կը տրուին տեղական, ժամանակական, եղանակական և քանակական անունները ։

165. Հ. Որո՞նք են տեղական մակբայք ։

Պ. Տեղական կ'ըսուին այն մակբայք որք պատասխան են ո՞ւր կամ ուստի՞ հարցմանց, զոր օրինակ.

Անդ . հոն (դադարում), օրատա .
Անդր . հոն (շարժում), օրայա .
Աստ . հոս (դադարում), պուրատա .
Այր . հոս (շարժում), պուրայա .
Այդր . հոտ (շարժում), շուրայա .
Անտի . անկէ, օրատան .
Աստի . ասկէ, պուրատան .
Այտի . ատկէ, շուրատան .
Արտաքս . դուրս, տըշարը .
Արտաքոյ . դուրսը, տըշարտա .
Արտաքուստ . դուրսէն, տըշարտան .
Ի ներքս . ներս, իչէրի .
Ի ներքոյ . ներսը, իչէրտէ .
Ի ներքուստ . ներսէն, իչէրտէն .
Ի վեր . վեր, եօգարը .
Ի վերոյ . վերը, եօգարտա .
Ի վերուստ . վերէն, եօգարտան .
Ի վերայ . վրան, իւսթիւ, իւսթիւնտէ .
Ի ներքոյ . տակը, ալթը, ալթտա .

Շուրջ
Շուրջանակի } բոլորտիքը, էթրաֆը, էթրաֆտա·
Առընթեր · քովը, եանը, եանընտա·
Ի մէջ
Ի միջի } մէջտեղը, օրթայա, օրթատա, արասընտա·
Առաջի · առջևը, առջևէն, էօնէ, էօնտէ, էօնտէն·
Հանդէպ · դիմացը, գարշըսընա, գարշըսընտա·
Ի հանդիպոյ · դիմացէն, գարշըտան·
Զկնի · ետևը, ետևէն, արտա, արտընտա, արտընտան·
Մօտ
Մերձ } մօտը, եագընը, եագընտա·
Ի մօտոյ · մօտէն, եագընտան·

166· Հ· Որո՞նք են ժամանակական մակբայք։

Պ. Ժամանակական կ'ըսուին այն մակբայներն որ պատասխան են ե՞րբ հարցման, ինչպէս·

Այժմ
Արդ } հիմա, շիմտի·
Այսօր · այսօր, պու կիւն·
Այգուն
Առաւօտուն } առտուն, սապահտան·
Ընդ առաւօտն · առտուան դէմ, սապահա գարշը·
Այգուն այգուն · ամէն առտու, հէր սապահ·
Զմիջաւուրբ · կէս օրին, էօյլէյին·
Երեկոյին · իրիկուան, աքշամ·
Ընդ երեկս · իրիկուան դէմ, աքշամ եագընը·
Զցայգ
Գիշերի } գիշերը, կէճէ·
Գիշերայն · գիշերանց, կէճէլէյին·
Զմէջ գիշերաւ · կէս գիշերուն, եարը կէճէլէյին·
Զտիւ և զգիշեր · ցորեկ գիշեր, կիւնտիւզ կէճէ·
Զցայգ և զցերեկ · գիշեր ցորեկ, կէճէ կիւնտիւզ·



Աւուր աւուր
Զօրհանապազ } ամէն օր, հէր կիւն·
Օր ըստ օրէ · օրէ օր, կիւնտէն կիւնէ·
Յառաջ, յառաջագոյն · առաջ, էվվէլ·
Երէկ · երեկ, տիւն·
Յեռանդ · երեկ չէ առջի օրը, տիւն տէյիլ էվվէլսի կիւն·
Հերու · անցեալ տարի, պըլտըր·
Ամի ամի · ամէն տարի, հէր եըլ·
Ամ ըստ ամէ · տարուէ տարի, եըլտան եըլա·
Ապա
Յետոյ } ետքը, սօնրա·
Հուսկ ապա
Հուսկ յետոյ } ամենէն ետքը, վերջապէս, էն սօնրա·
Վաղիւ · վաղը, եարըն·
Ի վաղիւ անդր · հետեւեալ օրը, էրթէսի կիւնիւ·
Արդէն · հիմակուընէ, շիմտիտէն·
Այսուհետեւ · ասկէ ետքը, պունտան սօնրա·
Այնուհետեւ · անկէ ետքը, օնտան սօնրա·
Երբեք · երբէք, ասլա·
Վաղ · շուտ, թէզ·
Կանուխ · կանուխ, էրքէն·
Անագան · ուշ, կէճ·
Կանխաւ · առաջուց, էվվէլտէն, փէշինէն·
Նախ · առաջ, էվվէլա·
Զառաջինն
Յառաջնումն
Ի սկզբան } առաջ, իպթիտա·
Վաղու եւս · շատոնց, չօքտան·
Ի վաղուց հետէ · շատոնց ի վեր, չօքտան պէրի·
Անդէն և անդ
Իսկոյն
Իսկ և իսկ } անմիջապէս, տէրհալ·

Անդէն
Առժամայն
Նոյնժամայն
Նոյնհետայն
} այն վայրկենէն , օլ անտէն .

Այն ինչ · դեռ նոր , հէնուզ .
Մինչ այս մինչ այն · այն միջոցին , օ արատա , տէր իքէն .

Մինչ
Մինչդեռ
} ատենը . . . իքէն .

Տակաւին · տակաւին , հալա .
Դեռ · դեռ , տահա .

Մինչչեւ
Չեւ
} դեռ . . . ոչ . . . մէտէն .

Իբրեւ
Յորժամ
} երբ . . . ինճէ , վագըթ .

Երբեմն · երբեմն , պազըն .

Երբեմն
Էր զի երբեմն
} ատենօք , վագըթ իլէ , պիր վագըթ .

Երբեմն . . . երբեմն
Մերթ . . . մերթ
Է զի . . . է զի
Էր զի . . . էր զի
} երբեմն . . . երբեմն , կեահ . . . կեահ .

Երբէք երբէք · ատեն ատեն , վագըթ վագըթ

167· Հ· Որո՞նք են եղանակական մակբայք ։

Պ· Եղանակական կ'ըսուին այն մակբայներն որ պատասխան են ի՞նչպէս , ի՞նչ եղանակաւ , ի՞նչ կերպով հարցմանց , ինչպէս ,

Այսպէս · այսպէս , պէօյլէ .
Այնպէս · այնպէս , էօյլէ .
Բարւոք · աղէկ , էյի .
Զարաչար · գէշ , ֆէնա .
Խստիւ · խստիւ , սէրթճէ .



Մեղմով · կամաց , եավաշճա .
Ցիրաւի · իրաւամբ , հագգըն .

Յանիրաւի
Տարապարտուց
} յանիրաւի , նահագգ եէրէ .

Ի զուր
Վայրապար
} պարապ տեղը , նաֆիլէ .

Յայտ
Յայտնի
Յայտնապէս
} բացայայտ , աշիքեարէ .

Գաղտ · գաղտուկ , կիզլի .
Լռելեայն · անձայն , սէսսիզճէ .
Համարձակ · համարձակ , սէրպէսթճէ .
Ի ծածուկ · ծածուկ , գափալըտան .
Հրապարակաւ · հրապարակաւ , մէյտանտա .
Առանձինն · մինակ , եալընըզ .
Ի միասին · մէկտեղ , պէրապէր .

Բնաւ
Ամենեւին
} բոլորովին , պիւթիւն պիւթիւնէ .

Միայն
Նեւեթ
} միայն , անճագ .

Ձրի · ձրի , ճապա .
Ցամք · ծանր , աղըր , եավաշ .
Արագ · արագ , չապուգ .
Տակաւ · կամաց կամաց , ազար ազար , տէրէճէ տէրէճէ .
Հետի · քալելով · եայան .
Դիւրաւ , դիւրաւ , գօլայճա .
Դժուարաւ · դժուարաւ , զօր իլէ .
Հեշտեաւ , ախորժելով , հազզ էտէրէք .
Հազիւ · հազիւ , կիւճպէլա .
Ճշդիւ · ճշդութեամբ , թամ թամընա .
Հարեւանցի · վեր 'ի վերոյ , իւսթիւնքէօրիւ .
Ստուգիւ · ստուգութեամբ , էմին օլարագ .
Ճշմարտիւ · ճշմարտութեամբ , հաքիգաթէն .

Անշուշտ · առանց ստութեան, կէրչէքտէն ·
Հաւաստեաւ · առանց կատակի, շագասըզ ·
Ընդ խաղ · կատակով, շագա իլէ ·
Ուրոյն · զատ, այրըճա ·
Միանգամայն · միանգամայն, պիրտէն ·
Կամաւ · կամաւ, իրատէի իլէ ·
Ակամայ · ակամայ, իսթէմէյէրէք ·
Մտադիւր · յօժարաբար, իսթէյէրէք ·
Բռնի · բռնի, զօրաքի ·
Կամակար · ազատօրէն, պիլ իսթէյօր ·

Հարկաւ<br>Ի հարկէ } հարկաւ, պէլլիտիր ·

Կենդանւոյն · ողջ · ողջ, տիրի տիրի ·
Ուժգին · ուժով, զօռ իլէ ·
Անխնայ · անգթաբար, մէրհամէթսիզճէ ·
Անխտիր · անտարբեր կերպով, պիլա ֆէրգ ·
Համակ · բոլորովին, թամամ ·
Իսպառ · մինչեւ վերջը, սօնունատէք ·
Հակառակ · դէմ, թէրսինէ ·

Այլազգ<br>Այլ ընդ այլոյ } տարբեր, պաշգա թիւրլիւ ·

Հետզհետէ · ետեւէ ետեւ, կիտէրէք, աղըր աղըր ·
Յանկարծ · յանկարծ, անսըզըն ·

Վաղվաղակի<br>Փութապէս<br>Փութանակի } աճապարանօք, աճէլէ իլէ ·

168· Հ· Որո՞նք են քանակական մակբայք ։

Պ· Քանակական են այն մակբայներն որ պատասխան են ո՞րչափ, ո՞րչափ անգամ հարցմանց, ինչպէս ·

Այսչափ · այսչափ, պու գատար ·
Այնչափ · այնչափ, օլ գատար ·



Այդչափ · այդչափ, շու գատար ·
Յոյժ · շատ, չօգ, փէք ·
Կարի · չափէն աւելի, ղայէթլէ ·

Գոնէ<br>Գէթ } գոնէ, պարի ·

Բաւական · բաւական, քէաֆի միգտար ·

Իբր այն թէ<br>Գրեթէ } գրեթէ, ատէթա ·

Դուն ուրեք<br>Անօսր } քիչ անգամ, նատիր ·

Միանգամ · անգամ մը, պիր քէրրէ ·
Երկիցս · երկու անգամ, իքի քէրրէ ·
Երիցս · երեք անգամ, իւչ քէրրէ ·
Ստէպ · յաճախ, շատ անգամ, չօգ քէրրէ ·

Երկար<br>Երկայն } երկայն, ուզունճա ·

Միշտ<br>Հանապազ<br>Յանգ } միշտ, տայիմա ·

Դարձեալ<br>Միւսանգամ<br>Վերստին<br>Անդրէն } նորէն, եէնիտէն, թէքրար ·

Միանգամայն · մէկէն, պիրտէն ·
Եւս, եւ · նաեւ, ալ, տէ, տա ·

Մանաւանդ<br>Նա } մանաւանդ, պիլհասսա ·

169· Հ· Որո՞նք են ուրիշ գործածական մակբայք ։

Պ· Ուրիշ գործածական մակբայք են ·

1· Ստորոգական մակբայք ·

Արդարեւ · արդարեւ, հագգա ·
Ապաքէն · անտարակոյս, շիւպհէսիզ ·

2· Բացասական մակբայք ·

Ոչ, չ· չ, մէ (էթմէմէք) · և, Ոչ երբէք, ասլա ·

3· Արգելական մակբայք ·

Մի · մի, մէ (էթմէ), և, Մի երբէք, ասլա ·

4· Զատական մակբայք ·

Միայն, եւեթ · մինակ, անճագ ·

5· Խրախուսական մակբայք ·

Օ՜ն, աղէ՛ · հայտէ · Թող · թող, գօ ·

6· Հարցական մակբայք, որ են

Զիա՞րդ · ի՞նչպէս, նա՞սըլ · Ո՞րչափ · ո՞րչափ, նէ՞ գատար ·
Ե՞րբ · ե՞րբ, նէ՞ զէման · Ո՞ւր · ո՞ւր, նէ՞րէտէ ·
Յո՞ · ո՞ւր, նէ՞րէյէ · Ուստի՞ · ուստի՞, նէ՞րէտէն ·
Քանի՞ցս անգամ · քանի՞ անգամ, գա՞չ տէֆա ·
Ո՞չ, ո՞չ ապաքէն · չէ՞ մի, տէյի՞լ մի ·

7· Տարակուսական մակբայք, որ են

Թերեւս · կարելի է, պէլքի · Արդեօք · արդեօք, ածապա,
Միթէ · միթէ, մի ·
Գուցէ } չըլլայ թէ, օլմայա կի ·
Մի գուցէ



# ԳԼՈՒԽ Է·

—

## ՇԱՂԿԱՊ

170· Հ· Ո՞ր բառերը կը կոչուին Շաղկապ ։

Պ· Շաղկապ կը կոչուին այն բառերը որ կը կապեն իրարու հետ երկու բառ կամ նախադասութիւն, զոր օրինակ · Հայր իմ և մայր իմ · հայրս և մայրս ։ Ցիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան · Իրեններուն եկաւ և իրենները չընդունեցան զնա ։ Այս խօսքերուն մէջ և, շաղկապ է, առաջին խօսքին մէջ կապած է իրարու հետ հայր, մայր բառերը · երկրորդին մէջ՝ երկու նախադասութիւն ։

171· Հ· Որո՞նք են գլխաւոր շաղկապք ։

Պ· Գլխաւոր շաղկապք են ·

Եւ · եւ, ու, վէ ·
Կամ · կամ, եախօտ ·
Բայց / Իսկ / Սակայն } բայց, լաքին, ամմա ·
Այլ · այլ, էլլա ·
Թէպէտեւ / Թէեւ } թէպէտ, իսէ տէ ·
Մինչ / Մինչեւ / Մինչ զի } այնպէս . . . որ · էօյլէ . . . կի ·
Զոր օրինակ / Որպէս } ինչպէս, մէսէլա ·

Իբր այն թէ } որպէս թէ,
Որպէս թէ

Եթէ. եթէ, էյէր.

Ուրեմն } ուրեմն, էօյլէ իսէ.
Ապա

Այսինքն } այսինքն, եանի.
Այն է

Քանզի } քանզի, զիրա, չիւնքի.
Զի
Վասն զի
Այնու զի

Վասն որոյ } ուստի, պու սեպեպտէն.
Վասն այնորիկ
Ուստի

Թէ } որ, քի.
Զի

Իբրեւ } երբ, նէ վախթըն քի.
Յորժամ

Մինչ } ատենը, էօնտէ.
Մինչդեռ



# ԳԼՈՒԽ Ը.

—

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

172. Հ. Ո՞ր բառերը կը կոչուին Միջարկութիւն կամ Ձայնարկութիւն։

Պ. Միջարկութիւն կամ Ձայնարկութիւն կը կոչուին այն բառերը որ կը յայտնեն կիրք, փափաք կամ ախորժակ, զոր օրինակ. բարկութիւն, իղձ, ուրախութիւն, եւն։

173. Հ. Որո՞նք են գլխաւոր միջարկութիւնք։

Պ. Գլխաւոր միջարկութիւնք են.

Ազնի՛ւ. ազնի՛ւ, աֆէրին.
Ա՛յ. ա՛յ, ա՛ (բարկութիւն կամ թշնամանք կը ցուցնէ).
Աւա՛ղ. աւա՛ղ, էյ վա՛խ.
Բա՛բէ. բա՛բէ, է՛յ (զարմանք կամ ցաւ կը ցուցնէ).
Եղո՛ւկ. աւա՛ղ, հայը՛ֆ.
Երանի՛. երանի՛, նէ՛ մութլու.
Երանի՛ թէ. երանի՛ թէ, քէա՛շքէ.
Է՛. ո՛վ, եա՛, է՛յ (ձայն տալու կամ կանչելու համար).
Իցի՛ւ, իցէ՛ թէ. երանի՛ թէ, քէա՛շքէ.
Հա՛պա. հա՛պա, հա՛յտէ.
Յանկա՛րծ. երանի՛ թէ, քէա՛շքէ.
Ո՛, ո՛վ. ո՛վ, է՛յ, եա՛ (զարմանք կը ցուցնէ).
Ո՛ տայր. երանի՛ թէ, քէաշքէ. Ո՛հ. ո՛հ, ա՛հ.
Վա՛հ. վա՛հ, վա՛յ (արհամարհանք կը ցուցնէ).
Վա՛յ. վա՛յ, վա՛յ. Վա՛շ. վա՛շ, օ՛խ.

Փարգա՛ստ } Աստուած չընէ, հա՛շա.
Քա՛ւ լիցի

Օ՛ն անդր. Աստուած չընէ, հա՛շա.

# ՄԱՍՆ Բ․

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

174․ Հ․ Ի՞նչ է համաձայնութիւն ։

Պ․ Համաձայնութիւն կ՚ըսուի բառերուն իրարու հետ կապակցութիւնը որով կը կազմուի խօսք կամ իմաստ ։

175 Հ․ Ի՞նչպէս կը կապուին իրարու հետ բառերը խօսքին մէջ ։

Պ․ Բառերը խօսքին մէջ կը կապուին իրարու հետ , իբրեւ տէր բայի և բայ , իբրեւ խնդիր և խնդրառու , իբրեւ ստորոգելի և ստորոգեալ , իբրեւ բացայայտիչ և բացայայտեալ ։

## ԳԼՈՒԽ Ա․

### ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ

176․ Հ․ Ի՞նչ է տէր բայի , և ի՞նչպէս կը գտնուի ։

Պ․ Բայը կը ցուցնէ ընել կամ ըլլալ․ տէր բային է ընողը կամ ըլլողը․ ուստի սա խօսքերուն մէջ , Ես սիրեցի զձեզ , Հայր առաքեաց զիս ․ Ես , Հայր են տէր բայի ։

Տէր բային պատասխան է ո՞վ , ի՞նչ հարցման , և այս հարցումն ընելով բայիւ կը գտնուի տէր բային ։ Այսպէս վերի խօսքին մէջ , Ես , Հայր տէր բայիները պատասխան են սա հարցմանց ․ Ո՞վ սիրեց , Ո՞վ առաքեց ։

## ՊԱՐԶ ՏԷՐ ԲԱՅԻ

177. Հ. Ի՞նչպէս կը համաձայնի բայը պարզ տէր բային հետ։

Պ. Պարզ (*) տէր բային հետ կը համաձայնի բայը թուով և դէմքով, զոր օրինակ.

Ես ննջեմ. Մեք գիտեմք. Դու ասես. Դուք ոչ գիտէք. Նա ետես. Նոքա ոչ իմացան։

178. Հ. Ի՞նչ կ'ըլլայ բայը, եթէ տէր բային եզակի հաւաքական անուն է։

Պ. Եթէ տէր բային է եզակի հաւաքական անուն, գոյականով կամ առանց գոյականի, բայը կրնայ դրուիլ յոգնակի, զոր օրինակ.

Պատահեցան նմա տասն այր բորոտ. Հինգն 'ի նոցանէ իմաստունք էին։

---

## ԲԱՂԱԴՐԵԱԼ ՏԷՐ ԲԱՅԻ

179. Հ. Եթէ տէր բային բաղադրեալ է, բայն ի՞նչ կ'ըլլայ։

Պ. Եթէ տէր բային բաղադրեալ է, բայը կը դրուի յոգնակի, թէեւ տէր բային կազմող բառերն ըլլան եզակի, զոր օրինակ.

Պետրոս և Յովհաննէս ելին 'ի տաճարն. Նոյ և որդիք նորա մտին 'ի տապանն։

(*) Պարզ կ'ըսուի տէր բային, երբ է մի բառ, եզակի կամ յոգնակի. ինչպէս. դու սիրեցեր. նոքա գնացին։

Բաղադրեալ կ'ըսուի տէր բային, երբ կազմուած է երկու կամ աւելի եզակի կամ յոգնակի բառերէ, ինչպէս 179 Թուոյն օրինակներուն մէջ։



180. Հ. Ի՞նչ գիտելիք կայ բաղադրեալ տէր բայի ունեցող բայերուն վրայ։

Պ. 1. Եթէ բայը խօսքին մէջ առաջ է տէր բայիներէն, կրնայ համաձայնիլ առաջին տէր բային հետ, այսինքն՝ եզակի դրուիլ, եթէ առաջին տէր բային է եզակի. զոր օրինակ.

Յարեաւ Մովսէս, և Յեսու պաշտօնեայ նորա, և ելին 'ի լեառնն Աստուծոյ։ Եմուտ Նոյ, և որդիք նորա և կին նորա . . . ընդ նմա 'ի տապանն։ Եւ մեռաւ Սաւուղ, և երեքեան որդիք նորա և կապարճակիրն և ամենայն արք նորա։ Եկն Յիսուս, և աշակերտք նորա։ Ինքն աստի արբ, և որդիք նորա և խաշինք նորա։ Բազմութեան հաւատացելոց էր սիրտ և անձն մի։

2. Եթէ տէր բայերը կապուած են ու և կամ կամ շաղկապով, բայը կրնայ համաձայնիլ իրեն անմիջապէս մօտ գտնուած բառին հետ միայն, ուստի և եզակի դրուիլ, եթէ այն բառը եզակի է. զոր օրինակ.

Ոչ էր նոցա ոչ ել և ոչ մուտ և ոչ գին և ոչ վաճառ։ Ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակք և ոչ իշխանութիւնք . . . և ոչ բարձրութիւն եւ ոչ խորութիւն և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի Աստուծոյ։

Եթէ յառնիցէ 'ի միջի քում մարգարէ կամ երազահան՝ ծնցի։ Եթէ աղաչիցէ զքեզ եղբայր քո կամ ուստր քո կամ դուստր քո կամ կին քո կամ բարեկամ հանգոյն անձին քոյ. Է՞ ոք քո տան ծառայ կամ որդիք կամ դստերք։

Այս տեսակ խօսքերու մէջ միւս տէր բայինե-րուն քով եւս կ'իմացուի լռելեայն բայ մը· զոր օ-րինակ·

Եմուտ Նոյ և որդիք նորա և կին նորա . . . ընդ-նմա 'ի տապանն· փոխանակ ըսելու, Եմուտ Նոյ 'ի տապանն, մտին և որդիք նորա, եմուտ և կին նորա ընդ նմա։ Եկն Յիսուս, և աշակերտք նորա· փոխա-նակ՝ Եկն Յիսուս, եկին և աշակերտք նորա։

Ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակք . . . և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ, եւն. փոխանակ՝ Ոչ մահ կարէ մեկնել զմեզ . . . ոչ կեանք կարեն մեկնել զմեզ, ոչ հրեշտակք կարեն մեկնել զմեզ և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ։

Եթէ աղաչեսցէ զքեզ եղբայր քո կամ ուստր քո կամ դուստր քո, եւն. փոխանակ՝ Եթէ աղաչեսցէ զքեզ եղբայր քո, կամ եթէ աղաչեսցէ զքեզ ուստր քո, կամ ե-թէ աղաչեսցէ զքեզ դուստր քո, եւն։

181. Հ. Բայն ի՞նչ կ'ըլլայ, եթէ տէր բայինները տարբեր դէմք են։

Պ. Եթէ տէր բայինները տարբեր դէմք են, բայը կը դրուի յոգնակի, եւ դէմքով կը համաձայնի պատուաւոր դէմքի տէր բայինին հետ· զոր օրինակ·

Ես և հայր իմ մի եմք, Յորժամ դու և նա միայն իցէք։

Առաջին դէմքը՝ քան զերկրորդը, երկրորդը՝ քան զերրորդը պատուաւոր է։



## ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

182. Հ. Ի՞նչ կ'ըլլայ բայը, եթէ առաջ է տար-բեր դէմքի տէր բայիններէն։

Պ. Եթէ բայն առաջ է տարբեր դէմքի տէր բայիններէն, եւ պատուաւոր դէմքի տէր բային ե-զակի է, բայը կրնայ դրուիլ եզակի· զոր օրինակ

Մտցես 'ի տապանն դու և որդիք քո և կին քո եւ կանայք որդւոց քոց։ Մեղար դու և երկոքին բարեկամք քո· Իշխեա մեզ դու և որդիք որդւոց քոց։

---

## ՏԷՐ ԲԱՅԻՒՆ ՀՈԼՈՎԸ

183. Հ. Ի՞նչ հոլով ըլլալու է տէր բային ըստ օ-րինի։

Պ. Տէր բային ըստ օրինի պիտի ըլլայ ուղ-ղական հոլով· բայց հայերէնի մէջ սեռական եւ տրական եւս կ'ըլլայ։

184. Հ. Ե՞րբ սեռական կը դրուի տէր բային։

Պ. Երբ եւ շաղկապով կապուած երկու բայ մի և նոյն տէր բային ունին, կրնայ առաջին բայն անցեալ դերբայի փոխուիլ և շաղկապը, եւ, զանց առնուիլ, և անատեն տէր բային կրնայ դրուիլ սեռական հոլով· զոր օրինակ·

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա ասէ· փոխանակ ը-սելու· Ետես Յիսուս զհաւատս նոցա եւ ասէ։ Հրէից կալ-եալ զիս կամէին սպանանել· փոխանակ ըսելու, Հրէայք կալան զիս եւ կամէին սպանանել։

Երկրորդ՝ տէր բային կը դրուի սեռական, երբ յարակատարին, գերակատարին և ստորադասական անցելոյն (տես Թիւ 161) եղակի երրորդ դէմքը գործածուած է միւս դէմքերուն տեղ ։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սիրեալ | է, էր, իցէ | իմ | փոխանակ | Սիրեալ | եմ, էի, իցեմ | ես |
| » | է, էր, իցէ | քո | » | » | ես, էիր, իցես | դու |
| » | է, էր, իցէ | նորա | » | » | է, էր, իցէ | նա |
| » | է, էր, իցէ | մեր | » | » | եմք, էաք, իցեմք | մեք |
| » | է, էր, իցէ | ձեր | » | » | էք, էիք, իցէք | դուք |
| » | է, էր, իցէ | նոցա | » | » | են, էին, իցեն | նոքա |
| Արարեալ | է, էր, իցէ | Աստուծոյ | » | Արարեալ | է, էր, իցէ | Աստուած |

Լուեալ է ձեր վասն նորա փոխանակ՝ Լուեալ էք դուք ։ Եթէ իմ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա · փոխանակ՝ Եթէ ես ոչ էի եկեալ և խօսեցեալ ։ Եթէ չէր նորա խափանեալ, իմ զքեզ սպանեալ էր · փոխանակ՝ Եթէ նա չէր խափանեալ, ես զքեզ սպանեալ էի ։ Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ, պատիժս 'ի նմանէ չէր պարտ պահանջել · փոխանակ՝ Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուած ։

185. Հ. Ե՞րբ տրական կը դրուի տէր բային ։

Պ. Երբ երկու խօսք կապուած են իրարու հետ եթէ կամ զի շաղկապով, կրնայ եթէ կամ զի շաղկապը զանց առնուիլ և երկրորդ խօսքին դիմաւոր բայը փոխուիլ աներեւոյթի · անատեն տէր բային (եթէ խօսքին մէջ տէր բայ կայ) կը դրուի տրական, զոր օրինակ ·



Ոչ կամիմք թագաւորել նմա 'ի վերայ մեր · փոխանակ՝ Ոչ կամիմք եթէ թագաւորեսցէ նա 'ի վերայ մեր ։ Դէպ եղեւ անցանել նմա ընդ այն ճանապարհ · փոխանակ՝ Դէպ եղեւ զի անց նա ընդ այն ճանապարհ ։ Ոչ տամք թոյլ անցանել ձեզ ընդ երկիր մեր · փոխանակ՝ Ոչ տամք թոյլ զի անցանիցէք դուք ընդ երկիր մեր ։ Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսմիկ գիտեմ · փոխանակ՝ Գիտեմ զի ես դու դատաւոր ես ։ Ընդէ՞ր ելից Սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն սրբոյ · փոխանակ՝ զի ստեցեր դու Հոգւոյն սրբոյ ։ Աղաչեցաք չելանել նմա յԵրուսաղէմ ։ Պատուիրէ մարդկան՝ ամենայն ուրեք ապաշխարել · փոխանակ՝ Պատուիրէ մարդկան զի ամենայն ոք ապաշխարիցէ (*) ։

(*) Այս ձեւ խօսքերու մէջ տէր բային վայելչութեամբ ուղղական կամ հայցական եւս դրուած կը գտնուի . զոր օրինակ . Ժողովուրդն որ կայր եւ լսէր՝ ասէին որոտումն լինել . այսինքն ասէին թէ որոտումն լինի ։ Նոյնպէս ասեն գիրք զԱստուած և զօրէնս . — այսինքն՝ Գիրք ասեն եթէ Աստուած նոյնէ եւ զօրէնս ։

## ԳԼՈՒԽ Բ.

—

## ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ

186. Հ. Ո՞ր բառերը խնդիր կը կոչուին խօսքին մէջ ։

Պ. Խօսքին մէջ խնդիր կը կոչուին այն բառերը որ ուրիշ բառի մը քով դրուելով՝ կ'որոշեն կամ կ'ամբողջացունեն անոր իմաստը, զոր օրինակ.

Սա խօսքերուն մէջ, Լեառն ձիթենեաց. Արժանի վարձուց. Վասն խաղաղութեան. Առաքեաց զմշակն յայգի իւր. բառք՝ ձիթենեաց, վարձուց, խաղաղութեան, զմշակն յայգի իւր, խնդիր են ։ Առանց այս բառերուն՝ լեառն, արժանի, վասն, առաքեաց, չեն տար որոշ կամ կատարեալ իմաստ ։

187. Հ. Ի՞նչ կը կոչուի խնդիր ունեցող բառը ։

Պ. Խնդիր ունեցող բառը կը կոչուի խնդրառու. վերի օրինակներուն մէջ խնդրառու են բառք լեառն, արժանի, վասն, առաքեաց ։

188. Հ. Ո՞ր բառերը կրնան առնուլ խնդիր ։

Պ. Խնդիր կրնան առնուլ 1. գոյականը ։ 2. ածականը, 3. նախադրութիւնը եւ 4. բայը ։

—



### 1. ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

—

189. Հ. Ի՞նչ հոլով խնդիր կ'առնու գոյական անունը ։

Պ. Գոյական անունն, ինչպէս նաեւ գոյականաբար առնուած ածական մը եւ աներեւոյթ մը, կ'առնուն սեռական հոլով խնդիր ։ Սեռական հոլով խնդիրն հայերէն կը կոչուի յատկացուցիչ. ինչպէս որ սեռական հոլով խնդիր առնող բառը կը կոչուի յատկացեալ. զոր օրինակ.

Սա խօսքերուն մէջ՝ Լոյս աշխարհի. Իմաստութիւնք Յունաց. Ի ծնանելն Յիսուսի, բառք՝ աշխարհի, Յունաց, Յիսուսի, յատկացուցիչ են. լոյս, իմաստութիւնք, ծնանել՝ յատկացեալ են ։

190. Հ. Ի՞նչ հարցման պատասխան է յատկացուցիչը կամ սեռական հոլովը ։

Պ. Յատկացուցիչը կամ սեռական հոլովը պատասխան է որո՞ւ, ինչի՞ն, հարցման ։ Վերի խօսքերուն մէջ կրնանք ընել այս հարցումը ։

Որո՞ւ լոյսը. — Աշխարհին. Որո՞ւ իմաստութիւնները. — Յունաց. Որո՞ւ ծնանելու ատենը. — Յիսուսի ։

191. Հ. Ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն բայանունք ։

Պ. Բայանունք, այսինքն բայի զօրութիւն ունեցող գոյականներ, կրնան առնուլ նոյն արմատէն շինուած բայերուն բնութեան խնդիրները. ուստի կ'ըսուի.

Դարձ յերկիր · Մուտ յաշխարհ · Ել յերկինս առ Հայր · Դարձ 'ի քերթողութենէ · Ելք 'ի Բաբելոնէ · Գալուստն յԵրուսաղէմ · Փրկութիւն 'ի նշանաց · Ապստամբութիւն յօրինաց · Փախուստ 'ի Սաւուղայ · Լուան զտրտունջ ժողովրդեանն ընծանէ · Վասն ամբաստանութեան Հրէից զնէն · Պատերազմ Արշակայ ընդ Մակեդոնացւոց զօրութեանն :

Այս օրինակներուն մէջ, դարձ, առած է դառնալ բային խնդիրը · այսինքն՝ Դարձ (դառնալ) — ո՞ւր · — յերկիր : Մուտ բառն առած է մտնել բային խնդիրը · այսինքն՝ Մուտ (մտանել) · — ո՞ւր · — յաշխարհ · փախուստ՝ փախչել բայինը · Փախուստ (փախչել) · — ուստի՞ կամ յումմէ՞ · — 'ի Սաւուղայ · տրտունջ, առած է տրտնջել բային խնդիրը · — Տրտունջ (տրտնջել) · — որո՞ւ վրայ · — ընծանէ · անոր վրայ :

---

## 2· ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

192· Հ· Ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն ածականք՚

Պ· Ածականք, ինչպէս նաեւ անցեալ ընդունելութիւնք որ իբր ածական կը գործածուին, կրնան առնուլ խնդիր ամէն հոլով բաց ուղղականէ :

1· Սեռական, ինչպէս,

Սրտագէտ ամենայնի · Կամարար Աստուծոյ · Օրէնսդիր պահոց · Աւարառուք ստացուածոց :

Սեռական խնդիր կ'ուզեն ն եւ նէ վերջաւորած բառեր ·

Արարիչ աշխարհի · Գտիչ չարեաց · Առնելիք (առնող) օրինաց :



2· Տրական, ինչպէս ·

Նման նմա · Հաւասար այլոց · Դիմակաց Նախարարի · Արժանի վարձուց · Հմուտ որսոյ · Հնազանդ ամենայնի · Կարօտ հացի · Ծարաւի արեան · Տգէտ դպրութեան · Տեղեակ իմաստութեան · Աներեւոյթ աչաց · Ընդունելի Աստուծոյ · Հաճոյ աչաց · Բաւական ամենայնի :

3· Բացառական, ինչպէս ·

Լի 'ի հոգւոյ խաղոյն · Երկիւղած յԱստուծոյ · Ապստամբ յօրինաց · Արձակ 'ի լծոյ · Ազատ 'ի մեղաց · Փախստական կամ փախստեայ յերեսաց Թշնամւոյն · Աղքատ յընչից · Անզեղջ 'ի չարեաց · Տկար յոտից · Կարօտ յիմաստութենէ · Մանուկ 'ի տիոց · Տգէտ 'ի գրոց · Անտես, աներեւոյթ յաչաց · Անյայտ 'ի մարդկանէ · Հեռի 'ի տանէ · Տարագիր յաւետեաց · Օտար 'ի բարեկամաց · Թերի յիմաստութենէ · Թափուր 'ի բնակչաց · Ունայն 'ի բարեաց · Սուրբ, անարատ 'ի մեղաց · Միայն յերկոցն · Մեկուսի 'ի նոցանէ · Մատաղ յաւուրց · Ի մորոց թեթեւ · Ցախաքարշից (բնութենէ) թեթեւ · Ի բանից և 'ի յերաց անպիտան · Անարգ յայլէ :

4· Գործիական, ինչպէս ·

Լի պտղովք, գործովք բարեաց · Կարօտ խելօք · Ծարաւի արեամբ · Մանուկ տիովք · Բնութեամբ թեթեւ · Հզօր բանիւ · Երկայն, կարճ հասակաւ · Գեղեցիկ տեսլեամբ · Տգեղ դիմօք · Արագ ոտիւք :

5· Հայցական խնդիր առնող ածականներ եւս կը գտնուին, մանաւանդ ն վերջաւորածներն որ ունին ու ի զօրութիւն :

Զծնողս անարգուք · Ոտք քահանայից կրելեաց զտապանակն · Ի ձեռս գործելեաց զգործ կահի տանն Տեառն :

6· Ոմանք եւս կ'ուզեն նախադրութեամբ խըն-դիր, ինչպէս ·

Բաւական առ ամենայն · Հեղգ առ ուսումն · Փոյթ յառաջնորդութեան · Արագ 'ի ներել · Ծանր 'ի բարկանալ · Առատ 'ի պարգեւս · Գթած առ ամենեսեան · Գոհացող զԱստուծոյ · Զարախօս զանձնէ · Սողուն 'ի վերայ երկրի · Քաղցր առ ամենեսեան · Ծարաւի է անձն իմ առ քեզ:

193· Հ· Ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն թուական եւ անորոշ ածականք:

Պ· Թուական եւ անորոշ ածականք կ'առնուն խնդիր բացառական հոլով · զոր օրինակ ·

Մին, ումն, ոմանք, այլք, իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ · Երկու 'ի ձէնջ · Ոչ ինչ յերկրաւորաց · Ոչ թէ վասն զի պիղծ ինչ կայցէ 'ի կերակրոց · Արձակէր հաւս ինչ 'ի հաւուց · Ո՛, կամ Ո՞ ոք 'ի ձէնջ · Վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ · Ոք յընտանեաց քոց · Զայլ ոք յառաքելոց անտի ոչ գտի · Ոչ եմ իբրեւ զայլս 'ի մարդկանէ · Քանի՛ք 'ի մարդկանէ:

194· Հ· Ի՞նչ հոլով խնդիր կ'ուզեն քանակու-թիւն ցուցնող ածականք:

Պ· Քանակութիւն ցուցնող ածականք, ինչ-պէս, բազումք, կէսք, շատք, փոքունք, սակաւք, ևն, թուականներուն պէս կ'ուզեն բացառական խըն-դիր, զոր օրինակ ·

Բազումք 'ի նոցանէ · Զբազումս 'ի մոգուց · Ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք · Փոքր 'ի շատէ · Կէսք 'ի նոցանէ · Առ զկէս 'ի զօրաց անտի:



195· Հ· Ուրիշ կերպ խնդիր կրնա՞ն առնուլ այս տեսակ բառեր:

Պ· Այս տեսակ, այսինքն թուական եւ ա-նորոշ բառեր, երբեմն կ'առնուն նաեւ 'ի նախա-դրութեամբ յոքնակի հայցական խնդիր, զոր օ-րինակ ·

Ոչ ոք է նման քեզ յԱստուածս տէր · Ոչ ոք կարօտէր 'ի նոսա · Ոչ ոք յորդւոց Ադամայ գտաւ առանց մեղաց · Ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ · Զորրորդն 'ի նոսա 'ի կերպարանս առիւծու · Ի նահապետս եօթներորդն յԱդամայ Ենովք:

196· Հ· Ի՞նչ գիտելիք կայ Թիւ բառին վրայ:

Պ· Թիւ բառը թուական եւ քանակական անուանց հետ կը դրուի գործիական, զոր օրինակ ·

Մատունք ձեռաց նորա և ոտից վեց վեց, քսան եւ չորք թուով · Արամբք զօրաւորօք, թուով իբրեւ երեք հարիւրք · 'Ի հրապարակ ածել, թուով իբրեւ եօթն հարիւր · Թուով՝ բազում · Թուով՝ յոյժ նուա-զունք · Թուով՝ սակաւ:

---

## 3· ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

197· Հ· Ի՞նչ խնդիր կ'ուզեն նախդիր կոչուած նախադրութիւնք:

Պ· Նախդիր կոչուած նախադրութիւնք, ի, յ, զ, առ, ընդ, ըստ, ց, կ'ուզեն այլ եւ այլ հոլով խնդիր · եւ խնդիրը փոխուելով կու տան տարբեր նշանակութիւն:

Ի, Յ

198· Հ· Ի՞նչ հոլով կ'ուզէ եւ ի՞նչ կը նշանակէ ի կամ յ նախդիրը ։

Պ· Եզակի տրականով (*) ի կամ յ նախդիրը կը ցուցնէ դադարման տեղ մը, իսկ անորոշ (առանց ն ի) հայցականով կը ցուցնէ շարժման դէպ ի տեղ մը ։

Արար ընդունելութիւն մեծ նմա Ղեւի 'ի տան իւրում Այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել · Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում · Ուսուցանէր զնոսա հանապազ 'ի տաճարին · Այր մի տնկեաց այգի եւ փորեաց 'ի նմա հնձան ։ (**)

Այս օրինակներուն մէջ կը ցուցուի դադարում ։

Եհան զնոսա 'ի լեառն մի բարձր · Ել գնաց յանապատ տեղի · Խաղացո զնաւդ 'ի խորն եւ արկէք զգործիս ձեր յորս · Էջ 'ի տեղի մի տափարակ · Համարէին թէ 'ի ճեմե-լեան երթայցէ ։

Այս օրինակներուն մէջ կը ցուցուի շարժում ։

199· Հ· Ի՞նչ բացառութիւն ունի այս կանոնը ։

Պ· Չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ հոլովմանց, այսինքն՝ ձեռ, Տիգրան եւ Հռիփսիմէ անուններուն պէս հոլովող անուանց եզակի անորոշ հայցականն է կամ յ նախդրիւ կը ցուցնէ թէ դադարում եւ թէ շարժում ։ Այսպէս անխտիր կ'ըսուի ·

Մտանել 'ի լոյս · Լոյսը մտնել · ... (շարժում), եւ, Բնակել 'ի լոյս · Լուսոյ մէջ բնակել · ... սաքին օրմագ (դադարում) ։

---

(*) Ոմանք տրականն է կամ յ նախդրիւ՝ ներգոյական կը կոչեն · եւ է կամ յ նախդրիւ անորոշ հայցականը՝ ... ։

(**) Դնել բայը կ'ուզէ է ով տրական խնդիր, եթէ բառը եզակի է · այսպէս · Դնել է ... ·



Նոյնպէս է սա օրինակներուն մէջ ·

Եմուտ 'ի տուն · Էր 'ի տան ։ Ընկէց զնա 'ի ջուրն · Ետես զպատկեր իւր 'ի ջուրն ։ Եբարձ զնա յուս իւր · Կրէր զնա յուս իւր ։

200· Հ· Ի՞նչպէս կը գործածուին յոգնակի անուանք է կամ յ նախդրին հետ ։

Պ· Ամէն յոգնակի անուն եւ դերանուն է կամ յ նախդրին հետ միշտ անորոշ հայցական գրուելով, կը ցուցնէ թէ շարժում եւ թէ դադարում ։ Այսպէս անխտիր կ'ըսուի ։

Ածին զնա յապարանս թագաւորին · Թագաւորին պալատը բերին զնա · Ոնու փատիշահըն ... կէթիրտիլէր (շարժում), և, Բնակին յապարանս թագաւորաց · Թագաւորներուն պալատները կը բնակին · Փատիշահլարըն ... սաքին օլուրլար (դադարում) ։

Նոյնպէս է սա օրինակներուն մէջ ·

Աստղն զոր տեսին յարեւելս · Եկն յարեւելս · Հայր մեր որ յերկինս ես · Նայեցաւ յերկինս · Մնացին 'ի տունս իւրեանց · Արձակեաց զնոսա երթալ 'ի տունս իւրեանց ։

201· Հ· Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի դադարումը կամ շարժումը խօսքին մէջ ։

Պ· Դադարումը կը ճանչցուի ո՞ւր, նէ՞րէտէ հարցմամբ, իսկ շարժումը ուր, ո՞ւր, նէ՞րէյէ հարցմամբ ։ Այսպէս վերի օրինակներուն մէջ, Այսօր 'ի տան քում արժան է ինձ ագանել, Ուսուցանէր 'ի տաճարին, Բնակել 'ի լոյս, Բնակին յապարանս թագաւորաց, է կամ յ նախդրիւ բառերը ո՞ւր, նէ՞րէտէ հարցման պատասխան են, ուստի եւ կը ցուցնեն դադա-

բառ: Ագանել . — ո՞ւր . — ՚ի տան քում , քու տունդ : Ուսուցանէր . ո՞ւր . — ՚ի տաճարին , տաճարին մէջ : Բնակել . — ո՞ւր . — ՚ի լոյս , լուսոյ մէջ : Բնակին . — ո՞ւր . — յապարանս թագաւորաց . թագաւորաց պալատներուն մէջ : Իսկ սա օրինակներուն մէջ , Ելհան զնոսա ՚ի լեառն մի , Եւ գնաց յանապատ տեղի . Մտանել ՚ի լոյս , Ածին զնա յապարանս դատաւորին , է կամ յ նախդրիւ բառերը պատասխան են տե՞ղ ո՞ւր , ներքե՞յ հարցման , ուստի եւ կը ցուցնեն շարժում : Ելհան . — տե՞ղ ո՞ւր . — ՚ի լեառն մի , լեռ մը : Եւ գնաց . — տե՞ղ ո՞ւր . — յանապատ տեղի , անապատ ( անմարդաբնակ ) տեղ մը : Մտանել . — տե՞ղ ո՞ւր . — ՚ի լոյս , լուսոյ մէջ : Ածին զնա . — տե՞ղ ո՞ւր . — յապարանս դատաւորին , դատաւորին պալատը :

202. Հ. Ուրիշ ի՞նչ կը նշանակէ է կամ յ նախդիրը եզակի տրական եւ յոգնակի անորոշ հայցական խնդրով :

Պ. է կամ յ նախդիրը եզակի տրական եւ յոգնակի հայցական խնդրով կը ցուցնէ գործողութեան ատենը , եւ պատասխան է ե՞րբ , մինչեւ յե՞րբ հարցման :

Տեղ ոսկի տեղայր ՚ի թագաւորութեանն Արտաշիսի , տեղայր մարգարիտ ՚ի հարսնութեան Սաթինկան . Արտաշէսի փեսայութեան ատենը ոսկի կը տեղար , Սաթինկան հարսնութեան ատենը՝ մարգարիտ : Յաւուրս Հերովդի արքայի . Ի նմին աւուր . Յաւուր յայնմիկ . Յաւուրսն յայնոսիկ . Ի ժամանակի անդ . Ի նմին ամի . Յերկրորդ աւուր . Ի գիշերի . Յերեկոյի . Յառաւօտու . Ի գարնան . Յամարան . Յամս սովոյն . Ի ժամանակս պատերազմաց :



Աներեւոյթն եւս է կամ յ նախադրութեամբ կը նշանակէ ատենը , զոր օրինակ . Ի ծննդեան Յիսուսի . Յիսուսի ծնած ատենը . Ի խռնել զնովաւ ժողովրդեանն :

Հարցում . Տեղ ոսկի տեղայր . Ոսկի կը տեղար . — ե՞րբ . — ՚ի թագաւորութեանն Արտաշիսի . Արտաշէսի փեսայութեան ատենը : Ե՞րբ . — ՚ի գիշերի , յաւուր տօնին . եւն . — ե՞րբ . — գիշերը , այն օրը :

203. Հ. Ուրիշ ի՞նչ նշանակութիւն ունի է կամ յ նախդիրն անորոշ հայցական խնդրով :

Պ. է կամ յ նախդիրն անորոշ հայցական խնդրով կ'առնու նաեւ գործիականի նշանակութիւն , եւ պատասխան է ի՞նչպէս , ի՞նչ բանով հարցման :

Աղաղակեաց ՚ի ձայն մեծ . Մեծ ձայնով պոռաց . Անկցին ՚ի սուր սուսերի . Մաշել ՚ի սուր եւ ՚ի հուր : Երեւեցաւ նոցա ՚ի ձեւ ամպոյ . Ի լոյս երեսաց քոց , փոխանակ ըսելու , Ձայնիւ մեծաւ . Սրով սուսերի . Սրով եւ հրով . Լուսով երեսաց քոց . եւն :

Հարցում . ի՞նչպէս . — ՚ի ձայն մեծ . մեծ ձայնով : ի՞նչ բանով . — ՚ի սուր եւ ՚ի հուր . սրով եւ հրով :

204. Հ. Ուրիշ ի՞նչ կը նշանակէ անորոշ հայցականն է կամ յ , եւ կամ առ է նախդրիւ :

Պ. Անորոշ հայցականն է կամ յ , եւ կամ առ է նախդրիւ , կրնայ ունենալ նաեւ վասն , համար , նախադրութեան նշանակութիւնը , եւ պատասխան է ինչո՞ւ համար , ի՞նչ նպատակաւ հարցման :

(Արարածք) մեզ 'ի պէտս են, եւ կարգչին իւրեանց 'ի փառս: Արեգակն ընդ ժամանակս ժամանակս 'ի խաւար դառնայ առ 'ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից: Լուսաւորք ոչ վասն լուսատու լինելոյ միայն արարան, այլ եւ 'ի նշանս եւ 'ի ժամանակս եւ յաւուրս, յամս եւ 'ի տարիս: Զի՞նչ է այդ. եւ ասէ Սիրա. Ընթրդ՝ նստելոյ արքայի, եւ հացդ եւ արմաւդ՝ 'ի կերակուր մանկանցդ: Այս եղիցի ձեզ 'ի խրատ եւ 'ի զգուշութիւն: Ի լուել եկեալ եմ: Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց 'ի սատակել զամենայն մարմին:

Հարցում. Արարածք են. — ինչո՞ւ համար, ի՞նչ նպատակաւ, — մեզ 'ի պէտս. մեր գործածութեան համար: Արեգակն 'ի խաւար դառնայ. — ինչո՞ւ համար. — 'ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից. իրեն պաշտօն մատուցանողներուն յանդիմանութեան եւ ամօթի համար: Այս եղիցի. — ինչո՞ւ համար. — ձեզ 'ի խրատ եւ 'ի զգուշութիւն. ձեզի խրատու եւ զգուշութեան համար:

### Զ

205. Հ. Ի՞նչ կը նշանակէ բացառականը զ նախդրիւ:

Պ. Բացառականը (*) զ նախդրիւ կը նշանակէ մէկուն կամ բանի մը վրայ:

Զի՞նչ է այս զոր լսեմ զքէն. Քու վրայ այս լսածս ի՞նչ է: Տրտնջէին զնմանէ. Անոր վրայ կը տրտնջէին: Բերէին համբաւ չար զՅովսեփայ: Եւ համբաւ զնմանէ: Սպասէին որսալ բանս ինչ 'ի բերանոյ նորա զի չարախօսեսցեն զնմանէ. Անոր բերնէն խօսք մը որսալու կը սպասէին, որ անոր վրայ չարախօսութիւն ընէին:

(*) Ոմանք զ ով բացառականը կ'անուանեն պատմական հոլով:



206. Հ. Ի՞նչ կը նշանակէ գործիականը զ նախդրիւ:

Պ. Գործիականը (*) զ նախդրիւ կը նշանակէ 1° Անորոշ ժամանակ մը, զոր օրինակ.

Յարուցեալ զմէջ գիշերաւ. Կէս գիշերուան ատենները: Զմիջաւուրբք ծագեաց լոյս. Կէս աւուր ատենները լոյս ծագեց:

Այսպէս կ'ըսուի.

Զհասարակ աւուրբ. Զմիջօրէիւ. Զհասարակ գիշերաւ. Զմիջոցաւ ճանապարհին. Զայնու ժամանակաւ. որ կը նշանակեն. Կէս օրուան, կէս գիշերուան ատենները. Ճամբուն կէսին մօտ. Այն ատենները:

2°. Բոլորտիքը, զոր օրինակ.

Ի խռնել զնովաւ ժողովրդեանն՝ ինքն կայր առ ծովակին. Ժողովուրդին անոր բոլորտիքը դիզուած ատենը՝ ինք ծովակին քովն էր: Առ զերբեաւ յորոյ վերայ անկեալն դնէր: Պատեաց զնովաւ ահ: Անկաւ զպարանոցաւ նորա:

### Ա Ռ

207. Հ. Ե՞րբ կը գործածուի առ նախդիր:

Պ. Առ նախդիրն ի կամ յ նախդրին տեղ կը գործածուի, երբ անձանց վրայ է խօսքը:

Երբ բայը շարժում կը ցուցնէ, առ նախդիրը կ'ուզէ միշտ անորոշ հայցական. զոր օրինակ.

(*) Ոմանք զ ով գործիականը կ'անուանեն պարառական:

Բարեկամ իմ եկն [illegible] յուղլու · Բարեկամս դրսէն ներսի կամ տունս [illegible] ։ Յորժամ երթիցես [illegible] · Երբ [illegible] կ'երթաս ։ Կոչեաց [illegible] զմի 'ի ծառայից ։ Ցղեցին [illegible] արս ։ Մատեան [illegible] ։ Ընթացան [illegible] ։

Իսկ եթէ բայը կը ցուցնէ դադարում, [illegible] նախդիրը կ'ուզէ եզակի տրական և յոքնակի հայցական, եւ կը նշանակէ մէկուն քով ։

Եկաց [illegible] աւուրս երկուս · Երկու օր [illegible] կեցաւ ։ Աս [illegible] ըմբռնել լուծանել · Մեղաւոր մարդու քով կամ [illegible] օթեւան ընելու մտաւ ։ Բնակեցաւ [illegible] խւրում · [illegible] բնակեցաւ ։ Ծառայեցի [illegible] · [illegible] ծառայութիւն ըրի ։ Եկաց [illegible] ։ Նստէր [illegible] · Դրանը քովը կը նստէր ։ Կայր [illegible], [illegible] ։ Սպասէին [illegible] ·

208· Հ· Ի՞նչ կը ցուցնէ [illegible] նախդիրը սեռականով ։

Պ· Աս նախդիրը սեռականով, երբեմն մանաւանդ աներեւոյթներու հետ, անորոշ հայցականով, կը ցուցնէ բանէ մը չարժուած ըլլալ, զոր օրինակ ·

Աս ամօթոյ փախչին 'ի նմանէ · Ամչնալէն կը փախչին ։ Աս նախանձու մատնեցին զնա · Նախանձու [illegible] կամ [illegible] մատնեցին ։ Աս իմոյ յիշատակի · Իմ յիշատակիս [illegible] ։ Աս սէր քո արարի զայդ · Քու սիրոյդ [illegible] ըրի ։ Աս գութ Փիլիպպեան ազգին՝ Փիլիպպոս անուանեցին · Փիլիպպեան ցեղին սիրոյն [illegible] ։ Ոչ թէ [illegible] ատել ասեմ · Ոչ թէ ատելէս կ'ըսեմ ։ Ով 'ի ձէնջ [illegible] հոգալ խւրում յաւելուլ կարիցէ 'ի հա-



սակ իւր կանգուն մի · Ո՞վ հոգալով իւր հասակին (պոյին) վրայ կրնայ կանգուն մը աւելցունել ։ Աս չժուժել ծախուցն եղեւ փախստական · Ծախքին չդիմանալէն առաւ քալեց ։ Աս չգիտանս եկեր ։ Աս ցաւս իւր ճչել ։ Ոչ [illegible] ցասումն ինչ, քաւ լիցի ։

209· Հ· Ի՞նչ կը նշանակէ [illegible] կամ [illegible]'ի նախդիրը բացառականով ։

Պ· Աս կամ [illegible]'ի նախդիրը բացառականով կը նշանակէ 1 · [illegible] կամ [illegible], զոր օրինակ ·

Նզովեաց զթզենին [illegible] · Թզենին օրինակի [illegible], կամ, [illegible] օրինակ անիծեց ։ Աս [illegible] չրջեցուցանէին · [illegible] առակ, այսինքն՝ օրինակ, կը պտըտցունէին ։ Աս եղեւանէ նորա եղեւ · Անոր [illegible] դժրախտութիւն եղաւ ։ Աս ականէ ծառայել · Առ երեսս ([illegible]) ծառայել ։ Աս [illegible] չգոյէ հիւթոյ · Հիւթոյ պակասութենէն ։

2° [illegible] ։

Անհնարինքն [illegible]'ի մարդկանէ · Մարդոց [illegible] անկարելիները ։ Ոչ տկարասցի [illegible] յԱստուծոյ ամենայն բան · Աստուծոյ [illegible] բան մը անկարելի չէ ։

210· Հ· Ի՞նչ կը նշանակէ [illegible] կամ [illegible]'ի, աներեւութի հետ ։

Պ· Աս կամ [illegible]'ի աներեւութի հետ կամ աներեւութին տրականին հետ ունի [illegible] նախադրութեան զօրութիւն և կը ցուցնէ նպատակ · զոր օրինակ, [illegible]'ի խնդրել, [illegible] խրատել, [illegible]'ի պատմելոյ, [illegible] ուղղելոյ եւ, կը նշանակեն, փնտըռելու, խրատելու, պատմելու, ուղղելու [illegible] կամ [illegible] ։

211. Հ. Ի՞նչ կը նշանակէ առ, գործիականով։

Պ. Առ, գործիականով կը նշանակէ 1° Մէկուն օրը կամ բանի մը ատենը. զոր օրինակ.

Առ Աբիաթարաւ քահանայապետիւ. Աբիաթար քահանայապետին ատենը։ Առ Նովաւ լինէր Դեւկալիոնեան ջրհեղեղն. Հեթանոսութեան սկիզբն առ Թարաջիւ, հարբ Աբրահամու եղեւ։ Առ կենդանութեամբ առն իւրոյ։

2° Քովէն, մօտէն, քով 'ի վեր, զոր օրինակ.

Անց առ Նովաւ. Անոր քովէն անցաւ. Բերել առ ափամբք. Եզերքն 'ի վեր (գըլըխ սըրա) երթալ։ Նաւել առ եզերբ։ Գնային առ որմովն. Նստէր առ ճանապարհաւն։

3° Բանի մը քով, այսինքն՝ համեմատութեամբ. զոր օր.

Զի՞նչ է յարդ առ ցորենով. Յարդը ցորենին քով ի՞նչ է։ Արդարացաւ ապստամբութիւնն Իսրայելի առ ապստամբութեամբն Յուդայ. Իսրայէլի ապստամբութիւնը Յուդայի ապստամբութեան քով արդարացաւ։ Այս փոքր ինչ է առ Նովաւ. Անոր քով այս փոքր բան է։

ԸՆԴ

212. Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ, սեռական խնդրով։

Պ. Ընդ, սեռական խնդրով կը նշանակէ փոխանակ, տեղը, զոր օրինակ,

Թագաւորեաց որդի նորա ընդ նորա. Որդին անոր տեղը թագաւորեց։ Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման. Աչքի տեղ աչք և ակռայի տեղ ակռայ։ Զայն առեալ տացես ընդ իմ և ընդ քո։ Առ զմի 'ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին։ Այն նոցա ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի. Ընդ ամենայն դատարկ բանի համարս տացեն։ Եւ մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյ։



213. Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ, եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով։

Պ. Ընդ, եզակի տրական և յոգնակի անորոշ հայցական խնդրով կը նշանակէ հետը, զոր օրին.

Հանին ընդ նմա 'ի խաչ երկուս աւազակս. Անոր հետ երկու աւազակ խաչը հանեցին։ Եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց։ Բազում մաքսաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա։ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի։

214. Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ, անորոշ հայցականով։

Պ. Ընդ, անորոշ հայցականով կը նշանակէ, 1° Բանի մը մէջէն կամ մէջտեղէն, և աշխարհաբար կը թարգմանուի բացառականով, զոր օրինակ.

Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. Քու հոգիէդ ալ սուր պիտի անցնի։ Ջանացարուք մտանել ընդ նեղ դուռն. Նեղ դռնէն։ Գնաց ընդ արտորայսն 'ի շաբաթու. Արտերուն մէջէն։ Եմուտ ընդ պատուհանն 'ի ներքս. Պատուհանէն ներս։ Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր. Եղեգին մէջէն։ Ընդ մէջ կտրել. Ընդ երկուս կտրել, բաժանել։

2° Տարածութեան, զոր օրինակ.

Ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս. Օգոստոսէն հրաման ելաւ բոլոր աշխարհի վրայ աշխարհագիր ընել։ Ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին։ Անոր լուրը բոլոր գաւառը տարածուեցաւ։ Քստմունք գնան ընդ անդամսն. Բոլոր անդամներուն դող կու գայ։

Այսպէս կ'ըսուի .

Շրջել ընդ քաղաքս , ընդ գիւղս , ընդ երկայնութիւն դաշտին , ընդ եզր ծովուն . Գնալ ընդ ցամաք , ընդ ծով , ընդ ճանապարհ , ընդ երեսս դաշտին ։

3° Դէպ այս ինչ ատեն , զոր օրինակ .

Ընդ այն ժամանակս . Այն ատենները ։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ . Այն օրերը ։ Ընդ երեկս . Իրիկուան դէմ ։ Ընդ այգն . ընդ առաւօտն . ընդ առաւօտս ։ Ընդ ծագել արեգական . Արեգական ծագելու ատենները ։ (Տես և ըով գործիականի օրինակները թիւ 206) ։

4° Շարունակութեան ժամանակի , զոր օրինակ .

Ընդ ամս տասն . Տասը տարի ։ Ընդ ամս բազումս . Շատ տարիներ ։ Ընդ գիշերն ողջոյն . Բոլոր գիշերը ։

5° Դէն , դէմն , զոր օրինակ .

Ընդ հիւսիս , ընդ հարաւ , ընդ արեւելս . Հիւսիսային դէն կամ դէմն ևն ։

6° Երբ խօսքը բան մը ուրիշ բանի կցելու , կապելու վրայ է ։

Կարել ընդ մորթ . Կապել ընդ նաւուն . Տուն ընդ տան կցել . Անկցի ժողովուրդն այր ընդ այր . որ կը նշանակեն , Մորթին հետ կարել . Նաւին հետ կապել . Տուն տունի կցել , ևն ։

7° Միանգամայն , ընդ ամէնը , զոր օրինակ .

Ընդ այր և ընդ կին և ընդ մանկունս . Էրիկմարդ , կնիկմարդ և տղայք միանգամայն ։ Ընդ հեծելս և ընդ հետեւակս ։ Ընդ ամենայն՝ հարիւր կանգուն . Ընդ ամէնը՝ հարիւր կանգուն ։ Ընդ բնաւ՝ չորեքհարիւր այր . Բոլորը՝ չորս հարիւր մարդ ։



8° Կրկնուելով կը նշանակէ երկու բանի միջեւը , զոր օրինակ .

Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ , ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո . Իմ և քու , իմ հովիւներուս և քու հովիւներուդ միջեւ կռիւ չըլլայ ։ Է այն ընդ Կադէս և ընդ Բարադ . Կադէսի և Բարադի միջեւն է ։ Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր . Երկնից և երկրի միջեւ ։ Ոչինչ է խտիր ընդ բազումս և ընդ սակաւս . Շատի և քիչի միջեւ տարբերութիւն չկայ ։ Լեառն որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարօն . Ընդ ճշմարտութիւն և ընդ ստութիւն .

215 Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ , առանց ի ի բացառականով ։

Պ. Ընդ , առանց ի ի՝ բացառականով կը նշանակէ կողմն , դէմն , զոր օրինակ .

Սեմեի երթայր մօտ առ նա ընդ կողաց լերինն . Սեմէի անոր մօտ լեռան զառիվարին կողմն կերթար . Ընդ արեւելից կողմանէ . Արեւելքի դէմն ։ Ընդ աջմէ . ընդ ահեկէ . Աջ դէմն , ձախ դէմն ։

216. Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ , գործիականով ։

Պ. Ընդ , գործիականով , կը նշանակէ տակ , զոր օրինակ .

Հանգչել ընդ հովանեաւ . Շուքին տակ հանգչիլ ։ Բնակել ընդ որթով և ընդ թզենեաւ ։ Հաւ ժողովէ ըզ ձագս իւր ընդ թեւովք ։ Ունիմ ընդ իշխանութեամբ զինուորս ։ Զովասջիք ընդ ծառովս ։ Ընդ ստորոտովք լերանց ։

217· Հ· Ի՞նչ կը նշանակէ ընդ, աներեւութի հետ:

Պ· Ընդ, աներեւութի հետ կը նշանակէ բան մը ըլլալուն պէս, զոր օրինակ·

Ընդ բուսանելն չորացաւ · Բուսնելուն պէս չորցաւ :

## ԸՍՏ

218· Հ· Ի՞նչ կը նշանակէ ըստ, տրական խնդրով:

Պ Ըստ, տրական խնդրով կը նշանակէ համեմատ (կէօրէ), զոր օրինակ·

Արասցուք մարդ ըստ պատկերի մերում · Մեր պատկերին համեմատ մարդ ստեղծենք : Եղիցի ինձ ըստ բանի քում · Թող քու խօսքիդ համեմատ ըլլայ :

կամ հայցական, ինչպէս,

Գնալ ըստ կամս, ըստ միտս :

219· Հ· Ի՞նչ կը նշանակէ ըստ, աներեւութի հետ:

Պ· Ըստ, աներեւութին տրականով կամ հայցականով կը նշանակէ աստիճանաբար, չափովը զոր օրի·

Ըստ պակասելոյ ամացն · Տարիներուն պակսելուն չափովը · Ըստ յաճախելոյ արմտեացն · Արմտեաց շատնալուն չափովը: Տեղիք ինչ են ծովու, որոց ջուրն ըստ աճել լուսնոյ աճէ, և ըստ պակասելն՝ պակասէ :

220· Հ· Ի՞նչ կը նշանակէ ըստ, անորոշ հայցականով :

Պ· Ըստ, անորոշ հայցականով կը նշանակէ

1° Տեղւոյ կամ իրի մը սահմանէն անդին, զոր օրին·

Անցանել ըստ բլուրս և ըստ արձանս ըստ այս · Այս բլուրէն և այս արձանէն անդին: Ելին ըստ քաղաքն · Քաղաքէն անդին ելան: Ըստ երկիր անդր ոչինչ է · Երկրէն անդին ոչինչ է : Ելեալ արտաքս ըստ սահմանս երկնիցն Աստուծոյ · Աստուծոյ երկինքին սահմանէն անդին ելնելով:



Այսպէս կ'ըսուի·

Ելանել ըստ դուռն, ըստ հրաման, ըստ կամս ուրուք, ըստ չափ: Ըստ ակն անկանել· Աչքի տեսութենէ անդին ելնալ, այսինքն՝ այլ եւս չերեւալ:

2° Ամէն մէկ, մէկ գլուխ, զոր օրինակ·

Տալ ցորեան ըստ բերան · Բերան, այսինքն՝ մէկ գլուխ ցորեն տալ: Ըստ տունս ազգացն՝ ոչխար ըստ երդ · Ամէն մէկ ցեղի՝ տուն գլուխ ոչխար մը:

221· Հ· Ի՞նչ կը նշանակէ ըստ առանց իի բացառականով :

Պ· Ըստ, առանց իի բացառականով, ունի յաջորդութեան նշանակութիւն, զոր օրինակ·

Զթագաւորսն որ ըստ նմանէ էին: Անկէ ետքը եկող, կամ անոր յաջորդող թագաւորները: Եհաս վճիռն Աստուծոյ 'ի վերայ Ադամայ եւ որոց ըստ նմանէ էին · Աստուծոյ վճիռը Ադամի և անկէ ետքը եկողներուն վրայ Աստուծոյ վճիռն հասաւ :

Այսպէս կ'ըսուի·

Ամ ըստ ամէ · Մի ըստ միոջէ · Այր ըստ առնէ:

222· Հ· Ի՞նչ խնդիր կ'ուզէ և ի՞նչ կը նշանակէ ց նախդիրը:

Պ· Ց նախդիրը միշտ հայցական խնդիր կ'ուզէ, և կը նշանակէ.

1· Մինչեւ, և առնեմ, հասուցանեմ, տամ, և ուրիշ քանի մը բայի հետ կը գործածուի :

Ասէ ցնոսա : Ասէ ցորդի իւր : Ասէ ցծառայս իւր : Հարցին ցնա : Հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս : Խփեալ զգիրսն ետ ցպաշտօնեայն և նստաւ :

2° Մինչեւ ·

Երթիցուք յԲեթղեհէմ. Մինչեւ Բեթղեհէմ երթանք :

223· Հ· Ի՞նչ խնդիր կ'ուզեն ուրիշ նախադրութիւններ :

Պ· Ուրիշ նախադրութիւններէն ոմանք կ'ուզեն սեռական հոլով խնդիր · ինչպէս տեղւոյ պարագաներ ցուցնող նախադրութիւններ, զոր օրինակ, առաջի, զկնի, 'ի վերայ, յանդիման, ի ներքոյ, արտաքոյ, 'ի մէջ, յայնկոյս, յայսկոյս · Նոյնպէս յետ, փոխանակ և վասն նախադրութիւնները :

Ոմանք՝ տրական, ինչպէս · ընդդէմ, հակառակ, հանդէպ :

Ոմանք՝ բացառական, ինչպէս · հեռի, դուրս, բաց :

Ոմանք՝ գործիական, ինչպէս · հանդերձ, շուրջ :

---

## 4· ԲԱՅԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

224· Հ· Ի՞նչ հոլով խնդիր կ'ուզեն բայերը :

Պ· Բայերն, ըստ պահանջելոյ խօսքին իմաստին, կ'ուզեն իբրեւ խնդիր տրական, հայցական, բացառական և գործիական հոլով :

225· Հ· Քանի՞ կը բաժնուին և ի՛նչ կը կոչուին բայերուն խնդիրները :

Պ· Հայերէն քերականութեանց մէջ սովորութիւն եղած է բայերուն խնդիրները բաժնել երկու, 1· Սեռի խնդիր, և 2· Բնութեան խնդիր :



### Տ· ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

226· Հ· Ի՞նչ է Սեռի խնդիր :

Պ· Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցական հոլովը որ ներգործական բայերուն գործողութեան առարկան, կամ թէ ըսենք, տէր բայիին ըրածն է, և կը ճանչցուի զո՞վ, զի՞նչ բան · զի՞նչ, ո՞վ հարցմամբ · զոր օրինակ ·

Սիրեսցես զընկեր քո · Քու ընկերդ սիրես : Եհար զծառայ քահանայապետին և եհատ զունկն նորա · Քահանայապետին ծառան զարկաւ և անոր ականջը կտրեց : Յղեաց զնա յագարակ իւր · Իր ագարակը ղրկեց զնա :

Առաջին խօսքին մէջ զընկեր հայցականը սեռի խնդիր է «սիրեսցես» ներգործական բային, քանզի սիրելուն առարկան, կամ սիրուած բանը կը ցուցնէ, և զո՞վ, զի՞նչ հարցմամբ կը ճանչցուի, զոր օրինակ · Սիրեսցես, սիրես · — զո՞վ · — զընկեր քո · ընկերդ :

Երկրորդ խօսքին մէջ զծառայ և զունկն հայցականներն են սեռի խնդիր եհար և եհատ ներգործական բայերուն, քանզի կը ցուցնեն զարնելուն և կտրելուն առարկաները, կամ զարնուած և կտրուած բաները : Եհար, զարկաւ · — զո՞վ · — զծառայ քահանայապետին · Քահանայապետին ծառան : Եհատ, կտրեց · — զի՞նչ բան · — զունկն նորա · Անոր ականջը :

---

## Զ· ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

—

227· Հ· Ի՞նչ է բնութեան խնդիր ։

Պ· Բնութեան խնդիր կ'ըսուին բայերուն տրական, բացառական, գործիական հոլով խնդիրները՝ և այն հայցականները որ կը ցուցնեն ոչ թէ ներգործական բային գործողութեան առարկան կամ ինչ որ կ'ընէ տէր բային, այլ ուրիշ պարագայ ։

228· Հ· Ի՞նչ հարցմամբ կը ճանչցուի տրական հոլով բնութեան խնդիրը ։

Պ· Տրական հոլով բնութեան խնդիրը կը ճանչցուի, որո՞ւն, ի՞նչ բանին. ո՞ւմ, իմի՞, հարցմամբ, զոր օրինակ·

Հօր և մօր իմում ոչ պատմեցի· Հօրս և մօրս չպատմեցի ։ Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց· Յովսեփայ եղբայրները վաճառեցին զնա Իսմայելացւոց ։ Թող մեզ զպարտիս մեր· Մեր պարտքերը մեզի ներէ ։

Այս խօսքերուն մէջ հօր և մօր իմում, Իսմայելացւոց, մեզ, են տրական հոլով բնութեան խնդիր պատմեցի, վաճառեցին, թող բայերուն ։ Ոչ պատմեցի, չպատմեցի· — որո՞ւն, ո՞ւմ· — հօր և մօր իմում, Հօրս և մօրս ։ վաճառեցին զնա, զնա վաճառեցին· — որո՞ւն· ո՞ւմ· — Իսմայելացւոց ։

229· Հ· Ի՞նչ հարցմամբ կը գտնուի բացառական հոլով բնութեան խնդիրը ։

Պ· Բացառական հոլով բնութեան խնդիրը կը գտնուի հարցմամբ որմէ՞, ի՞նչ բանէ· յումմէ՞, յորմէ՞ն ։

Սիրեցի 'ի հօրէ իմմէ· Պիտի սիրուի հօրմէս ։ Փրկեա զմեզ 'ի չարէ· Մեզ չարէն փրկէ ։



Այս խօսքերուն մէջ 'ի հօրէ իմմէ, 'ի չարէ, են բացառական հոլով բնութեան խնդիրներ սիրեցայ և փրկեա բայերուն ։ Սիրեցայ, պիտի սիրուի· — որմէ՞· — 'ի հօրէ իմմէ· Հօրմէս ։ Փրկեա, փրկէ· — որմէ՞· — 'ի չարէ· Չարէն ։

230· Հ· Ի՞նչ հարցմամբ կը գտնուի գործիական հոլով բնութեան խնդիրը ։

Պ· Գործիական հոլով բնութեան խնդիրը կը գտնուի հարցմամբ որո՞վ, ի՞նչ բանով· ումո՞վ իւ, զի՞ իւ ։ Ամենայն ինչ նովաւ եղեւ· Ամէն բան անով եղաւ ։ Բերէին զհիւանդս մահճօք· Կը բերէին հիւանդները մահիճներով ։

Այս խօսքերուն մէջ նովաւ և մահճօք են գործիական բնութեան խնդիր եղեւ և բերէին բայերուն ։ Եղեւ, եղաւ, — որո՞վ· ումո՞վ իւ· — նովաւ, Անով ։ Բերէին, կը բերէին· — ի՞նչ բանով· զի՞ իւ· — մահճօք, Մահիճներով ։

231· Հ· Ե՞րբ բնութեան խնդիր է հայցական հոլովը ։

Պ· Հայցական հոլովը է բնութեան խնդիր·

1° Երբ կը ցուցնէ ժամանակի տեւողութիւն, զոր օրինակ ։

Զքառասուն և վեց ամ շինեցաւ տաճարս, և դու զերիս աւուրս կանգնես զդա ։ Զամենայն գիշերս աշխատ եղաք և կալաք ոչինչ ։ Պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ապա քաղցեաւ ։ Ծառայեցայ ամս եօթն ։ Զվեց օր գործեսցես, զի վեց օր արար Աստուած զերկինս և զերկիր ։ Զվեց ամ սերմանեսցես զերկիր քո ։ Երեք ժամանակս 'ի տարւոջ արասջիք ինձ տօնս ։ Շինեաց զնա զեօթն ամ, և զիւր տունն շինեաց Սողոմոն զերեքտասան ամ ։ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն ։ Զվաղ-

ում օրն պատրաստեսջիր զփիղսն ։ Առ նմա ազան այն օր ։ Այսուհետեւ զամենայն աւուրս երկրի՝ սերմն և հունձք, ցուրտ և տօթ, ամառն և գարուն, տիւ և գիշեր մի դադարեսցին ։

Ժամանակի տեւողութիւն ցուցնող հայցականը պատասխան է հարցման՝ ո՞րչափ ատենուան մէջ, ո՞րչափ ատեն, զոր օրինակ ․ Շինեցաւ տաճարս ․ այս տաճարը շինուեցաւ ․ ո՞րչափ ատենուան մէջ ․ — զքառասուն և վեց ամ ․ Քառասուն և վեց տարուան մէջ ։ Աշխատ եղեաք ․ աշխատեցանք, ո՞րչափ ատեն ․ — զամենայն գիշերս ․ Բոլոր այս գիշերը ։ Ծառայեաց ․ ծառայեց ․ — ո՞րչափ ատեն ․ — ամս եօթն ․ Եօթը տարի ։

2° Երբ կը ցուցնէ չափ, կշիռ կամ եղանակ, զոր օրինակ ․

զՏարսոն չափ և զօրինակ Բաբելոնի շինէր ։ Խօսեցաւ զայս օրինակ ։ Զբացական տեսիլն զնոյն օրինակ քանդակեցին ։ Աստուածակերպ օրինակ բարձրանալ ։ Մերուժան զիւր զզէնն և զզարդ և զնշան սաղաւարտին բազմաց եդեալ էր զնոյն օրինակ ։ Ցիշէ զայս չափ օրինակի ։

Չափ, կշիռ կամ եղանակ ցուցնող հայցականն է պատասխան հարցման՝ ի՞նչ չափով, ի՞նչ կշռով, ի՞նչ եղանակով, զոր օրինակ ․ Շինեաց զՏարսոն ․ Շինեց Տարսոն քաղաքը ․ ի՞նչ չափով ․ — չափ և զօրինակ Բաբելոնի ․ Բաբելոնի ձեւով ։ Խօսեցաւ ․ խօսեցաւ ․ — ի՞նչ կերպով ․ — զայս օրինակ ․ Սա կերպով ։

3° Երբ կը ցուցնէ հեռաւորութիւն կամ չափ, զոր օրինակ ․

Որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս ․ Բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի ։ Արար զծովն ձուլածոյ տասն կանգուն ։ Պատրաստեցի ոսկի տաղանդս հարիւր հազար, և արծաթ՝ տաղանդս հազար հազար ։ Տային գարի տասն հազար քոռ ։ Ետու ձէթ քսան հազար չափ ։ Անկաւ լորամարգին զբանակաւն աւուր գնաց աստի, և աւուր գնաց՝ անտի ։ Մեկնեցաւ 'ի նոցանէ իբրեւ քարընկէց մի ։ Որ ոք արբուսցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ․ Զկշիռ մամնոց նոցա ոսկի առնուլին ։ Հեռացաւ Թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ ։



Չափ ցուցնող հայցական հոլովն է պատասխան հարցման ո՞րչափ կամ ո՞րչափ տեղ, զոր օրինակ ․ Տարապարհակ վարիցէ զքեզ ․ անկարեայ տանի զքեզ ․ ո՞րչափ տեղ ․ — մղոն մի ․ Մղոն մը ․ Մեկնեցաւ 'ի նոցանէ ․ հեռացաւ անոնցմէ ․ — ո՞րչափ տեղ ․ — քարընկէց մի ․ Քարընկէց մը ։ Բարձին զնշխարս կոտորոցն ․ Վերցուցին կտորուանքը ․ — ո՞րչափ ․ — երկոտասան սակառի ․ Տասներկու սակառի (զամբիւղ), Անկաւ լորամարգին ․ Լորամարգին ինկաւ ․ — ո՞րչափ տեղ ․ — աւուր գնաց աստի և աւուր գնաց անտի ․ Օրուան մը ճամբայ մէկ դին ․ օրուան մը ճամբայ միւս դին ։

4° Երբ խօսքն է ճամբայ երթալու կամ գալու վրայ, զոր օրինակ ։

Թաքիջիք անդ զերիս աւուրս, և ապա երթիջիք զճանապարհ ձեր ։ Երթեալ էր նորա զերկայն ճանապարհն ։ Գնացեալ է ճանապարհ հեռի ։ Մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա ։ Գնալ զճանապարհս նիւրս ․ Պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու ։ Տրտմութեամբ երթային զերկայնաւորութիւն ճանապարհին ․ Զկենդանեաց գնասջիք ։ Առաքէր զնա զերկայն ճանապարհն ։ Երթիցուք զուղն ։ Երթայր զայս կողմն լերինն ։ Եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ ։

Ճամբայ ցուցնող հայցականն է պատասխան հարցման՝ ի՞նչ կամ ո՞ր ճամբան, զոր օրինակ.

Երթիջիք. գացէք. — ո՞ր ճամբան. ընդ ճանապարհս ձեր. Ձեր ճամբան ։ Երթիցուք. երթանք. — ո՞ր ճամբան. — ուղղորդն. Շիտակ ճամբան ։ Գնասջիք. գացէք. — ի՞նչ ճամբայ. — լեռնալեռնայն. Լեռնէ լեռ ։

232. Հ. Երբ բայանուն մը իւր բային հետ կը գործածուի, ինչ հոլով կը դրուի ։

Պ. Երբ բայանուն մը կը գործածուի իւր բային հետ, զոր օրինակ. երկիւղ բառը երկնչել բային հետ, սէր բառը սիրել բային հետ, կը դրուի հայցական, զոր օրինակ.

Երկեան երկեւղ մեծ ։ Սէր յաւիտենական սիրեցի ըզ քեզ ։ Անէծ զիս անէծս ցաւագինս ։ Կոծեցան զնա կոծ մեծ ։ Եհար զժողովուրդն հարուածս մեծամեծս յոյժ ։ Զթա- ղումն իշոյ թաղեսցի ։ Իսրայէլ փրկելոց է փրկութեան յա- ւիտենից ։ Ողբասցեն ողբս ։ Զարմացարուք զարմանս ։ Կա- քաւս կաքաւել ։ Եւ նոքա զնոյն քուն ննջեցին ։ Խնդացին յոյժ ուրախութեան մեծ ։ Երկուս մահս սպանանեն ։ Զախտս մահու ջերանէր ։ Զմահ աղուխուռ սպանից զքեզ ։ Զայ- ղուց ժուժկալութեան պահոց տոկացեր ։

Այսպիսի խօսքերու մէջ բայանունը յարաբե- րող յարաբերական դերանունը կամ ածականը նոյնպէս կրնայ հայցական դրուիլ փոխանակ գոր- ծիականի, զոր օրինակ.

Մեծ էր սէրն զոր սիրեաց զնա ։ Վասն յանցանացն զոր յանցեաւ ։ Ի մեղս իւր զոր մեղաւ ։ Բժշկել 'ի վիրացն զոր խո- ցեցին զնա ։ Ոչ թողցից քեզ զանարգանս զիցն զոր անար- գեցեր զնոսա ։ Զինչ յանցանաց քոց ոչ յանցեաւ ։ Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի ։



233. Հ. Այսպիսի խօսքերու մէջ ինչ հոլովի տեղ են հայցականները ։

Պ. Այսպիսի խօսքերու մէջ հայցականներն են գործիականի տեղ, կամ իմաստին սաստկու- թիւն տալու համար. ուստի վերի խօսքերն որպէս թէ կը նշանակեն, Երկեան երկիւղիւ մեծաւ կամ եր- կեան յոյժ. Խնդացին ուրախութեամբ մեծաւ, կամ խնդացին յոյժ, Յաւիտենական սիրով սիրեցի զքեզ. Սէրն որով սիրեաց զնա, եւ ։

234. Հ. Մի միայն սեռի խնդիր կ'առնուն ներ- գործական բայերը ։

Պ. Կան ներգործական բայեր որ կրնան առնուլ երկու սեռի խնդիր (հայցական) որոց մին է անձի անուն և կրնայ տրական եւս ըլլալ, միւսն՝ իրի, զոր օրինակ.

Որ զգեցուցանէր զձեզ (ձեզ) կարմիր ։ Զգեցուցի զքեզ (քեզ) պէսպէսս ։ Ագուցի զքեզ հեր և կարմիր ։ Հարցից և ես զձեզ (ձեզ) բան մի ։ Հարցից ինչ զձեզ ։ Զիս ինչ այդպէս խնդրէք բանից մի հարցանէք ։ Ուսուցանէր զնոսա (նոցա) առակօք բազում ինչ ։ Զի՞նչ խրատեցին զնա (խրատ ե- տուն նմա) ծերքն, և զի՞նչ մանկտին ։ Զի՞նչ (ի՞նչ խելք, զրկեցի զքեզ), եւ ։

235. Հ. Չէ՞ն կրնար երբէք սեռի խնդիր առնուլ չէզոք բայերը ։

Պ. Չէզոք բայերն երբեմն տարբեր նշանա- կութեամբ իբր ներգործական գործածուելով կ'առնուն սեռի խնդիր, զոր օրինակ.

Ամենայն որ բնակեալ իցէ զերանակողմն ։ Որ զեզերն բը- նակեալ նստէին ։ Բնակեալ նստէին զափն ծովուն ։ Որ

զներքնակողմն լերին գետոյն կարգեալ նստէին։ Զվերին կողմն նստէին։ Բնակել, կամ բնակեալ նստել կը նշանակէ բնակել, մնալ, այսինքն՝ բնել, զայլ երկիր. Զամենայն որ ինչ ակն ունիցիս (յուսալ) յինէն՝ արարից քեզ. Նշմեր՝ զոր ամուսնացաւ (կին արար) Թագաւորն։ Ոչ հաճեցան (ընկալան) զհօրն հրաման. Խնդացին (ողջունեցին) զնա 'ի նոսա հաւանել։ Զլանամ (զրկեմ) զանձն իմ 'ի բարութենէ։ Ի բամբասանաց խնայել (պահել) զլեզու։ Երկչոտն միշտ կանխէ (կանխաւ խորհի) զանհնարինն։ Այլքն զայլ փախուստ շրջէին։ Անխայեցեր (պահեցեր) զնոսա 'ի մեղաց։ Ի մի վայր ժողովեալ զօրաց զոր տօնին, զայնչափ քաջութեանն ցնծան (տօնեն)։ Խանդացաւ զանկանոնութիւն նոյ։ Զղջացաւ զամբաստանութիւն։ Ըղձանային (մաղթէին) զխաղաղութիւն երկրին։ Ոչ խուսեցից (դարձուցից) զերեսս իմ։ Յեսու յաջորդեալ (առեալ) 'ի Մովսիսէ զառաջնորդութիւնն։ Կեղծաւորի (կեղծէ) զաստուածպաշտութիւն։ Եղբայրն յանցեաւ (չփոթեց) զհամարն։ Զգուշանալ (պահել) զբան։ Ապաշաւել զգործ ինչ (բան մը ըրած ըլլալուն վրայ ցաւիլ, զղջալ)։ Համբերել (տանել, յանձն առնուլ) զայս ինչ, եւն։

236. Հ. Բայերը սեռի և բնութեան խնդիրնե՞ր միայն կ'ունենան։

Պ. Բայերը կ'ունենան նաեւ այլեւայլ նախադրութիւններով խնդիրներ. զոր օրինակ. Ածին զՅիսուս առ Պիղատոս։ Ընկեցին զԴանիէլ 'ի գուբն առիւծուց։ Կացոյց զնա 'ի վերայ աշտարակի տաճարին։ Այս օրինակներուն մէջ, առ Պիղատոս, 'ի գուբն, 'ի վերայ աշտարակի բառերը, առ, 'ի, 'ի վերայ, նախադրութիւններով խնդիրներ են ածին, ընկեցին, կացոյց բայերուն։

—

# ԳԻՏԵԼԻՔ ԲԱՅԵՐՈՒՆ, ՏԷՐ ԲԱՅԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

—

237. Հ. Գոյականէ, դերանունէ, գոյականաբար առնուած ածականէ և աներեւութէ զատ ուրիշ ի՞նչ բառեր բայերուն տէր բայի և խնդիր կ'ըլլան։

Պ. Երբեմն մակբայ մը, հոլոված բառ մը, դիմաւոր բայ մը և ամբողջ խօսք մը կրնան տէր բայի և խնդիր ըլլալ։

Եղիցի ձեզ այոն այո, և ոչն՝ ոչ. Ձեզի այոն այո ըլլայ, և ոչը ոչ։ Զի՞նչ լիցէ այն փոքր մնաց ետուն. Այն քեզ ի՞նչ ի՞նչ է։ Զայս արդեօքն յայտ առնէ. Արդեօքը այս կը նշանակէ։ Նովաւն 'ի ձեռն նորա յայտ առնէ. Անովը կը նշանակէ անոր ձեռքով։ Արագընթացն և փոխերն զմի միտս ունին. Արագընթացը և փոխերը միեւնոյն նշանակութիւնն ունին։ Օրհնեսցին փառաւորեսցի է. Օրհնեսցին փառաւորուի է։ Զի ներող և արգահատող է արարիչն՝ այս ամենեցուն իսկ յայտնի է. Թէ ներող և արգահատող է արարիչը՝ ասիկա ամենուն յայտնի է։

Այս օրինակներուն մէջ, այո՛, ոչ, փոքր մնաց ետուն, արդեօք մակբայները, նովաւ գործիականը, փոխեր և օրհնեսցին դիմաւոր բայերը, և, զի ներող և արգահատող է արարիչն ամբողջ խօսքը, իբրեւ տէր բայի գործածուած են իրենց վերաբերեալ բայերուն։

Պատուոյ սակս ասաց զայն · Պատուոյ համար ըսաւ զայն: Զուարճութեան ոչ վայրապար ինչ յաւել · Վայրապար չաւելցուց ուրախութեան: Ի սկզբանէն զոր եդ՝ յայտ առնէ: Ի սկզբանէ զոր դրաւ՝ կը ցուցնէ: Յաճախաբար դնէ զնորոյն ինչ · Շատ անգամ կը դնէ ինքն իւրը: Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին , 'ի սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո · Ամէն օրէնք սա մէկ խօսքին մէջ՝ այսինքն ընկերդ քու անձիդ պէս սիրելուն մէջ կը կատարուի:

Այս օրինակներուն մէջ մակբայները , զայն, ուրախութեան · խօսքը , նորոյն ինչ , գրուած են զ նախդրիւ իբրեւ հայցական սեռի խնդիր ասաց , յաւել , դնէ բայերուն: Ի սկզբանէ բացառականը , գործիական վերջաւորութեամբ , գրուած է իբր գործիական խնդիր յայտ առնէ բային: Իսկ ամբողջ խօսքը , սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո , է նախդրիւ խնդիր եղած է կատարին բային:



## ԳԼՈՒԽ Գ·

## ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ

238· Հ· Ի՞նչ է Ստորոգելին:

Պ· Ստորոգելի , կամ , ըստ ոմանց , ստորոգեալ ինքնին կ'ըսուի այն բառը որ ընդհանրապէս կու գայ էական բային ետքը , և կը ցուցնէ անոր տէր բային յատկութիւնը , ով կամ ինչ ըլլալը , զոր օրինակ·

Դու Ձձ ես: Ես եմ որդին քո: Այրն այն էր իշխան: Դուք էք աղ երկրի: Նոքա եղիցին ձեր ծառայք:

239· Հ· Ե՞րբ յոգնակի կը գրուի ստորոգելին:

Պ· Երբ էական բային տէր բային յոգնակի է , ստորոգելին կը գրուի ընդհանրապէս յոգնակի , զոր օրինակ·

Ամենեքին մեք որդիք եմք առն միոյ: Արք խաղաղութեան եմք , և չեն ծառայք քո լրտեսք: Կամակիցք էք գործոց նորա: Երախտաւորք են ոտք նոցա: Թուղթքս ծանունք են և սաստիկք: Էին արդարք երկոքին: Եղեն նմա հարկատուք: Լերուք արք: Եղիցի նոցա Աստուած և նոքա եղիցին իմ ժողովուրդ:

240· Հ· Կրնա՞յ յոգնակի տէր բայիին ստորոգելին գրուիլ նաեւ եզակի:

Պ· Կրնայ գրուիլ , մանաւանդ երբ ածական է և գրուած է խօսքին սկիզբը կամ տէր բա-

յիէն առաջ, կամ հաւաքական անուն է, կամ եզակին անգործածելի է, և կամ այնպիսի անուն մը որ կը գործածուի բայի հետ, զոր օրինակ ·

Գործակից եմք ձեր ։ Երանելի են կանայք քո ։ Երագ են ոտք նոցա ։ Դեռ մարմնաւոր էք ։ Ուղիղ են ճանապարհք նորա ։ Երկոտասան եղբայր եմք ծառայք քո ։ Ընդունայն են կեանք իմ ։ Սակաւ և ցաւագին են կեանք մեր ։ Հունձք բազում են և մշակք սակաւ ։ Դուք աղ էք ընտիր ։ Ողջ լերուք , և մեք մեզէն ողջ եմք ։ Զգոյշ լերուք ։ Լուռ եղեն ։ Հնազանդ լերուք ։ Ուրախ եղաք ։

241· Հ· Էական բային տէր բայէն զատ ուրիշ ի՞նչ բառեր կ'ունենան ստորոգելի ։

Պ· Էական բայէն զատ նաև ուրիշ քանի մը ներգործական բայերու տէր բային և սեռի խնդիրը կ'ունենան ստորոգելի , ինչպէս են անուանել , կոչել , առնել , դնել , կարծել , կացուցանել , գործել , շինել , բայերը և ուրիշներ ։ Երբ ստորոգելին կը վերաբերի այս բայերուն տէր բայիին , կը դրուի ուղղական · երբ կը վերաբերի սեռի խնդրոյն , կը դրուի անորոշ հայցական , զոր օրինակ ·

Դու կոչեսցիս Կեփաս ։ Յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս ։ Որդիք Աստուծոյ կոչեսցին ։ Կացի Նահատաւոր ։ Զի անվարժ եղանէ լեզուի ։ Գնային յամենայն պատուիրանս Տեառն անարատք ։ Ընդէ՞ր կայք դատարկք ։ Դատարկանստեանք ուսանին , շրջել տանէ 'ի տուն ։ Ճանապարհք անմտաց ուղիղ թուին ։ Խիստն և յանդուգն և հպարտն ժանտ կոչին ։



Այս օրինակներուն մէջ ստորոգելին ուղղական է , քանզի կը վերաբերի տէր բայիներուն ։

Կոչեցի զձեզ բարեկամս ։ Արար զիս հայր Փարաւոնի ։ Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ ։ Ոյք ասիցեն զչարն բարի ։ Գիտէր զնա այր արդար և սուրբ ։ Եթէ ոք խոստովանիցի զնա Քրիստոս ։ Զանձն իւր մատոյց պատարագ ։ Պատկեր կոփեաց զնա հիւսն ։ Կացոյց զնոսա իշխանս ։ Կենդանի արար զմեզ ։ Եդ զձեզ տեսուչ ։ Տեսանէր զնոսա ջերմագոյնս ։ Աշխարհախանձս ուսուցին զնոսա ։ Ետես բացեալ զդրունս բանտին ։ Գտին ծուլացեալ զմետասանսն ։ Անճառ զբանսն համարի ։ Ուղիղ արարէք ըզ շաւիղս նորա ։ Հնազանդ արար զժողովուրդս ։ Արար ըզ մեզ սուրբս ։ Արար զմեզ պաշտօնեայս ։ Կացոյց զիս դատաւոր ։ Կացուսցես զնոսա իշխանս ։ Եթէ կոչիցէ ոք զնոսա զայն ինչ որ ենն՝ ամաչեն ։ Տարակուսէր թէ զո՞ ոք կոչեսցէ զՀերմէս ։ Զամուր ամուր տեղիս Հայոց շինէր բերդս ։ Խորշ խորշ գործեսցես զտապանն ։

Այս օրինակներուն մէջ ստորոգելիներն հայցական են , քանզի կը վերաբերին բայերուն սեռի խնդիրներուն ։

242· Հ· Ե՞րբ հայցական կը դրուի էական բային տէր բայիին ստորոգելին ։

Պ· Երբեմն դիմաւոր էական բայը կը փոխուի աներևոյթի , և այն ատեն ստորոգելին կը դրուի հայցական , զոր օրինակ · Մեծատանց պատուէր տաջիր առատս լինել , փոխանակ՝ Մեծատանց պատուէր տաջիր զի եղեն կամ լիցին առատք ։

Պարտ էր ձեզ լինել վարդապետք : Պատուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս : Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տանուտէր լինել : Մեծատանց պատուէր տացես՝ առատս, ողորմածս, հաղորդս լինել : Ծերոց զգաստս լինել, պարկեշտս, ցածունս, ողջամիտս 'ի հաւատս : Զգաստացուցանիցեն զմանկամարդսն այրասէրս լինել, որդեսէրս, ցածունս, սուրբս, տանարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց, ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել և հաճոյս յամենայնի . մի հակառակօղս, մի հատուածս : Յուշ արասջիր նոցա իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ . անմարտս լինել, հեզս : Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել :

243· Հ· կրնա՞յ ստորոգելին ուրիշ ձեւ առնուլ :

Պ· Երբ ստորոգելին գոյական է, կրնայ դրուիլ ի նախադրութեամբ անորոշ հայցական, զոր օրինակ ·

Եղէց 'ի հայր · Եղէց յԱստուած ազգիդ Իսրայելի : Եղիջիք դուք մեզ 'ի ծառայս : Եղէց ձեզ 'ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս : Եղիցին երկոքեան 'ի մարմին մի : Եղիցին դժուարինք 'ի դիւրինս և առապարքն՝ 'ի դաշտս : Եղիցի ամենայն երկիրդ յանապատ 'ի բնակչաց : Քոյր մեր, եղիցիս 'ի հազարս և 'ի բիւրս : Եւ եղեւ նոցա 'ի կերակուր : Եղեն նոցա 'ի հարկատուս : Մեծութիւնդ ձեր յոչինչ է : Քակտեցան և եղեն յոչինչ : Լերուք յորդիս զօրութեան : Լեր դու ինձ յորդի զօրութեան : Շինեաց տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ 'ի կին : Արարից զքեզ յազգ մեծ : Օծանել զքեզ 'ի թագաւոր : Տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն : Յոչինչ համարել :



244· Հ· Ե՞րբ բայը ստորոգելոյն հետ կը համաձայնի, փոխանակ տէր բային հետ համաձայնելու :

Պ· Եթէ տէր բային եզակի և ստորոգելին անեզական բառ է, բայը կրնայ ստորոգելոյն հետ համաձայնելով դրուիլ յոգնակի, զոր օրինակ ·

Կռոնսոսն դիք էն : Հերս երկայնս ունել կնոջ մարդոյ փառք էն : Յայտ է թէ բանջարանք են աղանդն :

245· Հ· Ի՞նչ հարցմամբ կը գտնուի ստորոգելին :

Պ· Ստորոգելին պատասխան է ի՞նչ հարցման · զոր օրինակ · Դու ես · — Ի՞նչ · — Քս · Ես եմ · — Ի՞նչ · — Որդին քո · Այրն այն էր · — Ի՞նչ · — Իշխան : Դու կոչեցիս · — Ի՞նչ · — Կեփաս : Անուանեցաւ · — Ի՞նչ · — Քրիստոս : Կոչեցի զձեզ · — Ի՞նչ · — Բարեկամս :

246 · Հ· Էական բային տէր բային կ'ունենա՞յ միշտ ստորոգելի :

Պ· Երբեմն եմ բայն ունի ուրիշ բայի նշանակութիւն, և անատեն խօսքին մէջ չգտնուիր ստորոգելի · զոր օրինակ · Ո՞ւր իցեն եղբարք քո · Հոս՝ իցեն կը նշանակէ ո՞ւր բնակին կամ ո՞ւր գտանին : Զարիքս որ լինին՝ ուստի՞ են, այսինքն՝ ծնանին :

## ԳԼՈՒԽ Դ.

---

## ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

247. Հ. Ի՞նչ է բացայայտիչը։

Պ. Բացայայտիչ կը կոչուին այն բառերը որ խօսքին մէջ կը դրուին ուրիշ բառի քով, և անոր հետ կը նշանակեն մի և նոյն բանը, միայն կը ծառայեն զայն աւելի յայտնի ընելու, զոր օրինակ.

Յովսէփ, այր Մարեմայ. Յովսէփ, Մարիամին այրը։

Հոս բառերը, այր Մարեմայ. մի և նոյն են Յովսէփին հետ, իմացունելու համար են թէ ո՛ր Յովսէփն է. ուստի և այր Մարեմայ բացայայտիչ է Յովսէփին։

Փախուստն Անակայ, հօր սրբոյն Գրիգորի. Սուրբ Գրիգորի հօրը, Անակայ, փախուստը։

Հոս հօր սրբոյն Գրիգորի, նոյն է Անակին հետ, և անոր բացայայտիչն է։

Զմայրն ամենայն առաքինութեանց, զխոնարհութիւն, չունէր յանձին. Ամէն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը, չունէր։

Հոս, բառը խոնարհութիւն, մայր ամենայն առաքինութեանց ին բացայայտիչ է, Առաքինութեանց մայր և խոնարհութիւն մի և նոյն բան են։

Կռոց և դրօշելոց հանգամանք առ Թարայիւ, հօրն Աբրահամու, եղեն. Քարէ և փայտէ արձաններ (կուռքեր) շինել՝ Աբրահամու հօր, Թարայի, ատեն սկսաւ։

Հոս, բառերն հօր Աբրահամու, բացայայտիչ են Թարային. Աբրահամու հայրը և Թարա, են մի և նոյն անձը։



248. Հ. Ի՞նչ է բացայայտեալ։

Պ. Բացայայտեալ կը կոչուի այն բանը զոր բացայայտիչը կ'ընէ աւելի յայտնի և ծանօթ։ Վերի օրինակներուն մէջ Յովսէփ, Անակ, մայր ամենայն առաքինութեանց, Թարա, բացայայտեալ են.

249. Հ. Ի՞նչպէս կը համաձայնի բացայայտիչը բացայայտելոյն հետ։

Պ. Բացայայտիչը բացայայտելոյն հետ կը համաձայնի թուով և հոլովով, և բացայայտելոյն ղ, ի, ց, ընդ, ըստ նախադրութիւններն, եթէ ունի, ընդհանրապէս կը կրկնուին բացայայտչին վրայ, զոր օրինակ.

Ետ զԿղէոպատրա զդուստր իւր։ Զմեղսն ձեր զոր արարէք, զորթն, առի և այրեցի հրով։ Եդ զմեզ ՚ի բանտի ՚ի տան դահճապետին, զիս և զմատակարարն։ Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս, զորդին Աստուծոյ։ Շրջել զեզերբք իւրովք, զորդւովքն Իսրայէլի։

Զիարդ յինէն ըմպել խնդրես, ՚ի կնոջէ Սամարացւոյ։ Ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, յԵրուսաղէմ, յերկինս։ Ասէ Յուդա ցԻսրայէլ, ցհայր իւր։ Ասէ ցպատանին, ցկապարճակիր իւր։ Ընդ եղբարս ձեր, ընդ որդիսն Իսրայէլի։ Անց նա ըստ գետն մեծ, ըստ Եփրատ։ Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ, ընդ Յիսուս Քրիստոս։

Առ նախադրութիւնը և ուրիշ նախադրութիւններ ընդհանրապէս չեն կրկնուիր. զոր օրինակ։

Առ Թարայիւ, հօրն Աբրահամու։ Առ Աբիադարաւ, քահանայապետիւ։ Իսահակաւ և Յակոբաւ հանդերձ, ժառանգակցօք նորին աւետեաց։ Վասն որդւոյ իւրոյ, Յիսուսի։

## ԳԼՈՒԽ Ե.

—

## ԿՈՉԱԿԱՆ

250. Հ. Ի՞նչ է կոչական ։

Պ. Կոչական կ'ըսուի այն բառը որ կը ցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը, առ որ խօսք մը ուղղուած է, զոր օրինակ.

*Արք, ընդ մեզ զի՞ էք պշուցեալ։ Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ։ Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ։ Լուր, որդեակ, խրատու հօր քո։ Բարեկամ, 'ի վեր մատիր։ Բժիշկ, բժշկեա զանձն քո։ Արք Աթենացիք, պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։*

251. Հ. Ի՞նչ բառ կը դրուի կոչականէն առաջ կամ ետքը ։

Պ. Կոչականէն առաջ շատ անգամ կը դըրուի ով բառը. երբեմն ալ կոչականէն ետքը, եթէ եզակի է կոչականը, կ'աւելցուի դու դերանունը, ինչպէս.

*Ով բանաքաղ Մարկիոն։ Ով անմիտք և հեղգասիրտք 'ի հաւատալ։ Ով ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ իցեմ ընդ ձեզ։*

*Այր դու, ով կացոյց զիս դատաւոր 'ի վերայ ձեր։ Արի կաց, մանուկ դու։*



252. Հ. Ե՞րբ դ գիրը կը գործածուի կոչականին հետ ։

Պ. Երբ կոչականն ունի իրմէ առաջ ածական, շատ անգամ դ գիրը կ'աւելցուի ածականին վրայ, զոր օրինակ.

*Կամ եղեւ և ինձ գրել քեզ, քաջդ Թէոփիլէ։ Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս։*

Եթէ կոչականն իրմէ ետքն ունի յատկացուցիչ, դ գիրը կը դրուի կոչականին վրայ, զոր օրինակ.

*Աստուածորդիդ Պարսից, ընդէ՞ր զանգիտես։ Ի բաց կացէք յինէն, մշակքդ անիրաւութեան։ Գիտեմ զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ։ Արքայդ Իսրայելի։*

---

## ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

—

## Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### ՅՕԴՈՅ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

253. Հ. Ո՞րն է հայերէն յօդ ։

Պ. Հայերէն յօդ է ն գիրը ։

254. Հ. Քանի՞ կանոն կայ յօդի գործածութեան համար ։

Պ. Յօդի գործածութեան համար կայ չորս կանոն ։

1° Յատուկ անուններ, և այնպիսի իրաց անուններ որ իրենց սեռին մէջ մի միայն են, չեն առնուր յօդ, բայց կառնուն հայցականի զնախդիրը. զոր օրինակ.

Եկն Յիսուս ։ Ասէ Պետրոս ։ Աստուած արար զերկինս և զերկիր ։ Արարածք Աստուծոյ ։ Արեգակն խաւարեսցի ։ Լուսին ոչ տացէ զլոյս իւր ։ Ծով մեծ է և անդորր ։ Եկեսցեն յարեւելից և յարեւմտից ։ Զճնճղուկս և զճայս դու արարեր , եւն ։

2° Հասարակ անուն մը չառնուր յօդ , երբ կը ցուցնէ սեռ , այսինքն երբ ամէն բառը կրնայ դըրուիլ անուանքով · բայց , եթէ անունն հայցական է , կ՚առնու զ նախդիրը , զոր օրինակ ·

Մարդիկ և անասունք շարժին և զգան ։

Հոս՝ մարդիկ և անասունք կը ցուցնեն սեռ , այսինքն՝ կը նշանակեն ամէն մարդ , ամէն անասուն , այս պատճառաւ առած չեն յօդ ։

Արար Աստուած զմարդիկ և զանասունս ։

Հոս՝ մարդիկ և անասուն կը ցուցնեն սեռ , ուստի և առած չեն յօդ · բայց , որովհետև հայցական են , առած են զ նախդիրը ։

Այսպէս կ՚ըսուի ·

Գետք 'ի ծով գնան , ծով ոչ լնու ։ Լերինք ապաւէն են եղջերուաց ։ Վէմք ապաւէն նապաստակաց ։ Հողմք շնչեն ։ Աստեղք լուսատու են ։

3° Հասարակ անուն մը բնաւ յօդ չառնուր , և , եթէ հայցական է , չառնուր նաեւ զ նախդիրը , երբ անորոշ կերպով կը ցուցնէ քանի մը կամ մաս մը , զոր օրինակ ·

Են գազանք յանտառի աստ · Այս անտառին մէջ գազաններ կան ։



Հոս , գազանք , կը նշանակէ քանի մը գազան , կամ գազաններէն մաս մը , ուստի առած չէ յօդ ։

Եղբարք իմ սպանին գազանս · Եղբայրներս գազաններ սպաննեցին ։

Հոս , գազանս , կը նշանակէ անորոշ կերպով մաս մը կամ քանի մը գազան , ուստի և առած չէ յօդ · և թէպէտ հայցական է , առած չէ նաեւ զ նախդիրը (*) ։

4° Հասարակ անուններ կ՚առնուն յօդ երբ կը ցուցնեն որոշեալ անհատ , և եթէ հայցական են , կ՚առնուն նաեւ զ նախդիրը , զոր օրինակ ·

Հացդ զոր ետու քեզ՝ իմ է · Քեզի տուած հացս իմս է ։

Հոս , հացդ , կը ցուցնէ այս ինչ որոշեալ հացը (իմ տուածս) , վասն որոյ առած է յօդ ։

Կերայք զհացդ զոր ետու քեզ · Հացը զոր տուի քեզ կերա՞ք ։

Հոս , նոյնպէս , հացդ , կը ցուցնէ այս ինչ որոշեալ հացը (այն զոր տուի քեզ) · ուստի և առած է յօդ , և որովհետեւ հայցական է , առած է զ նախդիրը ։

(*) Առանց զ-ի հայցականը կը կոչուի անորոշ հայցական ։

## ՅՕԴ ԱՌՆՈՂ ԲԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

255․ Հ․ Ե՞րբ կը դրուի յօդ «յատկացուցչին և երբ՝ յատկացելոյն վրայ։

Պ․ Յօդը կը դրուի միշտ յատկացուցչին վրայ․ յատկացելոյն վրայ կը դրուի միայն երբ յատկացուցիչն է յատուկ անուն։ Այսպէս կ'ըսենք․

Տուն Թագաւորին, ոչ թէ Տունն Թագաւորին, կամ Տունն Թագաւորի։

Բայց պէտք է ըսել․

Մայրն Յիսուսի, և ոչ, Մայր Յիսուսին։

256․ Հ․ Ե՞րբ յօդ կը դրուի գոյականին վրայ։

Պ․ Երբ յօդ առնող անունն ունի ածական, յօդը կը դրուի միշտ գոյականին վրայ․ ածականին վրայ կը դրուի յօդը, երբ գոյականն է յատուկ անուն, և ածականին յետադաս, ուստի կ'ըսենք․

Այրն քաջ։ Երկիրն ընդարձակ։ Մանուկն ստահակ․ կամ, Քաջ զինուորն, Բարեպաշտօն մայրն։

Մեծն Աղեքսանդր։ Երանելին Ղեւոնդ։ Քաջն Տըրդատ։ Սրբոյն Գրիգորի։

Երբ յատուկ անունը նախադաս է ածականին, յօդը երկուքին վրայ ևս չդրուիր․ ուստի պէտք է ըսել,

Աղեքսանդր մեծ։ Ղեւոնդ երանելի։ Տրդատայ քաջի։ Գրիգորի սրբոյ։



257․ Հ․ Կը գործածուի՞ յօդ, երբ ստացական է ածականը։

Պ․ Երբ ածականն է իմ, քո, մեր, ձեր, իւր, նորա, նոցա, իւրեանց ստացականներէն մին, ընդհանրապէս չգործածուիր յօդ․ ուստի սովորութիւն է ըսել․

Տուն իմ։ Հայր քո։ Եղբայր նորա։ Բանք իւրեանց։ Տուն հօր իմոյ։ Դրունք քաղաքի ձերոյ։ Որդիք բարեկամաց նոցա․ փոխանակ՝ Տունն իմ։ Հայրն քո։ Եղբայրն նորա։ Բանքն իւրեանց։ Տունն հօրն իմոյ։ Դրունքն քաղաքին ձերոյ, եւն։

258․ Հ․ Ե՞րբ յօդ կ'առնուն գոյականաբար առնուած ածականք։

Պ․ Գոյականաբար առնուած յոգնակի ածական մը, եթէ ընդհանուր մտօք առնուած է, չառնուր յօդ, բայց գոյականաբար առնուած եզակի ածականը միշտ կ'առնու յօդ, ուստի կ'ըսուի առանց յօդի․

Արդարք (ամէն, որ և իցէ արդար) ժառանգեսցեն զերկիր։ Անզգամք զխրատ անգոսնեն։ Երանի՜ ողորմածաց։ Վա՜յ անօրինաց։

Յօդով, Արդարքն, Անզգամքն, եւն կը նշանակէ այն ինչ արդարները, այն ինչ անզգամները։

Բայց եզակին կ'ըսուի յօդով․

Արդարն 'ի հաւատոց կեցցէ․ որ և իցէ արդարի համար․ և, Սպանէք զարդարն․ այն ինչ արդար անձի համար։

Նոյնպէս

Անզգամն անգոսնէ զխրատ հօր, և, Զերծաւ անզգամն որ զայն ամենայն չարիս գործեալ էր։ Անմեղն հաւատայ ամենայն բանի, և, Դատապարտեցին զանմեղն (զՔրիստոս)։ Խորագէտն գայ ի զգուշումն, և, Այսպէս զերծաւ խորագէտն (աղուէսը)։ (Տես և թիւ 273)։

259․ Հ․ Կը դրուի՞ յօդ ‿ շաղկապով կապուած բառերէն ամենուն վրայ։

Պ․ Ես շաղկապով կապուած երկու կամ աւելի բառերէն ընդհանրապէս առաջնոյն վրայ միայն կը դրուի յօդ, զոր օրինակ.

Աղքատն և տնանկ։ Դպիրքն և Փարիսեցիք։ Զպտուղ ցորենոյն և գինւոյ և ձիթոյ։ Զխուլն և զհամր։ Զազգս մեր և զտեղի։ Եկացն և պանդխտաց։ Դպրացն և փարիսեցւոց։

260 Հ․ Ի՞նչ կը ցուցնէ շատ անգամ յօդը։

Պ․ Յօդը կը ցուցնէ շատ անգամ լռելեայն իմացուած գոյական մը, յատկացեալ մը կամ ուրիշ բառ մը, զոր օրինակ.

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի. այսինքն՝ ընդ չոր փայտ։ Աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, եւ քոյքդ ոչ պահեն. այսինքն՝ քո աշակերտք։ Նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն. այսինքն՝ ոչ եթէ մեղաց մերոց միայն։ Է բարկութիւն որ գովելի է, որպէս Մովսէսին. այսինքն՝ Մովսէսի բարկութիւնն։ Արիւնն Յիսուսի առաւել խօսի քան զՀաբելին. այսինքն՝ քան զարիւնն Հաբելի։ Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեանն այնպէս ճարտար խօսէր. այսինքն՝ և այն որ առանց դպրութեան էր։ Սպանցեն զվասն մեղացն. այսինքն՝ զ[illegible] որ է վասն մեղաց։ Զուխտն և զկամաւն. այս-



ինքն՝ զուխտն որ է կամաւ։ Ընկալայ զառ 'ի ձէնջն. այսինքն՝ զայն որ էր առ ի ձէնջ։ Պահանջէի զիմն. այսինքն՝ զայն որ իմ է։ Ճանաչեմ զիմսն. այսինքն՝ զայնոսիկ որ են իմ։

261․ Հ․ Ո՞ր ստորոգելին յօդ կ'առնու և երբ։

Պ․ Անուանեալ, կոչեալ բայերուն ստորոգելին կ'առնու յօդ, երբ կը դրուի բայէն առաջ.

Պետրոս որ Կեփան կոչեցաւ։ Յակոբոս զոր արդարն կոչէին։ Վասն Անտիոքայ Երեւեալն անուանելոյ։

262․ Հ․ Ե՞րբ յօդ կ'առնուն յատուկ անուանք։

Պ․ Յատուկ անուանք կ'առնուն յօդ. 1° այս, այդ, այն ցուցականներով, կամ այս ածականներուն զօրութիւնը տալու համար, զոր օրինակ.

Մովսէսն այն որ եհան զմեզ։ Դո՞ւ իցես Սիբայն. այսինքն՝ Սիբայն այն։ Զիրսն զոր արար Ասթինէն։ Այլ Անտիոքոսն ութ հարիւր քանքար բերեալ էր։ Ո՞վ է Պաւղոսն կամ Ապողոսն։ Ո՞ւր է այն ձեր Աղեքսանդրոսն։ Երուսաղէմն վերին։ Փախո զԳրիգորդ. այսինքն՝ զԳրիգորդ զայդ։ Մեզ զԳրիգորդ տեսուչ կացուսջիք։ Հարցանէր ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն։ Քրիստոսն յորժամ գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ։

2° Երբ յատուկ անունը գործածուած է ածականաբար, ինչպէս.

Լուեալ զՅիսուսն անուն։ Զկուաշն աւան։ Ի Թիլն աւան։ Ի Սիմն անապատէ։ Դկղադն գետոյ։

Այս կերպով իբր ածական գործածուած գոյականներ եւս կ'առնուն յօդ, ինչպէս.

Եպիսկոպոսն անուն ի Հելլենացի լեզուէ է։ Հայրդ անուն մի է հոգեւորաց և մարմնաւորաց։

263· Հ· Յօդ չ՞ը դրուիր երբէք ածականի վրայ ։

Պ· Երբեմն վայելչութեան համար կը դրուի յօդ գոյականէն առաջ դրուած ածականին վրայ, թէեւ ամենեւին հարկ չէ յօդ դնել ։ Այսպէս կ՚ըսուի ·

Պերճն գնացիւք ։ Բարձրաբերձն լերամբք ։ Ուղղորդն գնացիւք ։ Մանուածապատն շրջանօք ։ Յորդն անձրեւօք ։ Աներկեւանն ցնծութեամբ ։ Ի վնասակարն բանից ։

---

## Բ· ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### ԱՍՏԻՃԱՆՔ ԱԾԱԿԱՆԱՑ

264· Հ· Քանի՞ կերպով կը ցուցնեն ածականք բանի մը յատկութիւնները ։

Պ· Ածականք բանի մը յատկութիւնը կը ցուցնեն երեք կերպով, պարզապէս, բաղդատելով եւ գերադրական կերպով, զոր օրինակ · Իմաստուն էր Սողոմոն · Սողոմոն իմաստուն էր ։ Հոս իմաստուն ածականը կը ցուցնէ Սողոմոնին յատկութիւնը պարզապէս ։

Իմաստուն էր Սողոմոն քան զայլ թագաւորս · Սողոմոն քան զայլ թագաւորս իմաստուն էր ։ Հոս իմաստուն ածականը կը ցուցնէ Սողոմոնին յատկութիւնը ոչ պարզապէս, այլ բաղդատելով զնա ուրիշ թագաւորաց հետ ։

Իմաստուն էր յոյժ Սողոմոն · Սողոմոն շատ իմաստուն էր ։ Հոս իմաստուն ածականը կը ցուցնէ Սողոմոնին յատկութիւնը գերազանց աստիճանաւ ։



265· Հ· Ի՞նչ կը կոչուի ածականն այս երեք եղանակներուն նայելով ։

Պ· Այս երեք եղանակներուն նայելով ածականը կը կոչուի պարզ, բաղդատական եւ գերադրական ։

266· Հ· Ի՞նչ կը ցուցնէ բաղդատութիւնը ։

Պ· Բաղդատութիւնը կը ցուցնէ թէ երկու բան իրարու հաւասա՞ր են թէ մին քան զմիւսը գերազանց կամ ստորին ։

267· Հ· Ի՞նչպէս կը ցուցուի հաւասարութիւնը ։

Պ· Հաւասարութիւնը կը ցուցուի, այնպէս ... որպէս, այնչափ ... որչափ կամ լոկ · որպէս, որչափ մակբայներով, զոր օրինակ ·

Այնչափ զօրութիւն է նոցա որչափ մեր · Անոնք այնչափ զօրութիւն ունին որչափ մենք ։ Այնպէս հզօր է նա որպէս դու · Այնպէս հզօր է ինչպէս դուն ։ Եղերուք գթածք որպէս հայրն ձեր երկնաւոր գթած է · Այնպէս գթած եղէք ինչպէս է ձեր երկնաւոր հայրը ։ Տացես նմա փոխ որչափ և խնդրեսցէ · Այնչափ փոխ տուր անոր որչափ կ՚ուզէ ։

268· Հ· Ի՞նչպէս կը ցուցուի գերազանցութիւնը ։

Պ· Գերազանցութիւնը կը ցուցուի քան զ (*) նախադրութեամբ, կամ քան մակբայիւ, զոր օրին.

Հոգի առաւել է քան զմարմին · Հոգին գերազանց է քան զմարմինը ։ Միթէ լաւ ինչ իցեմք քան զհարս մեր · Միթէ քան մեր հայրերն աղէ՞կ ենք ։ Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց քան քաղաքին այնմիկ · Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմացւոց քան այն քաղքին ։

---

(*) Քան զ նախադրութիւնն իւր խնդրով խնդիր է բաղդատական ածականին ։

269· Հ· Ի՞նչպէս կը ցուցուի ստորնութիւնը ։

Պ· Ստորնութիւնը կը ցուցուի բաղդատական խօսքին բայը բացասական ընելով, զոր օրին.

Չիք նոցա այնչափ զօրութիւն որչափ մեր · Անոնք նուազ զօրութիւն ունին քան զմեզ ։ Չէ նա այնպէս հզօր որպէս դու · Քան զքեզ նուազ զօրաւոր է ։ Մարմին չէ ինչ առաւել քան զհոգի · Մարմինը նուազ գերազանց է քան զհոգին ։ Չեմք ինչ լաւ քան զհարս մեր · Նուազ աղէկ եմք քան մեր հայրերը ։

270· Հ· Մանաւանդ մակբայը երբ կը գործածուի բաղդատական խօսքին մէջ ։

Պ· Մանաւանդ մակբայը կը գործածուի քան նախադրութեան հետ մանաւանդ երբ բաղդատուած բաներն աներեւոյթ են, զոր օրինակ ·

Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն · Երանելի է յաւէտ տալը քան առնուլը ։ Լաւ է ինձ մանաւանդ մեռանել քան կեալ վատութեամբ ։

271· Հ· Ուրիշ ի՞նչ խնդիր կ'առնու բաղդատական ածականը փոխանակ քան նախադրութեան ։

Պ· Բաղդատական ածականը, փոխանակ քան նախադրութեամբ խնդրոյ, կ'առնու յոքնակի բացառական և կամ ի նախդրիւ յոքնակի հայցական խնդիր, և կը ցուցնէ մի և նոյն տեսակ բաներու մէջ ամենէն աւելին, զոր օրինակ ·

Անմեղն ՚ի յէնջ արկցէ քար · Ձենէ ամենէն անմեղը թող նետէ քար ։ Ցընտիրն ՚ի շիրմաց մերոց թաղեա զմեռեալ քո · Մեր գերեզմաններուն ամենէն աղէկին մէջ թաղէ մեռելդ ։ Մեծն ՚ի Նախաւարս ։ Որ փոքրիկն է յամենեսին ՚ի յեզ. Ձեր մէջ ամենէն պզտիկը ։



272· Հ· Ի՞նչ բանի զօրութիւն ունին կրկնուած ածականներն ։

Պ· Կրկնուած ածականներն յոքնակի գոյականով բաղդատականի զօրութիւն ունին, և կը նշանակեն ամենէն աւելը, զոր օրինակ ·

Ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ՚ի բաց ընկեցին · Ամենէն աղէկներն ամաններու մէջ ժողվեցին և գէշերը նետեցին ։ Զընտիր ընտիր մայրիսն · Ամենէն աղէկ մայր ծառերը ։ Մանր մանր ինչ ճճիք կամ անասունք կերակուր լինին օձից · Ճճիներուն ամենէն մանրերը, և այլն ։ Թողէք զծանր ծանր օրինացն · Օրինաց ամենէն ծանրերը զանց ըրիք ։

Այս զօրութիւնն ունին նաեւ մեծամեծ, լաւալաւ բարձրաբերձ, և ասոնց նման ածականներ ։

273· Հ· Ի՞նչ մասնիկ կրնայ կցուիլ առաւելութիւն ցուցնող բաղդատական ածականին վերջը ։

Պ· Առաւելութիւն ցուցնող բաղդատական ածականին վերջը կրնայ կցուիլ գոյն մասնիկը · զոր օրինակ ·

Որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս · Իմ ետեւէս եկողը քան զիս զօրաւոր է ։ Եւ էր օձն իմաստնագոյն քան զամենայն գազանս ։ Ջուր քան զծանունսն նրբագոյն է, եւ քան զթեթեւն՝ թանձրագոյն ։

274· Հ· Ի՞նչ մակբայ կը գործածուի բաղդատական ածականին սաստկութիւն տալու համար ։

Պ· Բաղդատական ածականին սաստկութիւն տալու համար կը դրուի անկէ անմիջապէս առաջ կամ ետքը խիստ մակբայը, որ կը նշանակէ առաւել ։

Քակեցից զշտեմարանս իմ, և եւս մեծամեծս շինեցից. Շտեմարաններս քակեմ, եւ աւելի մեծեր շինեմ։ Ոչ ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնացեալ ձորձոյ, ապա թէ ոչ առնու նորն լրութեամբն 'ի հնոյ անտի, և չար եւս պատառումն լինի։ Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, զի զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց։

275. Հ. Ի՞նչպէս գերադրական կ'ըլլայ ածական մը։

Պ. Ածական մը կ'ըլլայ գերադրական (*), այսինքն կը ցուցնէ բանի մը յատկութեան գերազանց կամ վերջին աստիճան ըլլալը, յոյժ, կարի, անհնարին և ուրիշ ասոնց նման բառերով, զոր օրինակ.

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ. Տէրը մեծ է և վերջին աստիճան օրհնեալ։ Եւ էր տեղին կարի բացարձակ 'ի նոցանէ. Տեղը վերջին աստիճան հեռու էր անոնցմէ։ Կարի զօրաւորագոյն քան զմեզ եղեր. Մենէ շատ աւելի զօրաւոր եղար։ Մի կարի արդար լինիր. Չափազանց արդար մի ըլլար։ Եթէ կարի յանարգաց ոք իցէ. Եթէ յետին աստիճանի անարգներէն մէկն է։ Ընկեցին զնա յանհնարին 'ի խոր վիրապն. Վերջին աստիճան խորունկ վիրապ մը նետեցին։ Աշտարակ մի բարձր անհնարին. վերջին աստիճան բարձր աշտարակ մը։

(*) Ընդհանրապէս կը կարծուի թէ ամեն մասնիկն ունեցող ածականք գերադրական են. ինչպէս ամենակալ, ամենիմաստ, ամենագէտ, ամենազօր, եւայլն. բայց պէտք է գիտնալ որ, ըստ հնագոյն եւ ընտրելագոյն մատենագրաց, ամեն կամ ամէն մասնիկը, որ ամենայն բառին համառօտեալը կամ մէկ մասն է, բայանուններու վրայ կը դրուի, եւ ամէն բան կամ ամէնը կը նշանակէ, ոչ թէ ամենէն աւելի կամ գերազանց. կամ թէ ըսենք, յունարէն բանտօս բառին կը պատասխանէ. ոչ թէ դոդօս գերադրական մասնկան. Այստի, ամենակալ, ամենիմաստ, ամենագէտ, ամենազօր, ամենատէր, ամենակեցոյց եւայլն, ամէն բան բռնող (իւր իշխանութեան տակ ունեցող), ամէն բան իմացող, ամէն բան գիտցող, ամէն բանի զօրող, ամէն բանի կամ ամենուն տիրող, ամենուն փրկող կը նշանակեն, ոչ թէ ամենէն աւելի իմաստուն, ամենէն աւելի գիտուն, եւայլն։ Ամեն մասնիկն որ եւ իցէ ածականի սկիզբը կցելով գերադրական շինել յետնագոյն հեղինակաց գործ է եւ ռամկօրէն է։



276. Հ. Ածականները միշտ գոյականի՞ հետ կը գործածուին։

Պ. Շատ անգամ ածականի մը գոյականը կ'իմացուի զօրութեամբ կամ լռելեայն, և այն ատեն ածականը կ'ըսուի գոյականաբար առնուած, զոր օրինակ.

Անզգամն (փոխանակ՝ այր անզգամ) անգոսնէ զխրատ հօր։ Արդարք՝ (արք արդարք) ժառանգեսցեն զերկիր։ Տեսցես զմեծամեծս (զգործս մեծամեծս) Աստուծոյ։ Ի ճանապարհս ամբարշտաց մի երթայցես։ Եթող զճանապարհս այգւոյ իւրոյ, և գնաց ընդ անջրդին (անջրդի տեղիս) և ընդ անապատ։ Եղիցին դժուարինքն 'ի դիւրինս։ Կաղք գնան։ Բորոտք սրբին. Մեռեալք յառնեն։ Զխստասիրտն իբրեւ զբարեկամս թելադրեալ կարծեցուցանիցէ։ Անկանիցին 'ի յորջանուտն։ Ընտրել զբարին և զչար։ Տեսաք զոմն (զայր ոմն) որ յանուն քո դեւս հանէր։ Գնաց ոմն յագարակ իւր և ոմն 'ի վաճառ իւր։ Եթէ ոք զհանգամանս իրաց ինչ գիտիցէ։ Ոմանք զայս ինչ ասէին. այլք զայլ իմն աղաղակէին։ (Տես և թիւ 258)։

## Գ· ԴԵՐԱՆՈՒՆ

—

### Ժ· ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

277· Հ· Ի՞նչ բանի տեղ կը գործածուին երբեմն այսր · այդր, անդր, աստ, անդ, աստի, անտի, այտի, մակբայները ։

Պ· Այսր, այդր, անդր · աստ, անդ · աստի, անտի, այտի մակբայները շատ անգամ այս, այդ, այն ածականներուն տեղ կը գործածուին ։

Այսր, անդր, այդր կը դրուին, երբ գործողութիւնը շարժում կը ցուցնէ ։ Աստ, անդ կը գործածուին, երբ գործողութիւնը դադարում է ։ Աստի, անտի, այտի, կը դրուին բացառական հոլովներու հետ, զոր օրինակ ·

Առաքեցին 'ի քաղաք անդր · փոխանակ՝ ի քաղաքն յայն ։ Բնակեաց յերկրի աստ խմուլ· փոխանակ՝ յերկրիս յայսմիկ ։ Ի քաղաքէ անտի · փոխանակ ըսելու 'ի քաղաքէն յայնմանէ ։

Մի սատակեսցուք, որպէս եղբարքն մեր յանապատի անդ ։ Ջնջել 'ի տեղւոջէ անտի զյիշատակ նոցա ։ Ինքն առ զկէս 'ի զօրաց անտի ։ Սկսան հուր հարկանել 'ի բանակի անդ ։ Ոչինչ էր 'ի ներքս 'ի տաճարի անդ ։ Իցեն բազումք 'ի մանկտւոյ այտի որ ընդ ակամբ հայիցին ։ Քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի ։ Մի զարհուրիր դու 'ի չարաչուք դահճէ այտի ։ Կարդացին առ տէր այց առնել հայել 'ի ժողովուրդ անդր որ կոխեալ եղեւ 'ի հեթանոսաց ։ Ակն ունիմ ապրել 'ի դժուարին հիւանդութենէ աստի ։



### Ձ· ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

278· Հ· Ի՞նչ դիտելիք կայ Ստացական դերանուանց վրայ ։

Պ· Ստացական դերանունները իմ, քո, մեր, ձեր, իւր, երբ կը գործածուին իբր դերանուն, այսինքն՝ մինակ, առանց գոյականի, կը նշանակեն իմինս, քուկինդ, մերինը, ձերինը, իրենը, և այն ատեն կ'ուզեն միշտ յօդ (ն), երբ տէր բայի և խնդիր են. եթէ ստորոգելի են, չեն առնուր յօդ, զոր օրինակ ·

Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն · Իմինները կը ճանչնամ, և իմիններէս կը ճանչցուիմ ։ Յիմմէ անտի առնուցու · Իմինէս պիտի առնէ ։ Առ զքոյդ · Քուկիններդ առ ։ Զքոյսդ 'ի քոյոց քեզ մատուցանեմք ։ Եթէ 'ի քումմէն ինչ երկմտիցես, 'ի նորայոցն հաւատասջիր ։ Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան ։ Ոչ թէ նա կարօտ մերոյս իցէ, այլ մեք ամենեւին նորայովքն ։ Իմ է այս ամենայն · Ձեր են աւետիքն ։

Նորա, նոցա, իւրեանց յատկացուցիչներն եւս կը գործածուին այս կերպով, ասոնք (բաց իւրեանցէ) նաև կը հոլովին, նորա, նորայոյ, նորայով, նոցա, նոցայոյ, նոցայով եւն, և կը նշանակեն անորը, անոնցը, իրենցը, զոր օրինակ ·

Ոչ եթէ նա ինչ կարօտ մերովքս իցէ, այլ մեք ամենեւին նորայովքն · Ոչ եթէ նա կարօտ է մերիններուն, այլ մենք բոլորովին (կարօտ ենք) անորիններուն ։ Զինչ հաւասարութիւն իցէ ձերայոցն ընդ նորայոցն · Ձերիններուն և անորիններուն մէջտեղ ի՞նչ հաւասարութիւն կայ ։ Անոնց հա-

Զհոգայցեմք ինչ ընդ նոցա, այլ նոցայոցն ·

մար հոգ չընենք, այլ անոնցներուն համար։ Զի՞նչ նման իցէ սորա մասն նորայոյն. Ասոր մասը անորին (անոր մասուան) ի՞նչ կը նմանի։ Որ զիւրեանցն խնդրեն. Անոնք որ իրենցը կը փնտռեն։

## Ը. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

—

### Որ բառին գործածութիւնը

279. Հ. Ի՞նչպէս կը գործածուի որ բառն իբրեւ ածական։

Պ. Որ, » բառը, կը գործածուի իբրեւ անորոշ ածական եւ իբրեւ հարցական դոյականի հետ, զոր օր՛.

Յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք. Ո՛ր տուն որ կը մտնէք, հոն մնացէք։ Վասն որոյ յուսոյ ամբաստանիմ. Ո՛ր յոյսին համար կ'ամբաստանուիմ։ Վասն որոյ պատճառանաց մեռանէրն՝ յայտ առնէր. Ինչ կամ որ պատճառի համար մեռնիլը կ'իմացունէր։ Որով լեզուաւ օրհնեմք, նովին եւ անիծանեմք. Ո՛ր լեզուաւ որ կ'օրհնենք, անով ալ կ'անիծեմք։ Յորմէ արարչէ երկիր լեալ է՝ ՚ի նմանէ եւ գազանքն արարեալ են. Ո՛ր արարչէ որ երկիրը ստեղծուած է, գազաններն ալ անկէ ստեղծուած են։ Ո ոք եւ երթայր առ նոսա՝ ուսուցանէին. Ով որ անոնց կ'երթար՝ կը սորվեցունէին։ Ո ոք յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից. Ով որ առաջ ինծի կու գայ, անիկա թագաւոր պիտի ընեմ։ Որ ոք լուծցէ ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ. Ով որ այս պատուիրաններէս մին կը լուծէ։ Յամսեանն հինգերորդի, որ օր եօթն էր ամսոյն։ Ո՞րք են զօրքն որ շուրջ զնովաւ կային։ Ո՞ր զօրքերն են որ անոր բոլորտիքը կեցած էին։ Յորմէ՞ քաղաքէ ես դու։ Վասն որո՞յ գործոյ քարկոծ առնէք զիս. Ո՞ր գործի համար զիս քարկոծել կ'ուզէք, եւն։



280. Հ. Ի՞նչ պաշտօն ունի որ կամ », իբրեւ յարաբերական դերանուն։

Պ. Որ կամ », իբրեւ յարաբերական դերանուն կը ցուցնէ խօսքին մէջ առաջ յիշուած բառ մը։

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ Յովսէփ, այրն Մարեմայ, որում խօսեցեալ էր զՄարիամ կոյս յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս։ Ետ ժամանակս եւ տեղիս որով զերծանիցին ՚ի մեղաց։

Այս օրինակներէն առաջնոյն մէջ որ կը յարաբերէ հայրը, այսինքն դրուած է անոր տեղ։ Երկրորդին մէջ որում կը յարաբերէ Յովսէփը, իսկ յորմէ կը յարաբերէ Մարիամը, Երրորդ օրինակին մէջ որով կը յարաբերէ ժամանակս եւ տեղիս բառերը։

281. Հ. Ի՞նչ տեսակ բառեր կը յարաբերէ յարաբերական դերանունը։

Պ. Յարաբերական դերանունը կրնայ յարաբերել ամէն դէմքի անուն կամ դերանուն, զոր օրինակ.

Ես որ խօսիմ։ Դու որ լսես։ Նոքա որք լուան։ Այրն որ խօսեցաւ։

282. Հ. Ի՞նչ կը կոչուի այն բառը, զոր կը յարաբերէ յարաբերական դերանունը։

Պ. Այն բառը զոր յարաբերական դերանունը կը յարաբերէ՝ յարաբերեալ կ'ըսուի. Նախընթաց օրինակներուն մէջ ես, դու, նոքա այրն բառերն յարաբերեալ են։

283. Հ. Ո՞ր բառին քով կը դրուի յարաբերականը ։

Պ. Յարաբերականը, բոլոր իրեն վերաբերեալ բառերով, կը դրուի յարաբերելոյն անմիջապէս քովը, զոր օրինակ.

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ Ամենեցուն որ ժողովրդեանն էին՝ աչք ի նա հայէին։ Ոչինչ աւելի քան զՄանի զոր ինքեանք մոլեցին՝ ասեն։ Եւ զայնոսիկ որ ընդ իւր անօրէնք էին՝ ըմբերանէր ։ Կուրիւն զորս ծեփեաց զոր կարծիս և եբաց՝ յայտ արար։ Նոյնս աստ զայնոսիկ որ յանձնարքն անբաշխութեան էին՝ կոչէ ։ Եկի զանէծս օրինացն որ զնա նոյնութիւն եդան՝ լուծանել։

284. Հ. Յարաբերականն իրեն վերաբերեալ բառերով, խօսքին ի՞նչ մասն է ։

Պ. Յարաբերականն իրեն վերաբերեալ բառերով է միջանկեալ նախադասութիւն և գլխաւոր նախադասութեան մէկ մասին, այսինքն տէր բային, առարկելոյն կամ խնդրոյն վրայ, կ'աւելցնէ մասնաւոր իմաստ մը, զոր օրինակ.

Հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Երկնաւոր հայրդ որ ծածուկ կը տեսնէ՝ քեզի յայտնապէս պիտի հատուցանէ ։

Այս խօսքին մէջ, գլխաւոր նախադասութիւն է, Հայրն քո երկնաւոր հատուսցէ քեզ. միջանկեալ նախադասութիւն է որ տեսանէ ի ծածուկ, և գլխաւոր նախադասութեան տէր բային վրայ, որ է՝ Հայրն քո երկնաւոր, կ'աւելցնէ մասնաւոր իմաստ մը, այսինքն՝ 'ի ծածուկ տեսնող ըլլալուն իմաստը ։



Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին՝ աչք 'ի նա հայէին. ժողովրդանոցին մէջ եղող ամենուն աչուըներն անոր կը նայէին ։

Այս խօսքին մէջ, գլխաւոր նախադասութիւն է, Ամենեցուն աչք 'ի նա հայէին. միջանկեալ նախադասութիւն է որ ի ժողովրդեանն էին, և գլխաւոր նախադասութեան «աչք» տէր բային յատկացուցչին վրայ, որ է՝ ամենեցուն, կ'աւելցնէ մասնաւոր իմաստ մը, այսինքն՝ ժողովրդանոցին մէջ ներկայ ըլլալուն իմաստը,

285. Հ. Հա՞րկ է որ միջանկեալ նախադասութիւնը միշտ գլխաւոր նախադասութեան մէջտեղ դրուի ։

Պ. Հարկ չէ. կրնայ գլխաւոր նախադասութիւնը բոլոր իւր մասերով յառաջ դրուիլ, և միջանկեալն՝ ետքը, բայց յարաբերականը գալու է յարաբերելոյն քով. ուստի վերի խօսքերը կրնանք այսպէս դարձունել ։

Հատուսցէ քեզ յայտնապէս հայրն քո երկնաւոր որ տեսանէ 'ի ծածուկ։ Ի նա հայէին աչք ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին ։

286. Հ. Ուրիշ ի՞նչ կերպով կրնան շարուիլ գլխաւոր և միջանկեալ նախադասութիւնք ։

Պ. Միջանկեալ նախադասութիւնը կրնայ առաջ դրուիլ, և գլխաւորն՝ ետքը, զոր օրինակ.

Որում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս պահանջեսցեն 'ի նմանէ. փոխանակ ըսելու, ի նմանէ որում բազում աւանդեցաւ՝ առաւել եւս պահանջեսցեն ։

Այսպէս են հետեւեալ օրինակները.

Որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, զորոյ դու վկայեցեր՝ ահաւասիկ նա մկրտէ. փոխանակ ըսելու, Ահաւասիկ մկրտէ նա՝ որ էր ընդ քեզ, եւն։ Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. փոխանակ՝ Ասէ ցնոսա որ զաղաւնիս վաճառէին։ Որոց ոգիքն 'ի մարմնոյն ելանէին՝ արկանէր զնոսա մի ըստ միոջէ 'ի գեհեն. փոխանակ՝ Արկանէր 'ի գեհեն զնոսա՝ որոց ոգիքն 'ի մարմնոյ ելանէին։

287. Հ. Կրնա՞յ յարաբերականը հեռու մնալ յարաբերեալէն։

Պ. Յարաբերականը կրնայ քիչ շատ հեռու մնալ յարաբերեալէն, եթէ խօսքին մէջ յայտնի կ'իմացուի թէ որն է յարաբերեալ, ինչպէս.

Ամենեքին կորեան որ ընդ նմայն էին. Զքաղաքն Յոպպէացւոց ամրացոյց որ 'ի վերայ ծովուն էր։

Յայտնի է թէ որ, առջի խօսքին մէջ, կը յարաբերէ ամենեքինը ոչ թէ կորեանը որ է բայ. երկրորդ խօսքին մէջ որ, եզակի բայով. ոչ կը յարաբերէ Յոպպէացւոց բառը որ է յոգնակի, և ոչ ամրացոյց որ է բայ, այլ՝ քաղաք բառը։

288. Հ. Կրնա՞յ յարաբերականը փոխել իր հոլովը։

Պ. Երբեմն յարաբերականը փոխելով իւր հոլովը կ'առնու յարաբերեալին հոլովը, զոր օրինակ.

Եւ զիս ջնջեա 'ի դպրութենէն՝ յորմէ գրեցեր. փոխանակ՝ յորում գրեցեր։ Յօրէն յայնմանէ՝ յորմէ գերեաց։ Յօրէ յորմէ եհան։ Յօրէ՝ յորմէ լուաք։ Յօրէն յայնմանէ՝ յորմէ եկի յանապատս. փոխանակ ըսելու, յորում գերեաց, եհան, լուաք, եկի։ Առ զիս յերկրէն՝ ուստի ծնեալ էի. փոխանակ՝ ուր ծնեալ էի։ Յայտ է Յուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառ-



եաց. փոխանակ՝ յորմէ ազգէ եւն։ Լսել զամենայն՝ զոր հրամայեալ է քեզ 'ի տեառնէ. փոխանակ՝ որ հրամայեալ է։ Զոր ինչ և ձեզ հաճոյ թուեսցի՝ զայն գործեցէք։ Որոց նստէին յաշխարհին և 'ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա. փոխանակ՝ Լոյս ծագեաց նոցա՝ որ նստէին, եւն։ Ամենեցուն որոց էք 'ի Հռոմ սիրելեաց Աստուծոյ. փոխանակ՝ ամենեցուն որ էք. եւն։ Ի վերայ միոյ 'ի լերանց յորոց ասացից քեզ. փոխանակ՝ Զորոց ասացից քեզ, եւն։

289. Հ. Կրնա՞յ յարաբերականին եզակին յարաբերել նաև յոգնակի բառ։

Պ. Յարաբերականին եզակի ուղղականը և հայցականը կրնան յարաբերել նաև յոգնակի բառ, մանաւանդ եթէ յարաբերեալն է դերանուն, զոր օրինակ.

Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք։ Մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք։ Զգործսն զոր ես գործեմ։ Ամենայն սողնոց որ սողին 'ի վերայ երկրի։ Զչարիսն զոր հասոյց 'ի վերայ ազգին։

Եթէ յարաբերեալն է անեզական բառ, յարաբերականն ուրիշ հոլովներու մէջ ևս կրնայ դրուիլ եզակի, զոր օրինակ.

Հասին աւետեացն որում ցանկային։ Ի կործեացն կասկածանաց յորմէ երկնչիմ։

Աւետիք, կործիք, անեզական անուններ են։

290. Հ. Ի՞նչ բանի զօրութիւն ունի որ յարաբերականը դիմաւոր բայով։

Պ. Որ յարաբերականը դիմաւոր բայով, ունի աշխարհաբարին ող և ած վերջաւորած բառերուն զօրութիւնը, զոր օրինակ.

Այրն որ եկն · Եկող մարդը : Ծառայքն որ տեսին զայս · Ասիկա տեսնող ծառաները : Զինուորն որ սպան զնա · Զանի սպաննող զինուորը :

291· Հ· Այսպիսի խօսքերու մէջ կրնա՞յ յարաբերականն իր մասերով դրուիլ յարաբերեալէն առաջ։

Պ· Յարաբերականն իր մասերով կրնայ երբեմն [illegible] [illegible] դրուիլ յարաբերեալէն առաջ, զոր օրինակ ·

Որ առաքեաց զիս հայր · փոխանակ ըսելու, Հայրն որ առաքեաց զիս · Զիս ղրկող հայրը · Որ բարւոք վերակացու լինին երիցունք · այսինքն, Երիցունք որ բարւոք վերակացու լինին · Աղէկ վերակացութեան ընող երէցները : Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք : Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին · այսինքն, Առաքեալք որ յԵրուսաղէմ էին : Խղճէին 'ի նմանէ որ 'ի Թլփատութենէ անտի հաւատացեալք · այսինքն, Հաւատացեալք որ 'ի Թլփատութենէ անտի (էին) : Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ամենեքին · այսինքն, Ամենեքին որ ընդ իս են :

292· Հ· Այսպիսի խօսքերու մէջ, եթէ յարաբերեալն հոլոված է, ինչ կ'ըլլայ յարաբերականը :

Պ· Այսպիսի խօսքերու մէջ, եթէ յարաբերեալն է հոլոված, այսինքն՝ բաց ուղղականէ ուրիշ հոլով է, յարաբերականը կ'առնու յարաբերելոյն հոլովը, իսկ յարաբերեալը կը փոխուի ուղղականի, զոր օրինակ ·

Մարգարէանայ զոր առյապա անցս ընդ Սաւուղ անցանելոց էին · փոխանակ ըսելու, Մարգարէանայ զանցս որ առյապա անցանելոց էին ընդ Սաւուղ : Որոց առ գերութեամբ մարգարէից՝ առաջին է սա · այսինքն, Առաջին է սա մարգարէից որ (էին) առ գերութեամբ : Ապստամբութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամենայն Հրէայք են · այսինքն, Ապստամբութիւն ուսուցանես ամենայն Հրէից որ (են) 'ի հեթանոսս : Մարգարէքն որք վասն որոյ 'ի ձեզ լինելոց էին շնորհացն՝ մարգարէանային · այսինքն, Մարգարէանային վասն շնորհացն որ լինելոց էին 'ի ձեզ. Ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալսն էին · այսինքն՝ Ոչ ելի առ առաքեալսն որ էին յառաջ քան զիս : Դարձաւ առ որս նստէին եղբարսն · այսինքն, Դարձաւ առ եղբարսն որ նստէին :



293· Հ· Յարաբերեալը միշտ դրուելո՞ւ է խօսքին մէջ :

Պ· Գերանուն յարաբերեալը կ'իմացուի շատ անգամ լռելեայն, զոր օրինակ ·

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ · այսինքն, Նա որ ձեզ լսէ · Ձեզ մտիկ ընողը զիս մտիկ կ'ընէ : Որ ընթեռնուն 'ի միտ առցէ · այսինքն, Նա որ ընթեռնու · Կարդացողը թող հասկնայ : Որ ոչն գործիցէ՝ և կերիցէ մի · այսինքն, Նա որ ոչ գործէ · Զգործողը թող չուտէ : Որ ետեսն զիս՝ ետես զհայր իմ. այսինքն, Նա որ ետես զիս · Զիս տեսնողը հայրս տեսաւ : Զոր լուաք և տեսաք՝ պատմեմք ձեզ · այսինքն, Զայն զոր լուաք և տեսաք · Ինչ որ լսեցինք և տեսանք (Թրքաբանութեամբ՝ լսածնիս և տեսածնիս) ձեզի կը պատմենք : Զոր ասեն՝ այսպիսի ինչ է · այսինքն, Այն ինչ զոր ասէ · Ըսածը սա է : Զոր ժողովեցերն ո՞ւմ լինիցի · այսինքն, Այն զոր ժողովեցեր · Ժողվածդ որո՞ւ պիտի ըլլայ :

294․ Հ․ Երբ դերանուն յարաբերեալ մը լռելեայն կ'իմացուի, անոր տեղը լեցնելու համար ընդհանրապէս ի՞նչ կ'ըլլայ։

Պ․ Երբ դերանուն յարաբերեալ մը կ'իմացուի լռելեայն, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ կը դրուի ՚ յօդը, զոր օրինակ․

Որ ննջենն՝ գիշերի ննջեն։ Որ զիսն սիրեն։ Որ զնովաւն էին։ Որ շուրջն կային զնովաւ։ Որ զհետն երթային։ Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք ձեզ։ Որոց պարտն էր խնդալ՝ լան․ փոխանակ, Նոքա որ ննջեն՝ գիշերի ննջեն։ Նոքա որ զիս սիրեն, որ էին զնովաւ, որ շուրջ զնովաւ կային, որ զհետ երթային։ Զայնոսիկ զոր լուաք և տեսաք՝ պատմեմք ձեզ։ Նոքա որոց պարտ էր խնդալ՝ լան։ (Տես և Թիւ 227․ 2°։)

295․ Հ․ Եթէ լռելեայն իմացուած դերանուն յարաբերեալն հոլոված է, յարաբերականն ի՞նչ կ'ըլլայ։

Պ․ Եթէ լռելեայն իմացուած դերանուն յարաբերեալն հոլոված է, յարաբերականն ընդհանրապէս կ'առնու անոր հոլովը, զոր օրինակ․

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր․ այսինքն, Այնմ որ խնդրէ 'ի քէն՝ տուր․ Քենէ խնդրողին տուր։ Դուք երկիր պագանէք որում ոչն գիտէք․ մեք երկիր պագանեմք որում գիտեմքն․ այսինքն, Դուք երկիր պագանէք այնմ զոր ոչ գիտէք․ մեք երկիր պագանեմք այնմ զոր գիտեմք։ (Աշխարհաբար թրգմանութեամբ․ Դուք չգիտցածնուդ երկրպագութիւն կ'ընէք․ մենք գիտցածնուս երկրպագութիւն կ'ընենք)։ Քաղցր է տէր որոց սպասեն նմա․ այսինքն, Այնոցիկ որ սպասեն։ Դուք ոչ մտանէք, և որոց մտանենն՝ չտաք թոյլ մտանել․ այսինքն, Այնո-



ցիկ որ մտանեն։ Եւ առ յորոց ածերն ձեռամբ իւրով պատարագս․ այսինքն՝ Առ ձեռամբ իւրով պատարագս յայնցանէ զոր ածէր․ Բերածներէն իր ձեռքովն ընծայ առաւ։ Երանի որում թողութիւն եղեւ մեղաց․ այսինքն՝ Երանի այնմ որոյ թողութիւն եղեւ մեղաց։ Վասն որոց առաքեցանն 'ի Յովհաննէ․ այսինքն, Վասն այնոցիկ որ առաքեցան։ Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ որոց տեսերն և լուար․ այսինքն, Եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ այնոցիկ զորս տեսեր։ Ոմանք յորոց անդն կային․ այսինքն, Ոմանք 'ի նոցանէ որ անդ կային։ Կարդացին առ որ յամենայն ժամանակի օգնական լինէր ազգին իւրեանց․ այսինքն, Կարդացին առ նա որ, եւ։ Կրել պատուհաս ընդ որոց գործիցէ․ այսինքն, Կրել պատուհաս ընդ այնց զորս գործիցէ։

296․ Հ․ Կրնա՞յ յարաբերականը չառնուլ լռելեայնե իմացուած յարաբերելոյն հոլովը։

Պ․ Կրնայ, զոր օրինակ․

Վասն որ հարկանէ զակն։ Զի՞նչ բան տաց պատասխանի որ առաքեացն զիս։ Որում խնդրէ 'ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս։ Որ 'ի ներքս անդ էին՝ ինքնին Յուդայ նետ և զէն մատուցանէր։ Ծագեա զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ որ ուղիղ են սրտիւք։ Վա՜յ որք իջանեն յԵգիպտոս։ Երանի՜ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան։ Զիա՞րդ դժուարին է որ զինչս ունիցին մտանել յարքայութիւն Աստուծոյ։

Ըստ նախընթաց կանոնին, պէտք է ըսել։

Վասն որոյ հարկանէ զակն։ Զի՞նչ տաց պատասխանի որում առաքեացն զիս։ Յորմէ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս։ Որոց 'ի ներքս էին։ Որոց ճանաչեն զքեզ։ Որոց ուղիղ են սրտիւք։ Վա՜յ որոց իջանեն։ Երանի՜ որոց քաղցեալ եցեն։ Որոց զինչս ունիցին։

## Ս, Դ, Ն, գիրերուն գործածութիւնը

297. Հ. Ի՞նչ գիտելիք կայ Ս, Դ, Ն գիրերուն գործածութեան վրայ ։

Պ. Ս, Դ, Ն գիրերը, որ ըստ ոմանց, կը կոչուին դիմորոշ յօդ, են դերանուանական նշաններ, և կը գործածուին,

1° փոխանակ այս, այդ, այն, ցուցական ածականաց, դոյականին վերջը կցուելով, զոր օրինակ.

*Տեսանեմք զաշխարհս 'ի պէս պէս կերպարանս. այսինքն՝ զաշխարհս զայս ։ Զարիքս որ լինին՝ ուստի՞ իցեն. այսինքն՝ Զարիքս այսոքիկ ։ Քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. այսինքն, Քոյրդ իմ այդ ։ Առի, առ զմանուկդ և զմայր նորա. այսինքն, զմանուկդ զայդ ։ Այս երեք ամք են յորմէ հետէ գամ խնդրել պտուղ 'ի թզենւոջդ և ոչ գտանեմ, արդ կտրեա զդա, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ. այսինքն, ի թզենւոջդ յայդմիկ, զերկիրդ զայդ ։ Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս. այսինքն, Մանկտւոյդ այդմիկ ։ Դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի. այսինքն, Դուրքդ այդոքիկ, մանկունքս այսոքիկ ։*

2° Ս, Դ, Ն գիրերը կը դրուին ոչ յարաբերականէն անմիջապէս առջը եկող բառին վրայ, երբ դերանուն յարաբերեալ մը ես, դու, նա, եմ, կ'իմացուի լռելեայն ։ (Տես թիւ 300) ։

298. Հ. Ս, Դ, Ն գիրերէն ո՞րը ո՛ր դերանուան տեղ կը դրուի ։

Պ. Ընդհանրապէս Ս գիրը ես, մեք, այս դերանուանց տեղ կը դրուի, Դ գիրը՝ դու, դուք, այդ



դերանուանց, Ն գիրը՝ նա և այն դերանուանց տեղ, զոր օրինակ.

*Որ խօսիմս ընդ քեզ ։ Որ կարողքս եմք. փոխանակ, Ես որ խօսիմ, Մեք որ կարող եմք ։*

*Որ աստս է ։ Որ խօսինս. այսինքն, Սա որ աստ է, Սոքա որ խօսին ։*

*Զոր խորհեցայս առնել ։ Մի ոք աղարտեսցէ զոր ասեմս ։ Զորոց մեքս խօսիմք. փոխանակ, Այս ինչ զոր խորհեցայ, Զայս ինչ զոր ասեմ, Այսոքիկ զորոց մեք խօսիմք ։*

*Որ ձիթենիդ վայրենի էիր ։ Զոր եսդ սիրեմ ։ Որ 'ի Գէթդ էք ։ Որ չեւդ էք սրբեալ. փոխանակ, Դու որ ձիթենի վայրենի էիր, Դու զոր ես սիրեմ, Դուք որ էք 'ի Գէթ ։ Դուք որ չեւ էք սրբեալ ։*

*Որ 'ի քէնդ առաքեցաւ ։ Որ շուրջ զմեօքդ բնակեալ են ։ Որ իբրեւ զքեզդ իցեն, այսինքն, Դա որ 'ի քէն առաքեցաւ, Դոքա որ շուրջ զմեօք բնակեալ են, Դոքա որ իբրեւ զքեզ իցեն ։*

*Զոր դուդ առնես ։ Հաստատուն կաց յոր ուսարդ ։ Ընդ որս դուքդ զարմանայք ։ Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ. փոխանակ, Այդ ինչ զոր դու առնես. Հաստատուն կաց յայդմ զոր ուսար, Այդոքիկ ընդ որս դուք զարմանայք ։*

*Որ 'ի նմայն ծնեալ է ։ Որում և դուն վկայեցեր ։ Որ զնովաւն էին ։ Յորս դուքն պանծացեալ էք. փոխանակ, Նա որ 'ի նմա ծնեալ է, Նա որում դու վկայեցեր, Նոքա որ զնովաւ էին, Նոքա յորս դուք պանծացեալ էք ։*

*Զոր մեքն քարոզեմք ։ Զոր Աստուածն կամի ։ Մեք ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել. փոխանակ, Այն զոր մեք քարոզեմք, Այն ինչ զոր Աստուած կամի, Ոչ կարեմք զայնոսիկ զոր տեսաք և լուաք՝ չխօսել ։*

299. Հ. Միշտ լռելեայն իմացուած յարաբերեալին տեղ կը գործածուին ս, դ, ն գիրերն։

Բ. Երբեմն կը գործածուին նաեւ, երբ յարաբերեալը գրուած է խօսքին մէջ, զոր օրինակ.

Ես որ կապեալս եմ։ Զայրն զորմէ դուքդ ասէք։ Ոմանք 'ի սոցանէ որ աստ կան։ Կանայքն որ շուրջ զնովաւն կային։ Դարձայց 'ի տունն իմ ուստի ելին։ Զի՞նչ է այդ զոր դուքդ գործէք։

Այս խօսքերուն մէջ ս, դ, ն գիրերն աւելորդ են, վասն զի յարաբերեալներն յայտնի են։

300. Հ. Ս, դ, ն գիրերը կրնան գրուիլ նաեւ ուրիշ բառերէ ետքը։

Բ. Ս, դ, ն գիրերը կը գրուին նաեւ

1°. Որ, ինչ, զինչ բառերէն անմիջապէս ետքը եկող բառին ծայրը, զոր օրինակ.

Զոր ինչ տեսանեմքն՝ ասեմք։ Զոր ինչ ես գործեմ։ Այր դու, չգիտեմ զի՞նչ ասեսդ։ Գիտէ՞ք զինչ արարիդ։

2°. Մինչ, յորժամ, ուր, ուստի, որպէս, իբրեւ բառերէն անմիջապէս ետքը եկող բառին ծայրը, զոր օրինակ.

Մինչ էաքն մարմնով։ Մինչդեռ կայրն կախեալ։ Մինչ ինքնն միայն էր։ Մինչդեռ այգն կամէր լինել։

Յորժամ յարեաւն 'ի մեռելոց։ Յորժամ քաղցեաւն։ Յորժամ զՅօբն կամեցաւ փորձել։ Յորժամ եմս հեռի։

Ուր եմն երթամ՝ դուք ոչ կարէք գալ։ Ուր եմն իցեմ։ Ուր երթամն գիտիցէք։ Ուր Քրիստոսն նստի։

Ուստի եմն գիտէք։ Զի մի տրտմութիւն կրիցեմ ուստի արժանդ է ինձ ուրախ լինել։



Ոգի մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։ Զգործ տեառն գործէ որպէս և ես։ Որպէս և Յոբն ասէ։ Ելից և արարից որպէս միշտն։ Որպէս յաճախագոյնն ասացաւ։ Որպէս և կանխաւն ասէի։ Գուցէ եկեալ ոչ որպիսիս կամիցիմն գտանիցեմ զձեզ։ (*)

3°. Ն գիրը կը գրուի զի շաղկապէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ, երբ զի շաղկապով յառաջ բերուած խօսքն ունի աներեւութի զօրութիւն, զոր օրինակ.

Ոչ այնու միայն զարմանալի է (Աստուած) զի ածն 'ի չգոյէ 'ի գոյ զչգոյսն, այլ զի և անարատ պահէ զեղեալսն. այսինքն, Ոչ միայն զարմանալի է վասն ածելոյն 'ի գոյ, ևն։ Ո՞չ շատ իցէ քեզ այն զի աւերեցերն դու զԵգիպտոս. այսինքն, Ո՞չ շատ իցէ քեզ աւերելդ քո զԵգիպտոս։ Ոչ զի մեռաւն, այլ զի խաչեցաւն այն աւելի են զարմանք. այսինքն, Ոչ մեռանելն, այլ խաչելն աւելի զարմանք են։ Ու զի եկինն միայն, այլ առաւել եւս զի համարձակեցանն. այսինքն, Ոչ գալն նոցա միայն, այլ առաւել եւս համարձակելն։ (Տես և թիւ 307)։

---

(*) Մինչ, յորժամ, ուր, ուստի, որպէս բառերէն ետքը ս, դ, մանաւանդ ն, գրոց գրուելուն պատճառը սա է որ, այս բառերէն առաջ կ'իմացուի լռելեայն բառ մը։ Մինչ, յորժամ՝ 'ի ժամանակին յորում կը նշանակէ, ուր՝ 'ի տեղւոջ յորում կամ յոր, ուստի՝ 'ի տեղւոջէն յորմէ, որպէս՝ կը նշանակէ ըստ այնմ՝ ըստ որում։

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

—

## ԻՆՉ ԲԱՌԻՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

301. Հ. Քանի՞ կերպով կը գործածուի Ինչ անորոշ դերանունը։

Պ. Ինչ անորոշ դերանունը կը գործածուի 1° Ածականի հետ և կը նշանակէ բան մը, զոր օրինակ.

Եթէ օձ չար ինչ արարած էր, ապա չգտանէր ինչ ամենեւին 'ի նմա օգտակար. Եթէ օձը չար բանի մը ստեղծուած էր, անոր մէջ օգտակար բան մը ամենեւին չէր գտնուեր։

2° Ինչ գոյականի հետ ունի անորոշ նշանակութիւն, և կը նշանակէ մը, եթէ եզակի է գոյականը. եթէ յոգնակի է գոյականը, Ինչ աշխարհաբարի մէջ ամենեւին բան մը չնշանակեր, զոր օրինակ.

Կանեփուկն բոյս ինչ է, որոյ սերմն դեղ է, և կաղանչանան ազգ ինչ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դեղոց՝ մաղձադեղ է բուժիչ 'ի մահուանէ. Կանեփուկը բոյս մըն է որուն սերմը դեղ է. կաղանչանին մէկ տեսակն ալ առանձին սպանող է. բայց ուրիշ դեղերու հետ խառնուելով մաղձադեղ կ'ըլլայ և մահուանէ կ'ազատէ։

յԵւրոպն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուսնին աճէ, ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ. Եւրոպայի մէջ տեղեր կան որոց ջուրը լուսնին աճելուն համեմատ կ'աճի, լեցուելուն համեմատ կը լեցուի, և նուազելուն համեմատ կը նուազի։



Բանք ինչ են իմ ընդ քեզ. Քեզի հետ խօսք ունիմ։ Եթէ նշանս ինչ որ տեսանիցէք, ո՞չ հաւատայք. Եթէ նշաններ չէք տեսներ չէ՞ք հաւատար։ Ուտել արմատս ինչ խոտոց. Խոտերու արմատներ ուտել։

3° Ինչ կը գործածուի ստորոգելիներու, մակբայներու և բայերու հետ, երբ խօսքն է Թէական, բացասական և կամ հարցական, և աշխարհաբարի մէջ բան մը չնշանակեր, զոր օրինակ.

Եթէ բռնաւոր ոք ինչ էր (սատանայ), ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան և ապա մխէր 'ի փորձութիւնս. Եթէ (սատանան) զօրաւոր ըլլար, Աստուծմէ արտօնութիւն չէր խնդրեր (Յոբը) փորձելու համար։ Եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր. Եթէ մարմնաւորներուն հնար ըլլար իրենց կերպարանքը փոխել, նախ մարդ իր կերպարանքը կը փոխէր ինչ բանի որ կ'ուզէր։ Դպրութիւն կամ ճարտարութիւն կամ բժըշկութիւն ոչ եթէ անձինք ինչ են, այլ արգասիք անձանց։ Քերականութիւնը բանաստեղծութիւնը, բժշկականութիւնը ոչ եթէ գոյութիւն ունեցող բաներ են, այլ գոյութիւն ունեցող բաներուն արդիւնքն են։ Եթէ չար ինչ էր օձ, ապա չգտանէր ինչ ամենեւին 'ի նմա օգտակար. Եթէ օձն 'ի բնէ չար ըլլար, անոր մէջ ամենեւին օգտակար բան մը չէր գտնուեր։ Ոչ ընդ վայր ինչ ասացեալ է բան իմաստնոյն թէ, եւն. Իմաստնոյն խօսքը վայրապար ըսուած չէ թէ, եւն։ Մի 'ի չարս ինչ զբանս ծախեսցուք. Ի չար չծախենք մեր խօսքը։ Ոչ եթէ անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ իրաւամբ զճշմարիտն ուսանել. Ոչ թէ կը ջանանք անիրաւութեամբ յաղթել, այլ իրաւամբ ճշմարիտը սորվիլ։ Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ. Զոհը որ կ'ընեմ օգուտ ունի՞։

Մարդիկ յանձանց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, եթէ յԱստուծոյ լեալ իցեն այնպիսի․ Մարդիկ իրենցմէ՞ ունին այս կիրքերը, թէ Աստուծմէ այնպէս եղան։ Յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու՝ զկեսուր իւր, և կին՝ զայր, մի ինչ տարցին ընդ միտ որ անարգեցանն․ Երբ աղջիկը կ՚անարգէ մայրը, և հարսը՝ կեսուրը, եւ կինն՝ այրը, թող չմտածեն անարգուողները։ Ոչ խօսէին ինչ և ոչ զմտաւ ինչ ածէին․ Ոչ կը խօսէին, ոչ ալ կը մտածէին։ Ոչինչ այսպիսի զմտաւ ածին, և ոչ խօսեցան ինչ․ Այսպիսի բան մը չխորհեցան, ոչ ալ խօսեցան։

---

## ԵՄ ԲԱՅԻՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

302. Հ. Բուն ի՞նչ տեսակ բայ է եմ։

Պ. Եմ բուն էական կամ գոյական բայ է, և ստորոգելին կը կապէ տէր բայիին հետ, զոր օրինակ․ սա խօսքին մէջ, Աստուած արդար է, կամ Արդար է Աստուած, էն էական բայ է և կը կապէ արդար ստորոգելին Աստուած տէր բայիին հետ։

Ես եմ Աստուած։ Հայր իմ ես դու։ Նա է տէր։ Դուք բարեկամք իմ էք։ Նոքա չեն աստուածք։ Մինչ թշնամիք էաք մեք Աստուծոյ։ Կակուղ էին բանք նոցա։ Որ յառաջն թշնամիք էին միմեանց, այնուհետեւ եղեն բարեկամք։ Եղէ ես համր։ Եղերուք կատարեալք։ Ո՞ղջ իցէ հայր իմ։ Իմ է երկիրս։ Քո՞ իցէ մատեանդ։

Բոլոր այս խօսքերուն մէջ եմ էական բայ է։

303. Հ. Միշտ էական բա՞յ է եմ։

Պ. Եմ շատ անգամ չէզոք բայ է, և կը նշանակէ․



1° Գտնուել (տեղ մը), ներկայ ըլլալ, և անատեն խօսքին մէջ չկայ ստորոգելի, զոր օրինակ․ Աստուած ամենայն ուրեք է․ հոս էն կը նշանակէ ներկայ է, կը գտնուի։

Հայր մեր որ յերկինս ես։ Ուր երկու կամ երեք ժողովեալ իցեն յանուն իմ, անդ եմ (կը գտնուիմ) ես ՚ի մէջ նոցա։ Անդ էր (ներկայ էր) այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Որ զփափուկսն, զգեցեալ են՝ ՚ի տունս թագաւորաց են (կը բնակին, կը գտնուին)։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում մինչդեռ իցես (կը գտնուիս) ընդ նմա ՚ի ճանապարհի։ Եղաք (մնացինք, կեցանք) առ նոսա աւուրս եօթն։

Եմ կը նշանակէ

2° Գոյութիւն ունենալ․ կայ ըլլալ, զոր օրինակ․

Են (կան) ոմանք որ ոչ հաւատան։ Հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած թէ է (կայ) Աստուած։

304. Հ. Ուրիշ ի՞նչ բայի տեղ կը գործածուի եմ, և ինչպէս։

Պ. Եմ շատ անգամ կը գործածուի ունիմ բային տեղ, բայց անատեն ստացեալն իբր տէր բային կը դրուի ուղղական, իսկ ստացիչը՝ սեռական․ կամ, ուրիշ բառերով ըսենք, ունիմին տէր բային դնելու է սեռական, իսկ սեռի խնդիրն՝ ուղղական․ զոր օրինակ, փոխանակ ըսելու, Ունէր նա դուստր մի, կրնայ ըսուիլ, Էր նորա դուստր մի։ Հոս, ինչպէս կը տեսնուի, ստացիչը, որ է նա, սեռական դրուած է, իսկ ստացեալը, որ է, դուստր իբր տէր բայի՝ ուղղական։

Են իմ անդ եղբարք հինգ · Հոն հինգ եղբայր ունիմ ։ Իբրեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ · Հովիւ չունեցող ոչխարներու պէս ։ Ո՞վ իցէ կին որոյ իցեն դրամք տասն ․ Ո՞ր կինն է որ տասը դրամ ունի ։ Առն միոջ էին երկու որդիք · Մարդ մը երկու որդի ունէր ։ Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես · Հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր ։ Այլ եւս ոչխարք են իմ · Ուրիշ ոչխարներ ալ ունիմ ։ Էր նորա ստացուած բազում · Շատ ստացուած ունէր ։ Եղեն նոցա ուստերք և դստերք · Մանչեր և աղջիկներ ունեցան ։

305· Հ· Երբեմն ի՞նչ բառ կը գործածուի փոխանակ ոչ է, չէ բային ։

Պ· փոխանակ ոչ է, չէ բային, որ էական բային սահմանական ներկայի եզակի Գ· դէմքին բացասականն է, կը գործածուի երբեմն չիք բառը, զոր օրինակ ·

Ես եմ Աստուած և չիք այլ ոք · Ես եմ Աստուած և ուրիշ մը չկայ ։ Չիք ոք բարի բայց մի Աստուած ։ Չիք հնար ։ Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի ։

---

Գոյ ԲԱՅԻՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

306· Հ· Ի՞նչ տեսակ բայ է գոյ, և ի՞նչ կը նշանակէ ։

Պ· Գոյ է չեզոք բայ, և կը նշանակէ գոյութիւն ունենալ, ըլլալ, և աշխարհաբար կը թարգմանուի շատ անգամ կայ բայիւ, երբեմն եւս, էական բային պէս (Տես թիւ 212), կը նշանակէ ունենալ ։

Ասաց անզգամն 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ (չկայ) Աստուած ։ Ոչ գոյր (չկար) նոցա տեղի յիջեւանին ։ Մի համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձէնջ · գոյ (կայ)



որ չարախօս կայ զձէնջ, Մովսէս՝ յոր դուքն յուսացեալ էք ։ Այլ և ոչ թէ հոգի սուրբ գոյցէ՝ լուեալ է մեր · Ու ոչ իսկ լսած ենք թէ Հոգի սուրբ կայ ։ Աղուեսուց որջք գոն և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ (տեղի) ուր դիցէ զգլուխ իւր · Աղուեսներն որջեր ունին, և երկնից թռչունները՝ բոյներ, բայց որդին մարդոյ չունի տեղ մը ուր գլուխը դնէ ։

---

## Դ· ԲԱՅ

## 1· ԲԱՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

307· Հ· Կա՞ն մասնաւոր գիտելիք բայերուն ներկային, անկատարին, կատարեալին և հրամայականին վրայ ։

Պ· Բայերուն ներկային, անկատարին, կատարեալին և հրամայականին վրայ չկան մասնաւոր գիտելիք · անոնք ունին աշխարհաբարին մի և նոյն ժամանակներուն զօրութիւնը, և կը գործածուին անոնց պէս, զոր օրինակ ·

Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, և ես գործեմ · Հայրս մինչեւ հիմայ կը գործէ, ես ալ կը գործեմ ։

Յառաջագոյն հայհոյիչ էի և հալածիչ · այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան գործէի · առաջ հայհոյիչ և հալածիչ էի, բայց ողորմութիւն գտայ, քանզի չգիտնալով կը գործէի ։ Զցայգ և զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ · Ձեզմէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար գիշեր ցերեկ կը գործէինք ·

Եթէ արժանի ինչ մահու գործեցի, ոչ հրաժարեմ ի մե-

ռանելոյ. Եթէ մահու արժանի բան մը գործեցի, մեռնելու չեմ փախնիր։ Որդեակ, զի՛նչ գործ գործեցեր դու ընդ մեզ. Որդեակ, ի՛նչ գործ գործեցիր մեզի։

Որդեակ, երթ այսօր գործեա յայգւոջ. Որդեակ, այսօր գնա այգին գործէ։ Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ. Ամէն բան առանց տրտնջելու և մռմռալու գործեցէք։

308 Հ. Ի՞նչ գիտելիք կայ ապառնւոյն վրայ։

Պ. Ապառնին, այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձևը զոր ապառնի կոչել սովորութիւն եղած է, բուն կամ հասարակ պատմական ապառնի չէ, այլ կը գործածուի,

1° Բան մը ընելու անորոշ դիտաւորութիւն ցուցնելու, և կը պատասխանէ աշխարհաբարին ապառնի նշանակութեամբ գործածուած ներկային, զոր օրինակ.

Լուայց քեզ, յորժամ չարախօսք քո եկեսցեն. Քեզի տես կ'ընեմ (քու դատդ կը տեսնեմ), երբ ամբաստանողներդ կու գան։ Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լիցի, կոչեցից զքեզ. Դուն հիմա գնա, երբ յարմար ատեն ըլլայ, կը կանչեմ զքեզ։ Զայս ամենայն տաց քեզ, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ. Այս ամէնը քեզի կու տամ, եթէ երեսի վրայ իյնալով ինծի երկրպագութիւն ընես։ Ոչ փորձեսցես զՏէր. Տէրը չես փորձեր։

2° Ապառնին կը գործածուի ստորադասական կամ մաղթական, այսինքն *գուշակելով* ըսուած խօսքերու մէջ, զոր օրինակ.

Արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր. Արեգակը պիտի խաւարի, և լուսինն իր լոյսը պիտի չտայ։ Եղիցի կոյր և մի տեսցէ զարեւ. Կոյր պիտի ըլ-



լայ, և արեւ պիտի չտեսնէ։ Եկեսցեն յարեւելից և յարեւմտից, և բազմեսցին ընդ Աբրահամու, եւն. Արեւելքէն և արեւմուտքէն պիտի գան, և պիտի նստին Աբրահամու հետ, եւն։

309. Հ. Բուն ի՞նչ ժամանակի տեղ կը գործածուի ապառնին։

Պ. Ապառնին կը գործածուի բուն ստորադասականի տեղ, և կը պատասխանէ աշխարհաբարին ստորադասականին, զոր օրինակ.

Խորհուրդ արարին զի զկապեալն սպանցեն. Խորհուրդ ըրին որ կապեալներն սպաննեն։ Զի՞նչ կամիս զի արարից քեզ. Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ։ Կամի՞ս զի երթիցուք. Կ'ուզե՞ս որ երթանք։

310. Հ. Ո՞րն է գրաբարին բուն կամ հասարակ պատմական ապառնին։

Պ. Գրաբարին բուն կամ հասարակ պատմական ապառնին է լոց վերջաւորեալ ապառնի ընդունելութիւնը եմ, էի և էցեմ էական բայով, ուստի գործելոց եմ, գործելոց էի, գործելոց էցեմ, կը նշանակեն պիտի գործեմ, պիտի գործէի։ (Տես և թիւ 161)։

Իբրև գիտաց Յիսուս թէ՝ գալոց են յափշտակել զնա զի արասցեն թագաւոր. Յիսուս երբ իմացաւ թէ պիտի գային յափշտակել զինք որ թագաւոր ընեն։ Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. Պիտի լսէք պատերազմներ և պատերազմի լուրեր։ Մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և առնելոց զաշխարհս. Դիւաց մոլորութիւնը Հայոց դիւցապաշտները խաբեց թէ դեւերը բանտարկած են Արտաւազդ անուն մէկը, որ

ցարդ կենդանի է, և պիտի ելլէ և պիտի տիրէ աշխարհիս։ Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքինի լինելոց էր, և զԵսաւայ՝ թէ յանպիտանութիւնս կործանելոց էր. Առաջուց գիտցաւ թէ Յակոբ առաքինի պիտի ըլլայ, և Եսաւ անպիտանութեանց մէջ պիտի իյնայ։ Յառաջագոյն հայեցեալ 'ի նախանձաւորութիւնն Յովսիայ՝ ազդ արար կանխագոյն թէ յառնելոց է 'ի նոցանէ թագաւոր, որ զկռապաշտութիւն որդւոցն Իսրայելի եղծանիցէ. Յովսիայի նախանձաւորութիւնը յառաջագոյն տեսնելով՝ կանխաւ իմացուց թէ անոնցմէ թագաւոր մը պիտի ելլէր որ Իսրայելի որդւոց կռապաշտութիւնը ջնջէր։

Սա է որ զկնի իմ գալոցն էր. Աս է որ ինէ ետքը պիտի գայ։ Մովսէս և Եղիա երեւեալ փառօք՝ ասէին զելիցն նորա զոր կատարելոց էր յԵրուսաղէմ. Մովսէս և Եղիա փառօք երեւնալով՝ կը խօսէին այն բաներուն վրայ զոր Երուսաղէմի մէջ պիտի կատարէր։ Յառաջագոյն խրատէր զնոսա, թէպէտ գիտէր թէ չէին նմա լսելոց. Զանոնք առաջուց խրատեց, թէպէտ գիտէր թէ պիտի չլսէին իրեն։ Վասն Կիւրոսի Պարսկի ասէր թէ արձակելոց էր զգերիս ժողովրդեանն. Պարսիկ Կիւրոսի համար կ'ըսէր թէ ժողովուրդին գերիները պիտի արձակէր։

Իսկ կէսքն ասէին, Միթէ 'ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիստոսն. Եւ ոմանք կ'ըսէին, Քրիստոսը Գալիլեայէ՞ պիտի գայ։ Մեք ակն ունէաք թէ նա իցէ որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. Մեք կը յուսայինք թէ նա պիտի փրկէր զԻսրայէլ։ Ընդէ՞ր աշխատ առնիցեն որ չիցեն առնելոց. Ինչո՞ւ համար կը յոգնեցունեն անոնք որ պիտի բան մը չընեն։

311. Հ. Ստորադասականին վրայ ինչ գիտելիք կայ։

Պ. Ստորադասականը, այսինքն՝ բայի ժամանակներուն այն ձեւը զոր մենք ստորադասական կը կոչեմք, կը գործածուի ընդհանրապէս,



1° Երբ ընդհանուր կամ անորոշ բանի մը վրայ է խօսքը։ Այսպիսի ստորադասականներ կը պատասխանեն աշխարհաբարին ներկային, զոր օրինակ.

Որ ունիցի (*) ականջս լսելոյ՝ լուիցէ. Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։ Որ ոչն գործիցէ՝ և կերիցէ մի. Ով որ չգործեր՝ պիտի չուտէ։ Ծառայ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնիցէ ըստ կամաց նորա՝ արբցէ գան բազում, և որ ոչն գիտիցէ և արժանի գանի ինչ գործիցէ՝ արբցէ քան սակաւ. Ծառայ որ գիտէ իր տիրոջը կամքը և չըներ անոր կամացը համեմատ՝ շատ ծեծ պիտի ուտէ, և այն որ չգիտեր և ծեծի արժանի բան մը կ'ընէ՝ քիչ ծեծ պիտի ուտէ։

---

(*) Ընդհանուր եւ թէական եւ կամ հարցական խօսքերու մէջ բայն այսպէս ստորադասական կը դրուի, եթէ գործողութիւնը ներկայ կամ ապառնի է։ Եթէ գործողութիւնն անցեալ է, բայը անկատար կամ գերակատար կը դրուի, զոր օրինակ. Եթէ գիտէիք զի՞նչ է, «Զողորմութիւն կամիմ եւ ոչ զզոհ», ոչ դատապարտէիք զանմեղսն. Եթէ «ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ», խօսքին ինչ ըլլալը գիտնայիք, անմեղները չէիք դատապարտեր։ Եթէ իմ չէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ էր նոցա. Եթէ ես եկած եւ անոնց հետ խօսած չըլլայի, յանցանք չէին ունենար։ Իմացայ՞ք զայս ամենայն, ասեն ցնա. Այո, Տէր. Իմացա՞ք այս ամէնը. անոր ըսին. Այո, Տէր։ Եթէ ննջեաց, ապա ապրի. Եթէ քնացաւ, ուրեմն կ'ազատի։

Այս խօսքերուն մէջ, ինչպէս կը տեսնուի, թէական եւ հարցական բայերուն գործողութիւնն անցեալ է, այսինքն՝ արդէն եղած է։

Բայց հետեւեալ խօսքերուն, ինչպէս նաեւ վերի օրինակներուն մէջ, գործողութիւնն ապառնի է, այսինքն՝ տակաւին պիտի ըլլայ։

Եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ եւ ասիցէք թթենւոյս այսմիկ, խլեաց եւ տնկեաց 'ի ծովու, հնազանդեսցի ձեզ. Եթէ քան զմանանխոյ հատը քիչ հաւատք ունենաք, եւայլն։ Եթէ ոչխար ուրուք անկանիցի 'ի խորխորատ 'ի շաբաթու, ձեռն ոչ ունիցէ եւ յարուցանիցէ զնա. Եթէ մէկուն ոչխարը շաբաթ օր խորխորատ իյնայ, չը բռներ եւ չը վերցըներ զայն։

2° Երբ խօսքը Թէական և կամ հարցական է ։ Այսպիսի խօսքերու մէջ եւս ստորադասականը կը պատասխանէ աշխարհաբարին ներկային, զոր օրինակ․

Եթէ ոք ածիցէ (*) ապտակ յաջ ծնօտ քո, դարձո նմա և զմիւսն․ Եթէ մէկը քու աջ ծնօտիդ ապտակ կը զարնէ, դարձուր անոր միւսը։ Եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ողջոյն ձեր ի վերայ նորա․ Եթէ հոն ողջունի որդի կայ, ձեր ողջոյնն անոր վրայ պիտի հանգչի։
Միթէ քաղիցե՞ն ՚ի փշոց խաղող․ Փուշերէն խաղող կը քաղուի՞։ Բարեացն արարիչ և չարեաց ո՞ քան զո՞ հարուստ իցէ․ Ո՞րն աւելի զօրաւոր է․ բարւո՞յն թէ չարին արարիչը։ Չի՞ցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ․ Կարդացած չէ՞ք ինչ ըրաւ Դաւիթ։

3° Երբ խօսքը Նմանութեան կամ Ենթադրութեան է ։ Այսպիսի խօսքերու մէջ ստորադասականը կը պատասխանէ աշխարհաբարին անկատարին (առանց կը ի), զոր օրինակ․

Նման է ազգս այս մանկտւոյ որ նստիցին ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց և ասիցեն․ Փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք․ ողբացաք ձեզ և ոչ կոծեցարուք․ Այս ազգը կը նմանի տղայոց, որ հրապարակները նստէին, իրենց ընկերներուն կանչէին և ըսէին․ Փող հարինք ձեզ և չկաքաւեցիք, ողբացինք և կոծ չըրիք։
Որպէս յորժամ իցէ ոք ուրուք թշնամի․ և թաքուցեալ զթշնամութիւնն գաղտ կամիցի վնասել, և ոչ իշխիցէ զհանգամանս վնասակարութեանն, և շուրջ եկեալ յածիցի հնարս խնդրել․ ապա գտեալ ժամանակ յորժամ ոք ՚ի բժշկաց թշնամւոյ նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել և յայն նիշ կերակրոյ չճաշակել որով առողջութեանն կարիցէ հասանել, վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պատուիցէ, և զօգտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, և պատուէրս հակառակ հրամանաց բժշկին տայցէ, և այնու առնիցէ նմա վնաս․ Ինչպէս երբ մէկը մէկուն թշնամի ըլլար, և թշնամութիւնը ծածկելով ուզէր գաղտ վնաս ընել, բայց վնաս ընելուն եղանակը չգիտնար և հնարք փնտռելու պտըտէր․ ետքը երբ բժիշկ մը անոր թշնամւոյն պատուէր կու տար այս ինչ բանին չմօտենալ, այս ինչ կերակրէն չուտել որ կարող ըլլար առողջութեան հասնիլ, ասկէ առիթ առնլով, շուտով բարեկամութիւն կեղծելով բժիշկը պատուէր, օգտակարներն անոր վնասակար կարծեցունէր, բժշկին հրամաններուն հակառակ պատուէրներ տար և այնպէս անոր վնաս ընէր։

(*) Ընդհանուր, Թէական եւ հարցական խօսքեր, ինչպէս աշխարհաբարին, նոյնպէս գրաբարի մէջ, կրնան Ներկայով եւս բացատրուիլ․ ուստի վերի խօսքերն այսպէս եւս կ՚ըլլան, Եթէ ոք ածէ ապտակ․ Միթէ քաղե՞ն ՚ի փշոց խաղող․ Բարեացն արարիչ եւ չարեաց, ո՞ քան զո՞ հարուստ է։



## 2· ԱՆԵՐԵՒՈՅԹ

312· Հ· Աշխարհաբարին աներեւոյթը գրաբարի մէջ ե՞րբ կը փոխուի դիմաւոր բայի։
Պ· Երբ աշխարհաբարի մէջ աներեւոյթ մը խնդիրներ ունի, և ինք ուրիշ բայի մը տէր բայի կամ խնդիր է, գրաբար զի շաղկապով դիմաւոր բայի կրնայ փոխուիլ, զոր օրինակ․

Զի ներող և արգահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է․ փոխանակ ըսելու, Ներող և արգահատող լինելն արարչին յայտնի է ամենեցուն․ Արարչին ներող և արգահատող ըլլալն ամենուն յայտնի է։

Այլ ոչ Աստուած մահուան է պատճառ՝ վկայեաց ամենարուեստ իմաստութիւնն. փոխանակ ըսելու, Ոչ լինելոյն Աստուծոյ պատճառ մահուան՝ վկայեաց իմաստութիւնն. Աստուծոյ մահուան պատճառ չըլլալուն Թող վկայէ իմաստութիւնը։

Եւ ոչ ճշմարիտ է բանս՝ յայտ անտի է զի... այսինքն, Ճշմարիտ լինելն բանիս անտի յայտ է զի... Այս խօսքին ճշմարիտ ըլլալն անկէ յայտնի է որ...: Եւ ոչ կամեցող բարեաց է Աստուած՝ ուսուցանէ մեզ Տէր յասելն. այսինքն, Զլինելն Աստուծոյ կամեցող բարեաց՝ ուսուցանէ մեզ Տէրն. Աստուծոյ բարիք կամեցող ըլլալը կը սորվինք տէրոջմէն։

Այլ ոչ դեւ զդեւ ոչ հանէ՝ զայս իսկ յայտ արար, այսինքն, Զչհանելն եւս դեւի զդեւ՝ յայտ արար. Դիւին դեւ չհանելը իմացուց։

313. Հ. Ասոր հակառակ, ե՞րբ դիմաւոր բայ մը կը փոխուի աներեւութի։

Պ. Գլխաւոր նախադասութեան մը հետ (Տես թիւ 289) ոչ կամ նէ շաղկապով կապուած միջանկեալ նախադասութեան բայը կրնայ աներեւութի փոխուիլ, և այն ատեն է որ ոչ կամ նէ շաղկապը կը թողուի, և ուղղական տէր բային (եթէ բայը յայտնի տէր բայի ունի) տրականի կը փոխուի։ (Տես և թիւ 185), զոր օրինակ.

Եւ եղեւ բանալ երկնից և իջանել Հոգւոյն սրբոյ իբրեւ զաղաւնի. այսինքն, Եւ եղեւ զի բացան երկինք և Հոգին սուրբ էջ իբրեւ զաղաւնի։ Հակառակէին լինել յարութեան. այսինքն, Հակառակէին նէ ոչէ յարութիւն։ Ոչ տամք թոյլ անցանել քեզ ընդ երկիր մեր. այսինքն, Ոչ տամք թոյլ, զի անցանիցէք դուք ընդ երկիր մեր։ Պատուիր-



եաց նմա մի ումեք ասել. այսինքն, ոչ մի ասիցէ ումեք։ Նոքա ակն ունէին ուռչելոյ նմա կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. այսինքն, Ակն ունէին թէ ուռչելոց էր նա կամ անկանելոց և յանկարծակի մեռանելոց։

314. Հ. Ուրիշ ի՞նչ տեսակ խօսքերու դիմաւոր բայն աներեւութի կը փոխուի։

Պ. 1° Պատճառ կամ նպատակ ցուցնող խօսքի մը դիմաւոր բայը պարզ կամ հոլոված աներեւութի կը փոխուի, և այս աներեւոյթը շատ անգամ կ'առնու ի, առ և կամ առ ի նախդիրը, զոր օրինակ.

Բերին ջուր լուանալ զոտս նոցա. այսինքն, զի լուասցեն զոտս նոցա։ Ել Իսահակ զբօսնուլ 'ի դաշտին. այսինքն, զի զբօսնուցու։ Ոչ ոք երաց զդուրս տանն հայելոյ 'ի ներքս. փոխանակ, զի հայեսցի 'ի ներքս։ Գունդս առ գունդս կազմեսցեն հանելոյ զհէնն յաշխարհէն. այսինքն, գունդս առ գունդս կազմեսցեն զի հանցեն զհէնն։ Ի լսել եկեալ եմ. այսինքն, եկեալ եմ զի լուայց։ Ոչ աչք են նոցա 'ի տեսանել, ոչ ականջք՝ 'ի լսել, ոչ ունչք՝ առ 'ի հոտելոյ զօդ, և ոչ մատունք ձեռաց՝ առ 'ի շօշափելոյ. փոխանակ, Ոչ աչք են նոցա զի տեսցեն, ոչ ականջք՝ զի լուիցեն, ոչ ունչք՝ զի հոտեսցեն զօդ, եւն։

2° Ժամանակ ցուցնող խօսքերու դիմաւոր բայը սովորաբար ի կամ ընդ նախդրիւ աներեւութի կը փոխուի, բայց անատեն աներեւոյթը յօդ (ն գիրը) կ'առնու, զոր օրինակ.

Ի ծնանելն Յիսուսի. փոխանակ, յորժամ ծնաւ Յիսուս. Ի դառնալ արդարոյն յարդարութենէ. փոխանակ, յորժամ դարձցի արդարն յարդարութենէ։ Ի Պաւղոսի բողոքելն. փոխանակ յորժամ բողոքեաց Պաւղոս։ Ի մկրտել ամենայն ժողովրդեանն և ընդ Յիսուսի մկրտելն և կալ յաղօթս.

այսինքն, երբոր մկրտուեցաւ ամենայն ժողովուրդն, երբոր մկրտուեցաւ և Յիսուս և կեցաւ յաղօթս։ Ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին զնա. այսինքն, մինչ երթայր նա, ժողովուրդքն նեղէին զնա։

315. Հ. Դիմաւոր բայ մը և անոր աներևոյթն ի միասին ի՞նչ կը նշանակեն։

Պ. Դիմաւոր բայ մը և անոր աներևոյթն ի միասին որպէս կամ թէպէտև շաղկապով կապուած խօսքի զօրութիւն ունին, զոր օրինակ.

Ունել ունէին խիղճ, այլ ոչ բաւական. այսինքն, թէպէտև ունէին խիղճ, այլ ոչ բաւական։ Սիրել սիրեն, այլ ոչ սրտիւ. այսինքն թէպէտ սիրեն, այլ ոչ սրտիւ։ Որ յասպարիզին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն. այսինքն, թէպէտ ամենեքին ընթանան, ևն։ Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։ Առնուլ առ 'ի ձեռս զիշխանութիւնն, բայց ոչ կարէր, ևն։ Առնել արարեր ողորմութիւն, այլ ոչ այնչափ որչափ կինն այրի։ Յանհիւթ ապառաժ տեղին որ, թէպէտ վարել վարեցին, անմասն եղեալ 'ի պտղոյն գրկի։

## 3. ԱՆՑԵԱԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

316. Հ. Անցեալ ընդունելութիւնն ևս կը դրուի՞ դիմաւոր բայի տեղ։

Պ. Անցեալ ընդունելութիւնը կրնայ ունենալ երբոր, յորժամ, երբ, շաղկապներով կապուած դիմաւոր բայի զօրութիւն, զոր օրինակ.

Եւ մտեալ (Յիսուսի 'ի Կափառնայում, մատեաւ առ նա հարիւրապետ մի. այսինքն, երբոր եմուտ Յիսուս, կամ, 'ի մտանելն Յիսուսի 'ի Կափառնայում, ևն։ Եւ ճա-



նապարհ արարեալ (նորա) յԵրուսաղէմ, ասէ ումն ցնա. այսինքն, երբոր ճանապարհ արար նա յԵրուսաղէմ, ևն։ Եւ բախեալ (նորա) զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս 'ի ձայն մեծ ասէ։ Եւ հրամայեալ Փեստոսի, ածին զՊաւղոս. այսինքն, երբոր հրամայեաց Փեստոս, կամ, 'ի հրամայելն Փեստոսի, ևն։ Դորա ինքնին կոչեալ բողոք առ քաջ արանցն, խորհեցայ յղել, ևն. այսինքն, երբոր բողոք կոչեաց դա առ քաջ արանցն (առ կայսր), ևն։ կամ, յառնել նորա բողոք առ քաջ արանցն, ևն։

317. Հ. Ո՞ր բայերուն անցեալ ընդունելութիւնն իբրև ածական կրնայ գործածուիլ։

Պ. Կրաւորական և չէզոք բայերուն անցեալ ընդունելութիւնները թէ իբրև ածական և թէ գոյականաբար կրնան գործածուիլ. ուստի կ'ըսուի.

Կառաց խորտակելոց. Խորտակուած կառքերու։ Ոգւոց փրկելոց, կորուսելոց. Փրկուած, կորսուած հոգիներու։ Բանիցն ասացելոց. Ըսուած խօսքերուն։ Զալիսն կուտակեալս. Դիզուած ալիքները։ Ձեռք կապեալք։ Ծունկք կքեալք։ Գանձի ծածկելոյ յագարակի. Ագարակի մէջ ծածկուած գանձի։ Ուռկանի արկելոյ 'ի ծով. Ծովը նետուած ուռկանի։ Կոյս խօսեցեալ առն. Էրիկ մարդու նշանուած կոյս մը։ Նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին. Դևերէն տանջուածները կը բժշկուէին։ Բժշկել զբեկեալս։ Ազատել զգերեալս։ Մի ումն 'ի կոչեցելոց անտի. Կանչուածներէն մին։

Այս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւններն կրաւորական էին։

Արանց անկելոց, մեռելոց, եկելոց, ինկող, մեռնող, եկող մարդոց։ Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ սպասաւորն. Ո՞վ է մեծ, սեղան նստո՞ղը թէ սպասաւորը։ Եւ ասէ

ցենկեալն 'ի վերայ նորա · Իր վրայ եկողներուն կ'ըսէ : Ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն 'ի ձեռս աւազակաց · Այս երեքէն ո՞րը կը թուի քեզ մերձաւոր եղած աւազակաց ձեռքն ինկողին : Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն · Չեմ ուզեր որ մեռնողներուն համար տգէտ ըլլաք :

Այս օրինակներուն մէջ անցեալ ընդունելութիւնները չէզոք էին (**) :

Բայց ներգործական անցեալ ընդունելութիւններն ոչ իբրեւ ածական, և ոչ գոյականաբար կըրնան գործածուիլ · զոր օրինակ չըսուիր, Տուեալ պարգեւն քո · Քու տուած պարգեւդ : Ասացեալ բանն մեր · Մեր ըսած խօսքը : Առաքեալ պատգամաւորք նորա · Անոր ղրկած պատգամաւորները : Ոչ ալ կրնայ ըսուիլ, Տուեալն քո · Քու տուածդ : Ասացեալքն մեր · Մեր ըսածները : Գնեալքն նոցա · Անոնց գնածները (**) :

Այսպիսի խօսքեր յարաբերական դերանուամբ և դիմաւոր բայիւ կը բացատրուին, այսպէս · Պարգեւն զոր ետուր : Բանն զոր ասացաք : Պատգամաւորքն զորս առաքեցին : Զոր ետուրն : Զոր ածեմքն : Զոր նոքայն գնեցին : կամ կրաւորականի դարձնելով անցեալը · Պարգեւն տուեալ 'ի քէն : Բանն ասացեալ 'ի մէնջ : Պատգամաւորքն առաքեալք 'ի նոցանէ, եւ :

---

(*) Կրաւորականին անցեալներն աշխարհաբար -ծ ընդունելութեամբ, չէզոք անցեալներն -ու ընդունելութեամբ կը թարգմանուին :

(**) Աշխարհաբարի մէջ անգամ այս կերպով ներգործական անցեալ գործածելը խորթ է եւ թրքաբանութիւն : Անցեալը կրաւորականի դարձունելու է · ինչպէս գրաբարի համար ըսինք :



## Ե· ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

318· Հ· Նախադրութիւններն միշտ իրենց խնդրէն առաջ կը դրուին :

Գ· Գրեթէ ամէն նախադրութիւն, ինչպէս նախադրութիւն բառին նշանակութենէն յայտնի է, ընդհանրապէս կը դրուի իւր խնդրէն առաջ · բաց յամանց որ միշտ խնդրէն ետքը կը դրուին · որպիսի են :

Աղագաւ · Պատճառաւ, վրայով · իչին, հաքքընտա
Հետէ · Ի վեր · պէրի
Չափ · Մինչեւ · տէք
Կոյս · Դէպ ի · տօղրու

Նոցա տկարութեան աղագաւ ասէ · Անոնց տկարութեան պատճառաւ կ'ըսէ : Քաղդէացւոց իմաստութեանն աղագաւ այսչափ ինչ · Քաղդէացւոց իմաստութեան համար, կամ, վրայով այսչափ : Նոցա աղագաւ և զսոսա յանդիմանէ : Զմարգարէսն ամենայն թուէ 'ի Սամուէլէ հետէ · Սամուէլէն 'ի վեր բոլոր մարգարէները կը համրէ : Ցայգուէ իսկ հետէ անապակին տան զանձինս · Առտուընէ 'ի վեր զիրենք գինարբութեան կու տան :

Այսպէս կ'ըսուի նաեւ

Ի բազում ամաց հետէ, 'ի բազմաց հետէ, 'ի վաղուց հետէ · Շատոնց 'ի վեր : Յօրէ յայնմանէ հետէ · Այն օրէն 'ի վեր : Ի սկզբանէ հետէ · Սկիզբէն 'ի վեր : Յայնմ հետէ · Անկէ 'ի վեր : Յորմէ հետէ · Քանի որ :

Ուսովք չափ 'ի վեր էր · Մինչեւ ուսերը վեր էր : Հասանէր ջուրն միջովք չափ · Ջուրը մինչեւ մէջքը կը

հասնէր։ Օրեամբ լոյս, կամ, մահու լոյս հակառակ կալ. Մինչեւ արեւն Թափելը, մինչ ցմահ դ..մ կենալ։

Դարձաւ 'ի մեր կողմ. Դէպ 'ի մեզ դարձաւ։ Նաւէաք յամին կողմ. Դէպ եզերքը կը նաւէինք։

319. Հ. Ի՞նչ հոլով կը դրուի իբրեւ, որպէս, քան նախադրութիւններուն խնդիրը։

Պ. Նմանութիւն կամ բաղդատութիւն ցուցընող իբրեւ, որպէս, քան կամ իբրեւ զ, որպէս զ, քան զ, նախադրութիւններուն խնդիրը հայցական կը դրուի միշտ, երբ նմանելի կամ բաղդատելի իրը հայցական է, զոր օրինակ.

Սիրէր զնոսա իբրեւ զորդիս։ Որպէս զհայրն զարդու զարդարեաց զնա։ Սիրէր զնա հայրն քան զամենայն որդիս իւր։

Այս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի իրերն, զնոսա, զնա, զնա հայցական են, ուստի և նմանութեան կամ բաղդատութեան նախադրութեանց խնդիրներն եւս դրուած են հայցական։

320. Հ. Վերոյիշեալ նախադրութեանց խնդիրն ի՞նչ հոլով կը դրուի, եթէ նմանելի կամ բաղդատելի իրն ուղղական է,

Պ. Եթէ նմանելի կամ բաղդատելի իրն ուղղական է, իբրեւ, որպէս, քան, և նախադրութեանց խնդիրները նոյնպէս ընդհանրապէս հայցական կը դրուին, բայց կրնան ուղղական եւս դրըուիլ. զոր օրինակ.

Բազում էք դուք քան զմեզ. Դուք քան զմեզ շատուոր էք։ Իբրեւ զթշնամիս յարձակեցան (նոքա) 'ի վերայ մեր. Իբրեւ թշնամիներ յարձակեցան մեր վրայ։ Եղե-



րուք (դուք) միամիտք որպէս զաղաւնիս, և խորագէտք իբրեւ զօձս. Իբրեւ աղաւնիներ միամիտ եղէք, և իբրեւ օձեր՝ խորագէտ։

Այս օրինակներուն մէջ նմանելի կամ բաղդատելի բաները, դուք, նոքա, մեք, ուղղական են, բայց նմանութեան կամ բաղդատութեան նախադրութիւններուն խնդիրը, զմեզ, զթշնամիս, զաղաւնիս, զօձս, վայելչութեամբ դրուած են հայցական ըստ սովորութեան, թէպէտ պարտէին ուղղական ըլլալ, այսպէս. Բազում էք դուք քան մեք. Իբրեւ թշնամիք յարձակեցան 'ի վերայ մեր։ Եղերուք միամիտ որպէս աղաւնիք, և խորագէտ՝ որպէս օձք։

321. Հ. Իբրեւ, որպէս, քան նախադրութեանց խնդիրներն ի՞նչ կ'ըլլան, եթէ նմանելի կամ բաղդատելի իրերն ուրիշ հոլով են, կամ նախադրութիւն ունին։

Պ. Եթէ նմանելի կամ բաղդատելի իրերն ուրիշ հոլով, այսինքն տրական, բացառական կամ գործիական են, և կամ նախադրութեան մը խնդիր են, իբրեւ, որպէս, քան նախադրութեանց խնդիրներն եւս պարտին նոյն հոլովը դրուիլ և նոյն նախադրութիւններն ունենալ, թէպէտ զ նախդիրը երբեմն հոլոված բառին վրայ կը դրուի, զոր օրինակ.

## Տրական

Առաջնորդեցեր որպէս խաշին, ժողովրդեան քում. Ժողովուրդիդ առաջնորդեցիր իբրեւ խաշին։ Սպասաւորէր նմա իբրեւ հօր. Անոր իբրեւ հօր սպասաւորութիւն կ'ընէր։ Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց քան

ժողովքն այնմիկ. Աւելի դիւրին պիտի ըլլայ Սոդոմի երկրին քան այն քաղքին։ Առաւել ունկն դնէր մանկտւոյն քան զծերոցն իմաստնոց. Աւելի մանուկներուն (կենծերու) մտիկ կ'ընէր քան իմաստուն ծերերուն։

### Բացառական

Յազգէ իւրմէ իբրեւ 'ի թշնամւոյ խոստանայր վրէժ խընդրել. Իր ազգէն իբրեւ թշնամիէ վրէժ խնդրել կը խոստանար։ Առաւել երկնչէր 'ի նմանէ քան յայլոց. Աւելի անկէ կը վախնար քան ուրիշներէն։

### Գործիական

Են որ խոցեն բանիւք իւրեանց որպէս սրով. Կան որ իրենց խօսքովը իբրեւ սրով կը խոցեն։ Արամբ միով որ խուժադուժ եւս էր տեսանելով քան զմտօքն թանձրութեան. Մարդով մը որ աւելի բարբարոս էր տեսքով քան իւր թանձր մտքովը. Լաւ է նուաճել սիրով քան բռնութեամբ։

### Այլեւայլ խնդիրներով

Որպէս 'ի ծովու ալեկոծիմք յաշխարհի. Աշխարհիս մէջ կ'ալեկոծուինք իբրեւ ծովու մէջ։ Խնայէր 'ի նոսա իբրեւ 'ի մարդիկ. Կը խնայէր անոնց իբրեւ մարդոց։ Մի խօսիր ընդ մեզ իբրեւ ընդ տղայս. Մեզի հետ մի խօսիր իբրեւ տղոց հետ։ Իբրեւ 'ի վերայ թշնամւոյ ելէք 'ի վերայ իմ. Իբրեւ թշնամիոյ վրայ ելաք իմ վրայ։ Քան 'ի մարդոյ. առաւել յԱստուծոյ երկնչել. Առաւել Աստուծմէ քան մարդէ վախնալ։

---



## Զ. ՄԱԿԲԱՅ

322. Հ. Ի՞նչ տեսակ բառեր են մակբայները։

Պ. Մակբայները ոմանք պարզ բառեր են, ինչպէս, աստ, անդ, ցայգ, վաղ, մերձ, միշտ, արդէն, եւն։

Ոմանք հոլովածի բառեր են, ինչպէս հրապարակաւ, խորհիւ, հեշտիւ, կենդանւոյն, հետոյ, միջամ, եւն։

Ոմանք եւս բաղադրեալ բառեր են, այսինքն երկու բառէ կամ նախադրութեամբ մը շինուած, ինչպէս, այսպէս, որչափ, միանգամ, առանձին, յերաւէ, ի զուր, ընդ վայր, եւն։

323. Հ. Ուրիշ ի՞նչ բառեր մակբայօրէն կը գործածուին։

Պ. Երբեմն հասարակ ածական մը, ինչպէս, քաջ, ծանր, խաղաղ մակբայօրէն կը գործածուի։ Այսպէս կ'ըսենք, քաջ գիտել, ծանր խօսել, բնակել խաղաղ, կալ հանդարտ, ննջել ուժգին, եւն։

Երբեմն պարզ կամ յ նախդրիւ ածական մը (եթէ ածականը ա ձայնաւորով կ'սկսի,) վերջը ս գիրն առնլով մակբայի զօրութիւն կ'ունենայ։ Այսպէս կ'ըսուի, գեղեցիկս բարբառել, վայելուչս յօրինել, հզօրագոյնս կռուել, և կը նշանակէ, գեղեցիկ, վայելուչ, հզօրագոյն կերպով։ Եւ կամ, յանդէտս, յանդէպս, յապահովս, յանզգոյշս, որ կը նշանակեն անգիտութեամբ, անյարմարութեամբ, ապահովութեամբ, անզգուշութեամբ։

Գործիականն եւս շատ անգամ մակբայի զօրութիւն ունի. ուստի կ'ըսենք քաջութեամբ կռուել, իմաստութեամբ գործել, ածել բռնութեամբ, և կը նշանակեն նոյնպէս, քաջ, իմաստուն, բռնի կերպով։

324· Հ· Որո՞նք են հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկները ։

Պ· Հայերէնի գլխաւոր մակբայացուցիչ մասնիկներն են բոր և ջէ ։

Բոր մասնիկը կը կցուի ընդհանրապէս գոյական անուններու և կամ գոյականաբար առնուած ածականներու վերջը, և կը նշանակէ ըբրէ, պէս ։ Այսպէս կ'ըսուի, Թագաւորաբոր, իշխանաբոր, առիւծաբոր, Հայկաբոր, իմաստնաբոր, առաքինաբոր, և կը նշանակէ, ըբրէ Թագաւոր, Թագաւորի պէս · ըբրէ իշխան, իշխանի պէս · ըբրէ դՀայկ, Հայկայ պէս · ըբրէ իմաստուն, առաքինի · իմաստուն, առաքինի մարդու պէս ։

Իսկ ջէ մասնիկը կը կցուի ընդհանրապէս ածականներու վերջը և կը նշանակէ կերպով ։ Այսպէս կ'ըսուի, քաջաջէ, դառնաջէ, գաղտնաջէ, փութաջէ, և կը նշանակէ, քաջութեամբ, քաջ կերպով · դառնութեամբ, դառն կերպով · գաղտնութեամբ, գաղտնի կերպով · փութով, փութաջան կերպով ։

ՔԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

325· Հ· Քանի՞ նշանակութիւն ունի Ռ ։

Պ· Ռէ իբրեւ շաղկապ կը նշանակէ ու, իբր մակբայ, կը նշանակէ, նաեւ, ևս, զոր օրինակ ·

Ոն եկայք Ռ մեք, զի ընդ նմա մեռցուք · Հապա, եկէք, մենք ևս (երթանք) որ անոր հետ մեռնինք ։ Արա Ռ զիս երբեւ զմի 'ի վարձկանաց քոց · Զիս ևս քու վարձուորներէդ մին ըրէ ։ Սոյնգ Ռ սա ընդ նմա էր · Սոյնպէս սա ևս անոր հետ էր ։



Ռէ, կրկնուելով կը նշանակէ թէ . . . թէ, զոր օրինակ ·

Ցիրաւի պատժեցան Ռ' նա (սատանան) Ռ' մարդն զոր յօժարեցոյց նա յանցաւորութիւն ։ Իրաւամբ պատժուեցան՝ թէ' նա (սատանան) և թէ' մարդը զոր սատանան անհնազանդութեան յորդորեց ։

326· Հ· Ի՞նչ կը նշանակէ ևս ։

Պ· ԵՒս մակբայը կը նշանակէ 1° Նաեւ, զոր օրինակ ·

Ցաւել միւս ևս ծառայ յղել, նոքա և զնա ևս գան հարին · Ուրիշ ծառայ մի ևս ղրկեց · անոնք զնա ևս ծեծեցին ։ Ոմն մերկանայ ղհանդերձս ընկերին, և եթէ ընդդէմ դառնայցէ, յարեւէ ևս արկանէ ։

2° կը նշանակէ աւելի, զոր օրինակ ·

Քակեցից զշտեմարանս իմ, և ևս մեծամեծս շինեցից ։ Ոչ ոք արկանէ կապերտ նոր 'ի վերայ հնացեալ ձորձոյ · ապա թէ ոչ առնու նորն 'ի հնոյ անտի, և չար ևս պատառումն լինի ։ (Տես և Թիւ 274) ։

327· Հ· Ի՞նչ գիտելիք կայ գոյցէ և թերեւս մակբայներուն վրայ ։

Պ· Գոյցէ կը նշանակէ չըլլայ թէ, և կը գործածուի, երբ գործողութեան կատարուիլը չենք ուզեր և կը վախնանք թէ կ'ըլլայ, զոր օրինակ ·

Գոյցէ, մինչ քաղիցէք զորոմն, և զցորեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք · Չըլլայ թէ, երբ որոմը կը քաղէք, ցորենը ևս 'ի միասին բրցունէք ։ Արձակել զդոսա նօթիս չկամիմ, գոյցէ նքթիցեն զճանապարհայն ։ Ասեն յիմարքն (կուսանք) ցիմաստունսն · Տուք մեզ յիւղոյդ

ձերմէ . իմաստունքն ասեն · Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական , այլ երթայք 'ի վաճառականս և գնեսջիք ձեզ : Ասեն (Հրեայքն) ցՊիղատոս · հրամայեա զգուշանալ (առնել պահպանութիւն) գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս · գուցէ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա : Արթուն կացէք , զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ · գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ 'ի քուն : Առեալ զմակոյկն յօգնականութիւն կապէին ընդ նաւն , երկուցեալք թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին : Ճնշեմ զմարմինս իմ , զի գուցէ որ այլոցն քարոզեցի , ես ինքն անպիտան գտանիցիմ :

Թերեւս կը նշանակէ գուցէ , և կը գործածուի , երբ գործողութեան կատարուիլը կ'ուզենք · և կը յուսանք թէ պիտի կատարուի , զոր օրինակ ·

Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր , և ասէ · Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ : Ասէ ցնա այգեգործն · Տէր , թող զդա այս ամ եւս , մինչեւ շուրջ զդովաւ բրեցից և արկից աղբ · Թերեւս արասցէ պտուղ : Ապաշաւեա դու 'ի չարեացդ · Թերեւս թողութիւն լիցի քեզ : Հաստատեաց ժամանակս խնդրել զԱստուած , զի Թերեւս զննիցեն զնա և գտանիցեն : Ընդ ամենայնի ամենայն եղէ , զի Թերեւս ապրեցուցից զոմանս : Համբերութեամբ խրատեա զհակառակողսն · Թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն :

328· Հ· Քանի՞ նշանակութիւն ունի ու :

Պ· Ու կամ ու , ժխտական մակբայ է , և բացասական խօսքերու մէջ կը գործածուի , զոր օրինակ ·

Հայեցարուք 'ի թռչունս երկնից · ու վարեն և ու հնձեն և ու ժողովեն 'ի շտեմարանս : Ու գոյր նոցա տեղի յիջեւանին : Եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ , հսկէր և ոչ տայր թողլ ական հատանել 'ի տան իւրում :



Ու նաեւ հարցական մակբայ է , և կը նշանակէ ո՞չ ապաքէն , զոր օրինակ ·

Ո՞ւ երկոտասան ժամ է աւուր · Որը տասուերկու ժամ չունի՞ մի : Ո՞ւ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի : Ո՞ւ և սիրտք մեր ճմլէին 'ի մեզ , մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն :

329· Հ· Ի՞նչ կը նշանակեն չեւ և մինչչեւ :

Պ· Չեւ , ժխտական մակբայ է , և կը նշանակէ , դեռ ոչ , զոր օրինակ ·

Կին դու , չեւ է հասեալ ժամանակ իմ · Կնիկ , ժամանակս դեռ հասած չէ : Չեւ եւս գիտէին զգիրսն · Դեռ գիրքերը չէին գիտեր :

Մինչչեւ շաղկապ է , և կը նշանակէ բանէ մը առաջ , բան մը չեղած , զոր օրինակ ·

Մինչչեւ հաւու խօսեալ իցէ , երիցս ուրասցիս զիս · Հաւը խօսելէն առաջ , կամ , հաւը չխօսած , զիս երեք անգամ պիտի ուրանաս : Մինչչեւ բնաւ էր ինչ , ասեն , ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարած , Զրուան ոմն անուն էր : Մինչչեւ ծնեալ էին , և մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր , ասացաւ թէ՝ Երէցն կրտսերոյն ծառայեսցէ :

330· Հ· Ի՞նչ կը նշանակէ չիք :

Պ· Չիք բացասական բայ է , սահմանական ներկայ եզակի երրորդ դէմք , և կը նշանակէ ոչ գոյ , չկայ :

Ես եմ Աստուած, և չիք այլ ոք. Աստուած ես եմ, և ուրիշ մը չկայ: Չիք ոք բարի, բայց մի Աստուած. Մէկ Աստուծմէ զատ բարի չկայ: Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի. Ծածուկ բան չկայ որ չյայտնուի:

331. Հ. Ի՞նչ տեսակ մակբայ է մի՛:

Պ. Մի՛, արգելական մակբայ է, և հրամայական խօսքերու մէջ կը գործածուի, զոր օրինակ.

Դստերք Երուսաղեմի, մի՛ լայք 'ի վերայ իմ: Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն: Յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո: Արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց:

332. Հ. Ի՞նչ կը նշանակեն արդեօք և միթէ մակբայները:

Պ. Արդեօք, տարակուսական մակբայ է և կը գործածուի հայցական խօսքերու մէջ, երբ հարցունողը չգիտեր և կը հարցունէ սորվելու համար, զոր օրինակ.

Ո՞ ոք արդեօք իցէ սա, զի և հողմք հնազանդին նմա: Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուդ: Մի՞ արդեօք դու իցես Եգիպտացին:

Արդեօք կը նշանակէ նաւ արդարեւ, ապաքէն, անտարակոյս, զոր օրինակ.

Եթէ գիտէիր ո՛վ է որ ասէր ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր 'ի նմանէ. Եթէ գիտնայիր թէ ո՛վ է որ քեզի կ'ըսէ, ինծի ջուր տուր, անտարակոյս դուն անկէ կ'ուզէիր: Եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք, զի մի մատնեցայց Հրէից:



Միթէ եւս տարակուսական մակբայ է, և կը գործածուի հարցական խօսքերու մէջ, երբ հարցունողը գիտէ և կը հարցունէ, զոր օրինակ.

Միթէ օրէնքն մեր դատե՞ն զմարդ, եթէ ոչ լսեն ինչ նախ 'ի նմանէ: Միթէ և ես Հրեա՞յ իցեմ, ազգ քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ:

333. Հ. Քանի՞ նշանակութիւն ունի ուր բառը:

Պ. Ուր տեղական մակբայ է:

Ուր եսն իցեմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: Ո՞ւր եդիք զնա: Ո՞ւր իցէ նա:

Դէպ ի տեղ մը շարժում ցուցնելու համար՝ յո կը գործածուի, զոր օրինակ.

Յո՞ երթայց. Յերեսաց քոց յո՞ փախեայց:

Ուր նաեւ շաղկապ է, և մինչ կը նշանակէ, զոր օրինակ.

Զէն ինչ զարմանք եթէ նոքա (հրեշտակք) մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին, ուր և նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ. Զարմանք չէ որ անոնք մեր դրացի արարածներուն անուններով կ'անուանուին, մինչ կամ ուր անոնց արարիչը եւս այնպիսի անուններ վրան առնելու չգարշիր:

## Է· ՇԱՂԿԱՊ

### ՔԱՆԻ ՄԸ ԳԼԽԱՒՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

334· Հ· Ի՞նչ շաղկապ է և ։

Պ· Եւ, զօդիչ շաղկապ է, և կը գործածուի ընդհանրապէս երկու բառ կամ նախադասութիւն միացունելու զոր օրինակ·

Երկինք և երկիր անցցեն ։ Աղաղակէին և ասէին ։

335· Հ· Ուրիշ քանի՞ գործածութիւն ունի և շաղկապը ։

Պ· Եւ շաղկապը կը գործածուի նաև 1° Որպէս, յորժամ, զինչ, որ և ուրիշ քանի մը բառերու հետ, և աշխարհաբար ու շաղկապին զօրութիւնն ունի, զոր օրինակ·

Եղիցի քեզ՝ որպէս և կամիս · Քեզի ըլլայ ինչպէս որ կ'ուզես ։ Եկեսցէ՝ յորժամ և պարապեսցէ · Երբ որ պարապ ըլլայ՝ կու գայ ։ Զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա · Ինչ որ ուզեն՝ թող ըլլայ անոնց ։ Ո ոք և երթայր առ նոսա՝ ընդունէին · Ով որ կ'երթար անոնց՝ կ'ընդունէին ։ Եկից՝ յո և երթիցես · Ուր որ երթաս՝ կու գամ ։ Ժողովեցին զամենեսեան՝ զոր և գտին · Ո-րոնք որ գտան՝ ժողվեցին ։ Որով խւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է · Մարդ ինչ բանէ որ կը յաղթուի՝ անոր ծառան է ։ Ցոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ՝ եր-թիջիք · Որ և իցէ գործի համար որ զձեզ կանչէ՝ գացէք ։

2° Եւ, կը գործածուի մինչև նշանակութեամբ, զոր օրինակ·



Կոտորեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղե-հէմ յերկեմենից և 'ի խոնարհ ։ Ի լուսնոյ և 'ի վեր զա-մենայն ինչ անմահ համարին ։ Ի քէն և այսր է փքինն ։ Այսպէս կ'ըսուի նաև · Ի միջոյն և 'ի խոնարհ, Ի մի-ջոյն և 'ի վեր · Մէջքէն վար, Մէջքէն վեր ։ Յերկնից և այսր · Անտի և այսր ։ Երկինքէն ասդին · Հոնկէ աս-դին ։ Յօրէն ութերորդէ և անդր · Ի նմանէ և անդր · Ութերորդ օրէն անդին · Անկէ անդին ։ (Տես և թիւ 325) ։

336· Հ· Ի՞նչ շաղկապ է կամ ։

Պ· Կամ զատող շաղկապ է, և երկու բառ կամ նախադասութիւն իրարմէ զատելու կը ծա-ռայէ, զոր օրինակ·

Յորժամ եգն քո կամ էշ անկանիցի 'ի խորխորատ ։ Տուր զոր խնդրեմ կամ արձակեա զիս ։

337· Հ· Ե՞րբ կը գործածուի բայց շաղկապը ։

Պ· Բայց, կը գործածուի, երբ բան մը պատ-մուելէն ետքը անոր հակառակը մէջ կը բերուի, զոր օրինակ·

Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար ։ Դուք ոչ ճանաչէք զնա, բայց ես ճանաչեմ զնա ։ Եթէ յաշխարհէ աստի էիք, աշխարհ սիրէր արդեօք զիւրսն · բայց զի չէք յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ ։

Բայց, կը նշանակէ նաև եթէ ոչ, միայն, զոր օրինակ·

Ոչինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ · Հոս հինգ նկանակ միայն ունինք ։ Դաւիթ եկեր զհացն զառաջա-ւորութեան, զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից ։

338· Հ· Ե՞րբ կը գործածուի այլ շաղկապը ։

Պ· Այլ, կը գործածուի, երբ բան մը ժխտուելէն ետքը իբրեւ սուտ կամ իբրեւ ոչ ճիշդ, ճշմարիտը կամ բունը մէջ կը բերուի, զոր օրինակ ·

Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ ։ Հայր, անցցէ յինէն բաժակս, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու ։ Ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ ։

Այլ շաղկապը, ոչ եւս բառերուն հետ գործածուելով, մակբայ է, և, այլեւս, աւելի · կը նշանակէ, զոր օրինակ ·

Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ · այլեւս աւելի երկայն չխօսիմ ձեզի հետ ։ Եւ այլ ոչ եւս ետես զնա · Եւ այլեւս անոր երեսը չտեսաւ ։

339· Հ· Ե՞րբ կը գործածուի իսկ շաղկապը ։

Պ· Իսկ, կը գործածուի երկու հակադրեալ նախադասութիւն կապելու, այսինքն, երբ երկու ներհակ բաներ կը նկարագրուին իբր բաղդատութիւն, զոր օրինակ ·

Ուսնկնդիր լինի խրատու իմաստունն, իսկ անմիտն առօրին յայտնէ զբարկութիւն իւր ։

340· Հ· Ուրիշ ի՞նչ կը նշանակէ իսկ բառը ։

Պ· Իսկ, կը նշանակէ 1° Բայց, սակայն, խօսքի սկիզբը, զոր օրինակ ·

Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ · Ոչ գիտեմ զնա, կին · Բայց Պետրոս ուրացաւ, ևն ։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն · Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա · Սակայն մշակները, երբ տեսան որդին, ըսին, ևն ։



2° Իսկ, անուններու և էական դերանուններու հետ կը նշանակէ նոյն իսկ, ինքն իսկ, զոր օրինակ ·

Ի մարդոյ իսկ առ օրինակ · զի յորժամ գայ (մանուկն) 'ի չափ հասակի մարդոյ, յայնժամ մտէ 'ի չարիս · Բուն իսկ մարդէն օրինակ առ · երբ տղան չափահաս կ'ըլլայ, այն ատեն չարութեան կը մտնէ ։ Այլ զի մի 'ի մէնջ և եթ լուիցէք, գրեալ իսկ ընթերցարուք · Եւ որպէս զի մենէ միայն լսած չըլլաք, բուն իսկ գիրքը կարդացէք ։ Այսու յայտ առնեն թէ զյարութիւնն իսկ մարմնոյ խափանել կամին · Ասով կը ցուցնեն թէ բուն իսկ մարմնոյ յարութիւնը կ'ուզեն խափանել ։ Նաեւ 'ի տէրունական կանխա- իսկ փորձանացն իմանալի է, թէ (սատանայ) չէ կանխագէտ · Նոյն իսկ տէրունական (Քրիստոսի) փորձութենէն կրնայ հասկցուիլ թէ սատանան կանխագէտ չէ ։

Եթէ որդի ուրուք չիցէ մտավարժ, բազում անգամ զծառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի 'ի նա հայեցեալ (որդին) լինիցի մտավարժ · ապա եթէ և այնու եւս ոչ խրատիցի, նմա իսկ մատուցանեն ըզտանջանս · Եթէ մէկուն որդին խելօք չէ, ծառան կը ծեծեն անոր առջեւ որ (որդին) անոր նայելով զգաստանայ, իսկ եթէ անով եւս չխրատուիր, նոյն իսկ ատանոր կու տան տանջանք ։ Զի՞ պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեք իսկ լուաք 'ի բերանոյ դորա · Ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն, քանզի բուն իսկ մենք լսեցինք անոր բերնէն ։

341· Հ· Ի՞նչ տեսակ շաղկապներ են որովհետեւ, և ուրեմն, ապա ։

Պ· Որովհետեւ, (*) և, ուրեմն, ապա, կը կոչուին ապացուցական շաղկապ ։

(*) Փոխանակ քանզի շաղկապի որովհետեւ գործածել սխալ է ։

Որովհետեւ շաղկապով յառաջ բերուած նախադասութիւնը փաստ է, զոր օրինակ.

Որովհետեւ արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ, ինձ արարէք. Որովհետեւ այս պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք: Որովհետեւ 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վերայ բազմաց կացուցից քեզ:

Ուրեմն, ապա կամ ապա ուրեմն շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը հետեւութեան կամ եզրակացութեան է, զոր օրինակ.

Եթէ հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Եթէ ննջեաց, ապա ապրի: Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ: Սիմոն, թագաւորք յումմէ՞ առնուն զհարկն. Նա ասէ. Յօտարաց. ասէ ցնա Յիսուս, Ապա ուրեմն ազատ են որդիքն:

342. Հ. Ուրիշ ի՞նչ կը նշանակէ ապա:

Պ. Ապա կը նշանակէ նաեւ ետքը, և մակբայ է, զոր օրինակ.

Զոր ինչ եսս գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր: Նախ վասն իւրեանց մեղաց մատուցանէին պատարագս, և ապա վասն ժողովրդեանն:

343. Հ. Ի՞նչ շաղկապներ են քանզի, վասն զի, և, վասն որոյ, ուստի:

Պ. Քանզի, վասն զի, և վասն որոյ, ուստի, կը կոչուին պատճառական շաղկապ:

Քանզի, վասն զի, շաղկապներով յառաջ բերուած նախադասութիւնը պատճառ է. վասն որոյ, ուստի շաղկապներով յառաջ բերուածը՝ փորձ կամ արդիւնք է, զոր օրինակ.



(Պիղատոս) կամէր արձակել (զՅիսուս), քանզի գիտէր եթէ առ նախանձու մատնեցին զնա: Ոչ առնուք՝ վասն զի չարաչար խնդրէք:

(Քրիստոս) խոնարհեցոյց զանձն. վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց: Կաքաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ բազմականին և հաճոյ թուեցաւ Հերովդի. ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ:

344. Հ. Ի՞նչ կը ցուցնէ որպէս զի շաղկապը:

Պ. Որպէս զի շաղկապը կը ցուցնէ նպատակ, զոր օրինակ.

Յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժողովուրդս և 'ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին 'ի մարդկանէ:

345. Հ. Քանի՞ նշանակութիւն ունի զի շաղկապը

Պ. Զի շաղկապը կը նշանակէ

1° Քանզի, զոր օրինակ.

Դուք ոչ հաւատայք ինձ, զի չէք յոչխարաց անտի իմոց. Դուք ինծի չէք հաւատար, քանզի իմ ոչխարներէս չէք:

2° Կը նշանակէ որպէս զի, զոր օրինակ.

(Ղազարոս) տացէ նոցա վկայութիւն, զի մի և նոքա (իգայցեն յայս տեղի տանջանաց. Վկայութիւն տայ (իմացունէ) անոնց, որպէս զի անոնք ալ այս տանջանաց տեղը չգան:

3° Կը նշանակէ, որ, զոր օրինակ.

Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զորոմն. Կ'ուզե՞ս որ երթանք քաղենք որոմը:

4° Հարցական մակբայ է և կը նշանակէ ինչո՞-համար, զոր օրինակ ·

Զի՞ կոչէք զիս, տէր, տէր, և զոր ասեմն ոչ առնէք ։ Զի՞նչ գործէք, չե՞ լուծանէք զյաւանակդ ։

346· Հ· Ի՞նչ տեսակ շաղկապներ են իբրեւ, յորժամ, և մինչ, մինչդեռ ։

Պ· Իբրեւ, յորժամ, և, մինչ, մինչդեռ, կը կոչուին ժամանակական շաղկապ ։

Իբրեւ, յորժամ, պարզապէս ժամանակ կը ցուցնեն, զոր օրինակ ·

Իբրեւ ել ՚ի լեառն, մատեան առ նա աշակերտքն · Երբ լեռը ելաւ, աշակերտները եկան անոր ։ Իբրեւ լուան զայս ՚ի Թագաւորէն, գնացին ։

Յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող առաջի քո ։

Մինչ, մինչդեռ, կը ցուցնէ ժամանակի տեւողութիւն, զոր օրինակ ·

Աշակերտք նորա գողացան զնա, մինչ մեք ՚ի քուն էաք · Աշակերտները գողցան զնա, մինչ մեք կը քնանայինք · (կամ, Թրքաբանութեամբ, մեր քնացած ատենը) ։ Մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, հրեշտակ տեառն երեւեցաւ նմա · Մինչ նա զայս կը խորհէր (անոր այս բանը խորհած ատենը), Աստուծոյ հրեշտակը երեւցաւ անոր ։

347· Հ· Ի՞նչ շաղկապ է եթէ ։

Պ· Եթէ կը կոչուի ենթական շաղկապ, և յառաջ կը բերէ ենթադրութիւն կամ պայման, զոր օրինակ ·

Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ ։



348· Հ· Ուրիշ ի՞նչ տեսակ շաղկապ է եթէ ։

Պ· Եթէ, ինչպէս նաեւ թէ, զի, երբ կը նշանակեն որ, բացատրական շաղկապ կը կոչուին, և յառաջ կը բերեն միջանկեալ նախադասութիւն մը որ գլխաւոր նախադասութեան մը բային իբրեւ տէր բայի կամ խնդիր է, զոր օրինակ ·

Գրեալ է թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ · Գրուած է որ մարդ հացով միայն չապրիր ։

Հոս, միջանկեալ նախադասութիւնը թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ տէր բայի է գրեալ էին ։

Համարէին եթէ ՚ի գերեզման երթայ, զի լացցէ անդ · Կարծեցին որ գերեզման կ'երթար որպէս զի հոն լար ։

Հոս, միջանկեալ նախադասութիւնը եթէ ՚ի գերեզման երթայ, սեռի խնդիր է համարէին բային ։

Կամիմ զի կացցէ դա · Կ'ուզեմ որ ատիկայ կենայ ։

Հոս, միջանկեալ նախադասութիւնը զի կացցէ դա, սեռի խնդիր է կամիմ ին ։

349· Հ· Ուրիշ ի՞նչ գործածութիւն ունի եթէ կամ թէ ։

Պ· Եթէ, թէ կը գործածուի նաեւ իբրեւ տարակուսող շաղկապ փոխանակ կամի, երբ խօսքը հարցական է, զոր օրինակ ·

Ի քէ՞ն ասես զայդ եթէ այլքն ասացին քեզ · Քեզմէ՞ կ'ըսես այդ թէ ուրիշներն ըսին քեզ · Արժա՞ն է հարկս տալ կայսեր եթէ ոչ · տացո՞ւք թէ ոչ տացուք ·

350· Հ· Ի՞նչ տեսակ նախադասութիւն յառաջ կը բերեն մինչ, մինչեւ, մինչդեռ ։

Պ· Մինչ, մինչեւ, մինչդեռ, այնպիսի նախադասութիւն մը յառաջ կը բերեն որ առաջին նախադասութեան սաստկութիւնը կը ցուցնէ, և կը նշանակեն այնպէս որ, զոր օրինակ ·

Եւ գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչեւ կամ մինչդեռ հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա . Ժողովուրդը դարձեալ անոնց հետ կ'ուգայ, այնպէս որ հաց անգամ չէին կրնար ուտել ։ Հատն մանանխոյ, յորժամ աճիցէ, լինի ծառ մինչեւ գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա ։ Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչեւ զորդին իւր միածին ետ ։

Մինչեւէն ետքը բայն ընդհանրապէս աներեւոյթ կը դրուի ։

351· Հ· Ուրիշ ի՞նչ կը նշանակէ մինչեւ ։

Պ· Մինչեւ կը նշանակէ նաեւ ·

1° Մինչեւ որ, , , զոր օրինակ ·

Աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն ։ Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի · Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս ամէն բան ըլլայ ։

---

# ՄԱՍՆ Գ·

## ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

352· Հ· Ի՞նչ է շարադասութիւն ։

Պ· Շարադասութիւն է քերականութեան այն մասը որ կը խօսի նախադասութեան կարգին և քերականական ձեւերու վրայ ։

353· Հ· Ի՞նչ է նախադասութիւն ։

Պ· Նախադասութիւն կ'ըսուի խօսք մը կամ գրել մը որ բան մը կը հաստատէ կամ կը ժխտէ, զոր օրինակ · Աստուած արդար է, Աստուած անիրաւ չէ, են նախադասութիւն, առաջինը՝ հաստատական, երկրորդը՝ ժխտական ։

354· Հ· Քանի՞ մաս ունի նախադասութիւնը ։

Պ· Նախադասութիւնն ունի, յայտնի կամ լռելեայն, երեք մաս · ենթակայ, բայ և ստորոգելի ։ Ենթական է տէր բային, բայն է էական բայը եմ, ես, է, ստորոգելին այն բառն է զոր էական բայը կը հաստատէ կամ կը ժխտէ ենթակային վրայ ։

Վերի նախադասութեանց մէջ, Աստուած ենթակայ է · արդար, անիրաւ, ստորոգելի են · էն բայ է որ առաջին նախադասութեան մէջ արդար ստորոգելին կը հաստատէ Աստուած ենթակային վրայ · երկրորդին մէջ՝ անիրաւ ստորոգելին նոյնպէս Աստուած ենթակային վրայ կը ժխտէ չ մակբայով ։

355· Հ· Կա՞յ ամէն Նախադասութեան մէջ ստորոգելի :

Պ· Ամէն Նախադասութեան մէջ կայ ստորոգելի, կամ ոչ, երբ բայը էական բայն է, ինչպէս վերի օրինակներուն մէջ, և կամ՝ միացեալ էական բային հետ, երբ բայն ածական բայ է, այսինքն բաց էական բայէն ուրիշ որ և իցէ բայ է. զոր օրինակ, սա Նախադրութեանց մէջ, Ես խօսիմ, Դու ընթեռնուս, Հայր սիրէ, ստորոգելին և բայը միացած են, քանզի խօսիմ, ընթեռնուս, սիրէ, կը նշանակեն խօսող եմ, ընթերցող ես, սիրող է :

356· Հ· Նախադասութեանց մէջ, բաց յենթակայէն, բայէն և ստորոգելիէն, ուրիշ բառեր չե՞ն գտնուիր :

Պ· Նախադասութեանց մէջ, բաց ենթակայէն, բայէն և ստորոգելիէն, կրնան գտնուիլ ուրիշ բառեր, որ լրացուցիչ կամ յաւելուած կը կոչուին, քանզի Նախադասութեան էական մասերուն, այսինքն ենթակային և ստորոգելոյն կամ բային, իմաստը լրացունելու (ամբողջացունելու, որոշելու) կը ծառայեն : Ուստի լրացուցիչ են ածականը, խնդիրը (յատկացուցիչ, սեռի և բնութեան խնդիր) և մակբայը : Զոր օրինակ ·

Աստուած ճշմարիտ է արարիչ երկնի և երկրի : Դու խորհիս զայդ ’ի սրտի քում : Նա տրտմեցաւ յոյժ :

Այս Նախադրութեանց առաջնոյն մէջ, ինչպէս յայտնի է, Աստուած ենթակայ է, է՛ բայ, արարիչն՝ ստորոգելի · ասոնք Նախադասութեան էական մասերն են · իսկ ճշմարիտ ածականը և երկնի և



երկրի յատկացուցիչը Նախադասութեան երկրորդական մասերն են, և լրացուցիչ են, առաջինը՝ ենթակային, երկրորդը՝ ստորոգելոյն :

Երկրորդ Նախադասութեան մէջ, Դու ենթակայ է, խորհիս բայ և ստորոգելի է · զայդ ’ի սրտի քում սեռի և բնութեան խնդիրներն լրացուցիչ են խորհող ստորոգելոյն (քանզի խորհիս կը նշանակէ խորհող ես) :

Երկրորդին մէջ, Նա ենթակայ է · տրտմեցաւ, այսինքն՝ եղեւ տրտմող, բայ և ստորոգելի է · յոյժ մակբայը լրացուցիչ է տրտմող ստորոգելոյն :

357· Հ· Ի՞նչ բանի կը ծառայեն Նախադասութիւնները :

Պ· Երկու, երեք, երբեմն աւելի Նախադասութիւններ, երբ ներքին իմաստով իրարու հետ կապեալ են, խօսք կը կազմեն, զոր օրինակ ·

Որ սիրեն զիս՝ || սիրեսցի ’ի հօրէ իմմէ : Եթէ առնիցես ողորմութիւն, || մի գիտասցէ ձախ քո || զինչ գործէ աջ քո : Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, || մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի, || զի մի երբեք մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, || և դատաւորն (մատնիցէ) դահճի :

Ասոնք խօսքեր են · առաջինը կը բաղկանայ՝ երկու, երկրորդը՝ երեք, և երրորդը չորս Նախադասութենէ :

358· Հ· Ի՞նչպէս կը ճանչցուին խօսքի մէջ գտնուած Նախադասութիւնները :

Պ· Դիմաւոր բայերէն · ուստի խօսքի մէջ որչափ դիմաւոր բայ կայ, այնչափ Նախադասութիւն կայ : Այսպէս նախընթաց երեք խօսքին առաջնոյն

մէջ երկու նախադասութիւն կայ . քանզի երկու դիմաւոր բայ կայ , «երէ» և «երէացի» : Երկրորդին մէջ նախադասութիւններն երեք են , քանզի դիմաւոր բայերն երեք են , առնիցես , գիտասցէ , գործէ : Երրորդին մէջ նախադասութիւնը մին է , քանզի մին դիմաւոր բայ կայ , լեր , իցես , մտանիցէ և ուրիշ մտանիցէ մը՝ լռելեայն :

359· Հ· Իրարու հետ ի՞նչպէս կը կապուին խօսք կազմող նախադասութիւններ :

Պ· Խօսք կազմող նախադասութիւններ , իրենց իրարու հետ յարաբերութեան եղանակին (*) նայելով , յարաբերական դերանուամբ և կամ շաղկապով մը կը կապուին :

Ասեն ցնա արքն || որ ընդ նմա էին : Վատնեաց զինչս իւր , || զի կեայր անառակութեամբ :

Առաջին խօսքին մէջ նախադասութիւնները կապուած են որ յարաբերականով . երկրորդին մէջ՝ զի շաղկապով :

360· Հ· Քանի՞ տեսակ են նախադասութիւնք :

Պ· Նախադասութիւնք երկու տեսակ են , գլխաւոր և միջանկեալ : Յարաբերականով և կամ շաղկապով մը կապուած նախադասութիւնը միջանկեալ է , և այն որոյ հետ միջանկեալը կը կապուի՝ գլխաւոր է : Ուստի վերի օրինակներուն մէջ , ասեն ցնա

(*) Եթէ նախադասութեան մը ուրիշ նախադասութեան հետ յարաբերութիւնը ներքին յարաբերութիւն է , որ յարաբերականով կը կապուի անոր հետ . եթէ ժամանակեան յարաբերութիւն է , երբ շաղկապով . եթէ պատճառի յարաբերութիւն է , քանզի շաղկապով , այլովքն հանդերձ :



արքն , վատնեաց զինչս իւր , գլխաւոր նախադասութիւն են . որ ընդ նմա էին , և զի կեայր անառակութեամբ , միջանկեալ են :

361· Հ· Նախադասութիւն մը յօրինելուն ի՞նչ կ'ըսուի :

Պ· Նախադասութիւն մը յօրինելուն , ինչպէս նաև այլ և այլ նախադասութիւններէ խօսք մը կազմելուն , կ'ըսուի շարադրել . և շարադրութիւն այն կարգն է որով նախադասութեան մը մէջ բառեր , և խօսքի մը մէջ նախադասութիւններ կը շարուին :

362· Հ· Քանի՞ է շարադրութեան կարգը :

Պ· Շարադրութեան կարգը երկու է , քերականական և ճարտասանական :

## Ա· ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

363· Հ· Ի՞նչ է քերականական կարգ :

Պ· Քերականական կամ վերլուծական կ'ըսուի շարադրութեան կարգը , ուր գլխաւոր գաղափարք առաջ կարգադրուած են քան երկրորդական գաղափարները : Ընթական կամ տէր բային գլխաւոր գաղափար է ստորոգելւոյն նկատմամբ որ երկրորդական է . նոյնպէս գոյականն՝ ածականին նկատմամբ , խնդրառուն՝ խնդրոյն նկատմամբ , ինչպէս նաև գլխաւոր նախադասութիւնը՝ միջանկեալ նախադասութեան նկատմամբ :

364· Հ· Ուրեմն նախադասութեան մը բառերն ի՞նչպէս շարուելու են որ շարադրութիւնը քերականական ըլլայ :

Պ· Որպէս զի շարադրութեան կարգը քե-

րականական ըլլայ, նախադասութեան բառերն հետեւեալ կերպով շարուելու են.

1° Ենթական, այսինքն տէր բային, բայէն և ստորոգելիէն առաջ, զոր օրինակ.

Ես եմ հովիւ։ Դու ես վէմ, Նոքա խորհեցան։ Այրն էր մեծատուն։

2° Որ և իցէ լրանալի բառ (ենթակայ, ստորոգելի, բայ), իւր լրացուցչէն (ածականէն, բացայայտչէն, յատկացուցչէն, խնդրէն և մակբայէն) առաջ, զոր օրինակ.

Այրն այն էր մեծատուն։ Այրն, Յովբ, էր արդար։ Եղբարքն Յովսեփայ իջին յԵգիպտոս։ Նա էր իշխան երկրին։ Եւ նա տրտմեցաւ յոյժ։ Տեսի զտեղ 'ի ներքոյ Բղէնտոյն։ Այրն այն, Յովբ, էր մեծատուն։ Դշխոյն մծ հարաւոյ եկն տեսանել զՍողոմոն։ Դու խորհիս զայդ 'ի սրտի քում։ Հերովդէս սպան զՅակոբոս, զեղբայրն Տեառն, սրով։ Կապանք յեռաց նորա լուծան։ Արք տեղւոյն լուան զհասանել նոցա անդր։ Կոչեաց զերկուս 'ի ծառայից իւրոց։

Բոլոր այս նախադրութեանց մէջ շարադրութեան կարգը քերականական կամ վերլուծական է, քանզի ամենուն մէջ լրացուցիչներն (ածական, բացայայտիչ, յատկացուցիչ, սեռի և բնութեան խնդիր, մակբայ) յետոյ դրուած են քան զլրանալիս։

365· Հ· Ինչո՞ւ համար այս կարգն ըսուած է քերականական կամ վերլուծական։

Պ· Շարադրութեան այս կարգն ըսուած է քերականական կամ վերլուծական, վասն զի, երբ նախադասութիւն մը կը լուծենք քերականօրէն, նախ կը յայտնենք ենթական իւր լրացու-



ցիչներով· ապա բայը և ապա ստորոգելին իւր լրացուցիչներով· նոյնպէս նախ լրացուցիչը կը յիշենք, և ապա անոր լրացուցիչը, զոր օրինակ.

Արք տեղւոյն լուան (եղեն լսող) զհասանել նոցա անդր· Տեղւոյն մարդիկը լսեցին (լսող եղան) անոնց հոն հասնելը։

Այս նախադասութեան գրաբարին կարգն է քերականական կամ վերլուծական, քանզի կը լուծուի այն կարգով որով շարուած է։

| | |
|---|---|
| Արք, | Մարդիկը· ենթակայ կամ տէր բայի։ Ո՞ր մարդիկը· — Արք տեղւոյն· Տեղւոյն մարդիկը· — Արք տեղւոյն |
| Տեղւոյն, | Սեռական խնդիր կամ յատկացուցիչ արք ենթակային։ Արք տեղւոյն· Տեղւոյ մարդիկը ի՞նչ ըրին· — Եղեն, եղան· |
| Եղեն, | Բայ արք ենթակային։ Արք տեղւոյն եղեն· Տեղւոյն մարդիկը եղան· — Ի՞նչ· — Լսող· լսող· |
| Լսող, | Ստորոգելի արք ենթակային։ Արք տեղւոյն եղեն լսող· Տեղւոյն մարդիկը եղան լսող· — Ի՞նչ բանը· — զհասանել· հասնելը· |
| Զհասանել, | Սեռի խնդիր լսող ստորոգելոյն։ Արք տեղւոյն լուան զհասանել· Տեղւոյն մարդիկը լսեցին հասնելը· — Որո՞ւն հասնելը· — Նոցա· անոնց· |
| Նոցա, | Սեռական խնդիր կամ յատկացուցիչ հասանել սեռի խնդրոյն։ Արք տեղւոյն լուան զհասանել նոցա· Տեղւոյն մարդիկը լսեցին անոնց հասնելը· — Ո՞ւր· — Անդր· հոն· |
| Անդր, | Մակբայ, որ հասանել սեռի խնդրոյն մի պարագան, այսինքն տեղւոյ պարագան, կը ցուցնէ։ |

366· Հ· Նախադասութիւն մը ինչո՞ւ համար այս կարգով կը լուծուի ։

Պ· Վասն զի տրամաբանութեան բնական կարգն այս է, և միտքն այս կերպով կը լուծէ և կ'ըմբռնէ իր գաղափարները ։

367· Հ· Պէ՞տք է որ շարադրութեան կարգը միշտ քերականական ըլլայ ։

Պ· Ոչ, կրնայ երբեմն ձևաւոր ըլլալ ։

## Բ· ՁԵՒԱՒՈՐ ԿԱՐԳ

368· Հ· Ի՞նչ է շարադրութեան ձևաւոր կարգը ։

Պ· Շարադրութեան կարգը ձևաւոր կ'ըսուի, երբ Արտուղութիւն, Զեղչում և Աւելադրութիւն կոչուած քերականական ձևերուն միոյն է ։

### 1· Արտուղութիւն

369· Հ· Ի՞նչ է արտուղութիւն ։

Պ· Արտուղութիւն կ'ըսուի, երբ նախադասութեան մասերը քերականական կարգէն տարբեր կը շարուին, զոր օրինակ, երբ բայը կամ ստորոգելին առաջ կը դրուի քան զենթակայն, կամ լրացուցիչ մը քան զլրանալի բառը, զոր օրինակ ·

Առն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս ։ Ի միւսանգամ Պաւղոսի յԵրուսաղէմ ելանել ։ Երկուց արարչաց, զբարւոյ և զչարի, ի միոջէ հօրէ զծնունդսն համբաւէ ։ Առ 'ի գլխաւորն և զստուերն զերկուց մեծացն անօթոց 'ի բաց 'ի միջոյ փարատելոյ ։ Վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա ։



Այս նախադասութեանց մէջ շարադրութեան կարգն արտուղի է, քերականական կարգն այս է ·

Անդք առն ուրումն մեծատան ետուն տոհմականս ։ Ցելանելն Պաւղոսի միւսանգամ յԵրուսաղէմ ։ Համբաւէ զծնունդս երկուց արարչաց, բարւոյ և չարի, 'ի միոջէ հօրէ, եւայլն ։

370· Հ· Քանի՞ է արտուղութիւնը ։

Պ· Արտուղութիւնը երկու է · հարկաւոր և ազատ ։

## Ա· ՀԱՐԿԱՒՈՐ ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

371· Հ· Ե՞րբ հարկաւոր է արտուղութիւնը ։

Պ· Արտուղութիւնն հարկաւոր է, երբ կը տեսնուի որ, եթէ բառի մը քերականական կարգը պահուի, խորդութիւն կամ երկդիմութիւն պիտի ծագի, զոր օրինակ ·

1° Քերականական կարգով ածականը յետադաս ըլլալով գոյականին՝ անոր հետ կը հոլովի (Տես թիւ 52) ։ Բայց խորդութենէ կամ երկդիմութենէ խուսելու համար հարկ է երբեմն ածականը գոյականին նախադաս ընել, զոր օրինակ ·

Վասն իջանելոյ աստուածեղէն սուրբ հոգւոյն
Դառն և ստահակին կործանման Հերովդի ։

Այս նախադասութեանց առաջնոյն մէջ, եթէ աստուածեղէն ածականը հոգւոյ գոյականէն ետքը դըր- ուելով հոլովի այսպէս · Վասն իջանելոյ հոգւոյն սրբոյ աստուածեղէնի, խորթ կ'ըլլայ ։ Երկրորդ նախադասութեան մէջ, եթէ դառն և ստահակին ածականները կործանման գոյականէն ետքը կը դրուին, այսպէս, կոր-

ծնունդն տան և ապարանիցն Հերովդի, երկդիմութիւն կը ծագի, քանզի կրնայ տան և ապարանիցն Հերովդէի հասկցուիլ:

2° Բերականական կարգով յատկացուցիչը յատկացեալէն ետքը պիտի դրուի · բայց նոյնպէս երկդիմութեան պատճառաւ կրնայ յատկացեալէն առաջ դրուիլ, զոր օրինակ ·

Յովհաննու Եղբայրն որ սպանաւ սրով:

Այս նախադասութեան մէջ Յովհաննու յատկացուցիչը իւր յատկացեալէն, Եղբայր բառէն, առաջ դրուած է · եթէ ետքը դրուէր այսպէս, Եղբայրն Յովհաննու որ սպանաւ սրով, իմաստը երկդիմի կ'ըլլար, և կրնար հասկցուիլ թէ սպաննուողն Յովհաննէս էր:

Նոյնպէս յարաբերական դերանուն յատկացուցիչը հարկաւոր արտուղութեամբ միշտ յատկացեալէն առաջ կը դրուի, զոր օրինակ ·

Կինն որդւոյ տանն պատմի ընդ ամենայն աշխարհ:

Այս նախադրութեան մէջ որդւոյ յարաբերականը, որ տանն բառին յատկացուցիչն է, անկէ առաջ դրուած է, որպէս զի անմիջապէս իւր յարաբերելոյն, կին բառին, կից ըլլայ (Տես Թիւ 228) · քանզի չկրնար ըսուիլ, կինն՝ տանն որդւոյ պատմի:

3° Բերականական օրէնքով տէր բային բայէն պիտի չզատուի, բայց տէր բային բայէն զատել հարկ է, երբ տէր բայիէն անմիջապէս ետքը միջանկեալ նախադասութիւն մը կայ, որ անոր մի յատկութիւնը կը բացատրէ, զ~ օրինակ ·



Յակոբոս, զոր սպան Հերովդէս, կոչէր եղբայր Տեառն ·
(Տես և Թիւ 288—292) ·

4° Հարցական նախադասութեանց մէջ տէր բային բայէն ետքը կը դրուի, իսկ հարցական բառն իրեն վերաբերեալ մասերով բայէն առաջ, զոր օրինակ ·

Որդւո՞յ ոք իցէ սա: Վասն որո՞յ գործոյ կամիք (դուք) քարկոծ առնել զիս: Զի՞նչ գործ գործեալ է քո:

Առաջին նախադասութեան մէջ ոք տէր բային բայէն ետքը գրուած է, որդւո՞յ ու ստորոգելին՝ առաջ · երկրորդ նախադասութեան մէջ դուք տէր բային բայէն ետքը գրուած է, վասն որո՞յ գործոյ խնդիրն՝ առաջ, Երրորդ նախադասութեան մէջ գործեալ է բային քո սեռական տէր բային (Տես Թիւ 184) բայէն ետքը գրուած է, և զի՞նչ գործ սեռի խնդիրն՝ առաջ:

5° Բերականական կարգով մակբայները բայէն ետքը կը դրուին, բայց ոչ, մի՛, բացասական և հայեարգելական մակբայներն (Տես Թիւ 169) ըէնի մէջ սովորաբար կը դրուին բայէն առաջ, զոր օրինակ ·

Ոչ եմ, կամ, չեմ արժանի · Ոչ կամիմ · Մի սիրէք:

## Բ· ԱԶԱՏ ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

372· Հ· Ե՞րբ ազատ է արտուղութիւնը ։

Պ· Արտուղութիւնն ազատ է, երբ շարադրութեան քերականական կարգը փոխել հարկ չէ, այլ գրողին կամքէն կամ ընտրողութենէն կախում ունի՝

373· Հ· Հայերէնի մէջ սովորական արտուղութիւնք քանի՞ են ։

Պ· Հայերէնի մէջ սովորական արտուղութիւնք չորս են ։

1°. Ենթակայի և բայի արտուղութիւն · այսինքն՝ բայը ենթակայէն (տէր բայիէն) առաջ դնել · զոր օրինակ ·

Էր այր մեծատուն ։ Էջ սա արդարացեալ 'ի տուն իւր քան զնա ։ Ասէ Պետրոս, Երթամ ձուկն որսալ · ասեն ցնա · Գամք և մեք ընդ քեզ ։

2°. Ենթակայի և ստորոգելւոյ արտուղութիւն · այսինքն՝ ստորոգելին բայէն առաջ դնել, և ենթական բայէն ետքը, զոր օրինակ ·

Մեծատուն էր այրն ։ Լաւ էք դուք քան զմեզ ։ Երագունք են ոտք նոցա ։ Երանելի են կանայք քո ։

3°. Յատկացուցչի և յատկացելոյ արտուղութիւն · այսինքն՝ յատկացուցիչը յատկացեալէն առաջ դնել, զոր օրինակ ·

Աստուծոյ բարբառ է ։ Պատերազմաց սկիզբն յագահութենէ մարդկան եղեւ ։ Եթէ Աստուծոյ կամօք գործին այսպիսի չարիք, ընդէ՞ր 'ի գործելեաց չարեաց վրէժս պահանջէ Աստուած ։ Ոչ իշխէ արքայից արքայն ծառայս 'ի կայսր խրախուսել, և ոչ կայսեր ու ծառայս 'ի Սասանականն խիղախել ։



4°. Խնդրառուի և խնդրոյ արտուղութիւն · այսինքն՝ խնդիրը խնդրառուէն առաջ դնել ։

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ ։ Զհիւանդս և զհարբս դուլորեր ։ Զօրէնս քո ուսուցէ ։ Զպատուիրանս իմ պահեսցէք ։ Յովսեփայ և Դանիելի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան · այսինքն, Տեսիլք մեծամեծ իրաց յայտնեցան Յովսեփայ և Դանիելի ։ Թուի թէ 'ի ծովէ ելանէ արեգակն · այսինքն, Թուի թէ արեգակն ելանէ 'ի ծովէ ։ Եւ զգողութենէ նոյն բանք են · այսինքն, Նոյն բանք են և զգողութենէ ։ Ի բնակչաց Թափուր զերկիրն կացուցանէր · այսինքն, Կացուցանէր զերկիրն Թափուր 'ի բնակչաց ։ Փորձելոյ վասն ասէր · այսինքն, Վասն փորձելոյ ։ Ծովակն որ զնովաւ շուրջ էր · այսինքն, Ծովակն որ էր շուրջ զնովաւ ։ Քան զաւուրս ինչ յառաջ· փոխանակ, Յառաջ քան զաւուրս ինչ ։ Այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ · փոխանակ, Այլ ոք իջանէ յառաջագոյն քան զիս ։ Ի ներքոյ թզենւոյն տեսի զքեզ · այսինքն, Տեսի զքեզ 'ի ներքոյ թզենւոյն ։

374· Հ· Երբ յատկացուցիչը յատկացեալէն առաջ կը դրուի, յատկացելոյն նախդիրն ի՞նչ կ'ըլլայ, եթէ յատկացեալը նախդիր ունի ։

Պ· Երբ յատկացուցիչը յատկացեալէն առաջ կը դրուի, յատկացելոյն նախդիրը (եթէ յատկացեալը նախդիր ունի) կրնայ յատկացուցչին վրայ միայն դրուիլ, կամ երկուքին վրայ ևս կրկնուիլ, և կամ յատկացելոյն վրայ միայն մնալ ։

Առ զնորին սուսեր և եհատ զգլուխ նորա ։ Գիտել զտարեաց փոփոխմունս և զաստեղաց դիրս ։ Սատանայ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէն ։ Սատանայ յԵբրայեցւոց և յԱսորւոց լեզուէ խոտորեալ

Թարգմանի ։ Ցուղղոյն սնանալոյ և 'ի մտաց իսկ անկանի մարդն ։ Դարձան յիւրեանց տեղիս ։ Ընդ Յիսուսի մկրտելն և կալ յաղօթս ։

Այս օրինակներուն մէջ Նախդիրը Նախադաս յատկացուցչին վրայ միայն գրուած է ։

Զարժանի զվրիժուց զհատուցումն անդրէն յանձն իւր ընկալեալ ։ Զմեծին Աստուծոյ Արտեմեայ զմեհեանն ։ Զորոյ ես զգլուխն հատի ։ Զօդոյն, որ ցայգ ունու 'ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ չքթեցուցանէ 'ի բաց զտամկութիւնն. Ի միւսանգամ Պաւղոսի յԵրուսաղէմն ելանել ։

Այս օրինակներուն մէջ Նախդիրը թէ Նախադաս յատկացուցչին և թէ յատկացելոյն վրայ գրուած է ։

Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ եդին ։ Այլ նոցա որպէս զմորթն զգենումք և ոչ զխաւէ, և զմիսն, եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր, ոչ զխասէր ։ Նորա զմիտս հաճէք, այլ զտխեղերաց աբարչին միտս ոչ կարէք հաճել ։ Քաղաքի միոյ մեծի զիշխանութիւն հաւատալ ։ Երկուց արարչաց, զբարւոյ և զչարի, 'ի միջէ հօրէ զծնունդսն համբաւէ ։

Ազգ՝ որոյ ոչ լուիցես զլեզու ։ Որոյ զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա ։ Որոց ընդ հարսն երդմունս և դաշինս արարեր ։ Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին ։ Որոց հուր յաչացն արձակիցի ։

Այս օրինակներուն մէջ Նախդիրը Նախադաս յատկացուցչին վրայ գրուած չէ ։

Ցուցց ելանել բառն այսպէս կը գործածուի, այսինքն, Նախդիրը Նախադաս յատկացուցչին վրայ չգրուիր, զոր օրինակ ․



Շատից յաչաց ելանէին ․ Աստուծոյ յաչաց ելին ․ Նոյն իսկ հանէ զքեզ առնն յաչաց ։

375․ Հ․ Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէ առաջ կը դրուի, և նախադրութիւնը նախդիր ունի, նախդիրն ի՞նչ կ'ըլլայ ։

Պ․ Եթէ նախադրութեան մը խնդիրը նախադրութենէն առաջ կը դրուի, և նախադրութիւնը նախդիր ունի, այս նախդիրը կրնայ երկուքին վրայ եւս կրկնուիլ, և կամ միայն նախադաս խնդրոյն վրայ դրուիլ, զոր օրինակ ․

Ի պէս պէս փորձութեանց ի մէջ անկանիցիք ․ Ի ձերում միջի ։ Զմեր կնի ոչ հրջէր ։ Զո՞յր զհետ ելեալ ես ։ Ի մեր վերայ ։

376․ Հ․ Մակբայներու և շաղկապներու արտասանութեան վրայ ի՞նչ գիտելիք կայ ։

Պ․ 1° Երբեմն ոչ բացասական և մ՛ արգելական մակբայը, և, ընդէ՞ր, զի՞նչ, ո՞րպէս, ո՞րչափ, հարցական մակբայները կը դրուին բայէն ետքը ։

Խող թաթահերձ է, բայց որոճայ ոչ, պիղծ իցէ նա ձեզ ։ Տկարանայ ինչ ոչ քեզ ։ Գրեցաւ իսկ ոչ ։ Եթէ գովեսցես զբանսն, և առնիցես ոչ, մեծամեծ պատիժք են ։ Ցայտ է թէ բնաւ և էր իսկ ոչ Զրուանն ։ Նա և առնուին իսկ ոչ յանձն ։ Բնաւ և յիշեմ իսկ ոչ ։ Որ ոչն գործիցէ, և կերիցէ մ՛ ։ Եւ փրկէր իսկ ընդէ՞ր զայլոյ արարածս ։ Բնաւ իսկ սուտ ընդէ՞ր կոչիցի ։ Եւ գոհանային զի՞նչ ։ Կամի զի կանգնեսցէ ․ և կանգնէ ո՞րպէս ։

2° Երբեմն եւս շաղկապներէն ոմանք փոխանակ դրուելու նախադասութեան սկիզբը, մէջտեղը կը դրուին, զոր օրինակ ․

Սով եթէ լինիցի յերկրի , փոխանակ՝ Եթէ սով լինի-
ցի յերկրի : Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նո-
սա : Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք : Զայն եթէ-
ղեւթեան ցանկութիւն շահիցն հնարեցաւ : Կոյր կուրի յոր-
ժամ առաջնորդէ : Ջերմ մինչդեռ էր իբրեւ հուր :

377. Հ. Ի՞նչ գիտելիք կայ հրամայել բային վրայ :

Պ. Երբ ոչ, չ բացասական մակբայը , փո-
խանակ դրուելու հրամայել բային աներեւոյթ խնդ-
րոյն վրայ , հրամայել բային վրայ կը դրուի , այս
բայը կը նշանակէ արգելել , ինչպէս էնծէ , զոր օրին.

Զգրաստու թշնամւոյն անկելոյ բեռամբ չհրամայէ
զանց առնել : Զուլ 'ի մօր կաթն չհրամայէ եփել : Ու-
տել 'ի պտղոյ ծառոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ:
Վասն հոգւոյ չոգւոյ հոգալ , և վասն մարմնոյն չհրամայ-
եաց տատամսել . Պաւղոս չհրամայեաց զարդարել կա-
նանց : Զհրամայեաց ուժեք 'ի վեր հանել . փոխանակ ըսե-
լու՝ Հրամայէ չառնել զանց , չեփել , չզարդարել :

378. Հ. Ուրիշ ի՞նչ տեսակ արտաղութիւն կայ :

Պ. Տեսակ մը արտաղութիւն եւս կայ , և
սա է որ իրարու հետ անմիջապէս կապակցութիւն
ունեցող բառերու մէջ ուրիշ բառեր կը մտնեն ,
զոր օրինակ .

1° Նախադրութեան և խնդրոյն մէջ :

Թշնամի կոչի (սատանայ) վասն զորոմն 'ի մէջ ցորե-
նոյն սերմանելոյ . փոխանակ՝ Վասն սերմանելոյ զորոմն ,
եւն : Վասն 'ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ : Յետ զաշ-
խարհն ընդ ձեռամբ նուաճելոյ : Ան 'ի զաւերն բաբե-
լոնի նշանակելոյ :



2° Բացասական մակբային և բային մէջ , զոր
օրինակ .

Մի՛ , զի չեմք ակն , առասցուք թէ չեմք 'ի մարմնո՛յ
անտի . փոխանակ՝ Մի ասասցուք թէ չեմք 'ի մարմնոյ ,
այնու. զի չեմք ակն : Մի՛ , ընդ այնոսիկ որ գործեն զա-
նօրէնութիւն , կորստականեր զիս . Մի՛ , վասն զի չէ դիւ-
րին մտաց մերոց կալ 'ի վերայ սկզբան աշխարհիս թէ
զիարդ և որպէս իցէ , կարծիցեմք թէ անսկիզբն և ա-
ռանց արարչի իցէ : Զի մի՛ , մթարքն որ զբօքն շողայ-
ցեն , արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լեզեն : Նւ
ոչ , թէ միշտս ինչ կրիցեն , դէտն :

3° Երկու բառէ շինուած նախադրութեանց
կամ մակբայից մէջ , զոր օրինակ .

Ընդ հողմոյն դէմ . փոխանակ՝ Ընդդէմ հողմոյն : Գրէ
իսկ եթէ ամենայն . փոխանակ՝ Գրեթէ ամենայն :

Այսպէս կ'ըսուի նաեւ .

Այլ ինչ ազգ : Այլ իմն ազգ . Ոչ այսչափ միայն , այլ
և այլ եւս ազգ . փոխանակ՝ Այլազգ ինչ , Այլազգ իմն ,
Այլազգ եւս :

4° Երկու բառէ շինուած ստութիւններու մէջ ,
զոր օրինակ .

Ապա եթէ զմարտուսոյցն ըմպա ոչ ածիցեն . փոխանակ՝
Ոչ ածիցեն զմտաւ : Արկ Հերովդէս արքայ ձեռն չարչա-
րել զոմանս . փոխանակ՝ Արկ ձեռն Հերովդէս , եւն :
Զի մի , մթարքն որ զբօքն շողայցեն , արգել հայե-
լոյ 'ի յստակութիւն լուսոյն լեզեն . Արդար Աստուած ազգ
որդւոցն Իսրայելի : Յորժամ առաջնորդն ազգ , կամ ո-
տամբ կամ ձայնիւ , առնիցէ : Զինչ ինչ յայտ օրհնու-
թիւնքն առնիցեն : Յայտ 'ի Յոբայ փորձանացն է :

5° էական բայէ և անցեալ ընդունելութենէ բաղադրեալ ժամանակներու մէջ՝ էականն բային և անցելոյն մէջտեղ, զոր օրինակ ·

Ես ծնեալ իսկ 'ի դմին եմ · փոխանակ՝ Ես ծնեալ եմ իսկ 'ի դմին։ Որ էր, վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին և սպանութեան, արկեալ 'ի բանտ։ Մինչև ձեր խնդրեալ ինչ էցէ։ Զեւ էցէ հաւատս խօսեալ։ Անդ էր նաւն Նաւելոց գրեալինան։

## 2· Զեղչումն

379· Հ· Ի՞նչ է զեղչումն ։

Պ· Զեղչում կ'ըսուի, երբ նախադասութեան մի մասը զանց առնուած է, բայց լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ ·

Հռաքէլ լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին (նոքա կենդանի)։

Այս խօսքին փակագծի մէջ առնուած մասը, նոքա և կենդանի բառերն, որ էին բային ենթակայ և ստորոգելի են, զեղչուած են, բայց կ'իմացուին լռելեայն ։

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի · գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ (մատնեսցէ զքեզ) դահճի ։

Այս խօսքին փակագծի մէջ առնուած մասը, մատնեսցէ բայն, իւր սեռի խնդրով զեղչուած է, բայց երկուքն ալ լռելեայն կ'իմացուին ։

Զակքէոս խնդրէր տեսանել զՅիսուս, և ոչ կարէր (տեսանել զնա) 'ի բազմութենէն ։



Այս խօսքին փակագծի մէջ դրուած մասը, տեսանել զնա, որ կարէր բային խնդիրն է, զեղչուած է, բայց լռելեայն կ'իմացուի ։

380· Հ· Ընդհանրապէս նախադասութեան ո՞ր մասերը կը զեղչուին հայերէնի մէջ ։

Պ· Հայերէնի մէջ ընդհանրապէս կը զեղչուին ·

1° Ենթական կամ տէր բայն ·
2° Բայը ·
3° Խնդիրներ ։

### 1 · Ենթակայի կամ տէր բայի զեղչում

381· Հ· Ո՞ր տէր բայները կը զեղչուին ընդհանրապէս ։

Պ· Ընդհանրապէս կը զեղչուին բայերուն առաջին և երկրորդ դէմքի դերանուն տէր բայիներն, ես, դու · մեք, դուք · զոր օրինակ ·

Կոչեցի զնոսա։ Եղիցիս կոյր։ Կամիմք գիտել։ Գիտէ՞ք զինչ արարի ։

Հարկ չէ ըսել, ես կոչեցի, դու եղիցիս, մեք կամիմք, դուք գիտէք ։

382· Հ· Երրորդ դէմքի դերանուն տէր բայները նա, նոքա, ինքն, ինքեանք, կը զեղչուի՞ն ։

Պ· Երրորդ դէմքի դերանուն տէր բայիներն, նա, նոքա, ինքն, ինքեանք, կը զեղչուին, երբ բային բուն տէր բայն յայտնի է · եթէ յայտնի չէ, պէտք է յայտնի ընել զայն դերանուամբ կամ ուրիշ որ և իցէ կերպով, զոր օրինակ ·

Այր ումն տնկեաց այգի և ետ զնա մշակաց, և 'ի ժամու առաքեաց առ մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշակքն զան հարին զծառայն և արձակեցին ունայն, յաւել միւս եւս ծառայ յղել, նոքա և զնա եւս զան հարին, անարգեցին և արձակեցին ունայն:

Այս խօսքին մէջ, ետ, առաքեաց, տացեն, արձակեցին, յաւել, անարգեցին, արձակեցին բայերը դերանուն տէր բայի չունին, քանզի յայտնի է թէ առաջին երկուքին տէր բային այր ումն է. երրորդին և չորրորդինը՝ մշակք բառն է. հինգերորդինը՝ դարձեալ այր ումն է. վեցերորդին և եօթներորդինը դարձեալ մշակք բառն է:

Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն. Հայր, տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ, և նա բաժանեաց նոցա զկեանսն: Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ գնաց յաշխարհ հեռի, և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին, և սկսաւ ինքն չքաւորել: Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումն 'ի քաղաքացւոց աշխարհին, և նա յղեաց զնա յագարակ իւր

Մարդ մը երկու որդի ունէր: Ասոնց կրտսերը կ'ըսէ իր հօրը. Հայր, քու ինչքէդ ինծի ինկած բաժինը տուր. և նա բաժնեց անոնց իր ստացուածքը: Քիչ ժամանակ ետքը կրտսեր որդին ամէն բան ժողվելով գնաց հեռու երկիր մը, և հոն վատնեց իր ինչքը, քանզի անառակութեամբ կ'ապրէր: Երբ ամէն բան սպառեց, սով եղաւ այն երկրին մէջ, և ինք սկսաւ չքաւորել, և գնաց յարեցաւ այն երկրին քաղաքացիներէն միոյն, և այս վերջինը իր ագարակը ղրկեց զնա



արածել խոզս: Ցանկայր նա լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ ոք տայր նմա...: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր, և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդառաջ, անկաւ զպարանոցաւ նորա և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, և ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին և ագուցէք նմա, և տուք զմատանին 'ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա, և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ. և սկսան ուրախ լինել:

Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եկն 'ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց, և կո-

խոզեր արածելու: Խեղճ պատանին կ'ուզէր իր փորը լնուլ եղջիւրներէն զոր խոզերը կ'ուտէին, բայց ոչ ոք կու տար անոր...: Եւ ելաւ գնաց իր հօրը, և մինչդեռ հեռու էր, տեսաւ զնա հայրը և գթացաւ, ելաւ վազեց դիմացը, անոր վիզն ինկաւ և համբուրեց զնա: Եւ որդին ըսաւ անոր. Հայր, մեղայ յերկինս և ռաջի քո, և այլ եւս արժանի չեմ որդիդ կոչուելու: Իսկ հայրն ըսաւ ծառաներուն. Շուտով հանեցէք առջի պատմուճանը և հագուցէք անոր, և մատանին ձեռքը տուէք, և կօշիկներն ոտքը, և բերէք գիրցած եզը, մորթեցէք, ուտենք և ուրախ ըլլանք, վասն զի այս որդիս մեռած էր և ապրեցաւ. կորսուած էր և գտնուեցաւ. և սկսան ուրախութիւն ընել:

Իսկ անոր երէց որդին ագարակն էր. և մինչդեռ կու գար և տանը մօտեցաւ, լսեց երգերուն և պարերուն ձայնը, և իրեն կո-

չեցեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն, հարցանէր թէ զինչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա․ Զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ Բարկացաւ երէցն և ոչ կամէր մտանել․ և հայրն ելեալ արտաքս աղաչէր զնա։ Նա պատասխանի ետ և ասէ ցհայրն․ Այս քանի՛ ամք են զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի․ ու մի երբէք ոչ ետուր ինձ զի ուրախ լինէի ընդ բարեկամս իմ․ յորժամ եկն որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո, զեներ դմա զեզն պարարակ։ Եւ ասէ ցնա հայրն, Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է․ այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ։

չելով ծառաներէն մին՝ կը հարցունէր թէ ի՞նչ էր այն։ Եւ նա ըսաւ անոր․ Քանզի եղբայրդ եկած է, և հայրդ մորթեց գիրցած եզը, վասն զի ողջ առողջ ընդունեց զնա։ Երէցը բարկացաւ և մտնել չէր ուզեր․ և հայրը դուրս ելնելով կ'աղաչէր անոր։ Իսկ նա պատասխան տուաւ և ըսաւ հօրը․ Այս քանի՛ տարի է որ կը ծառայեմ քեզ, և երբեք պատուիրանքդ չանցայ․ երբեք ուլ մը չտուիր ինծի որ ուրախ ըլլայի բարեկամներուս հետ․ երբ եկաւ այդ որդիդ որ քու բոլոր ստացուածքդ կերաւ, գիրցած եզը մորթեցիր։ Եւ հայրն ըսաւ անոր․ Որդեակ, դու միշտ ինծի հետ ես․ ամէն ինչ որ իմս է՝ քուկդ է․ բայց ուրախ ըլլալ պարտ էր որ այս քու եղբայրդ մեռած էր և ապրեցաւ ՝ կորսուած էր և գտնուեցաւ։

Այս օրինակին մէջ, առաջին և երկրորդ դէմքի բայերուն տէր բայերը զեղչուած են․ իսկ երրորդ դէմքի բայերէն նօտր գրով գրուածներուն միայն տէր բայերը զեղչուած են, քանզի յայտնի են։



383․ Հ․ Ուրիշ ի՞նչ բառեր, տէր բայի ըլլալով, կրնան զեղչուիլ։

Պ․ Կրնան զեղչուիլ 1° Ոմն, ոք, ոմանք, մի անորոշ կամ միջակ անունները (տես թիւ 68), երբ բացառական խնդրով տէր բայի են, զոր օրինակ․

Եկն առ իս յեղբարց իմոց․ այսինքն, Եկն առ իս ոմն կամ մի յեղբարց իմոց։ Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի․ այսինքն, Եկին ընդ մեզ ոմանք յաշակերտաց անտի։ Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ 'ի գազանաց և 'ի սողնոց կամ յայլ անասնոց կամ 'ի մարդկանէ վնասել կարասցեն․ այսինքն, Անմեղի ումեք ոչ դեւք, և ոչ մի 'ի գազանաց և 'ի սողնոց կամ յայլ անասնոց, կամ 'ի մարդկանէ ոք վնասել կարասցեն։

2° Կը զեղչուի երբեմն յարակատարին, գերակատարին և ստորադասական անցելոյն, այսինքն՝ էական բայով և անցեալ ընդունելութեամբ շինուած բաղադրեալ ժամանակներուն (տես թիւ 161), եզակի երրորդ դէմք տէր բային որ սեռական հոլով է (տես թիւ 184), զոր օրինակ․

Զգաւիթն մի չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց, այսինքն, զի իմն տուեալ է զնա հեթանոսաց։ Եթէ զգործսն չէր գործեալ 'ի նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա․ այսինքն, Եթէ իմն չէր գործեալ 'ի նոսա զգործսն, եւն։ Ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ արարեալ իցէ զգնալդ դմա․ այսինքն, արարեալ իցէ մը զգնալդ դմա։ Զի՞նչ ունիս զոր ոչ իցէ առեալ․ այսինքն, զոր ոչ իցէ առեալ քո։ Մինչեւ

ստեղծեալ էր զքեզ յորովայնի, գիտեմ զքեզ · այսինքն, Մինչչեւ ստեղծեալ էր էմ զքեզ։ Մինչչեւ խօսեցեալ իցէ՝ ուսիր · այսինքն, Մինչչեւ խօսեցեալ իցէ քո՝ ուսիր ։

384· Հ· Այս վերջին դէպքին վերաբերեալ ինչ գիտելիք կայ ։

Պ· Երբ բաղադրեալ ժամանակը երկուք է, մին տէր բային դէմքը կ'առնու, միւսը երրորդ դէմք կը մնայ զեղչեալ տէր բայիւ, զոր օրինակ ·

Զառ 'ի յետոյսն մոռացեալ է (էմ), և 'ի յառաջադէմսն նկրտեալ եմ· փոխանակ ըսելու, Զառ 'ի յետոյսն մոռացեալ, և 'ի յառաջադէմսն նկրտեալ եմ ։

Եթէ կոչեալ եաք 'ի պատուիրանիդ քում, տէր, և պահեալ եր (Դբ) զօրէնս զոր եդիր · փոխանակ, Եթէ կոչեալ եաք 'ի պատուիրանիդ քում, և պահեալ եաք, եւն ։

Մինչչեւ տեսեալ էր (Նոյա) զնա, և մինչչեւ 'ի Նախանձուէն էին հալածեալք · փոխանակ, Մինչչեւ տեսեալ էին զնա, և մինչչեւ 'ի Նախանձուէն էին հալածեալք ։

Մինչչեւ ծնեալ էին. և մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էր (Նոյա) · փոխանակ · Մինչչեւ ծնեալ էին, և մինչչեւ բարի ինչ կամ չար գործեալ էին ։

Յորժամ զայսպիսի մեծամեծս առեալ էիք (Դբ), և սակաւս պահանջէիցէմք · փոխանակ ըսելու, Զայսպիսի մեծամեծս առեալ էիցեմք, և սակաւս պահանջէիցեմք · Այսպիսի մեծամեծ բաներ առինք, և քիչ բան կը պահանջուի մենէ ։

385· Հ· Այսպէս յարակատարի կամ գերակատարի եզակի երրորդ դէմքին զեղչեալ տէր բային ուրիշ բառ կրնա՞յ ըլլալ ։

Պ· Այսպէս յարակատարի կամ գերակատարի եզակի երրորդ դէմքին զեղչեալ տէր բային կրնայ ըլլալ անորոշ անուն մը կամ այնպիսի բառ մը որ խօսքին իմաստէն կը հասկցուի, զոր օրինակ ·



Զայս ամենայն գրեալ է (առաջնոց կամ սուրբք) 'ի գիրս ժամանակաց Թագաւորացն ։ Տեսին զի թաւալեցուցեալ էր (սուրբք) զվէմն 'ի գերեզմանէն ։ Զեւ եւս էր արկեալ (Հերովդի) զՅովհաննէս 'ի բանտ ։ Եդ զնա 'ի գերեզմանի զոր էր փորեալ (Նորա, Յովսեփայ) 'ի վիմի ։ Եդ 'ի կառածոյ գերեզմանի ուր չէր (Նորա, Յովսեփու) բնաւ զոք եդեալ ։

## 2· Բայի զեղչում

386· Հ· Բայն երբ կը զեղչուի ընդհանրապէս ։

Պ· Խօսքի մը մի անդամին մէջ յիշուած բայ մը, մինակ և կամ իրեն վերաբերեալ խնդիրներով մէկտեղ, ընդհանրապէս կը զեղչուի նոյն խօսքին միւս անդամին մէջ, զոր օրինակ ·

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի · գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ դահճի · այսինքն, և դատաւորն մատնիցէ զքեզ դահճի ։

Լուարուք զի ասացաւ առաջնոցն · Մի երդնուցուս սուտ, այլ ես ասեմ ձեզ, Ամենեւին մի երդնուլ · մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ · և մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա · այսինքն, ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ · մի երդնուլ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, և մի երդնուլ յերկիր, զի, եւն ։

Թէպէտեւ ամենեքին գայթակղեսցին, այլ ես՝ ոչ · այսինքն, այլ ես ոչ գայթակղեցայց ։

Զերախտաւորսն և զբարերարս որ 'ի Նմանէ (յԱստուծոյ) կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարգել ·

*բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին՝ արարածոց մատուցանել. այսինքն, բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին հրամայեմ արարածոց մատուցանել։*

*Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն որ կոչի ծառայ. կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ զերկիր՝ զոր հանապազ բրեմք և ցանգ կոխեմք. այսինքն, կամ զիա՞րդ պաշտիցեմք զլուսին որ ամսոյ ամսոյ հիւծանի, կամ զիա՞րդ պաշտիցեմք զերկիր զոր, ևն։*

*Որ առողջ միտս ունին, ոչ զշարժունսն՝ այլ զշարժիչն պարտին փառաւորել. այսինքն, ոչ զշարժունսն պարտին փառաւորել, այլ զշարժիչն պարտին փառաւորել։*

*Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան. օտարն՝ և մի քո շրթունք. այսինքն, Գովեսցէ զքեզ ընկերն, և մի գովեսցէ զքեզ քո բերան. գովեսցէ զքեզ օտարն, և մի գովեսցեն զքեզ քո շրթունք։ Նոքա կարօտ են հացի, և դու՝ իմաստութեան. այսինքն, և դու կարօտ ես իմաստութեան։*

*Արեգակն խաւարելովն յայտ առնէ թէ՝ Չեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս զամենայն տիեզերս լուսաւոր պահէ. այսինքն, Չեմ ես արժանի պաշտաման, այլ այն է արժանի պաշտաման, որ, ևն։*

387. Հ. Ի՞նչ բայ կը զեղչուի յաճախ։

Պ. Յաճախ կը զեղչուի էական բայը 1°. Երբ անցեալ ընդունելութեան մը հետ է, մանաւանդ թէ բային անցելոյն հետ, զոր օրինակ.

*Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և Որմիզդ 'ի վերայ քո արքայ կացուցեալ. այսինքն, կացուցեալ լիցի։ Տուեալ քեզ զհազար, նախիշտ իմ. այսինքն, Տուեալ եմ քեզ զհազար, ևն։ Զամենեսին որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել. այսինքն, Տուեալ եմ քեզ իշխանութիւն ևն։ Արքայ, տուր իշխանութիւն, և սպանից զվիշապդ. և ասէ թագաւորն. Տուեալ քեզ. այսինքն, Տուեալ եմ կամ լիցի քեզ, Մանաւանդ վասն ազանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ զի, ևն. Պատուիրեալ եմ ձեզ զի, ևն։ Զի ահաւասիկ Հողեփեռն յերկիր կործանեալ, և գլուխ իւր չէ առ նմա. այսինքն, Յերկիր կործանեալ է, ևն։ Գնացին արք անօրէնք պատմել թագաւորին, եթէ Յովնաթան մեքենայս կազմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յառնուլ պատրաստեալ. այսինքն, Յառնուլ պատրաստեալ է։ Եւ արքայ Դաւիթ ծերացեալ և անցեալ զաւուրբք, և ծածկէին զնա հանդերձիւք և ոչ ջեռնոյր. այսինքն, Ծերացեալ էր և անցեալ զաւուրբք։*

2°. Էական բայը կը զեղչուի մանաւանդ մինչ՝ չեւ բառերէն ետքը, զոր օրինակ.

*Մինչչեւ լերինք հաստատեալ էին, և մինչչեւ ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս. այսինքն, Մինչչեւ էր ստեղծեալ (Աստուծոյ) զերկիր, ևն։ Մինչչեւ եկեալ առ միմեանս՝ (Մարիամ) գտաւ յղացեալ 'ի Հոգւոյն սրբոյ. այսինքն, Մինչչեւ եկեալ էին առ միմեանս (Յովսէփ և Մարիամ), ևն։ Զի՞նչ չար քան զօձ կայցէ, և 'ի նմանէ լինի թերիակէ, և 'ի սպանող դեղոց որք 'ի ննդութենէ մարդկան կազմեցան՝ չեւ հասուցեալ և անդէն բուժէ. այսինքն, Չեւ հասուցեալ էին. Օձէն գէշ ի՞նչ բան կայ, սակայն թերիակէն (թիրեաք) անկէ կ'ըլլայ, որ հազիւ թէ կը հասնի, իսկոյն կը բժշկէ։ Չեւ նստեալ, և անդրէն յօրհնութիւնսն յորդորին. այսինքն, Չեւ նստեալ էին, և անդէն, ևն։ Հազիւ կը նստին, (կամ կը նստին չեն նստիր), փառաբանութեան կը շարժին։ Չեւ այդ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք. այսինքն, Չեւ այդ եղեալ էին ևն. Առտու ըլլալուն պէս, իրար կը կանչենք։*

3°. Էական բայը կը զեղչուի, երբ յարաբերական դերանուամբ միջանկեալ նախադասութիւն է, և աշխարհաբար, նոյն, ընդունելութեան զօրութիւն ունի, զոր օրինակ ·

Լուան ամենայն թագաւորք որ յայնկոյս Յորդանանու (էին) · Յորդանանու անդին եղող բոլոր թագաւորները լսեցին ։ Ասեն արքն որ ընդ նոսա (էին) · Անոնց հետ եղող մարդիկ ըսին ։ Ցիշեաց զուխտ իւր որ ընդ Աբրահամու (էր) ։ Որդի Յովսեփայ որ Հեղեայն, որ Մատաթայն, այսինքն, որ էր (որդի) Հեղեայ, որ էր (որդի) Մատաթայ · Մատաթային որդւոյն Հեղիի որդւոյն Յովսեփայ որդին էր ։

388· Հ· Նախադասութեան մը իմաստին ի՛նչ մասնաւոր յատկութիւն տալու համար շատ անգամ բայ մը կը զեղչուի ։

Պ. Շատ անգամ բայ մը, մանաւանդ էական բայը կը զեղչուի՝ նախադասութեան իմաստը ներքին և արտաքին ընելու համար, և այս մանաւանդ այնպիսի նախադասութեանց մէջ որ ծանուցում կամ մաղթանք կամ առակ կամ տիտղոս, վերնագիր են, զոր օրինակ ·

Այդ ձեզ օրհնութիւն յաւարէ թշնամեաց · այսինքն, Այդ է ձեզ օրհնութիւն, եւն ։ Եկաց քարոզ զօրուն ՚ի բանակին և ասէ, Իւրաքանչիւր ոք ՚ի քաղաք իւր և յերկիր իւր · այսինքն, Իւրաքանչիւր ոք եղիցի ՚ի քաղաք իւր, եւն ։ Ասէ արքայ, Զի՞նչ է այդ · և ասէ ՚ի Սիբա, Էշքդ՝ նստելոյ արքայի, և հացդ և արմաւդ՝ ՚ի կերակուր մանկանցդ · այսինքն, Էշքդ եղիցին նստելոյ արքայի, հացդ և արմաւդ եղիցին ՚ի կերակուր, եւն ։ Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ · այսինքն · Եղիցին փառք



հօր և որդւոյ, եւն ։ Սուր տեառն և Գեդէոնի · Սուր ՚ի վերայ Քաղդէացւոցդ, այսինքն, Եղիցի սուր, եւն ։ Խաղաղութիւն ամենեցուն · այսինքն, Եղիցի խաղաղութիւն ամենեցուն ։ Սահակայ եպիսկոպոսի Հայոց ողջոյն ։ Առ Յովնաթան եղբայր, Առ Սպարտացիս, եղբարս մեր, ողջոյն · այսինքն, Եղիցի ողջոյն, եւն ։ Երանի՛ աղքատաց · Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, Եղո՛ւկ ինձ, Անէծք այսպիսի կծծի բանից · այսինքն, Եղիցի երանի, վայ, եղուկ, Եղիցին անէծք, եւն ։

Բոլոր այս խօսքերը ծանուցում կամ մաղթանք են ։

Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ տեառն · այսինքն, Սկիզբն իմաստութեան է երկիւղ տեառն ։ Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր · այսինքն, Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ լինի իբրեւ զքաղաք ամուր ։

Այս խօսքերն առակ են ։

Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի · այսինքն, Այս են գիրք ծննդեան, եւն ։ Աւետարան ըստ Մատթէոսի · Թուղթ Պաւղոսի առ Հռոմայեցիս · այսինքն, Աւետարանս այս է գրեալ ըստ Մատթէոսի · Այս թուղթ է ՚ի Պաւղոսի, գրեալ առ Հռոմայեցիս ։

Այս խօսքերը տիտղոս կամ վերնագիր են ։

Այսպէս կ՛ըսուի նաեւ, Ընթերցուածս ի Ծննդոց, կամ, յԵսայեայ մարգարէէ · Պատմութիւն Յունաց · Գլուխ առաջին, երկրորդ, երրորդ, եւն · փոխանակ ըսելու, Այս ընթերցուած կամ Ընթերցուածս է ի Ծննդոց, կամ, յԵսայեայ մարգարէէ, Այս է պատմութիւն Յունաց · Գլուխս այս է առաջին, երկրորդ, եւն ։

## 3 · Խնդիրներու զեղչում

389 · Հ · Ե՞րբ կը զեղչուի դերանուն խնդիր մը ։

Պ · Երբ մի և նոյն հոլով կամ ձեւ դերանուն խնդիր մը կը վերաբերի քանի մը բայերու . անոնց միոյն քով միայն դրուելով, միւսներուն քով կըր-նայ զեղչուիլ, զոր օրինակ ·

Այր մի անկաւ 'ի ձեռս աւազակաց , որք մերկացու-ցին զնա , և վէրս 'ի վերայ եդեալ Թողին կիսամահ · փոխանակ՝ մերկացուցին զնա , և Թողին զնա կիսամահ ։ Եկ 'ի վերայ նորա և նստաւ . փոխանակ , և նստաւ 'ի վերայ նորա ։

Բայց երբ բայերը կ'ուզեն տարբեր հոլով կամ ձեւ խնդիր , ամէն բայի տրուելու է իրեն վայե-լուչ խնդիրը , զոր օրինակ .

Ետես զնա և խօսեցաւ ընդ նմա · Ցարեցաւ 'ի նա և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ ։

390 · Հ · Ի՞նչ գիտես բացառական խնդիր ունե-ցող մասնական անուանց վրայ ։

Պ · Բացառական խնդիր ունեցող մասնական անուն մը , իբրեւ սեռի խնդիր , շատ անգամ կը զեղչուի , զոր օրինակ ·

Գուցէ սատակիցէ 'ի նոցանէ տէր · այսինքն , Զո—մանս 'ի նոցանէ ։ Առ ընդ քեզ 'ի ծերոց ժողովրդեանդ · այսինքն , զոմանս 'ի ծերոց ։ Ցաղքատաց ժողովրդեանն եԹող անդ յերկրին · այսինքն , զոմանս , կամ զմասն մի յաղքատաց ։ Արբ 'ի գինւոյն և արբեցաւ . այսինքն , Արբ ոմանս էին , կամ , մասն էին 'ի գինւոյն ։ Ի պտղոյ



այգւոյն տայցեն նմա · Առ 'ի պտղոյ նորա և եկեր · այսինքն , մասն էին 'ի պտղոյ այգւոյն · զպտուղ էին 'ի պտղոյ նորա , ևն ։

Նոյնպէս առաջէլ, յէլ բայերուն սեռի խնդիրը , երբ անծանօԹ անձ է , կը զեղչուի , զոր օրինակ ·

Առաքեաց և գլխատեաց զՅովհաննէս 'ի բանտին . այսինքն , Առաքեաց դահիճ և գլխատեաց ։ Առաքեցին ընդ ամենայն գաւառն , և ածին առ նա զամենայն հիւանդս · այսինքն , Առաքեցին այր ընդ ամենայն գա-ւառն , ևն ։ Առաքեցին 'ի բանտն ածել զնոսա · Ցղեցին և կոչէին զնոսա · այսինքն , Առաքեցին այր , Ցղեցին այր , ևն ։

391 · Հ · Ի՞նչ գիտես Նախդիր ունեցող յատ-կացեալներու վրայ ։

Պ · Նախդիր ունեցող յատկացեալ մը , որ նախադասուԹեան կամ խօսքին մէջ արդէն յիշ-ուած է , կը զեղչուի անմիջապէս ետքը եկող ուրիշ յատկացուցչի քով , բայց անոր նախդիրը կը դրուի յատկացուցչին վրայ , զոր օրինակ ·

Լուաւ զձայն երգոցն և զպարուց · այսինքն , և զձայն պարուց ։ Զվարագոյր դրան խորանին և զդրան սրա-հին · այսինքն , և զվարագոյր դրան սրահին ։ Խոստովան լինէին զմեղս իւրեանց և զչարս իւրեանց ։ Փետէի զվարսս գլխոյ իմոյ և զմօրուաց իմոց ։ Զպտուղ կալոյ քո և զհնձանի մի հատանիցես ։ Բուրեսցէ հոտ նորա իբրեւ զկնդրկի ։ Ձայն նորա իբրեւ զօձի որ ճչիցէ ։ Զա-մենայն ճարպ զարջառոյ և զոչխարի և զայծեաց մի ու-տիցէք ։ Բազում են որդիք սկնդկին առաւել քան զարամբւոյն ։ Գուցէ տեսանիցէ զերեսս ձեր տրտմա-գոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց ։ ԵԹէ

ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց ։ Առնէաք զկամս մարմնոյ և զմտաց ։ Տգէտ են Աստուծոյ արդարութեանն և զիւր֊եանցն (այսինքն՝ զիւրեանց արդարութիւնն) խնդրեն կացուցանել ։ Զիրաւունս զեկին և զորբոյ և զայրւոյ ։ Մի լիցի ապրեալ տուն նորա , այլ 'ի նորայն (այսինքն՝ 'ի տան նորա) կացցեն օտարք ։ Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և ընդ ամենայն որդւոցն Իսրա֊յելի ։ Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ 'ի սուրբ մարմինս փոխիցին , կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց և 'ի ձձեաց և 'ի սողնոց · այսինքն՝ 'ի մարմինս մարդկան , 'ի մարմինս գազանաց , 'ի մարմինս ձձեաց և 'ի մարմինս սող֊նոց ։ Լուաւ Գոթողիա զձայն ժողովրդեանն , զընթա֊նալոյն , զգոհանալոյն և զօրհնելոյն զարքայ ։

392· Հ· Խօսքին մէջ արդէն չյիշուած բառ , իբ֊րեւ յատկացեալ , կրնա՞յ զեղչուիլ ։

Պ· Երբեմն նախադասութեան մէջ կը տես֊նուի զեղչեալ յատկացեալ մը որ , թէպէտ անծա֊նօթ բառ է , սակայն կը նշանակէ իւր , վերաբերեալ բաներ , զոր օրինակ ·

Կոյսն հոգայ զտեառնն · այսինքն , զէր· տեառն · Կոյսը տիրոջը վերաբերեալ բաները կը հոգայ ։ Մի ոք զանձին եւեթ խնդրիցէ · այսինքն , զէր· անձին իւրոյ · Մարդ իրեն վերաբերեալ բաները միայն թող չփնտռէ ։ Յորժամ եղէ այր , զտղայութեանն ի բաց խափանեցի · այսինքն , զէր· տղայութեան · Երբ չափահաս եղայ , տղայութեան վերաբերեալ բաները մէկդի նետեցի ։ Երթայք տուք զկայսերն՝ կայսեր , և զԱստուծոյն՝ Աս֊տուծոյ · այսինքն , զէր· կայսերն՝ կայսեր , զէրն Աս֊տուծոյն՝ Աստուծոյ · Գացէք կայսեր վերաբերեալ բա֊ները կայսեր տուէք , Աստուծոյ վերաբերեալ բաներն՝



Աստուծոյ ։ Զխափանածոյ նորա և զբժշկութեան տու֊ժեսցի · այսինքն , զէր· խափանածոյ և բժշկութեան նորա · Անոր ( վիրաւորեալ մարդուն ) խափանածին (գործէ մնալուն) և բժշկութեանը վերաբերեալ բանե֊րը պիտի տուժէ ։

393· Հ· Բաց ի տէր բայիէն , բայէն և խնդրէն՝ ուրիշ ի՞նչ բառեր կրնան զեղչուիլ ։

Պ· Բաց ի տէր բայիէն , բայէն և խնդրէն կրնան զեղչուիլ ։

1° Ստորոգելի ·

2° Դերբայ ·

3° Ցուցական և ստացական ածական ·

4° Նախադրութիւն և շաղկապ ։

394· Հ· Ե՞րբ կը զեղչուի ստորոգելին ։

Պ· Ստորոգելին կը զեղչուի 1° Երբ էական բայը անց մը գործածուել , ներկայ ձեւ կը նշանակէ , զոր օրինակ ·

Էր անդ այր մի որոյ ձեռն գօսացեալ էր ։ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս ։ Չէ աստ , այլ յարեաւ ։ Ո՞ւր իցէ եղբայրն քո ։ Եւ էր նա ի տան ուրումն Փա֊րիսեցւոյ ։

Բոլոր այս նախադասութեանց մէջ լաւելեայն կ'իմացուի որ (ներկայ) , բնակեալ , բացակեալ կամ ու֊րիշ ասոնց նման բառ մը իբրեւ ստորոգելի ։ Ուստի վերի խօսքերը որպէս թէ են · Էր անդ որ այր մի որոյ ձեռն գօսացեալ էր · Հոն (ներկայ) էր մարդ մը որոյ ձեռքը չորցած էր ։ Ես ընդ ձեզ բնակեալ եմ զամենայն աւուրս · Ես ամէն ատեն ձեզի հետ (բնակած) եմ ։ Ո՞ւր իցէ գնացեալ եղբայրն քո · Եղ֊բայրդ ո՞ւր (գացած) է ։ Եւ էր նա բացակեալ ի տան

ուրումն փարիսեցւոյ · Նա փարիսեցւոյ մը տունն էր (Նստած) (*) ։

2° Երբ էական բայը կը նշանակէ գոյ, կայ, նախադասութեան մէջ ստորոգելի չգտնուիր, զոր օրինակ ·

Էր առ մեզ պատանի մի · Մեր քով պատանի մը կար ։ Էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր · Հոն մարդ մը կար որոյ ձեռքը չորցած էր ։ Էին անդ թակոյկք կճեայք վեց · Հոն կիճէ վեց թակոյկներ կային ։

Այս նշանակութեամբ՝ է բայն էական բայ չէ, այլ չէզոք բայ է, և ստորոգելին իրեն հետ միացած ունի, ուստի և է, էր, էին, այս մտօք որպէս թէ են՝ է, էր, էին գոյող ։

395· Հ· Ի՞նչ զեղչուած է սա խօսքերուն մէջ ·

Զի՞նչ գործէք զոր չէ օրէն ի շաբաթու · բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով (թղթով և մելանով) ։

Պ· Առաջին խօսքին երկրորդ մասին մէջ զեղչեալ է գործել աներևոյթը · երկրորդ խօսքին երկրորդ մասին մէջ գրել աներևոյթը · ուստի պիտի ըլլայ ·

Զի՞նչ գործէք զոր չէ օրէն գործել ի շաբաթու · Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ գրել քարտիսիւ և դեղով ։

(*) Այս նախադասութեանց մէջ գտնուած մակբայները եւ խընդիրները, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] կը վերաբերին լռելեայն իմացուած ստորոգելւոյն, ոչ թէ էական բային · քանզի բուն էական բային խնդիր չկրնար ունենալ, Ուստի սա նախադասութեան մէջ, [illegible] տէր բայի · Էր [illegible], կը լուծուի այսպէս · [illegible] խնդիր [illegible] (ոչ էր՝ բայ · [illegible] ստորոգելի զեղչեալ · [illegible] թէ էր ին ։



396· Հ· Ի՞նչ զեղչուած է սա խօսքերուն մէջ ·

Զատէպ յօրանջելն և ձգտել հմուտ բժիշկք 'ի մթերելոյ մաղասոց ասեն · Անկանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին ։

Պ· Առաջին խօսքին մէջ զեղչեալ է լինել կամ գալ · երկրորդին մէջ զեղչեալ է կալեալ կամ ունելով · ուստի պիտի ըլլայ ·

Զատէպ յօրանջելն և ձգտել հմուտ բժիշկք 'ի մթերելոյ մաղասոց ասեն լինել կամ գալ · Անկանէր 'ի ներքս կալեալ կամ ունելով սուսեր 'ի ձեռին ։

Այսպէս կ'ըսուի նաև ·

Բերան 'ի բերան խօսել ։ Սիրտ 'ի բերան չրջել ։ Ընթանալ սուր 'ի ձեռին ։ Ձեռս 'ի գլուխ ելանել ։ Բերան 'ի վայր անկանել · այսինքն, Խօսել ունելով բերան 'ի բերան ։ Շրջել ունելով սիրտ 'ի բերան ։ Ընթանալ ունելով սուր 'ի ձեռին ։ Ելանել ունելով ձեռս 'ի գլուխ ։ Անկանել ունելով բերան 'ի վայր ։

Մեռաւ ամաց քսանից · այսինքն, լեալ ամաց քսանից ։ Յայն ինչ ապաստան՝ զամենայն ինչ անխտիր գործեմք · այսինքն, Յայն ինչ ապաստան լեալ՝ զամենայն ինչ անխտիր գործեմք · Այս բանին ապաւինելով ամենայն ինչ անխտիր կը գործեմք ։ Ինքն երթայր բոկ, և ամենայն ժողովուրդն ընդ նմա ձորձ զգլխով · այսինքն, արկեալ ձորձ զգլխով ։ Մարտնչել ճակատ առ ճակատ · այսինքն, կոփեալ ճակատ առ ճակատ ։ Ածել գայլ 'ի բերան · այսինքն, եկեալ գայլ 'ի բերան (*) ։

(*) Բերան 'ի բերան, Սիրտ 'ի բերան, Սուր 'ի ձեռին, Ձեռս 'ի գլուխ, Բերան 'ի վայր, եւայլն, կրնան նաեւ իբր մակբայ առնուիլ, ինչպէս են նաեւ սա ոճերը · [illegible] լինել · կախել [illegible], [illegible]. այլովքն [illegible], Տապալել [illegible], կապել աղուէսս [illegible] համդերձ ։

397. Հ. Ո՞ր ածականներ կրնան զեղչուիլ։

Պ. 1° կը զեղչուին շատ անգամ այս, այդ, այն ցուցական ածականները, և գոյականին վերջը կցուած ս, դ, ն գիրերը բաւական կը համարուին։ (Տես թիւ 297)։

2° կը զեղչուին երբեմն ստացական ածականներն, իմ, քո, մեր, ձեր, իւր, երբ խօսքին մէջ ստացիչը յայտնի է, զոր օրինակ.

Քարամբք եւս կոծէր զանձն, այսինքն, զանձն իւր։ Ոչ համարիմ զանձն արժանի. այսինքն, զանձն իմ։ Թողաք զհայր և զմայր, զեղբարս և զքորս. այսինքն, Թողաք զհայր և զմայր մեր, զեղբարս մեր, և զքորս մեր։ Զի՞նչ է այդ զոր 'ի ձեռին ունիս. այսինքն, Զոր 'ի ձեռին քում ունիս։ Ամբարձէք զաչս և տեսէք. այսինքն, զաչս ձեր։

3° կը զեղչուի շատ անգամ նաեւ մի թուական ածականը, զոր օրինակ.

Արկ վարձս մշակացն աւուրն դահեկան. այսինքն, դահեկան մի. Մշակներուն վարձ կտրեց օրը մի դահեկան։ Զհանդերձս նորա արարին չորս մասունս. իւրաքանչիւր զինուորի մասն. այսինքն, մասն մի։ Առանց կռուոյ ամ չեմ լեալ. այսինքն, Առանց կռուոյ ամ մի չեմ լեալ։ Տարի մը առանց կռուոյ եղած չեմ։ Աւուր գնաց աստի, և աւուր գնաց անտի. այսինքն, Աւուր միոյ գնաց։

398. Հ. Ե՞րբ կրնայ զեղչուիլ նախադրութիւն մը։

Պ. 1° Նախադրութիւն մը որ քանի մը խնդիր ունի, առաջին խնդրոյն քով դրուելէն ետքը, կրնայ միւսներուն քով զեղչուիլ, միայն նախդի-



րը, եթէ նախադրութիւնը նախդիր ունի, կը դրուի բոլոր խնդիրներուն վրայ, զոր օրինակ.

Վասն խռովութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին և սպանութեան. այսինքն, և վասն սպանութեան։ Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ 'ի թագաւորութեան։ Վէրս 'ի վերայ վիրաց և ցաւս 'ի ցաւոց յաւելուին. այսինքն, 'ի վերայ թագաւորութեան. 'ի վերայ ցաւոց։ Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ. յորո՞ց խաչանց արդեօք. 'ի հարթուցելոցն, 'ի փախուցելոցն, 'ի գազանակուր եղելոցն. այսինքն, Ի վերայ որո՞ց խաչանց. 'ի վերայ հարթուցելոցն, 'ի վերայ փախուցելոցն, 'ի վերայ գազանակուր եղելոցն։ Գթայր 'ի վերայ նորա, իբրեւ հայր յորդւոյ. այսինքն, Իբրեւ հայր 'ի վերայ որդւոյ։ Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան. այսինքն, զհետ հաւատոց, զհետ սիրոյ, եւն։

2° կը զեղչուի 'ի նախդիրը, մանաւանդ աներեւութին 'ի կամ յ նախդիրը, երբ 'ի նախդրիւ բառ մը, որ աներեւութին խնդիրն է, աներեւութէն առաջ կը դրուի, զոր օրինակ.

Ետ արքայ զաղջիկն կնութիւն սիրելւոյն իւրում. Տայցեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ. Առ զնա կնութիւն. փոխանակ 'ի կնութիւն։ Ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն Հայոց. փոխանակ 'ի կաթողիկոսութիւն։

Ի քուն լինել մարդկանն. այսինքն, Ի լինել մարդկանն 'ի քուն։ Ի ճանապարհ անկանել նոցա և մօտ 'ի քաղաքն լինել. այսինքն, Յանկանել նոցա 'ի ճանապարհ և 'ի լինել մօտ 'ի քաղաքն, Արգելին զմեզ 'ի ներքս մտանելոյ. այսինքն, 'ի մտանելոյ 'ի ներքս։ Եւ

այն լինի յոյժ 'ի տօթի աշխատելոյ կամ կարի 'ի ցրտոյ ակելոյ · այսինքն , յաշխատելոյ յոյժ 'ի տօթի , կամ 'ի ակելոյ կարի 'ի ցրտոյ ։

Նոյն բանն իմանալու է նաեւ զ(*) նախդրոյն համար , զոր օրինակ ·

Յառաջ քան զերկիր առնել և նախ քան զանդունդս գործել · այսինքն , Յառաջ քան զառնել զերկիր և նախ քան զգործել զանդունդս ։ Յառաջ քան զլերինս հաստատել · այսինքն , Յառաջ քան զհաստատել զլերինս ։

399· Հ· Ո՞ր շաղկապները կրնան զեղչուիլ։

Պ· Զի և եթէ կամ թէ շաղկապները կրնան զեղչուիլ, մանաւանդ երբ շաղկապով կապուելու նախադասութիւնն հարցում է , զոր օրինակ ,

Թոյլ տուր անցից ընդ երկիր քո · այսինքն , Թոյլ տուր զի անցից ։ Ես գիտեմ , յուշ լիցին նմա չարիքն զոր անցուցաք մեք ընդ նա · այսինքն , Գիտեմ զի յուշ լիցին · եւն ։ Գիտասցեն , եթէ ոչ ձիւն և սառնամանիք պնդէին զլերինս , արմատք խոտոց ոչ պարա-

---

(*) Զ նախդիրն երբեմն զեղչուած է ս գրով սկսող բառերէն առաջ , եւ է նախդիրն յ կամ հ գրով սկսողներէն առաջ . ուստի ըսուած է . Մերկացաւ զգեստ իւր , փոխանակ , ըզզգեստ իւր ։ Այլ ինչ գործ ոչ ունէին բայց միայն զարդարելն եւ զպճնելն եւ ընդ ոսկի ելանել · այսինքն , բայց միայն ըզզարդարելն , եւայլն ։ Կատարած նոցա երթայ յատակս դժոխոց . փոխանակ , է յատակս ։ Հաց արդեանց երկրի քո եղիցի յագուրդ եւ ի պարար . այսինքն , է յագուրդ ։ Յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ · այսինքն , է յունական բարբառոյն ։ Յովսեփայ ժամանակացն մինչեւ ցՄեմ · այսինքն , է Յովսեփայ ժամանակացն · Յորդէ ի ցորեան փոխել · այսինքն , է յորդէ ։ Հնոյ աշխարհ ուրեք երթալ . այսինքն , է հնոյ աշխարհ ։ Մարկոս յետ նորա համառօտ ճանապարհն եկն · այսինքն , է համառօտ ճանապարհն ։



րէին · այսինքն , Գիտասցեն զի եթէ , եւն ։ Մի հոգայք վասն ոգւոյ ձերոյ զի՛նչ ուտիցէք · այսինքն , թէ զի՛նչ ուտիցէք ։ Ակնարկէ նմա հարցանել ո՛վ իցէ վասն որոյ ասեն · այսինքն , հարցանել թէ ո՛վ իցէ ։ Էր խռովութիւն 'ի մէջ զինուորացն , զի՞ արդեօք Պետրոսն եղեւ · այսինքն , Խռովութիւն էր 'ի մէջ զինուորացն թէ զի եղեւ , եւն ։

## 3 · Աւելադրութիւն

400· Հ· Ի՞նչ է աւելադրութիւն ։

Պ· Աւելադրութիւն է , երբ նախադասութեան մի մասը , զոր օրինակ , տէր բային կամ խնդիրը , տարբեր բառերով երկու անգամ կը կրկնուի ։

Վէմն զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան ։

Այս խօսքին մէջ եղեւ բային տէր բային վրայ է · նա դերանունն , իբրեւ տէր բայի , աւելորդ է ։

401· Հ· Կրկնումն ի՞նչ տարբերութիւն ունի աւելադրութենէ ։

Պ· Աւելադրութիւնը քերականական ձեւ է, իսկ կրկնումը ճարտասանական ձեւ է , և միեւնոյն բառը երկու կամ աւելի անգամ դնելով կ'ըլլայ, զոր օրինակ ·

Աստուած , Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս ։ Եմ, եմ և ես մահկանացու ։ Դո՛ւ ես , դո՛ւ ես այրն ։

402· Հ· Ո՞ր բառերն իբրեւ աւելի կը գործածուին հայերէնի մէջ ։

Պ· Հայերէնի մէջ իբրեւ աւելի ( աւելադրութեամբ ) կը գործածուին ։

1° Դերանուններէն ոմանք

2° Նախադրութիւններէն և նախդիրներէն ոմանք.

3° Մակբայներէն ոմանք:

403. Հ. Ո՞ր դերանուններն իբրեւ աւելի կը գործածուին:

Պ. Իբրեւ աւելի կը գործածուի երբեմն

1° Երրորդ դէմքի էական դերանունը նա, նախ՝ իբրեւ տէր բայի և իբրեւ խնդիր, զոր օրինակ.

Կինն զոր ետուր ընդ իս՝ նա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերայ: Բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա: Առաջնորդ իշխանն՝ նա նստցի 'ի դիմա ուտել հաց: Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս զայս: Ազգքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես՝ նոքա հմայից և դիւթութեանց անսան: Եւ մնացեալ բանքն Յովակիմայ և ամենայն ինչ զոր արար՝ ո՞չ աւանիկ գրեալ են նոքա 'ի գիրս:

ԶՅիսուս զոր դուք սպանէք՝ զնա յարոյց Աստուած: Զբաժակն զոր ետ ինձ հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա: Լուսնի չիք նորա լոյս առանձինն: Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք նորա: Եւ Սաղպաաթայ որդւոյ Ոփերայ ոչ գոյին նորա դստերք: Այս իսկ, յարքայութենէն զոր ասէի՝ անդր գամ: Եւ ցթագաւորն Յուդայ որ առաքեաց զձեզ խնդրել զտէր՝ այսպէս ասասջիք նմա: Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ՝ հանցես ընդ նա ազր: Եւ էր այր մի յորում այս պիղծ գոյր 'ի նմա: Յորմէ և հեթանոսք մեծաւ զգուշութեամբ խորշեալ պատկառէին 'ի նմանէ: Զորք որոց ոչ էր նոցա թիւ: Աստուածք նոցա յորս յուսացեալ էիք 'ի նոսա: Ի տեղւոջն յորում դուք կամիք մտանել բնակել անդ: Տունն յոր ես մտից անդր:



Երկրորդ՝ էական դերանունը նա կամ նոյն հոլովուած կամ նախադրութիւն ունեցող բառի մը տեղ կը դրուի իբրեւ աւելի խօսքին մէջ, և այն բառը կը դրուի ուղղական կամ ուրիշ հոլով խօսքին սկիզբը. զոր օրինակ կ'ըսուի.

Բորբոք յորում իցէ արած՝ հանդերձ նովաւ քակեալ լիցի. փոխանակ պարզապէս ըսելու, Քակեալ լիցի հանդերձ բորբոքն, յորում իցէ արած: Ամենայն այր որոյ էր դատ գալ առ արքայ 'ի դատաստան՝ բարբառէր առ նա Աբիսողոմ և ասէր. փոխանակ ըսելու, Առ ամենայն այր որոյ էր դատ գալ արքայ 'ի դատաստան՝ բարբառէր Աբիսողոմ և ասէր: Ամենայն քար կամ խարակ յոր հասանէ պողիպոտն 'ի մէջ ծովուն՝ զնորա գոյն առնու. այսինքն, Պողիպոտն առնու զգոյն ամենայն քարի կամ խարակի յոր հասանէ 'ի մէջ ծովուն: Ջուրքն որովք հեղձուցանէր Փարաւոն զմանկտին՝ նովիմբք հեղձաւ. այսինքն, Փարաւոն հեղձաւ ջրովքն որովք հեղձուցանէր զմանկտին: Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա. այսինքն, Ընդ մկանունս տան լսել ծառայի որ ընդ ունկն ոչ լսէ. Ականջովը չլսող ծառային՝ կռնակովը լսել կու տան (այսինքն, Խօսք չհասկցող ծառան ծեծ կ'ուտէ): Մոլախինդ որ առանձին 'ի յայտնի ինչ ժամանակի սպանող է՝ նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել. այսինքն, Բժիշկք զմաղձս հնացեալս հնարին (կը ջանան) հատանել մոլախինդս՝ որ առանձինն սպանող է: Ընդոծինք և արծաթագինք որ էին յազգաց օտարաց՝ թլփատեաց զնոսա. այսինքն, Թըլփատեաց զընդոծինս և զարծաթագինս որ էին յազգաց օտարաց: Ամենայնի որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի 'ի նմանէ. այսինքն, Յամենայնէ որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի. Զվէմն զոր անարգեցին շինողք՝ նա եղեւ գլուխ անկեան. այսինքն, Վէմն զոր անարգեցին շի-

նողք՝ եղեւ գլուխ անկեան․ Զայս ամենայն զոր տեսանէք՝ եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի աստ քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի․ այսինքն, Եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի յայսմ ամենայնի զոր տեսանէք՝ քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի ։ Զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից 'ի նմանէ․ այսինքն, Յամենայնէ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ։ Զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին վկայեն․ այսինքն, Գործքն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ վկայեն ։ Ի մահճացն յոր ելեր՝ ոչ իջցես այտի․ այսինքն, Ի մահճացդ յոր ելեր՝ ոչ իջցես ։

Երրորդ՝ էական դերանուն մը կը դրուի երբեմն իբրեւ աւելի, յարաբերականի մը տեղ և անոր հոլովը, և յարաբերականը կը դրուի ուղղական, զոր օրինակ․

Տէր ամենակալ, որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց ահի զօրութեան քո․ այսինքն, Տէր ամենակալ, յորոյ երեսաց ահի զօրութեան ամենայն ինչ սարսէ և դողայ ։ Հրամանաւն Աստուծոյ ելեալ 'ի լեառնն մեռանէր մեծ մարգարէն Մովսէս, որ մինչեւ ցայսօր զգերեզման նորա ոչ ոք գիտել կարաց ։ Ո՞չ այդ այն Մուշեղ է զէ (որ) զարքայն Պապ հրամանաւ դորա սպանին․ այսինքն, Ո՞չ այդ այն Մուշեղ է որոյ հրամանաւ, եւն ։

2°. Ցուցական դերանունն այն իբրեւ աւելի կը գործածուի նախ՝ եզակի և յոգնակի անուններու և աներեւութի հետ, զոր օրինակ․

Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ իսկ լիցին ։ Իսկ հանդերձիկն որ զնոքօք արկեալ (է)՝ այն ցեցակեր, մեցոտեալ, փխրեալ, մաշեալ, կորուսեալ ապականի ։ Արծ-



նելն և նկարելն՝ այն 'ի զարդարիչ անդր հայի ։ Նորոգել 'ի փտութենէ մեղաց՝ այն Քրիստոսի ուղղութիւնքն էին, և անդրէն 'ի նոյն չդառնալ՝ այն նոցա փութոյն էր գործ ։

Երկրորդ՝ այն, իբր աւելի կը դրուի տէր բայի աներեւութի մը ստորոգելոյն հետ, եթէ ստորոգելին բայէն առաջ է, զոր օրինակ․

Նաեւ այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ՞ է շնորհն․ փոխանակ պարզապէս ըսելու, Նաեւ իմաստութիւն է ճանաչելն թէ յումմէ՞ է շնորհն․ Շնորհքը որմէ ըլլալը ճանչնալն ալ իմաստութիւն է ։ Արարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել, և ոչ միայն արդս և զարդս և կերպարանս ։ Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է՝ զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել ։ Երեցունց աւետարանչաց այն իմն փոյթ եղեն՝ վասն տեսչութեանն պարապել ։ Այն իսկ գործ է աղի՝ կսկծեցուցանել և մորմոքեցուցանել զլորձս․ Աղին ներգործութիւնն է լորձ բաները կսկծեցունել ։

Երրորդ այն շատ անգամ իբրեւ աւելի կը գործածուի ամբողջ նախադասութեան մը հետ որ աներեւոյթ տէր բայի զօրութիւն ունի, զոր օրին․

Եթէ որչափ վնաս արգելու Աստուած 'ի մարդկանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է․ Աստուծոյ մարդոցմէ որչափ վնաս արգելելը քիչ մարդ գիտէ ։ Զի ներող և արգահատող է արարիչն՝ այն ամենեցուն իսկ յայտնի է ։ Եթէ չխօսիցին ինչ այնպիսի բանս՝ այն նոցա ազնուականութեանն է համար ։ Եւ զի խնդիրք ամենայն գործոց լինելոց են՝ այս վերադոյն յայտ արար ։

404․ Հ․ Ո՞ր նախադրութիւնն իբրեւ աւելի կը գործածուի ։

Պ․ վ՟ն նախադրութիւնը երբեմն չէ, նե շաղկապներու հետ իբրեւ աւելի կը գործածուի, զոր օրինակ ․

Շրջեցուցանել զնոսա անդ զամս քառասուն, վ՟ն զի մոռացուցէ նոցա զսովորութիւն դիւցապաշտ քարապաշտութեանցն ։ Վ՟ն զի մի ընդ խոտանս գտանիցիմք ։ Վ՟ն զի արժանի արասցէ զսա մտանել ընդ նեղ դուռն՝ զՏէր աղաչեսցուք ։ Վ՟ն թէ զիարդ է որդի Դաւթի Քրիստոս ։ Վ՟ն թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն (*) ։

405․ Հ․ Ո՞ր նախդիրներն իբրեւ աւելորդ կը կրկնուին ։

Պ․ Իբրեւ աւելորդ կը կրկնուին 1° Յատկացելոյն նախդիրը յատկացուցչին վրայ, թէ և յատկացուցիչն յետադաս է, զոր օրինակ ․

Զհանդերձս սրբութեան զԱհարոնի քահանայի ։ Հարկանէր զԴարեհ արքայ զՊարսից և զՄարթեւաց ։ Ածել 'ի վերայ մեր զարիւն զառնն զայնոսիկ ։ Զառաջին քինու վրէժն զամենեցունց ընդ այն հանէին ։ Առցես զառաջին պտուղս զերկրին քո ։ Գրեաց զբանս ուխտի զտասն պատգամացն ։ Պահեսցեն զամենայն ինչ զսեղանոյն ։ Մի մերձենայցէք յինչ 'ի դոցա ։ Ոչ ինչ 'ի մեր հայեցեալ ։

(*) Կրնայ ըսուիլ թէ այս տեսակ խօսքերու մէջ այն կամ այնորիկ դերանունը լռելեայն կ'իմացուի, որպէս թէ ըլլար · վասն այնորիկ զի մոռացուցէ · վասն այնորիկ զի մի ընդ խոտանս գտանիցիմք, եւայլն ։



Այս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ եթէ յատկացուցիչը յատկացեալէն զատուած է ուրիշ միջանկեալ բառերով, զոր օրինակ ․

Զմանկունսն զստեանցն կախեցին զմարցն ։ Տացեն 'ի բաց զգեօղս և զտեղիս զոր ունէին զՀրէից ։ Մատուցին զԹիւն արքայի զկորուսելոցն ։ Զլեզուն հրամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել ։ Զգլուխն հատանել զՆիկանովրայ ։ Զչափ առցուք զհեզութեան նորա ։ Իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին ։ Զդէմ ունել զայնորիկ որ գայցէ 'ի վերայ նորա ։ Ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեան և զհոգւոյն որով խօսէր ։ Հարկ է զմահ 'ի մէջ բերել զկտակագրին ։

2° Բացայայտելոյն նախդիրը բացայայտչին վրայ ։

ԶԱդդա, զդուստր Եղոնայ ։ ԶԱբիմելէք որդի Աքիտովրայ, զքահանայ ։ Ընտրեցին զՆիկողայոս, զեկն Անտիոքացի ։ Հանցեն զճարպն, զԹաղանթ քաղըրթին ։ Շրջել զեղբարբք իւրովք, զորդւովքն Իսրայելի ։ Էր 'ի Շաւշ, 'ի մայր քաղաքացն Աբիրայ ։ Ի Մովսէսէ, յառնէն Աստուծոյ ։ Ասէ Յուդա ցԽսրայէլ, ցհայր իւր ։ Յեղիազար, ցորդին Ահարոնի, ցքահանայ ։ Առ Շմաւոն քահանայապետ, առ բարեկամ Թագաւորաց ։ Հայեաց ընդ ծառայ իմ, ընդ Յոբ ։ Յուսացեալ իցես 'ի ցուպն եղեգնեայ ջախջախեալ, յԵգիպտոս (Տես նաեւ թիւ 249) ։

3° Գոյականին նախդիրն ածականին վրայ, եթէ յետադաս է ածականն, մանաւանդ եթէ ածականը երկու կամ աւելի է ․ իսկ եթէ նախադաս է ածականը, թէ ածականին և թէ գոյականին վրայ, զոր օրինակ ․

Եւ առցես զխոյն զերկրորդ։ Հեղին զարիւն զարդար։ Զտասանորդսն զամենայն բերին։ Կոչեաց զՍիմոն զոմն։ Դարձցիս յայր յայլ։ Գումարէին յերկիրն 'ի հեռաւոր։ Ասէ ցարսն ցյարուցեալս 'ի վերայ նորա։ Ընդ քաղաքն ընդ ամենայն այսր անդր ընթանային։ Զզօրն զայն զմեծ։ Զժողովուրդ զայդ չար։ Զտունս զայս զբարձր։ Թաղեցին զնա յայրի անդ 'ի կրկնում, Յերկրին յայնմիկ 'ի պղծում։ Գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Զժողովուրդս քո զայս զմեծ։ Զորդի իւր զերէց։ Զորդին իւր զանդրանիկ։ Յաւուր միում յերեւելւոջ։ Ի տնկոյ իմեքէ 'ի մահաբերէ։ Եթէ հանիցէք զամենայն ակն ձեր զաջոյ։ Կտրեցէք զմանուկն զստնդիաց զկենդանի յերկուս։ Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ։ Զազգ մի զանդէտ և զարդար կորուսանիցե՞ս։ Զամենայն ոչխար զխայտախարիւ և զգորշ։ Զիա՞րդ առնիցեմ զբանդ զայդ չար և զմեծ։ Զեւթն հասկսն զընտիրս և զատոքս։ Զժողովուրդն մեծ զբազում և զյաղթանդամ։ Զամենայն փայտ զազնիւ հարին։ Զսուրն սուրբ և զմեծ և զհզօր։ Զկուռսն զարծաթապատս և զոսկիապատս։ Տայ մեզ զանձրեւ զկանուխ և զանագան։ Զգործ զմի և զնոյն վճարեցաք։ Զազգսն մեծամեծս և զբազումս։ Զայր զուարթ և զառատ։ Զեւթանասուն արամբքն զծերովք։ Յերկրին մեծ և յայնչափ։ Յուսմունս պէսպէսս և յօտարաձայնս։ Յազգ մեծ և 'ի հզօր և 'ի բազում։ Յամին հարիւրորդի յիններորդի յառաջնում։ Յերկրիս յայսմիկ 'ի լայն և յընդարձակ և 'ի պարարտ։ Շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին։ Ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս։

Այս օրինակներուն մէջ նախդիրը կրկնուած է յետադաս ածականի վրայ։

Նախդրի այս կրկնումը կ'ըլլայ մանաւանդ, երբ գոյականին և ածականներուն մէջտեղ ուրիշ բառ



մը, զոր օրինակ՝ յատկացուցիչ մը կը մտնէ, ինչպէս.

Գործեսցէ զվանդակս նորա զպղնձիս։ Արածէր զխաշինս Լաբանու զմնացեալս։ Արար զեւղն օծութեան զսուրբ։ Ողջացոյց զսեղան տեառն զկործանեալ։ Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր։ Ոչ լռես 'ի թիւրելոյ զճանապարհս տեառն զուղիղս։ Բերել զգիրս կախարդանացն զծանրագինս և այրել։ Զդրունսն առին զարտաքինսն պարսպացն։ Հայր իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ։ Զօրէնսն կատարիցէք զարքունականս։ Ի ճանապարհս հօր իւրոյ յառաջինս։ Ի ծառայից տեառն իմոյ 'ի յետնոց։ Ի սաղմոսին գրեալ է յերկրորդում։ Զմարգարէսն ամօթոյ զչորեքհարիւր և զյիսուն։ Զեւթն երինջս գեղեցիկս տեսլեամբ և զընտիրս։

Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին զմեղսդ։ Առ նա զաճիւնախառն զկրակն։ Զմերոցի տեղիս զդժնեայ զվայրսն հրամայէին նոցա։ Զմեծապատիւ զչքեղաշուք ոսկիակուռ զաթոռն։ Զերկոսին զորդիս իմ։ Զեւթանեսին զորդիսն իմ։ Յերկոսեան 'ի սրահս տանն։ Ետես զայնչափ զքսան և զինն ազգաց զոգիս տանջեալս 'ի գեհենի։ Ի տէրունական իսկ 'ի փորձանացն իմանալի է։ Զյանդուգն զբուռն արքայն սաստիկ զփարաւոն։ Ոչ հալէին զսառնակերպ զդիւրահալ զազգ անուշակ կերակրոյն։ Զնոյն զհոգեւոր զկերակուրն կերան։ Ի նմանավիշտ յերկիր անկայ։ Յայնչափ 'ի բազում 'ի նախորաց փիլիսոփայիցն աստուածոց։ Յիւրոց 'ի բարիոք արարածոցն։ Ի քարեղէն յարծաթագործ պղնձագործ 'ի պատկերաց այտի։ Յանբաւ և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին։ Ի պղծոց և 'ի նորաձայն բանից։ Ի հարիւրորդի յիններորդի յառաջնում ամի։

Այս օրինակներուն մէջ նախդիրը դրուած է ածականին և գոյականին վրայ միանգամայն։

Այսպէս կ'ըսուի.

Զնոյն զմի. Զնոյն և զմի. Զմի և զնոյն։ Ի մի և 'ի նոյն միտս։ Ընդ նոյն եւեթ ընդ մի հետ գնալ։

406. Հ. Ի՞նչ գիտելիք կայ ստնոյն ածականին վրայ։

Պ. Երբ ստնոյն ածականը նախադաս է, նախադիրը գոյականին վրայ եւս կրնայ կրկնուիլ, զոր օրինակ.

Զամենայն երկիրս զայս։ Զամենայն զկահ նորա։ Զամենայն զգունդն։ Զամենայն զինչս իւր։ Զամենայն զպատգամս տեառն։ Յամենայն 'ի կեանս քո։ Յամենայն 'ի թագաւորութեան նորա։ Յամենայն իսկ 'ի թուղթսն, եւ այլն։

407. Հ. Ո՞ր մակբայներն իբրեւ աւելի կը գործածուին։

Պ. 1° Իբրեւ, որպէս, ըստ բառերէն ետքը՝ այսպէս, այնպէս, նոյնպէս աւելի կը դրուին ազդուութեան համար, զոր օրինակ.

Որպէս հուր զի այրէ զանտառս, որպէս բոց զի կիզու զլերինս՝ այսպէս հալածեսցես զնոսա. Իբրեւ զկաւ 'ի ձեռս բրտին՝ այսպէս էք 'ի ձեռս իմ։ Իբրեւ զծիծառն՝ այնպէս ճչեցի, և իբրեւ զաղաւնի՝ այնպէս մնչեցի։ Որպէս զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի. որպէս սգաւոր և տրտում՝ այնպէս խոնարհ առնէի։ Օրն տեառն իբրեւ գող գիշերի՝ այնպէս հասանէ։ Այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց։ Ըստ բազմութեան իւրեանց՝ նոյնպէս և մեղան ինձ։ Ըստ դիպելոյ իրաց ինչ՝ նոյնպէս և զանուն իրացն դնել։ Ըստ տկարութեան ընդունելեացն՝ նոյնպէս և զօրէնսն 'ի ժամանակին կարգեաց։



2° Ոչ, կամ մանաւանդ, եւ ոչ մակբայը նոյնպէս ազդուութեան համար աւելի կը դրուի, զոր օրինակ.

Ոչ պակասեցէ 'ի նոցանէ եւ ոչ մի. փոխանակ, Ոչ (ոք) պակասեցէ 'ի նոցանէ։ Ոչ ումեք եւ ոչ երեւէին, բայց միայն Հրէից. փոխանակ, Ոչ ումեք երեւէին, բայց Եա։ Ոչ ումեք պատմեցին եւ ոչ ինչ յորոց տեսին. փոխանակ, Ոչ ումեք պատմեցին ինչ յորոց տեսինն։ Ոչ ետ նմա պատասխանի եւ ոչ բան մի։ Այլոց իմն խոստանան տալ, որ չիցէ 'ի ձեռս ոչ նոցա և ոչ դիւացն։ Զանկանի եւ ոչ միով իւիք ընդ քննութեամբ. փոխանակ, Եւ ոչ ընդ միով իւիք քննութեամբ անկանի. Ամենեւին քննութեան տակ չիյնար։

## 3. Բակառութիւն

408. Հ. Ուրիշ ի՞նչ քերականական ձեւ կայ բաց 'ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն։

Պ. Բաց 'ի վերոյիշեալ երեք քերականական ձեւերէն, այսինքն, բաց արտաղութենէ, զեղչումէ և աւելադրութենէ, բակառութիւն կոչուած փոքր ձեւ մը կայ, ուր երկու բառ իրարու հետ կը համաձայնին ոչ ըստ քերականութեան՝ այլ ըստ իմաստին, այսպէս.

1° Բայն յոգնակի կը դրուի լռելեայն իմացուած բառի մը նայելով, զոր օրինակ.

Զօրաժողով լինէր արքայն Ասորւոց և Իսրայէլացւոց. փոխանակ՝ Արքայն Ասորւոց և արքայն Իսրայէլացւոց։ Ի բերանոյ նորա ելանէր հրաման մահու և կենաց. այսինքն՝ Հրաման մահու և հրաման կենաց։ Զօրք աղի և

անոյշ զամանս ջրուորացն նոյն. այսինքն՝ Ջուր աղի և ջուր անոյշ։ Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, և երկնաւորն՝ այլում ժամանակի պահեալ են. այսինքն՝ Եւ երկնաւոր նշանքն պահեալ են, ևն։

2° Էական բայն յոքնակի կը դրուի, վասն զի ստորոգելին յոքնակի է։

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, և ցաւք են ծնանելեաց նորա։ Ալեք՝ իմաստութիւն մարդոյ են։ Մտաց բաջաղանք են աղանդն, և ոչ ճշմարտութիւն։ Չեն օրէնք աշխարհի մերում տալ նախ զկրտսերն քան զերէց։ Փառք են առն խոտորել 'ի հայհոյութեանց։ Ոչ վայրապար ինչ էր էին զփարէս յիշել։

3° Հաւաքական անուններու բայը կամ ածականը կամ դերանունը յոքնակի կը դրուի։

Ամենայն Իսրայէլ զկնի երթային նորա վառեալք և կազմեալք։ Դարձաւ ամենայն ժողովուրդն 'ի բանակն առ Յեսու 'ի Մակեդայ ողջանդամ։ Ամենայն տունն Իսրայէլի հակառակողք և խստասիրտք են։ Արարին զՔանանացին հնազանդս, բայց սատակելով ոչ սատակեցին զնոսա։ Եւ եղեւ Մովաբ Դաւթի 'ի ծառայս պատարագաբերս։ Տեսեալ զժողովուրդն Յունաց լքեալ և պարտեալ։ Եթէ եղիցի ժողովուրդն իբրեւ զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք մնասցեն 'ի նոցանէ։ Նման են մանկտւոյ որ նստիցին 'ի հրապարակս։ Չուեաց ամենայն ժողովուրդն ըստ բանակս իւրեանց։ Կողոպտեաց ամենայն ժողովուրդն զգինդս ոսկիս յականջաց կանանց իւրեանց։ Զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց։ Իբրեւ ոչխար որոց ոչ իցէ հովիւ։



Ամենայն բառին եզակին եւս, իբրեւ հաւաքական, նոյն համաձայնութիւնը կ'ունենայ։

Ամենայնի որոց իցեն թեւք և թեփ՝ զայն ուտիցէք։ Ցամենայնէ՝ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն։

4° Եզակի թուական անուններուն վերաբերութիւն ունեցող ածական կամ բայ յոքնակի կը դրուի։

Տասն այր բորոտ որք կային 'ի հեռաստանէ. Երկոտասան այր տգէտք և տառապեալք որք 'ի նա յարեալ էին։

## ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Հ. Ի՞նչ է կէտադրութիւն։

Պ. Կէտադրութիւն կը կոչուի խօսքին մէջ բառեր և իմաստներ կէտ կոչուած նշաններով իրարմէ զատելու արուեստը։

2. Հ. Որո՞նք են կէտադրութեան գլխաւոր նշանները։

Պ. Կէտադրութեան գլխաւոր նշաններն են սոքա, բութ ( ՝ ), ստորակէտ ( , ), միջակէտ ( · ), վերջակէտ ( ։ )։

3. Հ. Ե՞րբ կը գործածուին այս նշանները։

Պ. Այս նշանները կը գործածուին իրարմէ զատելու համար 1° Նախադասութեան մը նոյնատեսակ մասերը և 2° Բաղադասութեան մը մասերը։

4. Հ. Ի՞նչ է Նախադասութիւն։

Պ. Նախադասութիւն այն է որ ունի դիմաւոր

բայ ․ և նախադասութեան մասերն են տէր բայն, ստորոգելին, բայը, խնդիրները, մակբայն ու ածականները ։

Երբ նախադասութեան մէջ այս մասերը ոչ մի, այլ աւելի են, այսինքն՝ երբ նախադասութիւնն ունի մի և նոյն բային վերաբերեալ քանի մը տէր բայի, մի և նոյն տէր բայիին վերաբերեալ քանի մը բայ կամ ստորոգելի, մի և նոյն խնդրառուին վերաբերեալ քանի մը խնդիր կամ մակբայ, մի և նոյն գոյականին վերաբերեալ քանի մը ածական, այն մասերը կը կոչուին նախադասութեան մասերը ։

(Տես և թիւ 352—359) ։

5․ Հ․ Ի՞նչ է Պարբերութիւն ։

Պ․ Պարբերութիւն կ'ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախադասութիւններէ որ պարբերութեան անդամները կը կոչուին ։ Եւ պարբերութեան մը անդամները՝ կամ իրարմէ կախում ունեցող են, կամ իրարու հակադրեալ, և կամ մին միւսոյն իբր 'ի պատճառէ կամ 'ի փաստէ հետեւութիւն (*) է, զոր օրինակ ․

Եթէ մեզի մեր տկարութեան վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է ։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն, բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին ։

Մեր Թագաւորը բարեսիրտ և մարդասէր է ․ ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ ։

---

(*) Պատճառի կամ փաստի հետեւութեան վրայ, տես Տրամաբանութիւն Գարագաշեան էջ 250 ։



Այս երեք խօսքը պարզ պարբերութիւններ են ․ առաջնոյն անդամները կը ցուցնեն կախում ․ երկրորդին անդամներն են իրարու հակադրեալ ․ իսկ երրորդին անդամներէն մին (հետեւորդ անդամը) միւսին (նախորդին) իբր 'ի փաստէ հետեւութիւն է ։

6․ Հ․ Ո՞ր խօսքը պարբերութիւն չէ ։

Պ․ Պարբերութիւն չէ երկայն խօսք մը ուր նախադասութիւններն իրարմէ կախում չունին, ոչ իրարու հակադրեալ են, և ոչ մին միւսոյն հետեւութիւնն է ․ այլ միայն իրարու քով շարուելով կը բացատրեն ընդհանուր իմաստ մը, զոր օրինակ սա հետեւեալը ․

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ երազ է, փառքը լոկ երեւոյթ է, զուարճութիւններն և հեշտութիւնները վտանգաւոր զբօսանք են միայն ։

7․ Հ․ Ե՞րբ պարզ կը կոչուի պարբերութիւնը ։

Պ․ Պարբերութիւնը պարզ է, երբ անդամներուն երկուքը եւս մէն մի նախադասութիւն են ․ ինչպէս վերի երեք պարբերութիւնները ։

8․ Հ․ Ե՞րբ բաղադրեալ է պարբերութիւնը ։

Պ․ Պարբերութիւնը բաղադրեալ է, երբ անդամներէն մին կամ երկուքը եւս կը բաղկանան երկու կամ աւելի նախադասութիւններէ, զոր օրինակ ․

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ և ճշմարտութեան մեծ զօրութեան վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իւր նպատակին աւելի մօտեցած կ'ըլլար՝ այլ և առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն ունեցած կ'ըլլային ։

## ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆ

9. Հ. Նախադասութեան ո՞ր մասերն ստորակէտով կը զատուին։

Պ. Ստորակէտով կը զատուին՝

1° Նախադասութեան նոյնատեսակ մասերը, եթէ և, կամ, բայց, այլ շաղկապներուն միովը կապուած չեն, զոր օրինակ.

Աշխարհիս վրայ չոր, խոնաւ, ջերմ, ցուրտ, պինդ, լոյծ, փխրուն բաներ խառն կը գտնուին։ Տիւրացիք արուեստագործ, համբերող, աշխատասէր, մաքուր, սակաւապէտ և խնայող են։ Նենգութեան, բռնութեան, ապերախտութեան, դաւեր, պատերազմներ այն երկրին մէջ իրենց անագորոյն ձայնը երբէք լսել չեն տար։ Այս անբաւ երկրագունտն իւր մակերեւութին վրայ մեզի կ'ընծայեցունէ լեռներ, ձորեր, դաշտավայրներ, ծովեր, ճահիճներ, այգեր, վէմեր, հրաբուխներ։ Նա գեղջկաց տուներուն այցելութիւն կ'ընէր. անոնց վիճակին, ընտանեաց, զաւակներուն, Բնայն, հովերուն, կարողութեան, դրից, պարտուց, և ուրիշ շատ բաներու կը տեղեկանար։ Այս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին, կ'ըմբռնէ, կը խորհի, կը տարակուսի, կը հաւատայ, կ'իմաստաւորէ, կը ճանչնայ, կը կամի, կը խորհրդածէ։ Եթէ կ'ուզենք որ տղայք միշտ համբակ չմնան՝ այլ վարժ ըլլան, հայրերն և վարժապետները զանոնք շատ կանուխ յանդիմանած, ուղղած, կշտամբած, ողոքած, սաստած, հրահանգած և համոզած ըլլալու են։ Գերագոյն և կատարեալ կառավարութիւնը՝ կառավարիչները կառավարելու մէջ կը կայանայ. պէտք է զանոնք ընտրել, փորձել, անցնել, ուղղել, յաջողեցնել, վերցանել, ճնշ-ցանել, տեղափոխել և մինչ 'ի բաւն տանել։



Ոմանք այս դէպքերուն մէջ բութ կը գործածեն։

2° Նախադասութեան մէջ իբր բացայայտիչ դրուած բառեր երկու ստորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Աշխարհիս մեծագոյն պետութեան, Հռովմէական պետութեան, վրայ Աստուծոյ դատաստաններն մեզի թաքուն չեն։

3° Նախադրութեամբ խնդիրներ, երբ երկայնկեկ են և նախադասութեան իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող երկու մասերուն, զոր օրինակ՝ տէր բայիին և բային, կամ բային և խնդրոյն մէջտեղ դրուած են, նոյնպէս երկու ստորակէտի մէջ կ'առնուին, զոր օրինակ.

Անոր նաւը, երկայն ատեն հովերուն խաղալիկ ըլլալէն ետքը, ալեաց մէջ թաղուեցաւ։ Տիւրացիք, իրենց հարստութեան պարծանօք, զայրացուցած էին Սեսոստրիս մեծ թագաւորը որ Եգիպտոս կը թագաւորէր և բազում թագաւորութեանց տիրած էր...։ Սեսոստրիս, անոնց ամբարտաւանութիւնը կոտրելու համար, միտքը դրած էր բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթել։

4° Բացադարձութեամբ ըսուած անուն մը, այսինքն կոչական մը, կամ ձայնարկութիւն մը, նախադասութեան յաջորդ մասէն ստորակէտով կը զատուի. և եթէ նախադասութեան մէջտեղն է, երկու ստորակէտի մէջ կ'առնուի։

Ով թագաւոր, ահա թշնամիներուդ դէմ քու վրէժխնդրիներդ։ Արժան է, որդեակ, որ յայնտեմ քեզ։

5° Կ'ըսեմ, ըսաւ, պատասխանեց, կրկնեց, և ասոնց նման ուրիշի խօսքն յառաջ բերող բայեր երկու ստորակէտի մէջ կ'առնուին, եթէ յառաջ բերուած խօսքին մէջտեղն են. իսկ եթէ խօսքին սկիզբն են, անկէ միջակէտով կը զատուին, և առատեն յառաջ բերուած խօսքը գլխագրով կը սկսի,

Ով է հայրդ զոր կը փնտռես, ըսաւ դիցուհին. Ոդիսեւս կը կոչուի, ըսաւ Տելեմաք: Կամ, Դիցուհին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռես. Տելեմաք պատասխան տուաւ. Հայրս Ոդիսեւս կը կոչուի:

6° Խօսքի մը մէջ որ պարբերութիւն չէ՝ իւրաքանչիւր նախադասութիւն, մանաւանդ եթէ երկայն է, նախընթացէն ստորակէտով կը զատուի.

Առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սոսկ երազ է, փառքը լոկ երեւոյթ է, զուարճութիւններն և հեշտութիւնները վտանգաւոր զբօսանք են միայն:

Երբ այսպիսի նախադասութիւններ նախընթաց նախադասութեան բացատրութիւն կամ իբր թըլուումն մասանց են, այն նախընթաց նախադասութիւնը միւսներէն միջակէտով կը բաժնուի, զոր օրինակ.

Երբ մարդոց սիրտը հարստութեան յարեալ է, թւրէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կը միաբանի. շողոքորթութիւնը զանոնք կը խաբէ, չար խրատտուներ զանոնք կը գրաւեն, գէշ օրինակներ զանոնք կը գարշեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կը ցրուէ:



10. Հ. Ե՞րբ կը գործածուի բութ:
Պ. Բութ կը գործածուի խօսքին մէջ
1° Հոն ուր բառ մը զեղչուած է, զոր օրինակ.

Փրանկները, վայրենի ժողովուրդ, բանջարով, պտուղով, արմատներով և որսով միայն կ'ապրէին: Արեւ լուսին, լուսաւորները և գետերն անոնց աստուածներն էին. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. Դրուիթ կոչուած քուրմերն՝ անոնց աստեղաբաշխները, բժիշկները և դատաւորները. փայտակերտ, կաւագործ հիւղեր՝ անոնց քաղաքները. իսկ անոնց առուտուրն էր փոխանակութիւն:

2° Բութով կը զատուի նախադասութեան մը այն մասը որ նախադասութեան սկիզբը դրուած է, և դիմաւոր բայ չունենալով, ամբողջ նախադասութիւն չէ, այլ խնդիր է այն նախադասութեան. զոր օրինակ.

Շարունակ վարանման և անստուգութեան մէջ ապրելէ յոգնած ըլլալով՝ որոշեցի Սիկիլիա երթալ: Գործին այնչափ անհնարին դժուարութիւնները տեսնալով՝ հասկցանք որ մեր բոլոր ջանքերը վայրապար պիտի ըլլային: Պատանին իր հօրը անունը լսածին պէս՝ սկսաւ ջերմ արտասուք թափել: Հեռացանք այսպիսի տեսարանի մը հանդիսատես ըլլալէ ետքը՝ սկսանք Կրետէ կղզւոյն լեռները նշմարել:

3° Երբ տէր բային կամ ստորոգելին իւր յարակից մասերովն երկայնկեկ է, այն մասն յաջորդ խօսքէն բութով մը կը զատուի, որ շնչառութեան հանգիստ տրուի, զոր օրինակ.

Իրենց նախնի աւանդութիւններն պահելու համար Նեփելոկոկ-

որ շատ ցեղերէն մէկ հնարն՝ այն աւանդութեանց համար յատուկ տօներ սահմանել էր․ այսպէս աւանդութեանց բարոյական նշանակութիւնը ժողովրդեան մտքին մէջ կը տպաւորուէր ։

4° Յարաբերական դերանուամբ սկսեալ միջանկեալ նախադասութեանց վերջը բութ կը դրուի, և այնպէս նախադասութեան մնացորդը կը շարունակուի, զոր օրինակ․

Աստուծոյ մեծագործութեան գահն է բնութիւնը․ այն մարդը որ անոր մտախոհ և խելամուտ է՝ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբառնայ ։

Ոմանք բութը յարաբերեալին վրայ կը դնեն, և յարաբերականով կազմուած նախադասութիւնը խօսքին յաջորդ մասէն ստորակէտով կը զատեն, այսպէս․

Տնջրին՝ որ իմացական կարողութեամբ շունէն և կապիկէն ստորին է, տակաւին խօսողութեան գրեթէ հաւասար ձիրք մը բնութենէն ընդունած է ։ Կարմիր ծովը՝ որ Արաբիոյ թերակղզին Աֆրիկէի և Եգիպտոսի մասէն կը բաժնէ, երեք հարիւր յիսուն մղոն երկայնութիւն և քառասուն մղոն լայնութիւն ունի ։



## ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆ

11․ Հ․ Ի՞նչ կէտով կը բաժնուին պարզ պարբերութեան մը անդամներն ։

Պ․ 1° Պարզ պարբերութեան մը անդամները, եթէ անոնց մին միւսէն կախում կը ցուցնէ, իրարմէ ստորակէտով կը բաժնուին․

Մինչ Մենտոր և Հաղայէլ կը խօսէին, ոսկեփայլ և կապուտակագոյն թեփերով ծածկուած դլփիններ նշմարեցինք ։ Պարտականութիւն մը որչափ աւելի մեծ և տաժանելի է, այնչափ անոր հիմն զգալի և զօրաւոր ըլլալու է ։ Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք, գէթ օգնեցէք մեզ մեր օրէնքն հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու ։ Անձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք, տակաւին շատ անծանօթ տեղեր կը մնան ։

2° Եթէ պարզ պարբերութեան անդամներն իրարու հակադրեալ են, կամ եթէ անոնց մին միւսին իբր 'ի պատճառէ կամ 'ի փաստէ հետեւութիւն է, իրարմէ միջակէտով կը զատուին, զոր օրինակ ։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հաըստութիւն կը փնտռեն․ բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին ։ — Աստուած անսահման կատարեալ և անհուն բարի է․ ապա ոչ կրնայ խաբուիլ և ոչ կը խաբէ զմեզ ։ — Մեր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է․ ապա անոր գթութեանը կրնանք պաղատել ։

12․ Հ․ Ի՞նչ կերպով կը բաժնուին բաղադրեալ պարբերութեան անդամները ։

Պ․ Բաղադրեալ, այսինքն՝ երկրորդական անդամներէ բաղկացեալ պարբերութեան մէջ, 1° Եթէ պարբերութեան գլխաւոր անդամներէն մին կախում ունի միւսէն, երկրորդական անդամները կը զատուին իրարմէ փութով, իսկ գլխաւոր անդամներն ստորակէտով, զոր օրինակ․

Ինչ նիւթի վրայ որ կը ճառեն՝ ինչ խորհուրդ որ անոնց մտացը մէջ կը ծնանի՝ ինչ զգացումներ որ անոնց հոգին կը գրաւեն, այն ամէնը բոլոր պարագաներովը կը բացատրեն եղածին պէս ։ Եթէ բանաստեղծութիւնը, երկրաչափութիւնը, աստեղագիտութիւնը և առհասարակ բոլոր գիտութիւնք, աւելի կամ նուազ տարբերութեամբ, իրենց կատարելութեան կը դիմեն՝ մինչդեռ քաղաքականը հազիւ որրոցէն ելած կը թուի, պատճառը սա է որ մարդիկ, փորձառութեամբ հասուցեղած քաղաքականի սկզբանց, ընկերութիւն կազմելով և տեսնելով օրէնք և քաղաքական կանոններ դնելու հարկը, ստիպուեցան քաղաքականի դրութիւն չինել ։

2° Եթէ բաղադրեալ պարբերութեան գլխաւոր անդամներն իրարու հակադրեալ են, կամ մին միւսին հետեւութիւնն է, այն ատեն երկրորդական անդամները կը զատուին իրարմէ ստորակէտով, իսկ գլխաւոր անդամները՝ միջակէտով, զոր օրինակ․

Մարդ չկրնար իրեն հետ համամիտ և համակարծիք անձանց հետ երկայն ատեն գժտեալ մնալ, վերջապէս կը հաշտուի․ բայց վայրապար կ՚աշխատի իւր զգացմանց և կարծեաց հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով և միաբանութեամբ ապրել, այսպիսիք կանուխ կամ անագան կը բաժնուին իրարմէ ։



13․ Հ․ Պարբերութիւններն ի՞նչպէս կը բաժնուին քանի մը պարբերութենէ բաղկացեալ խօսքի մէջ ։

Պ․ Երբ խօսքի մէջ քանի մը պարբերութիւն կայ, եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները բաժնուած են իրարմէ ստորակէտով, երկրորդ պարբերութեան և առաջնոյն մէջտեղ կը դրուի միջակէտ․ իսկ եթէ առաջին պարբերութեան գլխաւոր անդամները բաժնուած են միջակէտով, յաջորդ պարբերութեան և նախընթացին մէջտեղ կը դրուի վերջակէտ ։ Այսպէս է սա օրինակը․

Եթէ մեր նպատակները կամ դիտաւորութիւններն են ուղիղ և մաքուր, մեծ յոյս կրնանք ունենալ յաջողելու․ և եթէ չյաջողինք, չաջողութեամբ ոչ թէ պատժուած՝ այլ զրկուած կ՚ըլլանք ։ Բայց երբ մեր նպատակներն են թիւր և չար՝ և յուսացուած յաջողութիւնը կը փախչի մենէ, զրկող և պատժուած ենք միանգամայն․ զրկող ենք, քանզի մեր նպատակն անիրաւ է․ պատժուած ենք, քանզի չաջողութիւնը որ մաքուր և ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առաւելն տրտմութիւն կը բերէ՝ չարին և անիրաւին նաեւ յուսահատութիւն է ։

14․ Հ․ Ի՞նչ կը կոչուի վերջակէտով գոցուած խօսք մը ։

Պ․ Խօսք մը որ վերջակէտով կը լրանայ կամ կը գոցուի՝ լրացեալ կամ ամբողջ խօսք կը կոչուի ։

15. Հ. Ի՞նչ կը կոչուին գրուածներու մէջ նոր տողով սկսուած մասեր։

Պ. Գրուածներու մէջ խօսքին այն մասերը որ նոր տողով (ալինէա) կ՚սկսին, տողաբաժին (բարակրաֆ) կը կոչուին։ Տողաբաժին մը կրնայ պարունակել մի կամ աւելի լրացեալ խօսք. ուստի և տողաբաժնի մէջ որչափ վերջակէտով գոցուած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ։

16. Հ. Խօսքին ո՞ր մասերն ամենեւին կէտանշանով չեն բաժնուիր։

Պ. Ամենեւին չեն բաժնուիր կէտանշանով։

1° Երկու նոյնատեսակ բառեր որ կապուած են և, կամ, բայց և ուրիշ ասոնց նման շաղկապներով և չունին յարակից մասեր, զոր օրինակ.

Պատիւը և մոլութիւնն անբաժին են։ Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորստեանդ կամ փրկութեանդ կախում ունի։ Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թշնամիներն են։

2° Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած խօսքեր, զոր օրինակ.

Ամէն տեղ ծաղկած կը տեսնենք թէ Պոմոնայի պտուղները թէ Փլորայի ընծաները։ Մի՛ թողուր ոչ աղքատութեան ոչ հպարտութեան զքեզ քարշ ածել։

3. Ու, թէ շաղկապներով սկսող խօսք մը որ նախընթաց բային խնդիր է, զոր օրինակ.

Չենք ուզեր որ մարդ զմեզ յանդիմանէ, քանզի չենք ուզեր ուղղուիլ։ Շողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են որ չեն տեսներ մեր մոլութիւնները։



17. Հ. Ի՞նչ է պարոյկ։

Պ. Պարոյկը (˚) հարցական նշան է և կը դրուի այն բառին վրայ, որոյ վրայ կը զարնուի հարցման մէջ։

18. Հ. Ի՞նչ է երկար։

Պ. Երկարը (´) զարմացական նշան է և կը դրուի հոգւոյ կիրք մը նշանակող բառերու վրայ։

19. Հ. Ի՞նչ է կախում։

Պ. Կախումն երեք կէտ է (. . .) և կը գործածուի ցուցնելու համար թէ խօսքը պակաս կամ կիսկատար մնացած է։

20. Հ. Ի՞նչ է գիծ։

Պ. Գիծը (—) կը գործածուի նախ, հարցման և պատասխանւոյ մէջտեղ, երբ գործածուած չեն սա բառերը, ըսէ, ըսաւ, պատասխան տուաւ կրկնելու. երկրորդ՝ փակագծի տեղ։

21. Հ. Ի՞նչ է չակերտը։

Պ. Չակերտը (») երկու ստորակէտ է, և կը գործածուի ցուցնելու համար թէ խօսքը ուրիշին է։

22. Հ. Ի՞նչ է փակագիծ։

Պ. Փակագիծը երկու կիսաբոլորակ է ( ) և բուն խօսքէն կը զատէ մի կամ քանի մը բառ կամ նաեւ ամբողջ նախադասութիւն մը որ խօսքին մարմնէն դուրս են, բայց անոր յաւելուած։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ [illegible] Библиотека ՀՍՍՌ-Арм ССР
Վ Ե Բ Ջ

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Հայերէն քերականութիւն . . . . . . . . . . . . . 5
Մասն առաջին Գլ. Ա. Բառագիտութիւն . . . . . . . 6
Գլ. Բ. Ածական . . . . . . . . . . . . . . . . 32
Գլ. Գ. Դերանուն . . . . . . . . . . . . . . . 47
Գլ. Դ. Նախադրութիւն կամ Նախդիր . . . . . . . 56
Գլ. Ե. Բայ . . . . . . . . . . . . . . . . . 59
Չորս լծորդութեանց բայերուն խոնարհման կանոնաւոր ձեւը 64
Չորս լծորդութեանց ներգործական բայերուն կրաւորական ձեւը 95
Չորս լծորդութեանց անկանոն բայերը . . . . . . . . 101
Ներգործական անկանոն բայերուն կրաւորականները . . . 120
Դերբայներուն վրայ գիտելիք . . . . . . . . . . 127
Գլ. Զ. Մակբայ . . . . . . . . . . . . . . . 130
Գլ. Է. Շաղկապ . . . . . . . . . . . . . . . 139
Գլ. Ը. Միջարկութիւն . . . . . . . . . . . . 141
Մասն երկրորդ. Համաձայնութիւն . . . . . . . . 143
Գլ. Ա. Տէր բայի եւ Բայ . . . . . . . . . . . 143
Տէր բայիին հոլովը . . . . . . . . . . . . . 147
Գլ. Բ. Խնդիր եւ Խնդրառու . . . . . . . . . . 150
1. Սեռի խնդիր . . . . . . . . . . . . . . . 171
2. Բնութեան խնդիր . . . . . . . . . . . . . 172
Գլ. Գ. Ստորոգելի եւ Ստորոգեալ . . . . . . . . 181
Գլ. Դ. Բացայայտիչ եւ Բացայայտեալ . . . . . . 186
Գլ. Ե. Կոչական . . . . . . . . . . . . . . . 188
Ութ մասանց բանի վրայ մասնաւոր գիտելիք . . . . . 189
Ա. Գոյական անուն. Յօդոյ գործածութիւնը . . . . . 189
Բ. Ածական անուն. Աստիճանք ածականաց . . . . . . 196

Գ. Դերանուն . . . 202
Դ. Բայ. 1 Բայերուն ժամանակներուն վրայ գիտելիք . . . 223
Յ. Անցեալ ընդունելութիւն . . . 232
Ե. Նախադրութիւն . . . 235
Զ. Մակբայ . . . 239
Է. Շաղկապ . . . 246
Մաս երրորդ. Շարադասութիւն . . . 255
Ա. Քերականական կարգ . . . 259
Բ. Ձեւաւոր կարգ . . . 262
1. Արտուղութիւն . . . 262
Ա. Հարկաւոր արտուղութիւն . . . 263
Բ. Ազատ արտուղութիւն . . . 266
2. Զեղչում . . . 272
1. Ենթակայի կամ տէր բայի զեղչում . . . 273
2. Բայի զեղչում . . . 279
3. Խնդիրներու զեղչում . . . 284
4. Աւելադրութիւն . . . 293
4. Բակաւութիւն . . . 303
Կէտադրութիւն . . . 305
Նախադասութեան մասերուն համար կէտադրութեան կանոն 308
Պարբերութեան անդամներուն կէտադրութեան կանոն . . . 313
Ցանկ գլխոց . . . 318

2525
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0061714